ԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ս. ԳԱԼԱՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(Ուսումնական ձեռնարկ արտասահմանյան
քաղաքացիների նախապատրաստական
ֆակուլտետի ուսանողների համար)

«ՄԻՏՔ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1968

7—1—3

СЕРГЕЙ ГАЛСТЯН

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Ереванский Государственный университет
Издательство «Митк»
Ереван — 1968

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն ձեռնարկը արևելահայերենի ամբողջական քերականությունը չէ. այն ընդգրկում է արևելահայ նոր ուղղագրությունը-ուղղախոսությունը, ինչպես և քերականական այն երևույթները, որոնք արևմտահայերենից էապես տարբերվում են։

Ուսուցողական նպատակով ավանդական քերականությունից ձեռնարկում կատարված շեղումները ունեն մեկ նպատակ՝ դյուրացնել արևելահայերենի ուսուցումը այն հաշվով, որ ուսումնական մեկ տարվա ընձեռած չափազանց սուղ պայմաններում (74—128 դասաժամ) նախապատրաստական դասընթացներում սովորող հայ ուսանողները այնչափ տիրապետեն արևելահայ գրականին, որ կարողանան՝ հասկանալ ու գրանցել արևելահայ գրականով բարձրագույն դպրոցներում կարդացվող դասախոսությունները (հատկապես տեխնիկական գիտությունների գծով), ընթերցել մասնագիտական գրականությունը, բանավոր ու գրավոր՝ կանոնավոր լեզվով ու գրագետ հաղորդել իրենց մտքերը։

Ուսուցման ընթացքում մեծ դժվարություններ է հարուցում սովորողների գիտելիքների խիստ տարբերությունը նաև արևմտահայերենից։ Այդ իսկ պատճառով ձեռնարկում շարադրված նյութի ի՛նչ խորությամբ անցնելը կամ հանձնարարվող վարժությունների ծավալի ընտրությունը մնում է ուսուցչի հայեցողությանը։

Ձեռնարկի նպատակն է նաև օժանդակել Խորհրդային Հայաստանում սովորելու մտադրություն ունեցող սփյուռքահայ երիտասարդությանը՝ նախապես հմտանալու արևելահայերենի մեջ՝ նրանց առաջադրվող պահանջների սահմաններում։ Ուրախ կլինենք, եթե չնչին չափով իսկ նպաստած լինենք դրան։

Հատկապես արևմտահայերի համար գրված՝ արևելահայերենի առաջին ձեռնարկը լինելով՝ գիրքը անխուսափելիորեն կունենա թերություններ. գոհունակությամբ կընդունենք դրանց մասին եղած բոլոր շահեկան դիտողությունները։

ՀԵՂԻՆԱԿ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից մեկն է։ Այն գրավոր դարձավ հինգերորդ դարի սկզբին, երբ մեծ գիտնական Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայոց գիրը։ Հինգերորդ դարում գրի առնված հայերենը հետագայում կոչվեց գրաբար (գրքերի լեզու), ի տարբերություն աշխարհաբարի՝ աշխարհիկ, ժողովրդական-խոսակցական լեզվի։

Իր կազմավորման առաջին իսկ օրերից մեր ժողովրդի ինքնապահպանման հատու զենքերից մեկը եղել է մեր լեզուն, որը, անընդհատ մշակվելով, զարգանալով դարձել է աշխարհի ճկուն ու հարուստ լեզուներից մեկը։

Այժմ հայ ժողովրդի գրական լեզուն ունի երկու տարբերակ՝ արևելահայ գրական լեզու և արևմտահայ գրական լեզու, որոնցով ստեղծվել են գրական բարձրարժեք ստեղծագործություններ։ Մեր դասական հեղինակներից արևմտահայերենով են գրել իրենց ստեղծագործությունները Պ. Դուրյանը, Հ. Պարոնյանը, Եր. Օտյանը, Գր. Զոհրապը, Դ. Վարուժանը, Սիամանթոն և ուրիշներ. արևելահայ գրական լեզվով՝ Մ. Նալբանդյանը, Րաֆֆին, Շիրվանզադեն, Մուրացանը, Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը և ուրիշներ։

Արևմտահայերենը որպես գրական ու խոսակցական լեզու շարունակվում է օգտագործվել սփյուռքահայ գաղութներում։ Արևելահայերենը Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական լեզուն է՝ Հայաստանի գիտության, գրականության, թատրոնի, լայն առումով՝ հայկական մշակույթի, ազգային ձևը։

Հայկական ԽՍՀ հայկական բարձրագույն դպրոցներում ուսուցումը տարվում է արևելահայ գրական լեզվով։

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սփյուռքի բազմաթիվ դպրոցներում հայերենի ուսուցումը կատարվում է ավանդական (գրաբարյան) ուղղագրությամբ։ Խորհրդային Հայաստանում, նպատակ ունենալով գրությունը հնա-

բավորին չափ մոտեցնել արտասանությանը, մտցված են ուղղագրության նոր կանոններ։

Երկու գրական լեզուների գրության հիմնական տարբերությունները հետևյալներն են։

oյ-o

Բառավերջում o-ից հետո արևելահայերենում յ չի գրվում, եթե չի արտասանվում։

Օրինակ՝ երեկո, սիրո, ճուտո, *բայց՝* խոյ, գոյ:

Վարժություն 1: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ:

Զուլածոյ, կոփածոյ, երեկոյ, կռածոյ, խոյ, Կարոյ, վերջիվերջոյ, «հուսոյ գավաթ», «սիրոյ հասակ»։

այ-ա

Բառավերջում ա-ից հետո արևելահայերենում յ չի գրվում, եթե չի արտասանվում, և գրվում է, եթե արտասանվում է։

Օրինակ՝ տղա, մեքենա, ակամա, քահանա, անխնա, հեռակա, մոտակա *և այլն, բայց՝* ճայ, վայ, ճայ, բայ *և այլն։*

Վարժություն 2: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ:

Ընծայ, ծառայ, պողոտայ, կաթսայ, անխնայ, մանանայ, ամիրայ, լումայ, ծնծղայ, շղթայ, շուկայ, փիլիսոփայ, քուրայ, մերձակայ, ունենայ, Սևանայ լիճ, Վանայ ծով։

oյ-ույ

Արևելահայերենում երբ լսվում է ույ, *գրվում է* ույ *և ոչ* oյ:

Օրինակ՝ բույս, ճույս, լույս, ճամբույր, քույր:

Վարժություն 3: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ:

Գոյն, բոյն, կոյտ, ողջոյն, կապոյտ, սառոյց, հոյզ, ապացոյց, հրապույր, զրույց, թոյն, մատույց, բույր, թույլ, ստույգ, գոյժ, կոյս, հանգույց, անփույթ, վարդագոյն, նժույգ, սրտահույզ, երկնակապույտ։

իւ-յու

Արևելահայերենում երբ լսվում է յու, *գրվում է* յու *և ոչ* իւ:

Օրինակ՝ բյուր, սյուն, գիտություն, աղբյուր, ալյուր, առյուծ:

Վարժություն 4: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ:

Դիւցազն, իւրովի, կորիւն, հիւծախտ, հիւղ, հիւր, երկարութիւն, ձիւնաբուք, գիտութիւն, տարողութիւն, իւրաքանչիւր, հիւսն, ձիւ-

նապատ, սինազարդ, թնդիւն, եղջիւր, ալիւր, առիւծ, գիւղ, հիւր, միս, արիւն, հիւս, հիւթ, ձիւն, թիւր, առաձգականութիւն, սեղմելիութիւն։

ւ-վ

Արևելահայերենի այբուբենը չունի ւ (վյուն) տառը։ Այն փոխարինվում է վ-ով։

Օրինակ՝ ավագ, հավաքել, կախավել, հարեվան, երեվելի, վիրավոր, անիվ, պատիվ, նավ, հիվանդ, աղավնի, նավք։

Վարժություն 5: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ։

Աւանդել, աւերել, բաւիղ, դաւել, դիւանապետ, թաւալգլոր, խարդաւանք, համբաւել, հաւանել, աւելի, հազիւ, լաւ, թիւ, խորհրդաւոր, կռիւ, պարսաւանք, հովիւ, թիւ, հաւասար, հաւք, Դաւիթ, շաւիղ, խաւարում, հաւասարակշռութիւն։

ու-վ

Բաղաձայնի և ձայնավորի միջև ընկած ու-ն, *որը կարդացվում է* վ, *արևելահայերենում գրվում է* վ (վեվ) *տառով։*

Օրինակ՝ նվեր, Նվարդ, թվալ, թվական, թվել, կովել։

Վարժություն 6: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ։

Գգուել, դժուար, թուալ, լուանալ, կալուածք, մանուածք, մատռուակ, նուաստ, նուիրակ, նուագ, չուան, փորուածք, պատուաստ, տուեց, ազատուել, պատուար, ստուեր, բեռնուածութիւն։

է-ե

Բառարմատների մեջ և վերջում արևելահայերենում երբ լսվում է է, *գրվում է* ե։

Օրինակ՝ պարտեզ, որպես, մարգարե, հյուլե, նվեր, աղվես։

Վարժություն 7: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ։

Գէշ, գէս, երէ, դէմ, դէմք, ակնդէտ, աղուէս, երբևիցէ, երէց, զէնք, իրաւագէտ, կէտադրութիւն, հանդէպ, վէգ, վէմ, վրէժ, հոտաստէտ, նոյնպէս, ծիծաղադէմ, անշահատէր, արդէն, երբէք։

օ-ո

Բառարմատներում երբ լսվում է օ, *գրվում է միայն* ո *և ոչ* օ։

Օրինակ՝ հզոր, զբոսնել, զորանալ, փառատոն, խոսակցական։

Վարժություն 8: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ:

Թօթափել, խօսուն, ծանօթ, ամօթ, կարճառօտ, կօշիկ, առաւօտ, զօրաժողով, կարօտել, զօրութիւն, ձօնել, մօրուք, տօն, տօթ, եղբօր, ցօղել, շատախօսութիւն, զօրեղ:

յ-ո

Արևելահայերենում՝ բառասկզբում երբ լսվում է հ, գրվում է հ և ոչ յ:

Օրինակ՝ հաղթահարել, հաճախ, հագենալ, հայրենի, հավետ, հղփանալ, հոռի, հուզել:

Վարժություն 9: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ:

Յագուրդ, յաճախել, յիշել, յորդ, յապաղել, յավելում, յոյժ, յորդորել, յուսալ, յարդարել, յստակ, յօրինվածք, յետոյ, յոյս, անյայտանալ, յամառութիւն, երկյարկանի, յաճախականութիւն:

եա-յա

Արևելահայերենում, երբ բառամիջում արտասանվում է յա, *գրվում է* յա *և ոչ* եա:

Օրինակ՝ սենյակ, մատյան, Պետրոսյան:

Վարժություն 10: Հետևյալ բառերը գրել նոր ուղղագրությամբ:

Մանեակ, մեհեան, Վարդանեան, Մամիկոնեան, մանկութեան, այժմեան, կրթութեամբ, դարձեալ, վայրկեան, կեանք, ատեան, միմեանց, քառեակ:

Վարժություն 11: Նոր ուղղագրության վերածել հետևյալ տեքստերը:

Անցան տարիներ, որքան տարիներ—յայտնի չէ:

Գարնանային արեգակը դեռ նոր սկսել էր քաղել ճոխ բուսականութեան տերևներից վաղորդեան ցօղը, դեռ նոր քնած թռչունները հնչեցնում էին լեռների, անտառների թափուտները իրենց ուրախ ձայներով: Օդը լցուած էր նուրբ, հոգեպարար մառախուղով: Արեգակի առաջին ճառագայթները՝ անցնելով այդ մառախուղի միջով, կարծես անցնում էին սպիտակ շղարշի թափանցիկ տարածութեան միջով: Այդ մշուշի միջով նկարվում էին հեռաւոր լեռները իրենց սպիտակափառ գագաթներով, այդ մշուշի միջով երևում էր Վանայ ծովակը իր գեղագրական եզերքով, այդ մշուշի միջով նշմարվում էր ջրային հսկայ լողորդը, որը, իբրև

մարմնացած յառաջադիմութիւն, սլանում էր արագ-արագ, թողնելով ծովի խաղաղ մակերևոյթի վրայ մի արծաթափայլ շաւիղ, իսկ օդի մէջ ծխային երկար ժապաւէն։

Ոստանից ոչ այնքան հեռու գտնվում էր Ռազմիրան գիւղը։ Այդ գիւղը իր գեղեցիկ դիրքով ամենահին ժամանակներում Ռըշտունի իշխանների զբօսավայրն էր, իսկ յետոյ Արծրունի իշխանների ամառանոցը դարձաւ։ Բայց այժմ նրա մի կողմում, կանաչազարդ բարձրաւանդակի վրայ, կանգնած էր մի սիրուն, քարաշէն տուն։ Նրա մի ճակատը նայում էր դէպի կապուտակ ծովը, իսկ միւս ճակատը նայում էր դէպի մի գեղեցիկ պարտէզ, որ տան առջևից տարածվում էր դէպի ներքև և լայն, ծառազարդ թումբերով աստիճան առ աստիճան իջնում էր մինչև ձորը։ Պարտէզում, այգեպանի սուր դանակը ձեռին, աշխատում էր մի մարդ։ Տարիների ալիքները դեռ նոր էին սկսել արծաթագրել նրա գլխի սև մազերը։ Իսկ թուխ դէմքի վրայ դեռ ևս պահպանուել էր երիտասարդական աշխոյժը։ Նա զգուշութեամբ ճեղքում էր մատաղ տունկերի կեղևը և ճեղքուածքի մէջ անցկացնելով նորաբողբոջ շիւղեր, կապում էր փափուկ թելով։ Նրա մօտ կանգնած էր մի փոքրիկ աղջիկ, գարնանային թեթև հագուստով և յարդեայ մեծ գլխարկով, որի լայն եզերքը հովանիի նման հասնում էր մինչև ուսերը։ Նա ձեռքում բռնած ունէր ջրով լի թիթեղեայ մի թաս, որի մէջ լողում էին դալար բողբոջները։ Առաւօտեան զով օդը վարդագոյն երանգով ներկել էր այդ գեղեցիկ հրեշտակի լիքը թշերը։

(Բաֆֆի, «Կայծեր»)

Վարժություն 12: Դուրս գրել այն բառերը, որոնք նոր ուղղագրությամբ այլ ձևով են գրվում: Գրել դրանց կողքին ավանդական ձևերը:

Օրինակ՝ գլխաւոր–գլխավոր, մօտ–մոտ

Տան գլխաւոր դռան սեմի մօտ, որ նայում էր դէպի պարտէզը, նստած էր մի պառաւ կին։ Վաղորդեան արեգակի ջերմ ճառագայթները կորչում էին նրա պղնձեայ դէմքի խորին կնճիռների մէջ։ Ճերմակ յօնքերի երկար մազերը միախառնվելով դեռ իրանց սև գոյնը պահպանած թերթերունքների հետ, մի առանձին վսեմութիւն էին տալիս նրա խորախորհուրդ աչքերին։ Նա նստած էր անշարժ, որպէս մտածութեան արձանը։ Նայում էր դէպի գեղեցիկ

պարտէզը, ուր աշխատում էր Կարօն։ Նայում էր դէպի սիրունիկ երեխաները, որ պտտվում էին նրա շուրջը. նայում էր դեպի կանաչ, լայնածաւալ անդաստանները, որ Կարօի մշակութեան արդիւնքն էին. նայում էր դէպի բլուրների վրայ արածացող անասունները, որ Կարօի ախոռատնից էին դուրս եկել. նայում էր, և պառաւի երկար տարիներով վշտացած սիրտը լցվում էր անսահման մխիթարութեամբ։ Որքան տանջանք, որքան հալածանք էր կրել այդ զառամեալ պառաւը... որքան թափառել էր նա... իսկ այսօր տեսնում էր դառն աշխատութիւնների քաղցր պտուղը և ուրախանում էր։

Այստեղից երևում էր գիւղը։ Առաւօտեան կիսամռայլի մէջ նա ավելի գեղեցիկ էր երևում։ Այլևս հին գետնափոր խրճիթները չկային։ Այնտեղ, ներքևում, մի հովտաձև տափարակի վրայ, մինը միւսի մօտ շարքով բարձրանում էին ծառազարդ տները, ուղիղ և լայն փողոցների վրայ։ Շինական կոկիկ եկեղեցին, նրա մօտ դպրոցի շէնքը, աչք էին շլացնում։ Առողջ գիւղացիները մաքուր հագնուած, իւրաքանչիւրը գոհ և ուրախ, դիմում էին իրանց գործին։ Կարծես, ամեն օր այդ մարդկանց համար տօն էր, կարծես, նրանք երբէք վիշտ ու նեղութիւն չէին տեսել։

Անցան կռիւները, տիրեց հանգստի և խաղաղութեան ժամանակը։ Այսօր միասին շրջում են մշակութեան, հունձքի, պտղաբերութեան դաշտերի վրայ։ Խելացի ձին այնքան ընտելացած է իր տիրոջ սովորութիւններին, որ գիտէ, թէ ամեն առաւօտ դէպի որ կողմերը պէտք է ման ածել։ Դանդաղ քայլերով անցնում է նա արտերի, մարգերի միջով, այնքան զգոյշ կերպով, որ մի հասկ անգամ կոխ չէ տալիս։ Եթէ մի տեղ ջրանցքը պատռուել էր, և ջուրը վազում էր դէպի հասունացած հունձքը, որ ջրելու կարօտ չէր, եթէ մի տեղ գիւղացու անասունը մտել էր հարևանի արտը և ոտնակոխ էր արել, եթէ մի տեղ մկներ էին յայտնուել, մի խօսքով, եթէ մի տեղ որևէ անկարգութիւն էր նկատում նա, իսկոյն կանգ էր առնում, ծերունու հետախոյզ աչքերը տեսնում էին այդ բոլորը. ոչ մի թերութիւն չէր վրիպում նրա բազմափորձ տեսութիւնից։ Երբ վերադառնում էր գիւղը, կանչում էր գիւղացուն և նրան նկատողութիւն էր անում։ Նրա ամենօրեայ զբօսանքը՝ նրա ամենօրեայ մեծ բաւականութեան զուարճութիւնն էր։ Նա տեսնում էր իր աշխատութեան պտուղները և ուրախանում էր։

(Բաֆֆի, «Կայծեր»)

***

Երկու գրական լեզուների մեջ շատ են բառային տարբերությունները։ Նախ՝ երկու գրական լեզուներում որոշ բառեր հնչյունական տարբեր տեսք ունեն։

Օրինակ՝

Արևելահայերեն	Արևմտահայերեն
փափագ	փափաք
կենտրոն	կեդրոն
արձագանք	արձագանգ
պաղել	տաղել
դժգույն	տժգույն
դժգոհ	տժգոհ
բարդի	բարտի
բեղ	պեխ
նարդի	նարտի

Այնուհետև, բազմաթիվ են երկու գրական լեզուներում նույն իմաստով գործածվող տարբեր բառերը։ Ստորև տալիս ենք այդ բառերի և որոշ բառաձևերի համառոտ մի բառացանկ*։

Արևմտահայերեն-արևելահայերեն համառոտ բառացանկ

ալ—էլ, այլևս
ակռա—ատամ
աղեկ—լավ
աղվոր—գեղեցիկ
աղտ—կեղտ
աղջնակ—փոքրիկ աղջիկ
ամչնալ—ամաչել
անդին—այն կողմ
անկե—նրանից
անոթնալ—քաղցածանալ, սովածանալ
անոթի—քաղցած, սոված
անցուց—անցկացրեց
առջին—առաջը
առտու—առավոտ
առտուն—առավոտյան
ասդին—այս կողմը
ատեն—ժամանակ
ատեն-ատեն—երբեմն-երբեմն, ժամանակ առ ժամանակ
գացած—գնացած
գացի—գնացի
գեշ—վատ
գինովցուցած—հարբեցրած
գոց—փակ
գոցել—փակել

* Նախորդ, սույն և հաջորդ բառացանկերը կազմելիս օգտագործել ենք Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունը (հ. II)։

գրատուն—գրախանութ
դեղագիր—դեղատոմս
դյուրին } —հեշտ
դյուրավ }
ելլել—վեր կենալ, դուրս գնալ
եկուր—ե՛կ, արի՛
ետին—հետևը
ետքը—հետո
երթալով—հետզհետե, գնալով
երկննալ—երկարել
երկնցած—երկարած
երկվայրկյան—վայրկյան
երկուք—երկուս
երևիլ—թվալ
զատել—առանձնացնել, ջոկել
զմելի—գրչահատ
էրիկ—ամուսին, մարդ
էրիկ-կնիկ—մարդ ու կին
ելլալ—լինել
ընել—անել
ընթերցատուն—ընթերցարան
ըսել—ասել
ըսի-ըսավ—ասեկոսե
թաց խխում—շատ թրջված
թոթվել—թափ տալ
թուքնել } —թքել
թքնել }
իյնալ—ընկնել
ինկած—ընկած
իրարու հետե—իրար հետևից
իրիկվան—երեկոյան
լեցնել—լցնել
լեցուն—լիքը
լեցուցած—լցրած
խածնել—կծել
խորեն—խորքից
խորքը—խորը
խոֆած—ցնորած
ծլիլ—կռանալ
կակուղցնել—կակղեցնել
կաղամար—թանաքաման
կաղանդ—նոր տարի
կայնած—կանգնած
կայնիլ—կանգնել
կանչվռտել—գոռգոռալ
կանուխ—վաղ
կենալ—կանգնել
կեցած—կանգնած
կեցուց—կանգնեցրեց
կլլել—կուլ տալ
կհուսամ—հույս ունեմ
կղպել—կողպել
կորսված—կորած
կորսվիլ—կորչել
կռնակ—մեջք
կրնա—կարող է
կրնալ—կարողանալ
կրնային—կարող էին
կրոնք—կրոն
կօգտե—բավական է
հավկիթ—ձու
հարկավ—իհարկե
հեծելանիվ—հեծանիվ
հիմ—հիմք
հիմակուհիմա—առայժմ
հյուսիսայգ—հյուսիսափայլ
հոդ—այդտեղ
հոդկե—այդտեղից
հոն—այնտեղ
հոնկե—այնտեղից
հոս—այստեղ
հոսկե—այստեղից
հով—քամի
ձգել—գցել
ղրկել—ուղարկել
ճանչնալ—ճանաչել
ճանչվոր—ծանոթ
ճանչցած—ճանաչած

ճմրթկել—տրորել
մանչ—տղա
մարախ—մորեխ
մարիլ—հանգչել (լույսի)
մելան—թանաք
մեկեն—հանկարծ, անսպասելիորեն
մեկտեղ—միասին
մեյմեկ—մեկմեկ
միսմինակ—մեն-մենակ
մորեղբայր—քեռի
նմանցնել—նմանեցնել
նորեն—նորից, դարձյալ, կրկին
շատոնց—վաղուց, շուտվանից
պագնել—պաչել
պահարան—ծրար
պահք—պաս
պաղ—ցուրտ, սառն
պզտիկ—փոքր
պզտիկություն—ստորություն
պլլվիլ—փաթաթվել
պնակ—ափսե
պոռալ—բղավել
սահմռկիլ—սարսափել
սյամ—շեմք
սորվիլ—սովորել
սպաննել—սպանել
ստեպղին—գազար
սուղ—թանկ
վախնալ—վախենալ
վայլել—սազել
վայրկյան—րոպե
վար—ներքև, ցած, ցածր, վայր
վարը—ցած, ցածր
վարի—ներքևի
վերի—վերևի
ցած—ցածր
ցուցնել—ցույց տալ
ուրկե՞—որտեղի՞ց
փակչիլ—կպչել
փլիլ—փուլ գալ, փլել
փլցնել—քանդել
քալել—քայլել
քակել—քանդել
քանիին—քանիսին
քանին—քանիսը
քարյուղ—նավթ
քերթվել—քերծվել
քիշենքիշ—առնվազն
քնանալ—քնել
քով—մոտ, կողքին

Վարժություն 13: Գտնել հետևյալ բառերի համապատասխան արևելահայերենը:

Ակռա, աղեկ, աղվոր, ատեն, ատեն-ատեն, դեշ, շտկել, պաղ, պզտիկ, քով, կլլել, պոռալ, պնակ, զմելի, մելան, պահարան, խածնել, հավկիթ, էրիկ, կանուխ, ճերմակ, գոցել, երկվայրկյան, մանչ, գոց, սուղ, կոնակ, գամ։

Վարժություն 14: Գտնել հետևյալ բառերի արևելահայերեն նույնանիշները և նրանցով կազմել մեկական նախադասություն:

Քանիին, վար, պահք, շուք, մորթ, միսմինակ, մեյմեկ, հիմ, կղպել, ծախք, ալ, երկուք, առտու, անդին, հոս, հոդ, հոն, նորեն, շատուց, ուրկե, վարի։

Արևելահայերենի հնչյունական համակարգը

Արևմտահայերի և արևելահայերի գրական արտասանությունը զգալի չափով տարբեր է իրարից։

Առևելահայերենը համեմատաբար հարազատ է մնում մեր հին գրական լեզվի՝ գրաբարի արտասանությանը, իսկ արևմտահայերենը, հիմնված լինելով անմիջականորեն Պոլսի բարբառի վրա, զգալի չափով փոխել է արտասանությունը, չնայած երկու գրական լեզուներն էլ հարազատորեն օգտվում են մեսրոպյան տառերից։

Այսպիսով, մենք մեծավ մասամբ նույն ձևով գրելով՝ կարդում ենք տարբեր կերպ։

Երկու գրական լեզուների հնչյունական համակարգի տարբերությունները խիստ արտահայտվում են նոր փոխառյալ բառերի, հատկապես անձնանունների մեջ։

Այսպես, հին աշխարհագրական անունների ձևը անփոփոխ թողնելով, արևմտահայերը դրանք կարդում են ձայնեղները շնչեղ խուլ և խուլերը ձայնեղ դարձնելով։ Օրինակ՝ երկու գրական լեզուներում էլ գրվում են՝ Եգիպտոս, Գաղիա, Պելեպոնես, Գերմանիա, բայց արևելահայերը կարդում են ավանդական հնչմամբ, ինչպես որ գրված է, իսկ արևմտահայերը հնչում են՝ Յեգիբդոս, Բելոբոնես, Քաղիա, Քերմանիա։

Աշխարհագրական անունների նոր փոխառություններ արևմտահայ գրականը կատարում է գերազանցապես իտալական ձևից, արևելահայերենը՝ ռուսական։

Արևմտահայերեն	Արևելահայերեն
Պելճիքա	Բելգիա
Զուիցերիա	Շվեյցարիա
Շոֆէտ	Շվեդիա
Մարսիլիա	Մարսել
Արճենթին	Արգենտինա
Պրիսել	Բրյուսել
Ռումանիա	Ռումինիա
Տանիմարքա	Դանիա
Պուքրեշ	Բուխարեստ
Ֆրանսա	Ֆրանսիա

Նույն կերպ խստորեն իրարից տարբերվում են հատուկ անունների ձևերը։

Արևմտահայերեն	Արևելահայերեն
Վիքթոր Հիւկօ	*Վիկտոր Հյուգո*
Կի-տը-Մօփասան	*Գի-դը-Մոպասան*
Կոկոլ	*Գոգոլ*
Թօլըսթոյ	*Տոլստոյ*

Արևելահայերենի այբուբենը ունի 39 տառ, որոնք են՝

Ա ա Բ բ Գ գ Դ դ Ե ե Զ զ Է է Ը ը Թ թ Ժ ժ Ի ի Լ լ Խ խ Ծ ծ Կ կ Հ հ Ձ ձ Ղ ղ Ճ ճ Մ մ Յ յ Ն ն Շ շ Ո ո Չ չ Պ պ Ջ ջ Ռ ռ Ս ս Վ վ Տ տ Ր ր Ց ց Ու ու Փ փ Ք ք Եվ և Օ օ Ֆ ֆ։

Արևելահայերենի այբուբենը 39 տառով արտահայտում է 36 հնչյուն։

Օ *հնչյունը գրվում է* օ *և* ո *տառերով,* է *հնչյունը՝* է *և* ե*-ով։ Օրինակ՝* or, նոr, էակ, տեr *և այլն։ Եվ տառով արտահայտվում է մերթ երեք հնչյուն՝* յէվ *(օրինակ՝* թեե*—կարդացվում է* թէյէվ*), մերթ երկու՝* էվ *(օրինակ՝* բարև*—կարդացվում է* բարէվ*)։*

Այն հնչյունները, որոնք միայն ձայնից են կազմված և արտաբերվում են առանց զգալի արգելքի, կոչվում են ձայնավորներ։ Հայերենի ձայնավորներն են՝ ա, է(ե), օ(ո), ի, ու, ը։ *Արևելահայերենի և արևմտահայերենի ձայնավորների արտաբերման մեջ տարբերություններ չկան։*

Այն հնչյունները, որոնք արտաբերվում են փակվածքով կամ զգալի նեղվածքով և կազմված են կամ միայն աղմուկից, կամ ձայնից և աղմուկից, կոչվում են բաղաձայններ։ Հայերենի բաղաձայններն են.

բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ռ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ֆ։

Արևմտահայերենում և արևելահայերենում տարբեր ձևով են կարդացվում բաղաձայն տառերի մեծ մասը։

լ, մ, ն, ր, ռ, յ, հ, վ, ֆ *տառերը և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում նույն կերպ են հնչվում։*

Այն բաղաձայնները, որոնց արտաբերման ժամանակ ձայնալարերը թրթռում են, որի պատճառով և աղմուկի հետ միասին նաև ձայն է ստացվում, կոչվում են ձայնեղ բաղաձայններ։

Արևելահայերենի ձայնեղ բաղաձայնները գրվում են հետևյալ տառերով՝ բ, գ, դ, ձ, ջ, զ, ժ, ղ, վ, մ, յ, լ, ն, ր, ռ։

Մնացած բաղաձայն հնչյունները կոչվում են խուլ։ Խուլ բաղաձայնները իրենց մեջ բոլորովին ձայն չունեն, այսինքն՝ նրանց արտաբերման ժամանակ ձայնալարերը չեն թրթռում։

Արևելահայերենի խուլ հնչյունները գրվում են հետևյալ տառերով՝ պ, կ, տ, ս, շ, ծ, ճ, խ, ֆ, հ, փ, f, թ, ց, չ։

Վերջին հինգ տառերով գրվող հնչյունները՝ փ, թ, f, ց, չ, իրենց մեջ շունչ ունեն, այդ պատճառով էլ կոչվում են շնչեղ խուլեր։

Այսպիսով, արևելահայերենի բաղաձայնները կազմում են երեք այսպիսի խմբեր՝

ձայնեղ	խուլ	շնչեղ խուլ
բ	պ	փ
գ	կ	ք
դ	տ	թ
ձ	ծ	ց
ջ	ճ	չ
վ	ֆ	
ղ	խ	
զ	ս	
ժ	շ	
	հ	

Առանձին են մնում լ, r, ռ, մ, ն, յ հնչյունները, որոնք մոտ են ձայնավորներին և կոչվում են ձայնորդներ։

ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Արևելահայ գրական լեզվի նոր ուղղագրությունը ավանդական-հնչական է, այսինքն՝ ելնում է հետևյալ երկու սկզբունքներից.

ա) ինչքան հնարավոր է պահպանել բառերի հնագույն, ավանդված ուղղագրությունը,

բ) ինչքան հնարավոր է բառերի ուղղագրությունը մոտեցնել նրանց այժմյան հնչմանը՝ շաղճատելով, սակայն, բառերի տեսքը։

Առաջին սկզբունքից ելնելով գրում ենք՝ աղջիկ, մարդ, օձ, չնայած այն բանին, որ արտասանում ենք՝ ախչիկ, մարթ, օց։

Երկրորդ սկզբունքի հիման վրա արտասանում և գրում ենք՝ հյուր (բայց ոչ հիւր), հույս (բայց ոչ յոյս), աղա (բայց ոչ տղայ)։

Ձայնավորների և երկհնչյունների ուղղագրությունը

Է-Ե

Բառասկզբում, երբ լսվում է հնչյունը, գրվում է է:

Օրինակ՝ էակ, էջմիածին, էություն, էջ, էժան, էլեկտրական, էլ, էգուց:

Երբ բառը բաղադրյալ է և է-ով սկսվող բաղադրիչ ունի իր մեջ, է-ի գրության կանոնը պահպանվում է:

Օրինակ՝ անէական, ամենաէժան, մանրէ, երբեէ, որևէ, ինչևէ, ուրևէ, մանրէաբանություն, վայրէջք, էլեկտրաէներգիա, ելևէջ:

Բացառություն են կազմում օժանդակ եմ, ես, ենք, եք, են *բայերը: Առանձին լինելու դեպքում այդ բառերում* ե-ն *արտասանվում է* յէ: *Օրինակ՝* եմ-ը *(յէմը) օժանդակ բայ է: Երբ դրանք հաջորդում են բաղաձայնով վերջացող բառերին, բառասկզբում լսվում է* է, *բայց գրվում է* ե:

Օրինակ՝ գրում եմ, գրում ես, գրում ենք, գրում եք, գրում են. խոսում եմ, խոսում ես, խոսում ենք, խոսում եք, խոսում են:

Բառասկզբում, երբ լսվում է յէ, *գրվում է* ե:

Օրինակ՝ ես, երկու, երեխա, երկաթ, եղբայր, երեկո, Երևան:

Բառամիջում՝ պարզ բառերի մեջ երբ լսվում է է *հնչյունը, գրվում է* ե *տառը:*

Օրինակ՝ տեր, կես, դեզ, սեզ, վեպ, գեր, հրավեր, պարտեզ, անեծք, վեճ, զենք, նվեր, պատվեր *և այլն:*

Բառավերջում է հնչյունը լսելիս պետք է գրել ե:

Օրինակ՝ մարգարե, հրե, կրակե, ինչևիցե, որևիցե, ուրևիցե, երբևիցե:

Վարժություն 15: Արտագրել տեքստը և ընդգծել այն բառերը, որոնց մեջ կա է հնչյունը: Բացատրել՝ ինչո՞ւ դրանք է կամ ե տառով են գրված:

Հիշում եմ, անցյալ տարի էր: Մենք Սևան էինք գնում ինքնաթիռով: Երևանը հետզհետե ծածկվեց հորիզոնի հետևում: Սևանը հայտնվեց միանգամից: Լիճը առաջինը նկատել էր Էմման: Երաժշտագետ Սեդան դեռ չէր էլ հասցրել իր հետ վերցրած վեպից մի բանի էջ ընթերցել, իսկ սևանցի սահեր Գայանեն իր գեր ուղեկցին ցույց էր տալիս տատիկից ստացած նվերները, երբ ինքնա-

թիռը վայրէջք կատարեց։ Էլեկտրաինժեներ Էդիկը քայլում էր մանրէաբան Մամբրեյանի և հնէաբան Դանիելյանի հետ։

— Չէի կարծում, թե այսքան շուտ կհասնենք,— ասում էր նա։ Մեզանից որևէ մեկը երբևէ չէր եղել որևէ էլեկտրակայանում, և մենք հետաքրքրությամբ դիտում էինք Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը, որը մեր հայրենիքին տալիս է էժան էլեկտրաէներգիա։

Վարժություն 16: Որոշել՝ է, թե ե պետք է գրել բաց թողնված տառերի փոխարեն:

...ր...կո, վր...ժ, պարտ...գ, ամ...նա...ժան, մորթ... (գլխարկ), գ...նք, գր...ի, ...րգ...ցողություն, վայր...ջք, ...րկար, վ...ճ, ...ր...ս, ...ղջ...րու, մարգար..., նվ...ր, կաթի ս...ր, տ...ր, կ...տ (ձուկ), ...լի, ...լիր, որևից..., տի...զ...րք, ասպար...զ, հրավ...ր, գ...ր, ս...գ, ...ջ, դ...զ, ան...ծք, դ...մ, օծ...լ, փոխար...ն, օր...նք, ապավ...ն, հանդ...պ, վ...պ, անվր...պ, հանդ...ս, կ...ս, մ...ջ, ...լ...կտրականացում, ...լ...կտրոն,

Վարժություն 17: Գրեք ձեզ ծանոթ այն բառերը, որոնց մեջ է-ի փոխարեն արևելահայ ուղղագրությամբ ե տառը պետք է գրել:

Օրինակ՝ սէր—սեր, զենք—զէնք։

օ-ո

Բառասկզբում, երբ լսվում է օ հնչյունը, գրվում է օ տառը։

Օրինակ՝ օր, օրիորդ, օդ, օգուտ, օժիտ, օծել, օշարակ, օթևան, օրենք, օվկիանոս, Օվսաննա, օազիս, օրհաս, օժանդակել, օրորոց, օղակ, օտար, օձիք, օճառ:

Բացառություն է կազմում ով *(հոգն.* ովքեր*) բառը, որի սկզբում լսվում է օ, բայց գրվում է* ո։

Երբ բառը բաղադրյալ է և օ-ով սկսվող բաղադրիչ ունի իր մեջ, օ-ի գրության կանոնը պահպանվում է։

Օրինակ՝ այսօր, անօդ, հանրօգուտ, անօրեն, անօթևան, ամենօրյա, ճնգօրյակ, ոսկեզօծել:

Բառամիջում, երբ լսվում է օ, գրվում է ո:

Օրինակ՝ զորք, ճզոր, բոլոր, ստոր, անոթ, կարոտ, հոտ, արդյոք, տոն:

Բառասկզբում, երբ լսվում է վօ, գրվում է ո:

Օրինակ՝ ոտք, որսորդ, որդի, ոսկի, որքան, Որոտան:

Մանրություն.— Ոչ հայկական նոր փոխառյալ անունների սկզբում երբ արտասանվում է վo, գրվում է վn:

Օրինակ՝ Վոլգա, Վոլոդյա, վոլտ, բարձրավոլտ:

Վարժություն 18: Արտագրել տեքստը և ընդգծել այն բառերը, որոնց մեջ կա o հնչյունը: Բացատրել, թե ինչո՞ւ այն o կամ n տառով է գրված:

Այսօր օրիորդ Օվսաննան, Օնիկը և Օգսենը աշխատում են դպրոցի բակում: Ծաղիկների տոնի օրը, եկող հնգօրյակի վերջում, նրանք իրենց օթևանների շորս բոլորը կոսկեզօծեն գույնզգույն ծաղիկներով: Ով ուզում է տոնի օրը հանրօգուտ աշխատանք կատարել, օժանդակել ծաղկասերներին, թարմ օդ շնչել, թող գա դպրոցամերձ հողամասը:

Վարժություն 19: Որոշել՝ o, թե n պետք է գրել բաց թողնված տառերի փոխարեն:

...վսաննան ...բագիր է պահում: ...բագրում նա ամեն...բյա գրանցումներ է կատարում ...դի ջերմաստիճանի, իր ճանապարհ...րդությունների և տպավ...ությունների, ծան...թների բ...լ...ր պատմածների մասին: Անցյալ ...բը, ...բինակ, իր հ...ր և մ...ր մ...տ հյուր էին եկել ...ամնադիր ...բին և ...դաշու ...սկանը: Նրանք սիր...ղ ...բս...բդներ են: Նրանք պատմեցին, ...բ մի ...բ, ասնցյալ յ...թն...բյակի վերջում, այցի էին գնացել ծան...թ անտառապահի մ...տ: Անտառում շատ վայրի խաղ...ղ կար: Ամեն...բյա հ...բդ անձրևները ...ղ...ղել էին նրա ...ղկույզները, և խաղ...ղի հատիկները փայլում էին արևի ճառագայթների տակ:

Առավ...տյան շուտ արթնանալով նրանք անտառապահի ...բդու հետ անտառ գնացին: Հանկարծ հեռվից ...գնության գ...չյուններ լսվեցին: «...վ կա այդտեղ, ...գնեցեք»,—կանչում էր մեկը: Պարզվեց, ...բ հ...վվին ...ղակել էին գայլերը, և նա չէր կար...ղանում նրանցից ...ձիքն ազատել: ...բս...բդներին տեսնել...վ՝ բ...լ...ր գայլերը փախան դեպի ձ...բը:

Վարժություն 20: Գրեցեք ձեզ ծանոթ այն բառերը, որոնց մեջ o-ի փոխարեն արևելահայ ուղղագրությամբ n պետք է գրել:

Օրինակ՝ հզor–հզոr:

Վարժություն 21: Բաց թողնված տառերի փոխարեն գրել n կամ o:

Շաբաթ...բյակ, հզ...բ, ...գ...ստ...ս, միջ...բե, մեղմ...բ...բ, ...սկեզ...ծ, բարձր...բակ, ան...բինակ, հպարտ...բեն, հանր...գուտ,

տն...բեն, ...տար, ապ...բինի, այդ...բինակ, ...բեց...ր, հ...գուտ, ան...ր...շ, բար...բություն, բ...լ...ր, տար...բինակ, սարդ...ստայն, ան...բգանական, ...բբստ...բե, ան...թևան, ան...ղ...ք, պետ...պե-բա, ցածրավ...լտ։

ը

Բառասկզբում լսվող ը-ն գրվում է միայն ղ, մ, ն *բաղաձայն-ներից առաջ և* ըստ *բառի մեջ։*

Օրինակ՝ ըստ, ըղձական, ըմբոստ, ընդհանուր, ընտիր: *Բայց՝* սկսել, զբաղվել, զգալ, շտապել, սպանել, ստիպել, սմողել, սփոփել:

Եթե բառը բաղադրյալ է և ը-ով *սկսվող բաղադրիչ ունի իր մեջ,* ը-ի *գրության կանոնը պահպանվում է։*

Օրինակ՝ անընդհատ, դասընկեր, հատընտիր, օրըստօրե, *բայց՝* անզգա, անշտապ:

Վարժություն 22: Որոշել՝ ը պե՞տք է, թե՞ պետք չէ գրել բաց թողնված տառերի փոխարեն:

.ինտիր, համբանդհանուր, անբանդհատ, օր.ստօրե, սրբանթաց, .սկսել, մեկբանդմիշտ, հատբանտիր, բանկեր, ...զբաղվել, արագ-բանթաց, բաստ, դաս.բանթաց, ...զբոսնել, անբանդոնելի, բանտրել, դասբանկեր, բանմբիշ, .բանկդմվել, ռադիոբանդունիչ, ...սպանել։

Տողադարձի ժամանակ մնացող վերջին վանկի և մյուս տող տարվող առաջին վանկի մեջ հնչվող ը-ն *գրվում է։*

Օրինակ՝ Մը-կըր-տիչ, ըզ-գաց-վել, ըս-կը-սել:

Վարժություն 23: Հետևյալ բառերը բաժանել վանկերի, վե-րականգնելով գաղտնավանկ ը-ն:

Ըզգալ, Ընբոստանք, շպարվել, Ընթափվել, տղա, գտնել, ժրաջան, Ըստանալ, զղջալ, կրկին, դրդել, կրկնություն, լրջմտություն, տրբ-տրմություն, թմբկահար, դղրդյուն, սկսել, սկսվել, բռնկվել, սկզբունք, մշտնջենավոր, թրթնջուկ, կնտնաց, տրտնջալ, սկզբ-նական, բարձրաբերձ, բեղմնավոր, մարտնչել։

յա-իա

Իա *երկհնչյունը հաճախ արտասանվում է* յա *կամ նրան մոտ։*

Իա *գրվում է՝*

ա) Հայկականացված հետևյալ մի քանի բառարմատներում՝ հեքիաթ, ծիածան, կրիա, բամիա, փասիան, խավիար, դաստիա-րակ, օվկիան, օվկիանոս:

բ) Որոշ հատուկ անուններում՝ Անանիա, Զաքարիա, Երեմիա, Եղիա, Եղիազար, Սուրիաս, Մարիամ, Ուստիան, Արփիար, Բունիաթ:

գ) Զի, թի, լի, ճի, մի, դի *բառերից և* ի-*ով վերջացող մի շարք բազմավանկ բառերից կազմված նոր բառերի մեջ, երբ* ի-*ին հաջորդում է* ա:

Օրինակ՝ ձիավոր, թիավարել, լիանալ, ճիացմունք, միակ, դիահերձում, գյուղացիական, ուղիական:

Ի-*ով վերջացող բառերից* ակ *նվազական մասնիկով կազմված բառերի մեջ գրվում է* -յակ:

Օրինակ՝ ուղի+ակ=ուղյակ, ճոգի+ակ=ճոգյակ:

դ) Եվրոպական լեզուներից և ռուսերենից նոր փոխառնված բառերում, հատկապես տեղանուններում:

Օրինակ՝ պրոլետարիատ, սոցիալիզմ, Ասիա, Գերմանիա, ֆիմիա, Սոֆիա: *Մարդկանց հատուկ անունների վերջում գրվում է* յա, *եթե* իա-*ի* ի-*ն շեշտ չի կրում:*

Օրինակ՝ Ասյա, Օֆելյա, Ամալյա, Սոֆյա, *բայց և՝* Լի՛ա, Մարի՛ա:

Հայերեն բառերի մեջ մնացած դեպքերում յա *լսվելիս գրվում է* յա:

Օրինակ՝ երկաթյա, մատյան, միմյանց:

Մանրություն.—Հրեա *(ազգի անունը) բառը գրվում է* եա. *այլ է հրյա, որը նշանակում է կրակե:* Յա *երկհնչյունը* եա *է գրվում նաև* ֆվեարկել *և* Անդրեաս *բառերում:*

Վարժություն 24: Որոշել՝ ի թե յ պետք է գրել բաց թողնված տառերի փոխարեն:

Թ...ավարել, պատ...ան, գիտութ...ուն, լ...ալուսին, հ...ասքանչ, մ...անալ, ման...ակ, լ...առատ, միլ...արդ, հա...ացք, երեմ...ա, թ...ակ, դ...ակ, քառ...ակ, Իտալ...ա, հոգ...ակ, տասն...ակ, Բելգ...ա, քաղաքաց...ական, ոսկ...ա, որդ...ակ, կղզ...անալ, դաստ...արակություն, էջմ...ածին:

յ ձայնակապի ուղղագրությունը

Երբ հայերեն բառերում կից ձայնավորների միջև լսվում է յ, *այն գրվում է միայն* ա-*ից և* ո-*ից հետո:*

Օրինակ՝ երեխայական, նայել, տեղային, կայան, բարոյական, տղայի, Մարոյի, *բայց՝* միանալ, գիտեին, էակ:

Որպես ձայնակապ հաճախ հանդես է գալիս բառի կամ արմատի յ *հնչյունը, որը միշտ գրվում է:*

Օրինակ՝ հայ-հայասեր, թեյ-թեյել, Սերգեյ-Սերգեյի *և այլն։*

Վարժություն 25: Որոշել՝ հետևյալ բառերի մեջ ձայնավորների միջև բաց թողնված տեղերում յ պետք է գրել, թե ոչ:

Հա...ասեր, է...ական, մի...անալ, Կարո...ի, շո...ել, բարո-...ագետ, Վերդի...ի, գտնե...ի, մնա...ուն, երեկո...ի, տի...եզե-րական, հաճո...անալ, Հա...աստան, ձի...ով, է...իր, գինի...ով թե...ասեղան, մարգարե...ություն, Անդրե...աս, է...ություն, Մի-քա...ել։

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի ձայնավորի հնչյունափոխությունը

Ի *ձայնավորը փակ վանկում՝*

ա) Սովորաբար փոխվում է ը-*ի, որը չի գրվում։*

Օրինակ՝ գիր-գրել, բրինձ-բրնձի, կիրթ-կրթություն:

բ) Սղվում է։

Օրինակ՝ թարգմանիչ-թարգմանչական, հովիվ-հովվական, մոխիր-մոխրանալ, պանիր-պանրի:

Ի *ձայնավորը բաց վանկում՝*

ա) Երբեմն միանալով ա *ձայնավորին տալիս է* է, *որը բառա-միջում գրվում է* ե *տառով։*

Օրինակ՝ գինի-ա-տուն=գինետուն, ոսկի-ա-բեր=ոսկեբեր, շոգի-ա-քարշ=շոգեքարշ, ուղի-ա-կից=ուղեկից:

բ) Երբեմն սղվում է։

Օրինակ՝ կենդանի—կենդանական, բերի—բերություն, կա-տաղի—կատաղություն, թշնամի—թշնամանք:

Վարժություն 26: Հետևյալ բառերը փոփոխել այնպես, որ նրանք ենթարկվեն հնչյունափոխության:

Բիծ, գիժ, գիծ, գին, գիրկ, թիվ, ժիր, լիճ, լինդ, խեղճ, խինդ, խիստ, ծիլ, ծին, կիր, կիրթ, կից, կին, կշիռ, հին, հինգ, ճիշտ, միշտ, միրգ, միս, միտք, նիշ, նինջ, շիշ, շիվ, պիղծ, պինդ, ջիլ, սիրտ, վիշտ, վիզ, ցից, քիթ, քիմք, հաղորդիչ, ձեռագիր, գիր, գլխագիր, պարսիկ, շապիկ, մարդիկ, ճահիճ, բաժին, աղախին, մարմին, սոսինձ, նարինջ, երգիչ, գրիչ, ուսուցիչ, կռիվ, պատիվ, խնդիր, նախիր, եկեղեցի, մորթի, վայրենի, փոշի։

Օրինակ՝ բիծ-բծեր, գիժ-գժեր, թիվ-թվի:

Վարժություն 27: Որոշել՝ ինչպիսի՞ հնչյունափոխություն է կատարված հետևյալ բառերի մեջ: Վերականգնել արմատների չհնչյունափոխված ձևերը:

Գժվել, գծագիր, գնահատել, գրավոր, գրվել, թվարկել, ժրանալ, լճացում, լնդախտ, խնդալ, խղճմտանք, խստություն, ծլել, ծնունդ, կրթություն, կցել, կրքոտ, հնանալ, հնգանոց, ճշտապահ, մշտական, մրգատու, մսավաճառ, քմահաճ, ձեռագրատուն, պարսկական, մարդկային, ճահճային, բաժնետոմս, մարմնական, սոսրնձել, երգչախումբ, գրչածայր, կովախնձոր, խնդրագիրք, նախրապան, եկեղեցական, մորթազերծ, վայրենանալ, փոշեխառն, հողակցում, ուղղագիծ։

է ձայնավորի հնչյունափոխությունը

Շեշտը կորցնելով է-ն *սովորաբար ավանդաբար փոխվում է* ի-*ի։*

Օրինակ՝ գեր *(ավանդական* գէր*)*— գիրանալ, հրավեր *(ավ.* հրավէր*)*—հրավիրել, վեճ *(ավ.* վէճ*)*—վիճել *և այլն։*

Վարժություն 28: Հետևյալ բառերը փոփոխել այնպես, որ է-ն (որը գրված է ե տառով) հնչյունափոխվի ի-ի:

Սեր, տեր, մեջ, գեր, հրավեր, սեգ, դեզ, անեծք, վեճ, դեմ, զենք, շենք, փոխարեն, ապավեն, հանդեպ, պարտեզ, մեջ, հանդես, կես, վեմ։

Վարժություն 29: Որոշել՝ ի՞նչ հնչյունափոխություն է կատարված հետևյալ բառերում:

Վիմաքանդակ, կիսարար, միջանցք, հանդիսավոր, պարտիզան, հանդիպել, օրինական, ապավինել, շինարարություն, փոխարինել, վիճաբանություն, զինվել, հրավիրատոմս, դիզել, գիրություն, սիգապանծ, շիկացում։

ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը

ՈՒ *ձայնավորը՝*

ա) Փակ վանկում սովորաբար դառնում է ը, *որը չի գրվում։*

Օրինակ՝ բուֆ-բֆահալած, գութ-գթառատ, թուխ-թխանալ, լուծ-լծել *և այլն։*

Բազմավանկ բառերի վերջի փակ վանկում երբեմն սղվում է։

Օրինակ՝ աշուն-աշնան, գարուն-գարնան, երեսուն-երեսնական *և այլն։*

բ) Բաց վանկում վերածվում է վ-*ի։*

Օրինակ՝ լեզու-լեզվաբան, ձու-ձվատու, լու-լվածաղիկ, շու-շվել, մեղու-մեղվանոց, առու-ավակ, Բաֆու-բաֆվեցի:

Վարժություն 30: Հետևյալ բառերը փոփոխել այնպես, որ ու-ն ենթարկվի հնչյունափոխության:

Բուք, բեկում, բութ, բուն, բուռ, բուրդ, գութ, գունդ, դունչ, դուրս, զուսպ, զուտ, զուրկ, թութ, թուզ, թուխ, թուղթ, թումբ, թուշ, թուփ, թուր, լուծ, լուռ, լուր, լուրջ, խումբ, անկում, խունկ, խուրձ, խուց, խուփ, ծուխ, ծուծ, ծուռ, կուշտ, կուրծք, հունձ, մութ, մուխ, մունջ, մուտք, մուգ, նուրբ, շփում, շուն, շունչ, ջուր, ռումբ, սուգ, սուղ, սուտ, սուր, սուրբ, սուրճ, ցուրտ, փունջ, քուն, ծունկ, մուգ, դուստր, գլուխ, պտուղ, սնունդ, սերունդ, շարժում, փոխակերպում։

Վարժություն 31: Որոշել՝ ի՞նչ հնչյունափոխություն է կատարված հետևյալ բառերում: Վերականգնել չհնչյունափոխված ձևերը:

Ցրտահարություն, մկնդեղ, գլխավոր, պտղաբերել, մգանալ, նրբություն, խմբակ, գիր, թրատել, լռություն, լրատու, զսպել, գրկել, բրգատու, բնավեր, բռնել, բքահալած, խնկարկել, սրբություն, ծռել, լրջանալ։

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ույ *երկհնչյունը շեշտազրկվելով հաճախ փոխվում է* ու-ի։

Օրինակ՝ բույր–բուրել, լույս–լուսավոր, հույս–հուսատու, բույս–բուսական *և այլն։*

Որոշ բառերում ույ *երկհնչյունը սղվում է։*

Օրինակ՝ կապույտ–կապտավուն, սառույց–սառցահատ, բույն–բնավեր:

Յա *(գրաբարյան* եա *կամ* եայ*) երկհնչյունը որոշ բառերում դառնում է է (որը բառի մեջ գրվում է* ե *տառով)։*

Օրինակ՝ մատյան—մատենադարան, ատյան—ատենական, վայրկյան–վայրկենական *և այլն։*

Յու *երկհնչյունը* ձյուն, ալյուր *և* արյուն *բառերից կազմված մի շարք բառերում սղվում է կամ դառնում է* ը:

Օրինակ՝ ալրաթաթախ, արնավառ, ձնծաղիկ *և այլն։*

Վարժություն 32: Որոշել՝ ինչ հնչյունափոխություն է կատարված հետևյալ բառերում: Վերականգնել չհնչյունափոխված ձևերը:

Կառուցում, զրուցել, հուզմունք, համբուրել, վարագուրել, կուրություն, հրապուրել, թունավոր, ծուլություն, լուսավոր, տուժել։

Վարժություն 33: Որոշել՝ ի՞նչ հնչյունափոխություն է կատարված հետևյալ բառերում: Վերականգնել չհնչյունափոխված ձևերը:

Բուրավետ, դիտել, այգետունկ, հետաքրքրություն, նկարագրել, ընկուզենի, բնիկ, գունատ, հուսակտուր, զուգահեռ, եղջերավոր, բուրավետ, հոգեկան, լուսանկարչատուն, վայրկենաբար, բնութագրել, կապուտակ, ծաղկաստան, կիսագրագիտություն, անփութորեն, ձնագնդի, գունավոր, գաղտնագրություն, զեկուցագիր, թուլություն, զրուցատիրություն, անասնաբուծություն, զեկուցագրեր:

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բ-Պ-Փ

Վարժություն 34: Ուսուցչի օգնությամբ կարդացեք հետևյալ բառերը: Յուրաքանչյուր բառով կազմեցեք մեկական նախադասություն:

Բ	Պ	Փ
բադ	*պատ*	*փաթաթվել*
բակ	*պակաս*	*փակ*
բայց	*պայտ*	*փայտ*
բութ	*պուտ*	*փութ*
բառ	*պար*	*փարվել*
բուռ	*պուրակ*	*փուռ*
բաբախել	*պապակ*	*փափագ*

Վարժություն 35: Կարդալ տեքստը՝ հատկապես ուշադրություն դարձնելով **բ, պ, փ** տառերի արևելահայ ճիշտ հնչմանը:

Պապը նստել էր պուրակի հսկա բարդու տակ դրված բազկաթոռին, իսկ նրա փոքրիկ թոռնիկները՝ Բաբիկը և Փեփրոնեն, խաղում էին խաղալիք բադի հետ, զբոսայգում մի պատից մյուսը վազում, ուրախանում:

— Մի չարչարեք բադիկին,— ասաց պապիկը,— ա՜յ, եկեք ես ձեզ իմ մանկությունից մի պատմություն անեմ:

Այստեղ, ուր այսօր բուրում են պուրակի ծաղիկները, հացի մի հին փուռ կար: Մենք ապրում էինք այդ փուռի բակում: Հարեվաններս՝ մի մայր ու չորս որբ երեխաներ, մի բադ ունեին: Բադը, բակի առվակում մի քիչ լողալուց հետո, կանգնում էր բակի պատին ու աչքերը փակ ննջում: Բայց բավական էր, որ փուռի բակում

ձիու պայտի կամ կառապանի փայտի ձայնը լսվեր, բադը, շարժելով իր պուտ-պուտ պոչը, կարծես պար գալով, իր բութ կտուցը առաջ մեկնած վազում էր փուռ, մի բերան հաց խնդրելու։ Հացը նա չէր ուտում, այլ բերում էր որբուկներին։ Բադը հացը բերում էր թե չէ, որբուկները պատի մոտ փաթաթվում, փարվում էին նրան։ Մեկ օր էլ, երբ բադին ոչ ոք ոչ մի կտոր հաց չէր տվել, բադը մի կտոր հաց էր փախցրել։ Նկատելով թե ինչպես բադը հաց փախցրեց, փուռի տերը ձեռքի փայտով այնպես էր հարվածել նրան, որ խեղճ բադիկը, բերած հացը բաց թողնելով, անշընչացած ընկել էր բակում։ Ինչքա՜ն լաց եղան որբուկները։

— Պապի՛կ, պապի՛կ, մենք մեր բադին միշտ էլ շատ հաց ենք տալիս,— ասացին Բաբիկն ու Փեփրոնեն։

Արևելահայերենում *հաճախ* բ *տառով գրվում է նաև* փ *հընչյունը, այսինքն՝ գրում ենք* բ, *բայց կարդում* փ: *Այդ պատահում է հատկապես* ր *և* ղ *բաղաձայններից հետո։* Ր *բաղաձայնից հետո, երբ լսվում է* փ, *գրվում է* փ *միայն հետևյալ բառերում և նրանցով կազմված նոր բաղադրություններում.* արփի, երփն— *(երանգ),* տարփանք, փրփուր, թարփ *(ձուկ որսալու ցանց),* Արփիար, Արփենիկ:

Մնացած բոլոր բառերում ր-*ից հետո երբ արտասանվում է* փ, *գրվում է* բ։

Օրինակ՝ երբ, երբեմն, հարբել, նուրբ, սուրբ, ուրբաթ:

Ղ *բաղաձայնից հետո երբ լսվում է* փ, փ *է գրվում միայն* հղփանալ, փողփողալ *բառերում։*

Հետևյալ բառերում բ-*ն կարդացվում է* պ. աղբ, աղբյուր, եղբայր, ոդբ:

Մի քանի բառի մեջ ձայնավորից հետո գրվող բ-*ն կարդացվում է* փ:

Օրինակ՝ խաբել, Հակոբ, շաբաթ, Գաբրիել:

Մ *բաղաձայնից հետո* փ *է լսվում և գրվում հետևյալ բառերում՝* ճամփա, ամփոփել, գամփռ, շամփուր, բամփել, թրմփալ, շրմփալ *և այլն։*

Մնացած բառերում գրվում է բ, *որը մերթ կարդացվում է* փ, *մերթ՝* բ:

Օրինակ՝ համբերել, համբույր, թումբ, բամբակ, դիտամամբ, համբավ *և այլն։*

Վարժություն 36: Ուսուցչի օգնությամբ կարդալ հետևյալ բառերը և սովորել նրանց արևելահայ արտասանությունը:

Ամփոփել, արյունարբու, արբել, աղբյուր, արբունք, արփի, աղբ, բամփել, բորբոքել, բորբոսնել, բողբոջ, բորբ, գամփռ, երբեք, երփներանգ, դարբին, եղբայր, հարբուխ, հարբել, հղփանալ, ճամփա, նուրբ, ներբող, ներբան, ապսպրել, նրբանցք, շամփուր, շեղբ, որբ, ոգբ, սրբիչ, տարփանք, ուրբաթ, փրփուր, փողփողել, պարտիզպան, որպես, պապիկ, պարապ։

Վարժություն 37: Որոշել՝ բ, պ, թ և փ պետք է գրել բաց թողնված տառերի փոխարեն:

Փայտ...որիկ, դար...ին, պարա..., որ..., պարտիզ...ան, սր...ագործել, ուր...աթ, ջրար...ի, պար...ակել, ար...ունք, լուսամ...ռ..., սե...տեմբեր, ամենանուր..., հղ...անալ, հորեղ...այր, պա...իկ, բոր...ոսնել, շամ...րել, համ...երել, եր...նավառ, արյունարբոր..., հրաբոր...ոք, պր...տել, ներ...ող, ա...ակի, փա...ագ, արյունար...ու, փր...բաղեզ, նորաբող...ոջ, փր...ուր։

Վարժություն 38: Կարդալ հետևյալ բառերը. որոշել՝ ինչպե՞ս է արտասանվում բ-ն:

Աղբյուր, խաբեբա, աղբ, երկուշաբթի, բամբակ, բոբիկ, Գաբրիել, ուրբաթ, բողբոջ, եղբայր, Հակոբ, երբ, զամբյուղ, համբերել, երբևիցե, երբեմն, իբրև, Սրբուհի, հորեղբայր, բարեբախտաբար, ըմբոստ, ներբան, նրբահյուս, սրբազան, Համբարձում, Աբգար, Սերոբ։

Գ-Կ-Ք

Վարժություն 39: Ուսուցչի օգնությամբ կարդացեք հետևյալ բառերը: Յուրաքանչյուր բառով կազմեցեք մեկական նախադասություն:

Գ	Կ	Ք
գար	*կար*	*քար*
գլոր	*կլոր*	*քլոր*
գան	*կան*	*քան*
գեր	*կեր*	*քերել*
հարգ	*հարկ*	*արքա*
գաս	*կաս*	*Քասախ*
գին	*կին*	*քինոտ*
գիրգ	*գիրկ*	*գիրք*
գուրգուրել	*կույր*	*քույր*

գոգ	կոկ	քոք
համերգ	հերկ	հերքել
	մեղկ	մեղք
գործ անել	կործանել	քոր
Արեգ	երեկ	երեք
գայլ	կայմ	քայլ
դամ	կամ	քամել
գիրք	կիրք	քիթ
գնել	կնիք	քնել
գրգռել	կրել	քրքրել
վարգ	վարկ	վարք

Վարժություն 40: Կարդալ տեքստը՝ հատկապես ուշադրություն դարձնելով գ, կ, ք տառերով նշված հնչյունների արևելահայ ճիշտ արտաբերմանը:

Գագիկենց գյուղից վերև, սարի գագաթին մի մեծ քարաժայռ կար։ Գագիկի ընկերները որոշել էին հավաքվել և գնալ այդ քարը դիտելու։

— Զգույշ գնացեք,— խրատում էր նրանց Գագիկի մեծ եղբայրը՝ Պապը,— կլոր քարի մոտից հանկարծ չգլորվեք։

Երեկո էր, երբ հավաքվեցին բոլորը, իսկ Կարոն և Քերոբը դեռ չկային։

— Պա՛պ, երբ նրանք գան, կասե՛ս, թող շտապ անտառապահի տնակը հասնեն, քանի դեռ մութը չի ընկել, թե չէ անտառում գայլեր կան։ Մենք կգիշերենք անտառապահի տնակում։

Անտառապահի տնակը տաք էր և հաճելի, բայց երեխաները երկար ժամանակ քնել չէին կարողանում, քունները չէր տանում։ Գագիկին, որը ամենից փոքրն էր, թվում էր, թե տնակից մի քանի քայլ այն կողմ գայլն է շրջում։ Երեխաները հանգստացան, երբ անտառապահ քեռի Գաբրիելը բակ գնաց և բակի դարբասի փակը գցեց։

Դեռ չէին քնել, երբ Կիրակոսը հիշեց, որ մոռացել է խանութից աղ գնել։

Առավոտյան, երբ Գագիկը, Կարոն և Քերոբը արթնացան, քեռի Գաբրիելը բակում իր գեր խոզին կեր էր տալիս։ Տղաները իսկույն ոտքի ելան, բակի գերաններին նստելով մի բան կերան, հարգանքով շնորհակալություն հայտնեցին քեռի Գաբրիելին ու ճամփա ընկան։ Ճանապարհը անտառով հաճելի էր, բայց վտանգավոր։ Ոտքերի տակ փափուկ գորգի նման աշնան տերևներն էին

թափված։ Հանկարծ ինքն էլ չիմացավ, թե ինչպես Կիրակոսը ոտքը թաց բորբոսի վրա դնելով սայթաքեց և ընկավ խոր փոսը։

Բոլորը վազեցին օգնության։ Մի երկար փայտ կախեցին և Կիրակոսին հանեցին փոսից։

— Սպասի՛ր, Կիրակոս, ես և Գագիկը օգնենք քեզ, քամենք քո թաց շորերը,— ասաց Քերոբը ուրախանալով, որ Կիրակոսը չի վնասվել։ Իսկույն կրակ վառեցին։

Քարաժայռի մոտ նրանք հոգնեցին և նորից հանգստացան։ Գագիկը մի գիրք հանեց, դրեց գոգը և սկսեց կրքով ընթերցել։

Շուտով նրանք սարի գագաթին էին։

Արևելահայերենում հաճախ գ տառով գրվում է նաև f հնչյունը, այսինքն՝ գրում ենք գ, բայց կարդում f։

Ր բաղաձայնից հետո լսվող f հնչյունը f տառով է գրվում միայն հետևյալ բառերում և դրանցով կազմված նոր բաղադրություններում. արքա, [illegible] ներքին (-ուստ,-և,-ինի), քուրք, քրքիջ, քրքրել, թուրք, քրքում։

Ր-ից հետո f լսվում և f գրվում է նաև դրաբարից եկող մի շարք բառերում, որոնց մեջ r-ին հաջորդող հոգնակերտ f-ն այժմ որպես այդպիսին չի գիտակցվում։

Օրինակ՝ բարf, բերf, գիրf, դիրf, զորf, կիրf, ծիրf, շարf, սարf, վարf, վերf, տուրf և այլն։

Մնացած բառերում r *բաղաձայնից հետո երբ արտասանվում է* f, *գրվում է* գ։

Օրինակ՝ երգել, թարգման, Գևորգ, կարգ, Մարգար, Մարգարիտ, Պարգև, Սարգիս, մարգարե, միրգ, մարգագետին։

Կանգնել *բառում* գ-ն հնչվում է գ։

Անգամ *բառում* գ-ն հնչվում է f։

Մի շարք բառերում ձայնավորներից հետո գ-ն հնչվում է f։

Օրինակ՝ ավագ, էգ, կարագ, զուգել, ձագ, մուգ, ծիգ, շոգ, սուգ, հոգ, հոգի, շոգի, ոգի, մարագ, Գրիգոր, օգուտ, արեգ, գոգ, երկրպագել, էգուց, թագավոր, ծագել, հագնել, հոգնել, հոգնակի, ճգնել, նվագել, նորոգել, պատարագ, վարագույր, ուրագ, օգնել։

Վարժություն 41։ Ուսուցչի օգնությամբ կարդալ հետևյալ բառերը և սովորել նրանց արևելահայ արտասանությունը։

Կարգ, երգչախումբ, մարգարե, կիրակի, անհոգ, կոշկակար, շոգի, մարգագետին, ձգվել, մուգ, թարգմանիչ, թանգարան, կիրք,

անոգուտ, միրգ, կարգև, արևածագ, կրկնակոշիկ, Գևորգ, ներքև, սգալ, ավագ, ուրագ, թանկարժեք, արեգակ, սուրբ, միգապատ, պարգև, շոգ, բաճկոնակ, մրգավաճառ, Սարգիս, անգամ, այգի, արքա, շոգեքարշ, առաջնակարգ։

Վարժություն 42: Որոշել՝ գ, կ, բե՞ք պետք է գրել բաց թողնված տառերի փոխարեն:

...իրա...ի, հեր...ում, կար...ադրել, կր...ոտ, մեներ...իշ, ներ...ին, շո...եկաթսա, քր...ջալ, մար...ա...ետին, հրացանաձ...ություն, քար...ոծել, բեր...ատու, արե..ա..նային, շո..եմե...ե-նա, ան...ար..., եր..իծաբան, ...արծիք, ...ար..անդակ, ժա-ռան..., ար...ելանոց, գովեր...ություն, կապի..., դասա...իր..., մր...աստան, կորե..., հար...ալից, ...ոշի..., ար...ելավազ...։

Վարժություն 43: Կարդալ հետևյալ բառերը, որոշել՝ ինչպե՞ս է արտասանվում գ-ն:

Ոգևորել, շոգեքարշ, ձագ, ոգի, արգելք, Թորգոմ, մուգ, գա-գաթ, Մարգար, ավագ, ծագել, անհոգ, հագնել, գաղտագողի, օգ-նել, հոգնել, գանգուր, կանգնել, գովերգել, համերգ, երգ, գգվել, համակարգ, գիրգ, կարգադրել, ձգան, օգնական, գուրգուրել։

Դ-Տ-Թ

Վարժություն 44: Ուսուցչի օգնությամբ կարդացեք հետևյալ բառերը: Յուրաքանչյուր բառով կազմեցեք մեկական նախադասություն:

դ	տ	թ
դեր	*տեր*	*թեր*
դաս	*տաս*	*թաս*
դուր (գալ)	*տուր*	*թուր*
դար	*տար*	*թարմ*
դիակ	*տիղմ*	*թիակ*
դրվել	*տրվել*	*թրև (գալ)*
դանդաղ	*տան*	*թան*
դառն	*տառ*	*թառ*
դարդ	*տար*	*թարթել*
դատ	*տատ*	*թաթ*
դանակ	*տնակ*	*թանաք*
դեղ	*տեղ*	*կանթեղ*
դեմ	*տենչ*	*թեմ*
դև	*տևել*	*թև*
դափ	*տապ*	*թափ*

Վարժություն 45: Կարդալ տեքստը՝ հատուկ ուշադրություն դարձնելով դ, տ, թ տառերով նշված հնչյունների արևելահայ ճիշտ արտասանությանը:

Հին դարերի պատմության դասատու ընկեր Տիտանյանը մեզ շատ հետաքրքիր բաներ է պատմել մեր նախնիների մասին։

Տասն անգամ մենք մեր դասն անց ենք կացրել պատմության սենյակում։

Այդ սենյակի կենտրոնում մենք կառուցել ենք մի փոքրիկ տնակ։ Տնակում կան պեղումների ժամանակ գտնված թաս, դանակ, թուր և պայտ։ Անկյունում դրված է դեղ պատրաստելու հարմարանք, մի այլ տեղ՝ մի դատարկ թանաքաման՝ պատրաստված թեղու փայտից։ Մի փայտե թիակի վրա հագիվ երևում են փորագրված դժվարընթեռնելի տառեր, նրանց վերևում՝ ինչ-որ գազանի թաթ և թռչունի թև։ Մեզ շատ դուր են գալիս հատկապես թաթարական թմբուկը ու բրոնզե թուրը։ Երբ բացում ենք տնակի դուռը, մեզ թվում է, թե բազմաթիվ դարեր ետ ենք գնում։ Հարցնելով տրված դասը, ընկեր Տիտանյանը մոտենում է հնադարյան տան մոտ դրված իրերին ու դյուրին ձայնով նոր դաս պատմում։

Արևելահայերենում հաճախ դ տառով գրվում է նաև թ հնչյունը, այսինքն՝ գրում ենք դ, բայց կարդում՝ թ:

Ր բաղաձայնից հետո երբ լսվում է թ, թ է գրվում հետևյալ բառերում և նրանցով կազմված նոր բաղադրություններում.

արթուն	փիփերթ	դարթնել	քրթմնջալ
խորթ	հարթ	խրթին	քարթու
թերթ	կարթ	կիրթ	լուրթ
հորթ	թարթել	փարթամ	թերթերունք
շողոքորթ	մերթ	հերթ	թրթիռ
շուրթ	երթ	մորթել	թրթնջուկ
որթ	պարթև	շորթել	մրթմրթալ
զվարթ	քերթել	սաղարթ	սրթսրթալ

Ր բաղաձայնից հետո մնացած բառերում, երբ լսվում է թ, գրվում է դ։

Օրինակ՝ մարդ, արդար, խորդուբորդ, կարդալ, երդիկ, բարդ, բերդ, բուրդ, վարդ, գնորդ *և այլն։*

Ն բաղաձայնից հետո թ լսվելիս դ է գրվում կենդանի, անդամ, խնդիր *և ընդ նախդիրով կազմված բառերում, ինչպես՝* ըն-

դարձակ, ընդունել, ընդառաջել, ընդհանուր, ընդհատել, ընդհատում և այլն։

Ն-ից հետո մյուս բառերում եթե լսվում է թ, գրվում է թ։

Օրինակ՝ ընթրիք, ընթերցել, կանթեղ, կորնթարդ, ընթացք, կանք։ Օդ *(շնչելու)*, Թադևոս և վառոդ *բառերի մեջ դ-ն կարդացվում է թ։*

Վարժություն 46: Ուսուցչի օգնությամբ կարդալ հետևյալ բառերը և սովորել նրանց արևելահայ արտասանությունը։

Տատ, դատ, գագաթ, լուրթ, Վարդիթեր, վտիտ, օգտակար, Տրդատ, զարդարել, փարթամ, Վարդան, Զվարթ, ընդարձակ, խնդրել, օգաչու, ալեզարդ, որսորդ, մարդկային, երկրորդ, ընկերդ, արթնանալ, ծառազարդ, տուն, օդանավակայան, տատիկ, տեսություն, թակարդ, տանտեր, հորդառատ, նախորդ, տիկնիկ, անդամ, ատել, ընդունել, խորհուրդ, ուտել։

Վարժություն 47: Որոշել՝ դ, տ, թ թ պետք է գրել հետևյալ բառերում բաց թողնված տառերի փոխարեն։

Ա...ման..., ա...ելու...յուն, ա...ոռանիս..., Ա...ամ, լուր..., վար...աբույր, պար...ևահասակ, մշ...ար...ուն, տան...եր, օ...յակ, ադաման...ազար..., խորհուր..., տա...իկ, Գեղար..., հոր...առատ, բացո...յա, դատավան...ել, տն...եսել, պարապուր..., բեր...աքաղաք, տա...անել, հան...ար..., ար...արա...ատություն, հար...ու...յուն, բարեկիր..., տախ...ակ, տաղ...ուկ։

Վարժություն 48: Կարդալ հետևյալ բառերը, որոշել՝ ինչպե՞ս լ արտասանվում դ-ն։

Կենդանի, դադար, աճուրդ, խնդիր, հոդված, նյարդ, դիմադրել, ընդդեմ, մնացորդ, անդամ, ընդարձակ, անընդհատ, լողորդ, դեմառդեմ, դդում, արդյունք, կախարդ, դարդդ, դասավանդել, վառոդ, դրդել, կոկորդ, դեսուդեն, դասդասել, լյարդ, դանդաղ, դասակարգ, օդ, երկրորդ, հորդել, բարդ, բերդ, դիմակահանդես։

Ձ-Ծ-Ց

Վարժություն 49: Ուսուցչի օգնությամբ կարդացեք հետևյալ բառերը։ Յուրաքանչյուր բառով կազմեցեք մեկական նախադասություն։

ձ	ծ	ց
ձող	*ծով*	*ցող*
ձեր	*ծեր*	*ցեր(եկ)*

ձի	ծին	ցին
ձույլ	ծույլ	ցուլ
ձագ	ծակ	ցաք
ձիդ	ծիտ	ցինկ
ձախ	ծախ(ել)	ցախ
ձոր	ծոր(ակ)	ցոր(են)

Վարժություն 50: Կարդալ տեքստը՝ ուշադրություն դարձնելով ձ, ծ, ց տառերով նշված հնչյունների արևելահայ նիշտ արտասանությանը:

Կիրակի էր։ Առավոտյան ցողը դեռ չէր գոլորշիացել, երբ երիտասարդ ու ծեր՝ ավտոմեքենաներով, ձիերով կամ ուղղակի հետիոտն, շտապում էին դեպի զովատուն անտառի գիրկը, ծաղիկ բաղելու, զբոսնելու, խմելու պաղ աղբյուրների զուլալ ջրից՝ իրենց ծարավը հագեցնելու։

Ճանապարհի երկու կողմերում արածում էին նոր ծնած կովերն ու հորթերը, ձիերը պոչերով քշում էին անհանգստացնող մժեղներին, ցուլերը խոժոռ նայում էին անցորդներին. ցինը երկընքում սուրալով որս էր որոնում։ Մի շան ձագ ցաքի թփերի մեջ անցք որոնելով վնգստում էր։ Ալվում էին ծառերը, ծիծեռնակները սավառնում էին բարձր երկնքում։ Տեղ հասնողների մի մասը գնում էր դեպի ձախ ու ակսում խորոված ի համար ցախ հավաքել։ Մի խումբ ծերունիներ հոգնած պառկում են խոտերին, ծածկվում ու անուշ քնում, իսկ պատանիներն ու աղջիկները՝ ո՛րը գիրք, ո՛րը գնդակ առած, շտապում են ամեն մեկը մի անկյուն։ Բոլորը կարծեք արբել են բնության բույրով, պարում են, երգում, պահմտոցի խաղում, ծածկում իրենց գլուխները ծաղկեպսակներով։ Ի՜նչ հրաշալի է անցնում օրը ծաղկած բնության գրկում։

Արևելահայերենում *հաճախ* ձ *տառով գրվում է* ց *հնչյունը, այսինքն՝ գրվում է* ձ, *բայց կարդացվում է* ց։

Ր *բաղաձայնից հետո երբ լսվում է* ց, ց *է գրվում միայն հետևյալ բառերում և նրանցով կազմված բաղադրություններում.*

արցունք	ընթերցել
ապաթարց	ցրցամ տալ
հարց	տրցակ (կապոց, փունջ)
ուրց (բույսի անուն)	մրցել
Արցախ	պախուրց (սանձ)

Ղ բաղաձայնից հետո երբ լսվում է ց, *ց է գրվում միայն* աղցան, քաղց, քաղցու, քաղցր, քաղցկեղ *բառերում և նրանցով կազմված բաղադրություններում։*

Մյուս բոլոր բառերում՝ ր-*ից և* ղ-*ից հետո երբ լսվում է* ց, *գրվում է* ձ։

Օրինակ՝ բարձ, մեռձակա, արձակ, շնչահեղձ, դարձյալ, հարձակվել, Համբարձում, փորձ, բարձել, դարձ, դաղձ, արձակուրդ, հանդերձ, բարձր: Օձ *բառը արտասանվում է* օց:

Վարժություն 51: Ուսուցչի օգնությամբ կարդալ հետևյալ բառերը և սովորել նրանց արևելահայ արտասանությունը:

Պտտաձող, ցողապատ, ձեռակերտ, ծերացած, աշխատավարձ, արձակուրդ, ընդարձակ, քաղվածք, ցերեկային, ձիապահ, ծննդատուն, ցին, ծիածան, արձագանք, բարձրաբերձ, փոշեծածկ, հանդերձարան, խցկվել, ձուլածո, ծուլություն, ցլամարտ, վերադարձ, ծիծաղ, բացարձակ, հորձանք, մրցակցություն, ձախակողմյան, մեծածախ, ցախատուն, ծածանել, ծիծաղկոտ, ցեց, անդրադարձում։

Վարժություն 52: Որոշել՝ ձ, ծ, թե ց պետք է գրել հետևյալ բառերում բաց թողնված տառերի փոխարեն:

Միա՝.ան, ցա՝.ր, ան...ան...ություն, ՀՎա՝.եղ, ՀՀից, ...ան...աղուտ, ...ու...ակ, ար...ագանք, դեղ..., ...ու...ադրել, ար...ակ, ...ի...աղկոտ, ...վա...և, ...ա...անել, ցն...ալ, դեղ...անիկ, ...ն...ում, քաղՀր, ջրահեղ..., ...իրու...ան, ան..., ...կնաբույ..., ...ա...կոց, դար...յալ, դեր...ակ, ըն...յուղ, ...ույ..., ծա...կել, ...ան...բա...ա..., ...ե...ել, ...գվա...ություն, առան...ք, ...աղկայի..., մեր...ակա, ...ն...ոտի։

Վարժություն 53: Կարդալ հետևյալ բառերը. որոշել, թե ինչպես է արտասանվում ձ-ն:

Հուշարձան, դերձակ, օձ, բաղձանք, վերադարձ, դպրոցամերձ, դեղձանիկ, բարձունք, հակադարձ, մերձավոր, արձագանք, հեղձուցիչ, հանդերձանք, դեղձ, դերձակուհի, բարձրաբերձ, Համբարձում, ջրահեղձ, բարձ, ձվաձև, փորձանոթ, համարձակ, վարձու։

Ջ-ճ-Չ

Վարժություն 54: Ուսուցչի օգնությամբ կարդացեք հետևյալ բառերը: Յուրաքանչյուր բառով կազմեցեք մեկական նախադասություն:

ջ	ճ	չ
ջիլ	*ճիլ*	*չիլ*
ջահ	*ճառ*	*չար*
ջիղ	*ճիգ*	*չիք*
ջութ	*ճուտ*	*չութ*
ջորի	*ճորտ*	*չոր(ի)*
ջոկ	*ճոխ*	*չոք*
	կտրիճ	*կտրիչ*

Վարժություն 55: Կարդալ տեքստը՝ հատկապես ուշադրություն դարձնելով, ջ, ճ, չ տառերով նշված հնչյունների արևելահայ ճիշտ արտաբերմանը:

Ուշ աշուն է։ Ծառերի կարմիր, դեղին ու նարնջագույն տերևները, քամու բերանն ընկած, այս ու այն կողմն են քշվում։ Անվերջ անձրև է մաղում։ Ցուրտ է։ Շուտով կսկսվեն սառնամանիքները։ Ջուրը դրսում արդեն սառչում է, և տանիքներից սառցալուլաներ են կախված։

Թռչունների մի մասը վաղուց չվել է դեպի տաք երկրներ, իսկ վայրի կենդանիներից մի քանիսը քաշվել են բները։ Միայն գեր արջն է, որ լուրջ-լուրջ մրթմրթալով, տանձենիների ու խնձորենիների տակ թափված հասուն պտուղներն է հավաքում ու խժռում։ Նշջերուները, իրենց բազմաճյուղ եղջյուրները ծառերի ճյուղերին քսելով, փնչացնում են ու չորացած տերևները ծամում։ Սոված գայլերը, ոչխարների հոտերի հետևից քայլ առ քայլ շրջելով, կեր են փնտրում։

Կամուրջից աջ, հսկա քարի տակ աղվեսի մի որջ կա, որի մեջ իրար հետ խաղում են աղվեսն ու իր երեք չալպտուրիկ ձագերը։ Քաջ որսորդ Երջանիկը երեկվանից հետապնդում է նրանց։ Նա որոշել է ձագերին կենդանի բռնել և որպես նվեր հանձնել էջմիածնի միջնակարգ դպրոցի պատանի կենդանաբանների խմբակին։ Ա՜յ թե հաջողվի աղջամուղջից օգտվելով շոքեշոք մոտենալ խորամանկ աղվեսի բնին։ Այն ժամանակ կտրիճ որսորդի ձեռքից չարաճճի ձագերը չեն պրծնի։

Արևելահայերենում *հաճախ ջ տառով գրվում է չ հնչյունը, այսինքն՝ գրվում է ջ, կարդացվում է չ։*

Ր *բաղաձայնից հետո երբ լսվում է չ, չ գրվում է միայն* դարչին, չարչի, փարչ *բառերում և նրանցով կազմված բաղադրություններում։*

Ղ բաղաձայնից հետո երբ լսվում է չ, չ է գրվում միայն գեղչել բառում։

Ծանոթություն.— Կան մի շարք բառեր, որոնց մեջ ր-ից հետո չ է գրվում բառակազմության հետևանքով։

Օրինակ՝ շարչարել, վարչություն, կորչել և այլն։

Շարչարել բառը առաջացել է շար արմատի կրկնությամբ։

— իչ ածանցի ի ձայնավորի սղման միջոցով են կազմված վարչություն, ճկարչություն և նման այլ բառեր։

Կորչել բառի մեջ չ-ն բայի ածանցն է, ինչպես փախչել (փախա), հանգչել (հանգա) և այլն։

Մնացած բոլոր բառարմատներում, եթե ր-ից և ղ-ից հետո լսվում է չ, գրվում է ջ։

Օրինակ՝ վերջ, որջ, զոջալ, եղջյուր, թրջել, մրջյուն և այլն։

Արմատի վերջում ձայնավորից հետո հետևյալ բառերում գրվում է ջ, որը կարդացվում է չ։

Օրինակ՝ աջ, մեջ, առաջ, էջմիածին։

Վարժություն 56: Ուսուցչի օգնությամբ կարդալ հետևյալ բառերը և սովորել նրանց արևելահայ արտասանությունը։

Ջլուտ, մսավաճառ, բազմաշարշար, ճգնավոր, ջորեպան, կտրիճ, կտրիչ, աղջիկ, թրջոց, միջնակարգ, միջնապատ, անվերջ, լրջմիտ, չղջիկ, երջանկաբեր, վայրէջք, ճանճ, մեջընդմեջ, ողջույն, աջ, առաջնակարգ, ջինջ, ճաճանչավորվել, մեջ, աղջամուղջ։

Վարժություն 57: Որոշել՝ ջ, ճ, թե չ պետք է գրել հետևյալ բառերում բաց թողնված տառերի փոխարեն։

...ախ...ախել, աղ...իկ, շար...արել, մորաքրո..., ...արճատյուն, ...ամի..., կամուր..., ...ն...ել, է...միածին, ...ահի..., ...իգ, ...անք, անուր..., ...ամփա, թռ...ել, ...բա...ափ, ...ա...ան...ափայլ, ...ռ...ռոց, ա..., թր...ել, ...ղ...իմ, դահլի..., ...ն...ղուկ, վեր...իվեր...ո, ող...ույն։

Վարժություն 58: Կարդալ հետևյալ բառերը, որոշել, ինչպե՞ս է արտասանվում ջ-ն։

Ամբողջական, աղջիկ, թրջել, վերջավորություն, վայրէջք, մրջյուն, շրջել, եղջյուր, սակավաջուր, ղողանջ, գեղջկուհի, արջ, կամուրջ, առաջնակարգ, քաջառողջ, շեղջ, որջ, եղջերու, առողջ, ընկերոջ, միջնակարգ, լրջախոհ։

Ր-Ռ

Վարժություն 59: Ուսուցչի օգնությամբ կարդալ հետևյալ բառերը, յուրաքանչյուր բառով կազմել մեկական նախադասություն:

r	n	r	n
թրջել	*թռչել*	*դուր*	*դուռ*
սեր	*սեռ*	*կրունկ*	*կռունկ*
լուր	*լուռ*	*արա*	*առա*
ուր	*ուռ*	*ձեր*	*ձեռ*
մուր	*մուռ*	*տար*	*տառ*
չար	*ճառ*	*գար*	*գառ*

Վարժություն 60: Կարդալ տեքստը՝ հատկապես ուշադրություն դարձնելով **ռ** և **ր** տառերով նշված հնչյունների արևելահայ ճիշտ արտաբերմանը:

Անցյալ տարվա գարնան վերջին երկրաբան ընկերներիս հետ Զանգեզուր գնացինք։ Երևանում արդեն իսկական ամառ էր սկսվել։ Բայց հեռավոր ճանապարհորդության գնացողներս վերցրինք մեզ հետ տաք ու հարմար հագուստներ։ Տեղ հասանք արշալույսին։ Մեր առաջ բացվեց կախարդական մի աշխարհ։ Առավոտյան ցողը թրջում էր մեր ոտները։ Երփներանգ ծաղիկների բույրը արբեցնում էր։ Չորս կողմից լսվում էր բուռն կերպով աշխատող մեղուների բզզոցը։ Կարկաչուն առուների ու աղբյուրների մոտ գառների ու ոչխարների հոտերն էին արածում։ Հեռվում, բարձր երկընքում կռունկների երամն էր թռչում, իսկ ներքևում, ցորենի կանաչ արտերի վրայով լողում էր նրա ստվերը։

Ձեռքս առա մի բուռ առվույտ և մոտեցրի առվի մոտ արածող մի արու ոչխարի։ Հանկարծ ես կրունկի վրա շուռ եկա։ Ետևից ինձ վրա էր հարձակվում մի կատաղի գամփռ։ Նրան դուր չէր եկել, որ ես խոտը մոտեցրի ոչխարին։ Հսկա ձեռնափայտին կռթնած հովիվը սաստեց շանը, ու մենք մոտեցանք վրանի դռանը։

— Երանի Արան էլ մեզ հետ գար, շնչեր սարերի սառը օդը, լսեր գառների մայունը,— հայերեն բառերը դժվարությամբ ընտրելով ու արտասանելով ասաց իմ ռուս ընկերը։

Անհնչյունափոխ արմատներում ն-ից առաջ գրվում է ռ:

Օրինակ՝ դառնալ, խառնել, սառնարյուն, եղեռն, սպառնալ, բռնանալ, սառնություն, սպառնալ, առնական, հառնել, ռոնալ:

Սահմանություն.— *Այս կանոնին են ենթարկվում նաև գրաբարյան -ռն բառավերջ ունեցող այն բոլոր բառերը, որոնք աշխարհաբարում կորցրել են իրենց վերջին ն-ն։*

Օրինակ՝ բուռն-բուռ, դուռն-դուռ, զառն-զառ, նուռն-նուռ, ձեռն-ձեռ (ձեռք):

Մյուս բաղաձայններից առաջ ռ *գրվում է միայն հետևյալ բառերում և նրանցից կազմված բաղադրություններում.*

առվույտ, խոպոռ, կառչել, կոթնել, կովան, հոշակ, հուռթի, մատռվակ, ուտկան, ուռնանալ:

Մնացած դեպքերում անհնչյունափոխ բառարմատներում գրվում է ր, *եթե նույնիսկ* ռ *է արտասանվում։*

Սահմանություն.— *Հաճախ հնչյունափոխության հետևանքով ն-ից առաջ կարող է ընկնել* ր *բաղաձայն կամ բաղաձայնից առաջ* ռ *հայտնվել։*

Օրինակ՝ Գառուն-գառնան-գառնանային, արյուն-արնակոլոլ-արնախում. վերին-վերնաշենք, առիթ-առթիվ, կոիվ-կռվել:

Ռ-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերի մեջ առաջին ռ-ն *դառնում է* ր։

Օրինակ՝ բարբառ, շահագրգռել, թրթիռ, գրգիռ, մրմուռ:

Ր-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերի մեջ որևէ փոփոխություն չի կատարվում։

Օրինակ՝ թրթուր, փրփուր, frfrել, տերտեր, վարարել, փորփրել, մարմար, արարիչ *և այլն։*

Բնաձայնական բառերը գրվում են ռ-ով։

Օրինակ՝ դռդռալ, շռշռալ, գռգռալ *և այլն։*

Հայերեն մի քանի բառերում ունենք կրկնակ ր: *Այդ բառերն են՝* անդորր, բերրի, երրորդ, մրրիկ, շորրորդ, տարր, օրրան:

Օտարազգի բառերի մեջ ռ-*ի և* ր-*ի ուղղագրությունը այլ կանոնների է ենթարկվում։*

ա) Փոխառյալ բառերի սկզբում գրվում է ռ։

Օրինակ՝ ռեալիզմ, ռոմանտիզմ, ռևոլյուցիա *(հեղափոխություն)։*

Հայերենում ր-*ով սկսվում են միայն երկու բառ.* ռոպե *և* Ռաֆֆի:

բ) Բառամիջում գրում ենք ր:

Օրինակ՝ դիրեկտոր, Ֆրանսիա:

գ) Փոխառյալ բառերի մեջ ո գրվում է ն և լ բաղաձայններից առաջ։

Օրինակ՝ Բեոլին, ժուռնալ, տուռնիր. *բացառություն են կազմում* Կարլ *և ինտերնացիոնալ բառերը։*

Վարժություն 61: Բաց թողնված տառերի փոխարեն լրացնել ռ կամ ր։

Հ...չակվել, բ...նել, կա...թ, ձե...նասուն, ...նգային, գա...նանամուտ, ճ...ճ...ալ, զա...դ, գա...նա...ած, կա...ք, կու...ծք, սա...նորակ, ա...նաշաղախ, մ...մ..ալ, բ...դատու, Բե...լին, խո...դուբո...դ, խո...թություն, խ...պոտել, կա...գ, ճ...ճ...ոց, սփ...ել, սա...ցա...ան, ո...դի, խա...նիխու...ն, վե...ադա...նալ։

Ղ-Խ

Վարժություն 62: Ուսուցչի օգնությամբ կարդալ հետևյալ բառերը։ Յուրաքանչյուր բառով կազմել մեկական նախադասություն։

ղ		խ	
ուղտ	*տաղտուկ*	*ուխտ*	*տախտակ*
օղ	*սողալ*	*սխ*	*սոխ*
ողջ	*շաղ*	*ոխ*	*շախ*
թաղ	*վաղ*	*թախանձել*	*վախ*
կաղ	*կաղ*	*կախ*	*կախ*
կողով	*խաղ*	*կոխ*	*խախուտ*
մեղավոր		*մեխ*	

Վարժություն 63: Կարդալ տեքստը՝ հատկապես ուշադրություն դարձնելով ղ և խ տառերով նշված հնչյունների արևելահայ ճիշտ արտաբերմանը։

Մեր թաղը Երևանի խուլ ու խաղաղ հին արվարձաններից մեկն էր։ Նրա կենտրոնում բարձրանում էր մի անշուք եկեղեցի, որի մոտ հնում ուղտերով ու ավանակներով ուխտի էին գալիս հավատացյալները։ Ուխտի էին գալիս՝ ագահ տերտերներին նվիրաբերելով կողովներով խաղող, բեռներով աղ, կախանի տանձ, թախանձելով աղոթել իրենց մեղավոր հոգիների համար։ Բայց աղոթքը չէր օգնում, նրանցից ձեռք չէր քաշում ախն ու վախը, ու գործերը միշտ ձախ էին գնում։ Միայն տիրացուն քանի գնում չաղանում էր, տախտակե դարակների վրա դարսում անմեղ ուխտավորների քաղցր ու համեղ նվերները՝ սեխը, սոխը, մեխերից

Կախում կախանի խաղողը, օրվա տաղտուկը փարատում «խաղաղություն ամենեցուն» երգելով։

Այլ է հիմա մեր թաղը։ Չքացել է եկեղեցին։ Թաղի կենտրոնով ձգվում է լայն ու լուսավոր խաղաղության պողոտան։ Եկեղեցու տեղը այժմ դպրոց է կանգնած։ Երբ զողանջում են դպրոցի զանգերը, երեխաները աղմուկ-աղաղակով դուրս են գալիս դպրոցի բակը, ու խախտվում է մեր փողոցի անդորրը թռչունների պես ճռվողող երեխաների երգ ու ծիծաղից։

Տ-*ից առաջ* **ղ** *է գրվում* **աղտ, ուղտ, կեղտ** *և* **տաղտուկ** *բառերում։ Մնացած բառերում* **տ**-*ից առաջ եթե լսվում է* **խ**, *գրվում է* **խ**:

Օրինակ՝ **ախտ, ապուխտ, բախտ, բախտակ, դրախտ, թսխտ, լախտ, զմրուխտ, երախտիք, ժխտել, կխտար, պանդուխտ, սխտոր, տախտակ, ուխտ:**

Բ, գ, դ, ձ, ջ *ձայնեղ բաղաձայններից առաջ* **խ** *լսվելիս գրվում է* **ղ**։

Օրինակ՝ **աղբ, խեղդել, աղբյուր, դաղձ, դեղձ, շաղգամ, ողջ, շեղջ** *և այլն։*

Փ, f, թ *շնչեղ խուլերից առաջ* **խ** *լսվելիս գրվում է* **ղ**:

Օրինակ՝ **թուղթ, հաղթել, մեղմ, ճեղք, հղփանալ, ճողփյուն:**

Դժոխք *բառում* **f**-*ից առաջ լսվում և գրվում է* **խ**:

Ճ-*ից առաջ մի՛ միայն գրվում և կարդացվում է* **խ**, *մերթ՝* **ղ**։

Օրինակ՝ **խրախճանք, վախճան, հախճապակի, խեղճ:**

Վարժություն 64: Որոշել՝ **ղ, թե խ** պետք է գրել հետևյալ բառերում բաց թողնված տառերի փոխարեն:

Ա...տաբանական, խա...ա..., ա...ջիկ, անբա...տ, շ...թա, խա...ռ..., ա...բյուր, թ...թապանակ, զմրու...տյա, բա...ե..., գա...տագռ...ի, պ...պջակ, ու...տավոր, ե...բայր, ա...ջամու...ջ, ռ...բալ, թոքա...տ, անվա...ճան, հորե...բայր, երա...տագետ, բե..., հա...թանակ, կե...տ, ա...տաբանություն, նա...շուն, առռ...ջ, անժ...տելի, աքա...ա..., ռ...բերգություն, տա...ավար, ա...քատ, դրա...տային, ա...ա...ակ, պանդ...տական, ...ռ...անջել, քա...ցած, ...ռռ...տանալ։

Վարժություն 65: Ուսուցչի օգնությամբ կարդալ հետևյալ բառերը՝ հատկապես ուշադրություն դարձնել **ղ**-ով և նրան հաջորդող տառով գրված հնչյունների ճիշտ արտաբերմանը:

Քաղցածություն, չղջիկ, ողբերգական, առողջապահություն, հաղթանակ, մորեղբայր, աղքատություն, աղտոտություն, մաղձոտ, ողբերգություն, եղբայրական, գաղտնի, դեղձենի, առողջապահություն, թղթատար, շղթայակապ, աղջկական:

Մ-Ն

Բ, պ, փ *բաղաձայններին նախորդող* **մ-ն և ն-ն** *արտասանության ժամանակ նույնանում են, որը և ուղղագրության մեջ դժվարություններ է ստեղծում:*

Բ, պ, փ *բաղաձայններից առաջ* **ն** *գրվում է միայն* **ան-ժբխտական նախածանցով** *կազմված բառերում:*

Օրինակ՝ **անբեռի, անբասիր, անփույթ, անպատիվ** *և այլն:*

Բոլոր մնացած դեպքերում **բ, պ, փ** *բաղաձայններից առաջ գրվում է* **մ:**

Օրինակ՝ **ամբոխ, ամփոփել, ամպ, բամբակ, բամփել, գիրությամբ** *և այլն:*

Վարժություն 66: Որոշել՝ ն, թե մ պետք է գրել հետևյալ բառերում բաց թողնված տառերի փոխարեն:

Հա...բավ, ը...պելիք, ա...պատեհ, ա...փոխարինելի, հա...բույր, գ...բեթաձև, ա...բիծ, թ...բուկ, հա...բերատարությա...ը, Հա...բարձում, ա...պրոպ, ա...բախտ, ապստա...բել, ան...պարտելի, ա...փոփել, խ...բավար, բա...բակ, սեպտե...բեր, ա...փառունակ, ճա...փա, ա...փույթ, բա...բասանք, կշտա...բանք, ա...պատասխան, ա...բարտակ, ճա...փաբաժան, ը...բոստ:

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ[1]

Կենդանի կամ բանավոր խոսքի դադարները, ձայնի ելևէջները և եղանակը գրավոր խոսքի մեջ որոշ չափով նշելու համար յուրաքանչյուր լեզու գործածում է համապատասխան նշաններ, որոնք կոչվում են **կետադրության նշաններ:**

Կետադրության նշանները բաժանվում են երեք խմբի. Տրոհության նշաններ: Առոգանության նշաններ: Բացահայտության նշաններ:

I. Տրոհության նշաններ

Տրոհության նշաններն են՝ վերջակետը (:), միջակետը (.), ստորակետը (,) և բութը (՝), *որոնք ցույց են տալիս, թե խոսքի կամ նախադասության մեջ և նախադասությունների միջև որտե՛ղ ինչպիսի՛ դադար պետք է տալ կամ հանգիստ առնել, և կամ որևէ կերպ բացահայտում են գրվածքի միտքը: Տրոհել*

Քաղում ենք պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն» աշխատությունից (կրճատումներով)՝ որոշ օրինակներ հանելով կամ փոխարինելով նորերով (ավելացված օրինակները ընդգծվում են):

Նշանակում է բաժանել, կտրատել. տրոհության նշանները ցույց են տալիս խոսքի և նախադասության բաժանումները։

1. Վերջակետը *դրվում է յուրաքանչյուր ավարտված նախադասության վերջում՝ արտահայտելով համեմատաբար մեծ դադար նախադասությունների միջև.*

Բաբելոնն է եղել մեր ախոյանը, տե՛ս—
Անհետ կորել, անցել է շար մշուշի պես:
Ասորիքն է եղել մեր թշնամին — ահա՛.
Դաշտ է տեղը, և չկա քար քարի վրա:

(Վ. Տերյան)

2. Միջակետը *դրվում է՝*

ա) Իրար հետ ընդհանուր մտքով կապված և սերտ ամբողջություն կազմող, բայց որոշ ինքնուրույնություն ունեցող նախադասությունների միջև։

Բոլոր գործարանների շչակները սուլեցին. կանգ առան գնացքները. կանգ առան նավերը. գլխահակ անշարժացան նետիոտները, խոնարհվեցին բոլոր դրոշակները. քարացավ ամեն ինչ մեծ Լենինի դին գերեզման իջեցնելու պահին:

բ) Ուրիշի ուղղակի խոսքից առաջ, երբ վերջինս առնվում է չակերտների մեջ և սկսվում է մեծատառով։

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.

«Քույրիկ, իմ քույրիկ, փրկիր ինձ մահից»:

գ) Կրճատումով գրվող բառերից հետո.

Ընկ. Գրիգորյանը հայոց լեզվի ուսուցիչ է: Պրոֆ. Աղայանը դասախոսություն կարդաց:

3. Ստորակետը *դրվում է՝*

ա) Գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև։

Սուրենը ետ քաշվեց, երբ Արամին ճանդիպեցինք: Երբ Արամին ճանդիպեցինք, Սուրենը ետ քաշվեց: Սուրենը, երբ Արամին ճանդիպեցինք, ետ քաշվեց:

բ) Համադաս նախադասությունների միջև, երբ սրանք չունեն համադասական շաղկապներ կամ կապակցված են բայց, իսկ, սակայն շաղկապներով։

Երբ համադաս նախադասությունները կապակցված են և շաղկապով, բայց ունեն տարբեր ենթականեր, և շաղկապից առաջ դրվում է ստորակետ.

Սուրենը գնաց դպրոց, Արամը՝ թատրոն, իսկ հայրը մնաց տանը:

Սուրենը պարեց, և Արամը գոհ մնաց: Գիրքը կարդացվում է հափշտակությամբ, և մարդ չի ուզում կտրվել նրանից:

գ) Նախադասության համադաս անդամների միջև, երբ սրանք չեն կապակցված և կամ ու շաղկապով.

Սուրենը գնեց մատիտ, թուղթ, քանոն և անհրաժեշտ գրքեր:

դ) Միջանկյալ նախադասությունների և միջանկյալ բառերի առջևից և հետևից։

Սովետական դպրոցը, ծիծաղելի է նույնիսկ համեմատելը, շատ բարձր է հին դպրոցից: Այո՛, ինչպե՞ս չէ, ճանաչում եմ նրան: Նրանք, այո՛, մեր ընկերներն են:

ե) Կոչականների և ձայնարկությունների առջևից, երբ նրանք նախադասության վերջում են, հետևից, երբ նախադասության սկզբում են, և առջևից ու հետևից, երբ նախադասության մեջ են.

Դու այսօր տա՞նը կլինես, Սուրեն:
Ընկե՛ր, դասը սկսված է:
Դուք, ընկե՛ր Վռամ, իզուր եք նախատում ինձ:
Լսի՛ր, Սուրե՛ն, դու այսօր տա՞նը կլինես:
....Ի՞նչ տաղտկալի մենախոսություն էր, օ՞հ:
....Ցուրտը տարա՞վ, վա՞հ, տնաշեն,
Չես թողնում, որ մի շունչ քաշեմ:

դ) Շեշտ ունեցող, կրկնվող թե՛... թե՛, և՛... և՛ շաղկապներով սկսվող համադաս նախադասությունների և բազմակի անդամների միջև.

Իմ հայրը և՛ աշխատում է, և՛ սովորում, և՛ սովորեցնում:

Տեսա թե՛ Սուրենին, թե՛ Արամին, թե՛ մյուս աշակերտներին:

4. Բութը դրվում է՝

ա) Բացահայտյալի վրա, բացահայտչից անջատելու համար, իսկ բացահայտիչը մյուս բառերից անջատվում է ստորակետով.

Բեմում երևաց ընկեր Վարդը՝ մեր դասարանի սոխակը, և սկսեց իր երգը:

բ) Ուրիշի ուղղակի խոսքից առաջ, երբ դա մեկ կամ մի քանի բառ է և մեջ է բերվում առանց չակերտների.

Բոլորը միաբերան կանչեցին՝ չենք զիջի:

Նա ասաց՝ այո՛, իսկ դու չլսեցիր:

գ) Լրացում հանդիսացող թվարկությունից առաջ.

Իմ սիրած բանաստեղծներն են՝ Թումանյան, Իսահակյան, Տերյան, Մեծարենց:

դ) Թվարկությունից առաջ, եթե թվարկվող բազմակի անդամներն սկսվում են նոր տողից և համարակալված են.

«Ցուրաքանչյուր աշակերտ պարտավոր է՝

1) Ջանասիրաբար սովորել, կանոնավոր հաճախել դասերին, դպրոցի պահպանմունքներից չուշանալ.

2) Առանց առարկության կատարել դպրոցի դիրեկտորի և ուսուցիչների կարգադրությունները...»:

II. Առոգանության նշաններ

Առոգանության նշաններն են՝ շեշտը (՛), ճարցական նշանը (՞) և բացականչական նշանը (՝), որոնք դրվում են ձայնի ելևէջները կամ իմաստային առոգանությունը արտահայտելու համար:

1. Շեշտը դրվում է՝

ա) Կոչականի և հրամայականի վրա, իսկ եթե դրանք նախադաս լրացում ունեն, լրացման վրա.

Անի՛վ, իմ, դարձի՛ր:

Դարձի՛ր, ի՛մ անիվ:

Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք:

բ) Նախադասության այլ անդամների վրա, երբ հեղինակը ցանկանում է հատկապես ընդգծել, տրամաբանական կամ իմաստային կարևորություն տալ համապատասխան բառին.

Գիրքը Սուրենի՛ն հանձնեցի:

Գի՛րքը Սուրենին հանձնեցի:

2. Հարցական նշանը դրվում է այն բառերի վրա, որոնցով հարցում է արտահայտվում.

Գիրքը Սուրենի՞ն հանձնեցիր։

Գիրքը Սուրենին հանձնեցի՞ր։

Գի՞րքը Սուրենին հանձնեցիր։

3. Բացականչական նշանը դրվում է այն բառերի վրա, որոնք պետք է հատկապես զգացմունքով արտահայտվեն ու երկարացվեն.

Իմ սո՞ւր, արթուն ականջում
Մի խոր ձեն է միշտ հնչում.
Անհո՜ւմ, անքուն կարոտով
Երեն մոտ է ինձ կանչում։

(Հովհ. Թումանյան)

III. Բացահայտության նշաններ

Բացահայտության նշաններն են՝ չակերտները („ "), կամ (« »,) փակագծերը (( )), կախման կետերը (...), բազմակետը (....), անջատման գիծը (—), միության գծիկը (-), ենթամնան (-) և ապաթարցը (՚), որոնք գործածվում են նախադասության միտքը կամ բառերի հարաբերությունը պարզելու, բացահայտելու նպատակով։

1. Չակերտների մեջ են առնվում՝

ա) Ուրիշի ուղղակի խոսքը սկզբից և վերջից.

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.

«Քույրի՛կ, ի՛մ քույրիկ, փրկիր ինձ մահից»։

բ) Հիմնարկությունների, ընկերությունների և այլ պայմանական անունները, գրական երկերի և պարբերական հրատարակությունների անունները երբ հիշատակվում են խոսքի մեջ.

Առամը «Գիտություն» սպորտային ընկերության անդամ է։

«Հանուն հայրենիքի» պարտիզանական ջոկատը մեծ սխրագործություններ է կատարել։

Թումանյանի «Անուշը» չքնաղ գործ է։

գ) Խոսքի մեջ հեգնական կամ ժխտական իմաստով մեջ բերվող բառերը.

Հայրենիքից միայն շան սպասող «հայրենասերները» մեզ պետք չեն։

2. Փակագծերի մեջ են առնվում՝

ա) Այնպիսի միջանկյալ նախադասություններ ու բառեր, որոնք շատ ազատ կերպով կարող են հանվել, զեղչվել.

Կարմենը (երկի հերոսուհին է) դավանում է զգացմունքների ազատություն։

Սուրենի ձայնից (նա բարձրաձայն կարդում էր) արթնացավ երեխան։

բ) Նախադասության հետ քերականորեն չկապակցված, լրացուցիչ, տեղեկատու իմաստ արտահայտող բառերը.

Ուսանողական խորհուրդը (նախագահ՝ Հ. Պետրոսյան) այսօր նիստ ունի։

3. Կախման կետերը (երեք կետ) դրվում են առկախ, կիսատ ասված նախադասության կամ բառակապակցության վերջում, մանավանդ, երբ հեղինակն ուզում է արտահայտել չդրսևորված հույզ, զգացմունք.

Ա՜յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է... սիրտս ասում է՝ վեր կաց, գնա Հնդստանից եկող շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու...

Մեր նեղությունը... քեզ ինչպե՞ս պատմեմ։

(Հովհ. Թումանյան)

4. Բազմակետը *(երեք կետից ավելի) դրվում է մեջբերումներում, երբ մեջբերողը կրճատումներ է կատարել.*

«Բա՛ծր սարեր, ա՛յ սարեր.... դուք էլ ինձ հետ ձեն տվեք....»։

5. Անջատման գիծը *դրվում է՝*

ա) Զրույց պարունակող հատվածների մեջ, նոր խոսք արտահայտող նոր տողի սկզբում կամ հեղինակի խոսքի և ուրիշի ուղղակի խոսքի միջև։ Այս վերջին դեպքում անջատման գծին ավելանում է նաև ստորակետ.

Սուրենը և Արամը դանդաղ քայլում էին։

— Արա՛մ, ինչու՞ ես այսօր լռակյաց դարձել,— ասաց Սուրենը։

— Սուրե՛ն,— վերջապես բացատրության անցավ Արամը,— չէ՞ որ ես խոսք էի տվել «չորսից» ցածր թվանշան չստանալ։ Բայց ախր...

6. Միության գծիկը *դրվում է բառական մեկ միություն հանդիսացող երկու բառերի միջև.*

Օրինակ՝ խոհանոց-գործարան, ստեպ-ստեպ, խունջիկ-մունջիկ և այլն։

7. Ենթամնան *դրվում է տողի վերջում, երբ կիսատ մնացած բառի մասը հաջորդ տողն է տարվում.*

«Մեր մարտիկների չտեսնված սխրագործությունները»»։*

Վարժություն 67. Բացատրել հետևյալ հատվածի կետադրությունը։

— Լսո՞ւմ եք, սպասեցեք մի փոքր. ես ձեզ բոլորը կպատմեմ սկզբից... Գնո՞ւմ եք... Լա՜վ։ Ես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...

Սիրո՛ւն կակաչներ, լավ լսեցեք արևի պատմությունը։

Ազջիկս հիվանդ էր։

Գիտե՞ք, նա էլ ձեզ նման մի ծաղիկ էր, նախշունիկ դեմքով, ոսկեգանգուր մազերով։

Թժիշկը եկավ, իջավ մեր բնակարանը։ Նա տխուր էր։ Ինչու՞։

Հա՛, հիշում եմ. նա չէր սիրում ներքևի հարկերը։

Նա իջավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին։

— Խոնավ է,— ասաց,— պիտի փոխեք բնակարանը, պիտի արևկող սենյակ ճարեք։

— Քաղի՞ երեխա ունեք,— հարցրեց։

Երեքն էին, երկուսը մեռան, մնաց այս մեկը... Ազատեցեք իմ աղջկան, նա մեր տան հոգին է...

---

* *Ապաթարցը գործածվում է միայն արևմտահայերեն տեքստերում. այն դրվում է զեղչված ձայնավորի փոխարեն։*

Օրինակ՝

Լճակ դու ես թագուհիս,
Ցի թ'հովն մ'ալ խորշոմիս,
Դարձյալ խորքիդ մեջ խով
Ջիս կպահե՞ս դողդողալով։

(Դուրյան)

Նա ինչ-որ դեղ գրեց ու տխուր դեմքով դուրս գնաց։

— Հայրի՛կ, ի՞նչ գրեց բժիշկը,— հարցրեց աղջիկն։

— Արև գրեց, սիրելիս, արև գրեց, որ փայլի քեզ վրա ու ազատի ցավից...

Ու այն օրը գնացի արև փնտրելու։ Գնացի շա՞տ հեռու՝ քաղաքի ծայրը ու գտա մի արևկող բնակարան։

Սիրուն կակաչներ, արևի զավակներ, ավելի լավ չէ՞ր լինի, որ ձեզ մոտ բերեի իմ ոսկեծամիկ աղջկան։

Դուք նրան կզուգեիք կարմիր ու կանաչ։

(Աբազի, «Արևը»)

Վարժություն 68. Աբտագրել՝ նշանակելով անհրաժեշտ կետադրական նշանները։

Բայց գիտեմ դուք նրան հաց չէիք տա դուք անվում եք վաղորդյան ցողով

Լսեցեք ես դեռ չեմ վերջացրել

Մյուս առավոտ պիտի տանեի աղջկանս արևի տունը բայց երբ լուսացավ նա ինձ կանչեց ձեռքս բռնեց ու փակեց աչքերը

Հետո եկան մարդիկ ու նրան տարան և երբ ոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզանից մենք բոլորս այրվեցինք լալուց իսկ ես դարձա արևի հիվանդ։

Ես գնում էի նստում փոքրիկ գերեզմանի մոտ և սպասում էի արևածագին ու միշտ տեսնում էի աղջկանս արևը գրկած և իր մազերը նրա վրա փռած Բայց երբ պատմում էի արևի մասին կինս ու մայրս չէին հավատում. նրանք կարծում էին թե ես խելագար եմ և ողբում էի այրված ցամաքած աչքերով

Ու մի օր էլ ես դիմեցի արևին

Հզոր արև ասացի մի մեծ գանգատ ունեմ քեզանից ինչու դու մի շող խնայեցիր իմ աղջկան ինչու սպանեցիր ու տարար նրան

Նա տխրեց ու մթնեց

Գնա ասաց հայտնիր աշխարհին ասա վերևի հարկը արևի շողերը խլեց սովեր ձգեց ներքևի հարկին ու սպանեց այն ոսկեհեր աղջկան։

(Աբազի, «Արևը»)

Արմատ և ածանց

Արմատ կոչվում է բառի հիմնական իմաստն արտահայտող այն մասը, որը առանց այդ իմաստը կորցնելու չի բաժանվում բաղադրիչ մասերի։

Օրինակ՝ գիրք, գրավոր, անգիր, գրային *բառերի մեջ հիմնական իմաստն արտահայտում է* գիր *մասը, որը այլևս մասերի չի բաժանվում։*

Այդ բառերում -ք, -ավոր, ան- *և* -ային *մասնիկները, ավելանալով արմատի վրա, փոխում են նրա իմաստը։ Այդպիսի մասնիկները կոչվում են ածանցներ։*

Օրինակ՝ գիտություն, ուսուցիչ, իրապես, Հայաստան, ըն-

Կերական բառերի մեջ -ություն, -իչ, -պես, -ական, -ական մասնիկները ածանցներ են։

Վարժություն 69: Գտնել հետևյալ բառերի արմատները ու ածանցները:

Անշնորհք, հատկություն, անհաղորդիչ, խոսք, հարյուրյակ, երկինք, զինվոր, անսահման, խելք, ժպտուն, երկաթյա, համաձայն, դիրք, անվեհեր, անխուսափելի, Հայաստան, տեսք, բախտավոր, տձև, էլեկտրաշարժիչ, ընկերական, ձեռք, վերափոխություն, գյուղացի, տատանողական, մագնիսացում, դիմադրություն, առաձգականություն։

Վարժություն 70: Հետևյալ ածանցներով կազմել երկուական բառ:

-ություն, -իկ, -ուն, -ք, -ական, -ային, -աբար, -ավոր։

Հիմք և վերջավորություն

Խոսքի մեջ և խոսք կազմելու համար բառերը ստանում են զանազան մասնիկներ։

Օրինակ՝ Տրամվայը անցավ փողոցով *նախադասության մեջ այդպիսի մասնիկներ են* -ը, -ավ, -ով:

Բառի վերջից դրվող այն մասնիկները, որոնք բառերը կապում են իրար կոչվում են վերջավորություններ:

Հայերենում բառին կարող են կցվել մի քանի վերջավորություններ։

Օրինակ՝ քար-եր-ից, *մոտ-եցն-ել-ով*:

Բառի մինչև վերջին վերջավորությունն ընկած մասը կոչվում է հիմք:

Օրինակ՝ քարերից *ձևի հիմքն է* քարեր-, մոտեցն-ելով *ձևի հիմքը՝* մոտեցնել-: *Իր հերթին* քարեր *բառի հիմքը կլինի* քար-, *որը միաժամանակ նաև այդ բառի արմատն է։*

Վարժություն 71: Որոշել բառերի հիմքերն ու վերջավորությունները:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեր երկրի ժողովուրդները և նրանց հետ միասին պայքարող ուրիշ երկրների ժողովուրդներ աշխարհը փրկեցին ֆաշիստական ստրկացումից։ Այն երկրները, որոնք երկար տարիներ տառապում էին զավթիչ-

ների լծի տակ, վերջապես ազատ շունչ քաշեցին։ Բուլղարիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում և մի քանի ուրիշ երկրներում ժողովրդական դեմոկրատական հանրապետություններ ստեղծվեցին։ Այդ բոլոր պետությունները սկսեց կառավարել ժողովուրդը։ Հողը գրավվեց կալվածատերերից և հանձնվեց գյուղացիներին։ Ֆաբրիկաները, գործարանները, երկաթուղիները սկսեցին պատկանել պետությանը՝ բոլոր աշխատավորներին։

Բազմամիլիոն չինական ժողովուրդը շատ տարիներ պայքարում էր ճապոնական զավթիչների և իր կապիտալիստների ու կալվածատերերի դեմ։ Նրա պայքարը ղեկավարում էր Չինաստանի կոմունիստական պարտիան։ Թշնամու դեմ մղված պայքարում Չինաստանի աշխատավորությանը եղբայրական օգնություն էր ցույց տալիս մեր ժողովուրդը։ Հայրենական մեծ պատերազմում սովետական զորքերի կողմից գերմանական և ճապոնական ֆաշիստների ջախջախումը մեծ նշանակություն ունեցավ Չինաստանի աշխատավորության համար։ Դա օգնեց չինական ժողովրդին տապալելու իրենց ճնշողների իշխանությունը։ Չինաստանում կատարվեց ռևոլյուցիա։ Երկրում ստեղծվեց ժողովրդական ռեսպուբլիկա։ Կալվածատերերի և կապիտալիստների ճնշումից ազատագրված ժողովուրդները օգնում են միմյանց նոր, սոցիալիստական կյանք կառուցելու։

(Պատմության դասագրքից)

Վարժություն 72: Գտնել բառերի արմատները ու ածանցները, հիմքերն ու վերջավորությունները:

Սոցիալիստական երկրների աշխատավորները գալիս են Սովետական Միություն, որպեսզի սովետական մարդկանցից սովորեն, թե ինչպես կարգավորեն իրենց տնտեսությունը, սովորում են կառուցել նոր կյանք։ Միևնույն ժամանակ մեր երկրի կոլտնտեսականները, գիտնականները ծանոթանում են իրենց բարեկամների սոցիալիզմի շինարարության փորձի հետ։

Սոցիալիստական մեծ և փոքր երկրները միմյանց օգնում են գործարաններ, ճանապարհներ կառուցելու, նոր մեքենաներ և հաստոցներ ստեղծելու, օգտակար հանածոներ մշակելու գործում։ Բայց միայն աշխատանքում չէ, որ եղբայրական երկրները օգնում են միմյանց։ Եթե թշնամիները համարձակվեն հարձակվել սոցիալիստական երկրներից մեկի վրա, մնացած բոլորը նրան օգնության կհասնեն։

1917 թվականին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հե-

դափոխությունից հետո կապիտալիստական աշխարհից անջատվեց մեր երկիրը, որը զբաղեցնում է ցամաքի մեկ վեցերորդ մասը։ Այն ժամանակ հարյուր հիսուն միլիոն մարդ ազատվեց կապիտալիստների իշխանությունից, իսկ հիմա ամբողջ աշխարհի բնակչության մոտ մեկ երրորդ մասը, համարյա մեկ միլիարդ մարդ, կառուցում են նոր, ազատ ու երջանիկ կյանք։

(Պատմության դասագրքից)

Գոյական անուն

Գոյականները ցույց են տալիս առարկա։

Օրինակ՝ շուն, ձագ, լույս, կայծակ, ուրախություն, զգացմունք, ատելություն, Հրանուշ, աղջիկ, տերություն, Ֆրանսիա *և այլն։*

Գոյական անունները լինում են հասարակ *և* հատուկ։

Հասարակ կոչվում են այն անունները, որոնք տրվում են միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին։

Օրինակ՝ ծառ, դպրոց, ծաղիկ, գրիչ *և այլն։*

Հատուկ կոչվում են միևնույն տեսակի առարկաներից միայն մեկին՝ մյուսներից զանազանելու համար տրվող անունները։

Հատուկ գոյականներ են մարդկանց (Սուսաննա, Գայանե, Հովհաննիսյան), *քաղաքների* (Երևան, Լենինական), *գյուղերի* (Աղավնաձոր, Հովիտ), *լճերի* (Սևանա լիճ, Վանա լիճ), *երկրների* (Հայաստան, Վրաստան), *ծովերի* (Միջերկրական ծով, Սև ծով), *ստեղծագործությունների* («Քառս», «Գիքոր», «Արծվաբերդ») *և այլ նման անունները։*

Արևելահայերենում կան հատուկ անունների գրության որոշակի կանոններ։

Հատուկ անունների ուղղագրությունը[1]

Պարզ (մեկ բառ հանդիսացող) հատուկ անունները միշտ գրվում են մեծատառով.

օրինակ՝ Հրազդան, Ալիշան, Հարություն, Հասմիկ, Ախուրյան։

Բաղադրյալ (մեկից ավելի բառերից) կազմված հատուկ անունների մեջ բոլոր բառերը սկսվում են մեծատառով.

ա) Բոլոր պետությունների, Սովետական Միության, միութե-

---

[1] *Հմմտ.* Հ. Բարսեղյան, «Հատուկ անուն», «Տերմինաբանական ուղեցույց»։

նական և ինքնավար հանրապետությունների և ինքնավար մարզերի անուններում.

օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արաբական Միացյալ Հանրապետություն, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ *և այլն։*

բ) Երկու բառից կազմված այն հատուկ անուններում, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցված հատուկ անուն է.

օրինակ՝ Գրիգոր Նարեկացի, Տիգրան Երկրորդ, Սահակ Պարթև, Փոքր Մասիս, Արևելյան Եփրատ, Նոր Արեշ *և այլն։*

Բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բառն է մեծատառով գրվում՝

ա) Աշխարհագրական այն հատուկ անուններում, որոնց մեջ լրացյալը առանձին վերցրած հատուկ անուն չէ.

օրինակ՝ Հյուսիսային սառուցյալ օվկիանոս, Մերձավոր արևելք, Հայկական պար, Վանա ծով, Վայոց ձոր *և այլն։*

բ) Գրական, գիտական, արվեստի և այլ երկերի ու ստեղծագործությունների պարբերականների անուններում.

օրինակ՝ «Հացի խնդիր», «Գրական թերթ», «Ամբոխները խելագարված» *և այլն։*

գ) Հիմնարկների, ձեռնարկությունների, կուսակցությունների, կազմակերպությունների շակերտների մեջ առնվող անուններում.

օրինակ՝ «Նոր կյանք» կոլտնտեսություն, «Կոմունիզմի ուղիով» կոլտնտեսություն *և այլն։*

դ) Շքանշանների անուններում.

օրինակ՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան, Փառքի շքանշան *և այլն։*

ե) Համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների անուններում.

օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ, Շախմատի համաշխարհային ֆեդերացիա, Ազգերի լիգա *և այլն։*

զ) Բոլոր երկրների, ՍՍՀՄ միութենական և ինքնավար հանրապետությունների ու ինքնավար մարզերի, պետական, կառավարական և կուսակցական ղեկավար մարմինների անուններում.

օրինակ՝ (ՍՍՀՄ) Մինիստրների սովետ, *(ՍՄԿԿ)* Կենտրոնական կոմիտե, *(Անգլիայի)* Համայնքների պալատ, *(Ֆրանսիայի)* Ազգային ժողով *և այլն։*

է) Պատմահասարակական համաշխարհային նշանավոր անցքերի, պատմահեղափոխական և պետական տոների անուններում.

օրինակ՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն, Հայրենական մեծ պատերազմ, Մայիսի մեկ, Մարտի 8, Նոր տարի *և այլն։*

Վարժություն 73: Արտագրել հետևյալ տեքստը՝ լրացնելով բաց թողնված տառերը և պահպանելով հատուկ անունների ուղղագրության կանոնները։

ՄԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հ..այկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը՝ Սովետական Հայաստանը, Սովետական Միության տասնհինգ հանրապետություններից մեկն է և գտնվում է նրա հարավում՝ Անդրկովկասում։ Սովետական Հայաստանի հիմնական բնակիչները հայերն են։ Բացի հայերից այստեղ ապրում են նաև ադրբեջանցիներ, ռուսներ, քրդեր, ասորիներ, հույներ և այլ ազգությունների պատկանող մարդիկ։

Մեր հանրապետության մայրաքաղաքն է Ե..րևանը։ Սովետական Հայաստանը լեռնային երկիր է։ Հյուսիսից-հարավ և արևելքից-արևմուտք ձգվում են բարձր լեռներ՝ որոնց արանքներում տարածվում են ձորեր, գետահովիտներ, գոգահովիտներ, սարահարթեր և դաշտեր։ Նշանավոր են Ջ..ոռվա և Սյունիքի սարահարթերը, Շ..իրակի և Արարատյան դաշտերը, Ղ..ևանի և Դեբեդնաձորի գոգահովիտները։

Մեր հանրապետությունում կան շատ գետեր։ Նրանք արագահոս են, բայց առատաջուր չեն։ Նրանք նավարկելի չեն, բայց շատ նպաստավոր են էլեկտրակայաններ կառուցելու համար։ Մեր հանրապետությունից դեպի հարավ հոսող գետերը թափվում են Արաքսի մեջ, իսկ դեպի հյուսիս հոսողները՝ ք..ուռ գետի մեջ։ Այդ երկուսը Անդրկովկասի ամենամեծ գետերն են։

Արարատյան դաշտը Սովետական Հայաստանի ամենաընդարձակ հարթավայրն է և փռված է Արարատ (Մասիս) լեռան ստորոտում։ Երբ օդանավից նայում ենք ...բարատյան դաշտին, նրա հյուսիսային կողմում տեսնում ենք ...բագած լեռը, հարավային կողմում՝ ...բարատը, իսկ դաշտի միջով հոսող ...բաքս գետը ասես արծաթե գոտի լինի նրա մեջքին։ ...բարատյան դաշտով են հոսում ...բաքսի վտակներից ..աստիը, ...բաղդանը, ...առնին և ...եղին։

...բարտյան դաշտում են գտնվում ...ջմիածին, ...ոկտեմբերյան, ...բտաշատ քաղաքները։ Դաշտի հյուսիսային մասում է գտնվում մեր հանրապետության չքնաղ մայրաքաղաք ...բևանը։

(«Հայրենի բնություն»)

Գոյականների թիվը

Գոյականների եզակին ցույց է տալիս մեկ առարկա, իսկ հոգնակին՝ միևնույն տեսակի մեկից ավելի առարկաներ։

Հոգնակին կազմվում է եզակի թվի վրա -եր *կամ* -ներ *վերջավորություն ավելացնելով։*

Հոգնակի կազմելիս եր *մասնիկը դրվում է միավանկ բառերի վրա։*

Օրինակ՝ գետ-գետեր, սիրտ-սրտեր, միրգ-մրգեր, քարքարեր, ծառ-ծառեր, տուն-տներ, շուն-շներ, բույս-բույսեր, լույս-լույսեր *և այլն։*

-ներ *վերջավորությունը դրվում է բազմավանկ բառերի վրա։*

Օրինակ՝ աթոռ-աթոռներ, աշակերտ-աշակերտներ, գրիչ-գրիչներ, գրատախտակ-գրատախտակներ, կատու-կատուներ, նրստարան-նստարաններ, հիվանդություն-հիվանդություններ *և այլն։*

Մի շարք բազմավանկ բարդ բառերի հոգնակին կազմվում է -եր *վերջավորությամբ։*

Դրանք այն բառերն են, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է և պահպանում է բարդության մեջ իր հիմնական իմաստը։

Օրինակ՝ քարաժայռ-քարաժայռեր, դասագիրք-դասագրքեր, միջնապատ-միջնապատեր, հեռագիր-հեռագրեր, ոտնաձայն-ոտնաձայներ, ծրագիր-ծրագրեր։ *Այլաձև հոգնակի են կազմում մարդ և կին բառերը՝* մարդիկ, կանայք։

Գրաբարում ն բառավերջ ունեցող՝ այժմ միավանկ մի շարք բառերից հոգնակի կազմելիս արմատի ն-ն վերականգնվում է.

օրինակ՝ բեռ-բեռներ, գառ-գառներ, եզ-եզներ, մատ-մատներ, նուռ-նռներ, ձուկ-ձկներ, ձեռ-ձեռներ, ոտ-ոտներ, հարս-հարսներ, լեռ-լեռներ, ծունկ-ծնկներ *և այլն։*

Արևելահայերենում միավանկ բառերի փակ վանկի ու *և* ի *ձայնավորները հոգնակի կազմելիս դառնում են* ը.

օրինակ՝ միս-մսեր, շիշ-շշեր, տուն-տներ, շուն-շներ *և այլն։*

Բաց վանկի ի-ն *չի հնչյունափոխվում.*

օրինակ՝ ձի-ձիեր, թի-թիեր։

Բաց վանկի ու-ն դառնում է վ.

օրինակ՝ ձու–ձվեր, լու–լվեր:

Եթե բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է սովորական պես –ներ *վերջավորությամբ, ապա վերջին վանկի* ու-ն *կամ* ի-ն *չեն հնչյունափոխվում.*

օրինակ՝ փափկամարմին–փափկամարմիններ, հաշիվ–հաշիվներ, մանուկ–մանուկներ:

Եթե բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է -եր *վերջավորությամբ ապա վերջին վանկի* ու-ն *և* ի-ն *դառնում են* ը.

օրինակ՝ դասագիրք–դասագրքեր, սեպագիր–սեպագրեր, հեռագիր–հեռագրեր, ծրագիր–ծրագրեր, հեռագրատուն–հեռագրատներ *և այլն:*

Վարժություն 74: Գտնել հատուկ և հասարակ անունները. որոշել հասարակ անունների թիվը:

I

Զանգեզուրը լեռնային երկրամաս է, որը գտնվում է Սովետական Հայաստանի հարավ-արևելյան կողմում: Նրա միջով հոսող գետերից նշանավոր են Որոտանը և Ողջին: Զանգեզուրի լեռնաշղթայի վրա նշանավոր է Կապուտջիղ լեռը, որը մոտ չորս կիլոմետր բարձրություն ունի և Արագածից հետո երկրորդ բարձր լեռն է Սովետական Հայաստանում: Գեղեցիկ բնություն ունի Զանգեզուրը: Նա ավելի խոնավ է, քան Արարատյան դաշտը, այդ պատճառով էլ նրա բուսականությունը փարթամ է, կան հարուստ արոտավայրեր ու անտառներ: Այստեղ, լեռներով պաշտպանված գետահովիտներում, աճում են խաղող ու ծիրան, բալ ու կեռաս, տանձ ու խնձոր, իսկ բանջարանոցներում՝ սոխ ու կարտոֆիլ, դաշտերում՝ ցորեն, գարի ու եգիպտացորեն: Հայտնի են Մեղրու շրջանի հյութալի մրգերը, որոնցից պատրաստում են բազմատեսակ պահածոներ:

Զանգեզուրը հայտնի է պղնձի, մոլիբդենի և բազմատեսակ շինանյութերի թանկարժեք հանքերով: Պղնձով ու մոլիբդենով առանձնապես հայտնի են Ղափանը, Քաջարանը, Դաստակերտը և Ագարակը: Առաջներում պղինձը Ղափանից տեղափոխում էին ուղտերի քարավաններով, իսկ այժմ՝ երկաթուղով:

Ղափանը, որը գտնվում է Ողջի գետի ափին, արդյունաբերական նշանավոր քաղաք է դարձել: Սիրուն քաղաք է նաև Գորիսը, որը գտնվում է Որոտան գետի վտակներից մեկի ափին: Որոտանը մեծ նշանակություն ունի Զանգեզուրի համար: Հսկայական տա-

ռածությամբ հողեր են ոռոգվում Արտանից ու նրա վտակներից փորած առուներով։ Նա Սովետական Հայաստանի մեծ գետերից է, նրա վրա կառուցվելու են մի շարք խոշոր հիդրոէլեկտրակայաններ։

(«Հայրենի բնություն»)

II

ա) Մեքենաներ և մեխանիզմներ կառուցելու, նրանց շարժումները ղեկավարելու համար անհրաժեշտ է գիտենալ մարմինների փոխազդեցության օրենքները, գիտենալ մարմինների շարժումներն առաջացնող պատճառները, այն պատճառները, որոնց ազդեցության տակ առաջանում է մարմինների արագության փոփոխությունը, այսինքն՝ արագացումը։ Մեխանիկայի այն բաժինը, որտեղ ուսումնասիրվում են շարժումների և այդ շարժումներն առաջացնող պատճառների միջև եղած կապը, կոչվում է դինամիկա։ Դինամիկայի հիմնադիրն է անգլիացի հանճարեղ գիտնական Իսահակ Նյուտոնը։ Դինամիկայի հիմքում դրված է երեք օրենք։ Այդ օրենքները ներկայացնում են մարմինների զանազան տեսակի շարժումների մասին մարդկության բազմադարյան փորձի և գիտելիքների ընդհանրացումը։

բ) Այն մեծությունը, որը բնորոշում է մի մարմնի ազդեցությունը մյուսի վրա, որի հետևանքով փոփոխվում է մարմնի արագությունը, այսինքն առաջանում է արագացում, կոչվում է ուժ։ Եթե մարմնի վրա ազդում են մի քանի ուժեր, ապա կարող է պատահել, որ դրանք միասին չփոխեն մարմնի արագությունը, այսինքն արագացում չառաջացնեն։ Այդպիսի դեպքը կոչվում է ուժերի հավասարակշռություն։ Բոլոր դեպքերում, երբ մի պինդ մարմին շարժվում է մյուսի մակերևույթով, շարժվող մարմնի վրա ազդում է մի ուժ, որ ուղղված է շարժմանը հակառակ և հակազդում է շարժմանը։ Այդ ուժը կոչվում է շփման ուժ։

(Ֆիզիկայի դասագիրք)

III

Սևանի գոգավորության բնությունը հնարավորություն է տալիս առանձնապես լայն չափերով զարգացնել, կարտոֆիլի, հացահատիկների, ծխախոտի մշակությունը և անասնաբուծությունը։ Այստեղ հարթավայրային հողերից առատ բերք է ստացվում, իսկ սարալանջերին ու բարձրադիր հովիտներում աճում է հյութալի առատ խոտ։ Սևանա լճի մեջ թափվող լեռնային գետակները հարուստ են համեղ ձկներով։

Սևանի գոգավորությունը հրաշալի ամառանոցային տեղ է։ Հեռու չէ այն ժամանակը, երբ Սևանա լճի շուրջը կծածկվի հրաշալի ծառաստաններով, առողջարաններով։ Դեպի Սևան գնացող հրաշալի ասֆալտուղիները և երկաթուղագիծը լայն հնարավորություն են տալիս ամռան ամիսներին վայելելու Սևանի շրջապատի հրաշալիքները, հանգստանալու և կազդուրվելու գեղաբանչ բնության գրկում։

Հարուստ և գեղեցիկ բնակավայրեր են դարձել Սևան, Հրազդան և Կամո քաղաքները, որոնցից առաջինը գտնվում է Սևանա լճի ափին, իսկ մյուսները՝ քիչ հեռու։

(«Հայրենի բնություն»)

Որոշյալ և անորոշ առում

Առարկայի որոշ, խոսողին ծանոթ լինելը հայերենում ցույց է տրվում որոշիչ հոդերի միջոցով, որոնք են ը և ն. ը-ն դրվում է բաղաձայնով վերջացող բառերի վրա, իսկ ն-ն՝ ձայնավորով վերջացողների։

Օրինակ՝ Ազնվությունը մարդու բնորոշ գիծն է։

Տղան բարձրացավ ծառը։

Անորոշ կամ անծանոթ առարկան արևելահայերենում դրվում է կամ առանց որոշիչ հոդի, կամ մի անորոշ հոդով։

Օրինակ՝ Պետրոսը մի գիրք գնեց։

Պետրոսը գիրք գնեց։

Վարժություն 75: Հետևյալ հատվածը վերածել արևելահայերենի՝ անհրաժեշտության դեպքում մը հոդը մի դարձնելով։

1. Տիգրան իրավաբանության ուսանող մ'էր. թուշնի պես երգող ու անոր պես անհաստատ, աղջկան մը պես քնքուշ, սատանայի չափ խելացի պատանյակ մ'էր (Գ. Զ.)։

2. Գեղեցիկ, կապույտ աչքեր, լայն ու ժամանակեն առաջ ակոսյալ ճակատ մը, սիրուն մորուք մը ու սև երիզով կախված ակնոց մը կը տեսնվեր այս երիտասարդին դեմքին վրա, որ միշտ լուրջ, թերևս խոժոռ երևույթ մ'ուներ, կատարյալ հակապատկեր մը լինելով հանդերձ յուր կրտսերագույն բարեկամին, իր արտաքին ցուրտ ձևերուն ներքև փափուկ ու վեհանձն սիրտ մը կը կրեր (Գ. Զ.)։

3. Վերջինը երիտասարդ մըն էր, ծանոթ ընտանիքե մը, որ բավական լավ պաշտոն մը ուներ... (Օտ.)։

4. Իր սերը դողահար և շիկնոտ բան մըն էր, անձնուրացում

մը՝ ամբողջ, կատարյալ անձնուրացում մը, որ չի բարբառիր ու քեզի համար ըրած զոհողությունները երեսիդ չի զարներ ապերախտությունդ ցույց տալու համար. ո՛չ, գրեթե գաղտնի ու ծածուկ զգացում մը, որ իր սաստկությանը համար կ՚ամչնա, կը պահվտի, երկրաշարժ մը, որ հրաբուխի բոլոր սաստկությունը ունի, առանց անոր աղմկալից ու բոցավառ արտահայտությունները ունենալու։

Բան մը չէր պահանջեր իր սիրույն փոխարեն, ոչ իսկ իմ սերս. իր բոլոր ուզածը թույլտվություն մըն էր հավիտյան զիս շրջապատելու իր անհուն խանդաղատանքովը, հսկելու վրաս՝ թող չտալով, որ հիվանդանամ, իր խնամքներեն շինված տեսակ մը խանձարուրի մեջ ամփոփելով իմ բոլոր կյանքս ու շարժումներս, որպեսզի ցավ մը կամ վիշտ մը չունենամ երբեք (Գ. Զ.)։

Գոյականների հոլովումը

Խոսքի մեջ գործածվելիս, գոյականները, նայած ինչ պաշտոն են կատարում, ստանում են զանազան վերջավորություններ, կամ փոխում են իրենց արմատահնչյունները.

օրինակ՝ Մարդկության համար խաղաղության պատշտպանությունը կյանքի և մահվան խնդիր է։

Ես հանդիպեցի իմ լավագույն ընկերոջը՝ Արամին։

Բառերի այսպիսի փոփոխությունները կոչվում են թեքում։ Արդի հայերենում նման կարգի փոփոխությունների կարող են ենթարկվել (կարող են թեքվել) գոյականները և դերանունների մի մասը։ Բայերի թեքումը կոչվում է խոնարհում, մնացած խոսքի մասերինը՝ հոլովում։ Հոլովվող բառերի հոլովման ամեն մի ձև կոչվում է հոլով։ Արևելահայերենում բառերը կարող են ստանալ հոլովման վեց ձևեր՝ ուղղական-հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական։

Ուղղական հոլով

Պետրոսը սովորում է համալսարանում։

Աղջիկը կարդում է գիրքը։

Տերևը դեղնեց։

Այս նախադասություններում ընդգծված Պետրոսը, աղջիկը և տերևը բառերը ցույց են տալիս, թե ո՛վ է գործողություն կատարողը, մի բան անողը կամ լինողը։

Նախադասության մեջ մի բան անող կամ լինող առարկան ցույց տվող բառերը դրվում են իրենց ուղիղ ձևով, ուղղական հոլովով։ Ուղղական հոլովով դրված բառերը պատասխանում են ո՞վ կամ ի՞նչ(ը) հարցերին։

Օրինակ՝ **Ո՞վ է պարտաճանաչ ուսանող. Արամը, Պարգևը և Սիրանույշը։ Ի՞նչն է երգում ծառի ճյուղին. ճնճղուկը, սարյակը։**

Ուղղական հոլովով դրվում է նախադասության ենթական (տեր բայի)։*

Արևելահայերենում ուղղական հոլովով դրված հատուկ անուն-ենթակաները որոշյալ առումով են գործածվում և որոշիչ հոդ են ստանում։

Օրինակ՝ **Պետրոսը կարգապահ է, Սիրարփին՝ նույնպես։**

Վարժություն 76։ Հետևյալ նախադասությունները վերածել արևելահայերենի։

1. Տիգրան իրավաբանության ուսանող մ' էր (Գ. Զ.)։ 2. Սեղրաք անոր քով միայն գտեր էր առաջին գորովը զգացումը (Գ. Զ.)։ 3. Սուրբիկ հոգներ էր (Գ. Զ.)։ 4. Աշոտ իր քրոջ ընկերակցությամբ ուղղվեցավ Մարտիկի տունը (Օտ.)։

Վարժություն 77։ Հետևյալ բառերի ուղղական հոլովաձևերով կազմել նախադասություններ։

Գայանե, սենյակ, կենդանի, տուն, պետություն, հայր, քույր, շաբաթ։

Վարժություն 78։ Գտնել ուղղական հոլովով դրված գոյականները։

1. Աշուն էր, պայծառ աշուն...

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ։ Կապտավուն սարերը այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համրել նրանց մաքուր լանջերի բոլոր պուրակները, կարմրին տվող մասրենու թփերը։

Աշուն էր, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով... նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ։ Ամայի ձորերում դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն։ Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը։

---

* *Ուղիղ ձևերի մնացած կիրառություններին մասին խոսվում է հայցակաների տակ։*

Արգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խըշշում։ Եգիպտացորենի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պոռպատի ձայն հանում։ Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ և եգիպտացորենի տերևը որպես բենված սուսեր ընկնում էր քամու առաջ։

Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը (Բ.)։

2. Մարմնի շարժումն ուրիշ մարմինների նկատմամբ կոչվում է հարաբերական շարժում։ Քանի որ բնության բոլոր մարմինները շարժման մեջ են գտնվում, ապա ամեն մի դադար հարաբերական է։

(Ֆիզիկայի դասագիրք)

Սեռական հոլով

Համալսարանի պատիվը բարձր է բոլորիս համար։

Սիրանուշի նկարը դրվեց ցուցահանդեսում։

Առաջին նախադասության մեջ համալսարանի բառը ցույց է տալիս, որ պատիվը վերաբերվում է համալսարանին։

Երկրորդ նախադասության մեջ Սիրանուշի բառը կարող է ցույց տալ, որ նկարը Սիրանուշն է նկարել (սերում, ծագում), նրան է պատկերում (վերաբերություն), կամ նրան է պատկանում (պատկանելություն)։

Համալսարանի և Սիրանուշի բառերը դրված են սեռական հոլովով։

Սեռական հոլովով դրված բառերը ցույց են տալիս պատկանելություն, սերում (ծագում), վերաբերություն։ Դրանք պատասխանում են ո՞ւմ, ինչի՞ հարցերին։

Օրինակ՝ Ո՞ւմ նկարն է պատից կախված — Արամի, Ռաֆֆու, հոր, քրոջ։ Ինչի՞ նկար է պատից կախված—ճնճղուկի, բալենու, տան, սյան։ Արևելահայերենում սեռական հոլովով դրված բառերը եզակիում ունեն -ի, -ու, -ոջ, -վա վերջավորությունները (սեղանի, գինու, քրոջ, այսօրվա) և ան, որ, յան բառավերջերը (ձկան, հոր, սյան)։

Հոգնակի սեռականի վերջավորությունն է ի (սեղանների, տների և այլն), բացառությամբ մարդ և կին բառերի (մարդկանց, կանանց)։

Սեռական հոլովի ձևերի վրա արևելահայերենում որոշիչ հոդ չի դրվում։

Վարժություն 79: Դոնել ուղղական և սեռական հոլովով դրված բառերը:

1. Թախտի վրա, անկողնու մեջ պառկած էր Սաքուլը (Ն—Դ): 2. Այնտեղ ամառվա միջօրեի արևը հրաշեկ ճառագայթներով կիզում է դիմացի տան պատը և այն աստիճան շողշողում, որ ուղիղ նայելիս մարդու աչքերը ցավում են (Ն—Դ): 3. Մայիսյան արևի կենսատու ճառագայթները... հատակի վրա նկարում էին լուսամուտների վայր թողած ասեղնագործ վարագույրների ծաղիկների ստվերները (Ն—Դ): 4. Նրա դեմքը միշտ ժպտում էր, որ և նրա ներքին բարեսրտության ու միամտության բացարձակ արտահայտիչն է (Ն—Դ): 5. Սկզբի մի քանի տարիները նա մեծ դժվարությամբ կարողացավ յուր հորեղբոր այրի կնոջ ընտանիքում ապրել (Ն—Դ): 6. Ներսից լսվում էր տղամարդկանց, կանանց և մանավանդ երեխաների մի կատարյալ ժխոր (Ն—Դ): 7. Մարմնի դիրքի փոփոխությունը ուրիշ մարմինների նկատմամբ կոչվում է մեխանիկական շարժում: Մեխանիկական շարժում կատարում են բնության բոլոր մարմինները և այդ մարմինները կազմող բոլոր մասնիկները:

(Ֆիզիկայի դասագիրք)

Վարժություն 80: Վերածել արևելահայերենի:

I

1. Իմ ընկերներն համալսարանին մեջ ճանչցան զինքը (Գ. Զ.): 2. Ամեն ինչ կանոնավոր շտկված ու իր տեղն է. ճրագս լուցկիին մոտ, փայտը վառարանին քով, զգեստներս իրենց ծածկոցին ներքև (Գ. Զ.): 3. ....Զմեռը, վառ ու ճարճատուն վառարանին ջերմությանը մոտ, նոր հրատարակություններով ծածկված սեղանին շուրջը կսկսեր այն ջերմ, լուրջ ու հմտալից խոսակցությունն (Գ. Զ.): 4. Անցյալ օրերու հիշատակն հեռավոր ու կորուսյալ երջանկության մի պատկերին պես անոր շփոթ մտքին մեջ կը նկարվեր (Գ. Զ.): 5. Երեք ուսանող երիտասարդներ էին անոնք, երեքն ալ զատ-զատ գաղափարներու, զգացմունքներու և հատկությանց ներկայացուցիչ (Գ. Զ.): 6. Երբեմն գիտությանց և ուսմանց վրա կը դառնար իրականությունը (Գ. Զ.): 7. Զմայլման ու հափշտակության շշունջ մը կը բարձրանար երիտասարդաց ու պատանյաց մեջ անոր անցած ատեն (Գ. Զ.):

II

1. Ինչ զարմանալի բան է եղեր երիտասարդի մը սենյակը ...պզտիկ ու մեծ լուսանկարներ նշանավոր անձերու, դերասանուհյաց, արվեստավորներու, հրապարակախոսներու, ասդին անդին, պատերուն վրա ... (Գ. Զ.)։ 2. Սաթենիկ իր վեց ընկերներուն հետ առաջին մրցանակ ստանում էր ամեն դասերուն մեջ (Օտ.)։ 3. Թերություններու վրա լայն թերություններու մեծագույնն է (Հ. Պ.)։ 4. Պզտիկ հակում մը ունեցած էր կարգ մը մտային ու հոգեկան զբաղումներու, որոնք հետզհետե զարգացեր էին իր մեջ ընկերուհիներուն և վարժուհիներուն քաջալերանքով (Օտ.)։ 5. Կինը շինականներու մեջ միայն օգնական է յուր էրիկին, մենակ մարդերու մեջ՝ բեռ, ազնվականներուն մեջ՝ պատիժ (Հ. Պ.)։ 6. Ամեն ոք դուրսն է, դռներուն առջև, վայրերուն վրա, պարտեզներուն մեջ, սրճարաններուն առջև... (Լ. Բաշ.)։ 7. Ծովին ու ցամաքին այլազան տեսարանները չեն զբաղեցներ զիս (Գ. Զ.)։ 8. Ցամաքին վրա առավոտը ոչ նվազ հիացուցեր էր (Գ. Զ.)։ 9. Ծովին մեջտեղը այս հյուլեները կ'երերտկային շարունակ (Գ. Զ.)։

Վարժություն 81: Հետևյալ բառերի սեռական հոլովներով կազմել նախադասություններ:

Սենյակ, կենդանի, տուն, պետություն, հայր, քույր, Շուշանիկ, շաբաթ։

Տրական հոլով

Անահիտը Հասմիկին *ծաղկեփունջ նվիրեց։*

Շոգենավը մոտեցավ կառամատույցին:

Բերված նախադասություններում Հասմիկին *և* կառամատույցին *ձևերը ցույց են տալիս այն առարկաները, որոնց հանգում է գործողությունը։ Այդ բառերը դրված են տրական հոլովով։ Տրական հոլովով դրված բառերը պատասխանում են* ո՞ւմ *կամ* ինչի՞(ն) *հարցերին։*

Ո՞ւմ *տվեց գիրքը ուսուցիչը —* Պետրոսին, Ֆրոյը, հորը, Աղավնուն *և այլն։*

Ինչի՞ն *մոտեցավ որսորդը —* բլրակին, ձիուն, աղվեսին, *(մի)* ծառի *և այլն։ Տրական հոլովով դրված բառերը բայի լրացում են լինում։*

Արևելահայերենում տրական հոլովով դրված բառաձևերը կարող են ը կամ ն որոշիչ հոդ առնել։

Օրինակ՝ Ընկերները օգնության ձեռք մեկնեցին Վաղինակին, տուժվածին, տկարին:

Եթե տրական հոլովով դրված բառը առանց ը *կամ* ն *հոդի է գործածված, ապա այն ձևով լրիվ նույնանում է սեռականի ձևի հետ (եղակին՝ եղակիի և հոգնակին՝ հոգնակիի), և դրանք պետք է տարբերել իմաստով:*

Օրինակ՝ Սեռական՝ *ջրի* ծորակ, *աղբյուրի* ակունք.

Տրական՝ *ջրի* գալ, հասնել *աղբյուրի:*

Տրական հոլովը ցույց է տալիս նաև՝ գործողության նպատակը *(Գնացել էինք գյուղ* ուրախության), ժամանակը (Կեսօրին *հանկարծակի սկսեց անձրևել),* տեղը *(Բլրի* գագաթին *փոփողում է ալ դրոշը),* գինը *կամ* չափը *(Մեկ* ռուբլու *խաղող գնեցի): Տրականի ձև ունի նաև կրող խնդիրը:*

Վարժություն 82: Գտնել ուղղական, սեռական և տրական հոլովով դրված բառերը:

I

1. Մեղվաբուծությունը սակայն ոչ ոքի այնքան եկամուտ չէր տալիս, որքան Մարիսյանին, որովհետև ամբողջ գյուղում միայն նա էր, որ ... ամբողջապես նվիրված էր այդ գործին (Ն—Դ): 2. Հեռվում, լեռան կրծքին կպած, երևում էր Ղ. ... գյուղը (Մ.): 3. Երկու ժամաչափ ճանապարհորդությունից հետո մենք պատահեցինք գյուղի հարուստ նախիրին, որ վերադառնում էր արոտից (Մ.): 4. Մի փոքր ժամանակ տավարածներին ընկերանալուց հետո... հասանք գյուղի աղբյուրին (Մ.): 5. Մենք մոտեցանք փոքրածս նավակին մեր ձիերը ջրելու (Մ.): 6. Հարս ու աղջիկներ կուժերը ուսին գնում են ջրի (Մ.): 7. Տանտիկինը պատրաստած ճանապարհի պաշարը հանձնեց Պետոյին (Մ.):

8. Գյուղն էին իջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի (Հ. Թ.):

9. Տարվա այդ եղանակին՝ փետրվարին, գայլերը ոհմակներով են շրջում և շատ վտանգավոր են (Վ. Ա.): 10. Լապտերավարը, սանդուղքն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին, վազում էր լապտերները վառելու (Ն—Դ): 11. Ձյունը քարացել կպել էր գետնին (Ն—Դ): 12. Ներունին թոռան հետ անհամարձակորեն կանգ առավ սանդուղքի գլխին (Ն—Դ): 13. Դուրս եկավ մի կին՝ ուսերին մի հաստ շալ գցած (Ն—Դ): 14. ... Տղան բոլորովին նման չէր ոչ հորը, ոչ մորը

և ոչ էլ մանավանդ քրոջը (Ն—Դ)։ 15. Մեն էր գալիս դիխարկը ծոծրակին դրած և մազերի գեղեցիկ փայլուն գանգուրները ճակատին ցրիվ տված (Ն—Դ)։

II

1. Մանկահասակ կինն այն աստիճան անձնատուր էր եղել յուր մտածությանը, որ ամենևին չլսեց նրա մտնելը (Ն—Դ)։ 2. Հայրը ամիսը մի երկու անգամ այցելում էր յուր սիրելի որդուն (Ն—Դ)։ 3. Հանկարծ նրա հայացքն ընկավ հատակի վրա ընկած հեռագրին... Միթե կարելի է մի այսպիսի սոսկալի հեռագիր ուղարկել որդուն (Ն—Դ)։ 4. Այդտեղ, ձորակի մյուս ափին մի այծյամ երևաց (Վ. Ա.)։ 5. Բնության ամեն երևույթ հետաքրքրում էր Աշոտին, որևէ նոր բան տեսնելիս նա պատմում էր դպրոցում բնագիտության ուսուցչին, ընկերներին (Վ. Ա.)։ 6. Կյանքի դառնություններին նա միշտ հեգնանքով էր նայում (Վ. Ա.)։ 7. Իրենց նահապետական սովորության համաձայն նրանք որսի միսը բաժանում էին իրենց հարևաններին ու բարեկամներին (Վ. Ա.)։ 8. Ժայռի սեպ ատամներին կանգնած արծիվները ... հետևում էին այդ անկոչ մարդկանց շարժումներին (Վ. Ա.)։ 9. Թեթևացավ մարդու բեռը, աշխատանքը ծանր լծից վերածվեց հաճույքի ու բավականության (Վ. Ա.)։ 10. Նրանք դժվարությամբ հասան մի քարանձավի (Վ. Ա.)։

Վարժություն 83: Վերածել արևելահայերենի:

1. Բարձրագույն գիտության հետևելով՝ մայրենի լեզվի գրագիտությունը մեկ կողմ թողած չէր (Գ. Զ.)։ 2. Զբաղկոտ..., մեքենաբար հարցումներ ուղղած էր աշակերտներուն (Օտ.)։ 3. Սրբճարանը կամ սափրիչին խանութը թաղային հարցերու կամ դեպքերու մասին իր հայտնած գաղափարներն ու փափաքներն, պատգամներու փոխված, կզարնվեին թաղականներու ականջի թմբուկներուն (Օտ.)։ 4. Անմիջապես իր բարեկամին թևը մտնելով տարավ ներկայացուց կոմիտեին մյուս անդամներուն (Օտ.)։ 5. Ատենքն է, որ մենք ալ մեր ընթերցողներուն ճանչցնենք զինքը (Օտ.)։

Վարժություն 84: Հետևյալ բառերի տրական հոլովաձևերով կազմել նախադասություններ:

Շաբաթ, սենյակ, կենդանի, տուն, պետություն, հայր, քույր, Կարինե։

Հայցական*

Ուսանողը գիրքը *տվեց ընկերոջը։*

Հասմիկը շատ է սիրում իր փոքրիկ քույրիկին։

Աշոտը նամակ գրեց։

Այս նախադասություններում գիրքը, քույրիկին, նամակ *բառերը ցույց են տալիս այն առարկաները, որոնք իրենց վրա են կրում գործողությունը, որոնց վրա անմիջականորեն անցնում է գործողությունը (քույրիկը սիրվում է, գիրքը տրվում է, նամակը գրվում է)։* Գիրքը, քույրիկին, նամակ *բառերը այդ նախադասություններում գործածված են որպես կրող խնդիր։*

Որպես կրող խնդիր դրված բառերը ցույց են տալիս այն առարկան, որը իր վրա է կրում գործողությունը։ Դրանք պատասխանում են ի՞նչ(ը), ո՞ւմ *հարցերին։*

Այս բառերը բայերի լրացում են լինում։

Բառի ուղիղ ձևը ցույց է տալիս նաև գործողության տեղը *(Սփյուռքահայ պատանիներն ու աղջիկները ուսանելու համար ժամանեցին* Երևան), ժամանակը (Այսօր *կազմակերպվում է աշխույժ ժամանց),* գինը *և* չափը *(Տետրը արժե* երկու կոպեկ)։

Վարժություն 85։ Գտնել ուղղական—հայցական, սեռական, տրական հոլովներով դրված բառերը։

I

Երևանի հարավ-արևմտյան ծայրամասում է գտնվում Կարմիր բլուրը։ Այդտեղ մի ժամանակ քարհանքեր էին, և շրջակա բնակիչները քար էին կտրում ու տներ կառուցում։ Նրանք հողի մեջ հաճախ գտնում էին հնամյա ամանեղենի կտորներ, նետերի երկաթե ու բրոնզե ծայրապանակներ, կենդանիների ոսկորներ։ Գիտնականները եկան Կարմիր բլուր։ Նրանք որոշեցին իմանալ այդ բլրի գաղտնիքը։ Իսկ դրա համար հարկավոր էր փորել բլուրը, պեղումներ կատարել։

Երբ սկսվեցին պեղումները, գիտնականները հայտնաբերեցին մի հնագույն բերդ։ Նրա սենյակներում հայտնաբերվեցին երկաթե սրեր և պղնձե սաղավարտներ, շատ այլ զենքեր և զանազան իրեր։ Գտնվեցին կավե ահագին անոթներ, որոնց մեջ հին դարերում մարդիկ հացահատիկ ու գինի էին պահում։ Դռան մոտ

---

* *Մեթ.։ Հայցականը առանձին ձև չունի, սակայն նրա արտահայտած հարաբերությունները քննում ենք այստեղ՝ չշեղվելով ավանդական կարգից։*

զտան փականի մի կտոր «Թեյշեբաին քաղաքի բերդ» մակագրությամբ։ Բերդի դարբասներից մեկը քանդված էր։ Այստեղ պատի մեջ շատ նետեր էին խրվել ու մնացել։ Թշնամիները գրավել էին քաղաքը, ավերել ու կործանել բերդը։ Լքված բերդը ծածկվել էր հողով, ու մարդիկ մոռացել էին նրա տեղը։ Բայց գիտնականները պեղեցին Կարմիր բլուրը և իմացան նրա գաղտնիքը։

(Պատմության դասագրքից)

II

1. Սովորականի պես առավոտները վաղ վեր էր կենում, փոքրիկ ինքնաեռը գցում, անկողինը հավաքում, թախտն ու հատակն ավլում, ամեն բան իր տեղը դնում ու նստում հինածը գործելու (Ն—Դ)։ 2. Կատաղի քամին վժժալով ներս էր պրծնում փողոցի մի բերանից, թոցնում էր առաջին պատահած մարդու գդակը, լիզում էր գետնից աղբն ու փոշին, ծեծում էր դռներն ու պատուհանները, բարձրացնում, պատովն էր տալիս մանրավաճառի խանութի ճակատից կախված ցուցանակը ու կորչում փողոցի մյուս բերանից (Ն—Դ)։ 3. Ցուրտ քամին ծեծում էր նրա մազակալ երեսը, փոշով ծածկում մորուքը, բեղերն ու թավ հոնքերը, ստիպում ծածկել աչքերը, սպառնում խլել գդակը (Ն—Դ)։ 4. Ամբողջ երեք շաբաթ էր, որ պարապ էր. գործ չկար, չէր ճարվում։ Ջմեռնամուտ էր. տուն շինողը շինել պրծել էր, վերանորոգողը՝ վերանորոգել պրծել. այլևս ոչ ոք նոր տուն չէր շինում, ոչ ոք հատակները, պատշգամբները, տանիքները ներկել չէր տալիս, պատերին նոր պաստառներ կպցնել չէր տալիս (Ն—Դ)։ 5. Մային աշխատում էր, գիշեր-ցերեկ աշխատում, կար էր անում, լվացք էր անում, հաց էր թխում, թոկ էր գզում, բարդաններն էր կարում, հինած էր հինում, պարսիկ վաճառականների համար նուշ, ընկույզ, տխիլ էր կոտրում (Ն—Դ)։ 6. ...Հայրումյանը վերջացրեց աշխատանքը, ծածկեց գլխարկը, հագավ ամառվա հնամաշ վերարկուն, որը հազիվ էր պաշտպանում նրա վտիտ մարմինը աշնանային խոնավ ու ցուրտ եղանակից, և դիմեց դեպի տուն (Ն—Դ)։

Որպես գործողության անմիջական առարկա (կրող խնդիր) օգտագործվող բառերը արևելահայերենում մերթ դրվում են ուղղականով, մերթ տրականով։ Դրանք դրվում են ուղղականով, երբ առարկաների, իրերի, կենդանիների անուններ են։

Օրինակ՝ Դայանեն գրախանութից գնեց գրիչ, մատիտ, տետր և գրչածայր: *Այդ նախադասության մեջ* գրիչ, մատիտ, տետր *և* գրչածայր *բառերը ուղղական են:*

Հրանտը կենդանաբանական այգում տեսավ փիղ, առյուծ, կապիկ, հովազ *և այլ կենդանիներ:*

Փիղ, առյուծ, կապիկ, հովազ *և* կենդանիներ *բառերը ևս ուղղական են:*

Դրանք դրվում են տրականով, երբ մարդկանց (անձերի) անուններ են:

Օրինակ՝ Հակոբը շատ է սիրում իր ծնողներին, քրոջը, եղբորը, տատին և պապին:

Այս նախադասության մեջ ծնողներին, քրոջը, եղբորը, տատին *և* պապին *բառերը գործածված են տրականով:*

Վարժություն 86: Որոշել՝ հետևյալ բառերը անձ, թե իր են ցույց տալիս. կազմել նախադասություններ՝ այդ բառերը գործածելով որպես կրող խնդիր:

Քար, կենդանի, տուն, մարդ, պետություն, հայր, քույր, ծառ, մայր, ուսանող, գրկիչ, գիրք, մեքենավարուհի:

Հաճախ խոսքի մեջ մարդկանց (անձերի) անունները կարող են օգտագործվել ուղղականով և ընդհակառակն, իրերի անունները՝ տրականով:

Օրինակ՝ Բժիշկ հրավիրեցին հիվանդի մոտ:

Եկավ անասնաբույժը, և հիվանդ կովին մորթեցին:

Առաջին նախադասության մեջ բժիշկ *անձի անունը գործածված է ուղղականով, իսկ երկրորդ նախադասությունում* կով *առարկայի (իրի) անունը՝ տրականով:*

Վարժություն 87: Որոշել՝ հայցականի իմաստով դրված բառերը անձի, թե իրի առումով են գործածված:

1. Նա սիրում էր հայրենիքը յուր սրտի սրբազան զգացմունքներով, սիրում էր կոշտ, կոպիտ գյուղացուն, նրա հողը, աշխատանքը. նրան համարում էր յուր հարազատը, յուր արյունակիցը, նրա և նրա քրտնաթոր աշխատանքի մեջ էր տեսնում յուր գոյության հենարանը, հետևաբար նա իրեն պարտավոր էր զգում օգնելու այդ գյուղացուն (Ն—Դ): 2. Զին, տեսնելով երեխային, բարձր խրխնջաց (Վ. Ա.): 3. Մայր ճնճղուկը կանգնել էր ճյուղին և... դեպի ներս էր հրում ձագերին, որ չընկնեն (Վ. Ա.):

Վարժություն 88: Վերածել արևելահայերենի:

1. Դասատուն հպարտ գոհունակությամբ մտիկ կըներ իր խոսակիցը (Օտ.): 2. Նավաստին աչքերը ժուռ ածեց չորս կողմը և նշմարելով սև տոմինոն և նորա ասպետն... առանց խոսելու, բացավ գլուխը, ողջունեց տոմինոն ու ասպետն... (Արփ. Արփ.): 3. Բերայի մեջ ծնած ու մեծցած էտուարտ մատներուն վրա կըճանչնա բնիկն ու եկվորը (Արփ. Արփ.): 4. Ոչ Գյումումճյանի և ոչ Ստեփանյանի ներեց (Արփ. Արփ.): 5. Բազմության մեջ տեսա էմման, որ.... կերթար մինակը (Գ. Զ.): 6. Ես սրտապնդեցի հեք տղան (Գ. Զ.): 7. Այս իրիկվան դեմդ ելլող տղո՞ւն կը մտածես դուն ալ (Գ. Զ.):

Բացառական հոլով

Գուրգենը ուսուցչից *նվեր ստացավ:*

Ծնողները շատ գոհ են իրենց երեխաներից:

Այս նախադասություններում ուսուցչից *և* երեխաներից *բառերը ցույց են տալիս այն առարկան, որից սկսվում է գործողությունը: Այս բառերը դրված են բացառական հոլովով:*

Բացառական հոլովը պատասխանում է ումի՞ց, ինչի՞ց *հարցերին: Բացառական հոլովով դրված բառերը բայի լրացում են լինում: Դրանք ստանում են* –ից *կամ* –ուց *վերջավորությունները:* Ուց *վերջավորություն են ստանում ուղղականում* ի-ով *վերջացող բառերը (գինի-գինուց, ձի-ձիուց), անորոշ դերբայը (ուտել-ուտելուց, երգել-երգելուց), ինչպես և* մարդ, ամուսին *ու* անկողին *բառերը (մարդուց, ամուսնուց, անկողնուց): Բացառական հոլովը կարող է ցույց տալ նաև գործողության* տեղը *(Ուսանողները վերադառնում են* համալսարանից), ժամանակը (երեկվանից *անընդհատ անձրևում է),* պատճառը (Հուզմունքից *աղջկա այտերը շիկնեցին):*

Արևելահայերենում բացառական հոլովով դրված բառերը ը *կամ* ն *որոշիչ հոդ չեն առնում:*

Վարժություն 89: Գտնել ուղղական–հայցական, սեռական, տրական և բացառական հոլովներով դրված բառերը:

1. Հարևան գյուղացիներից քչերը չէին օգտվում նրա տված խորհուրդներից և օրինակ վերցնում նրա տնտեսությունից (Ն—Դ): 2. Ամեն տարի բերքահավաքին գալիս էին գյուղը և քաղաք տանում... գյուղի ամեն տեսակ բարիքներից՝ ալյուրից, ձավարից,

յուղից, պանրից, գինուց, մեղրից, մրգից և այլն (Ն—Դ)։ 3. Մի անգամ միայն նրա կրծքից մի հառաչանք դուրս թռավ, այն հառաչանքներից մեկը, որ դուրս է գալիս ակամայից այն անբախտների սրտերից, որ կռվում են անդադար մի անընկճելի, սիրտ կեղեքող զգացմունքի դեմ (Ն—Դ)։ 4. Մի քանի փարսախ հեռացել էինք գյուղից, երբ արեգակը մշուշով ծածկված լեռների ետևից յուր հրափայլ գունդը հանեց (Մ.)։ 5. Դա մի խոշոր, արու եղնիկ է, որ ականջը գյուղից եկող ձայներին, զգուշությամբ կոկոններ է պոկում թփից ու ծամում (Վ. Ա.)։ 6. Ամեն ամառնամուտի մենք շոգ հովիտներից քոչում էինք զով սարերը և այնտեղ պահում էինք մեր անասունները մինչև աշնանամուտ (Վ. Ա.) 7. Կեսից վերև ամբողջ սարը կազմված է մի վիթխարի կտոր ժայռից..., որի ճակատը իր լայնքով փակում է դիմացից նայող մարդու ամբողջ հորիզոնը, իսկ բարձրությունը, տեղական որսորդների ասելով, մոտ ութ հարյուր մետր է (Վ. Ա.)։ 8. Ժայռի կատարից մինչև հիմքը, վերից վար իջնող խոր կնճռի նման մի ձորակ կար, մի խորխորատ. նրանով էին բարձրանում մեր որսորդ քարագնացները (Վ. Ա.)։

Վարժություն 90: Վերածել արևելահայերենի:

1. Իր պզտիկ քրոջմեն ու եղբորմեն զատ ոչ ոք անոր անունը տվավ մեյ մընալ (Գ. Զ.)։ 2.... Հրաժարած իր ոսկե երազեն, խարսխած էր դասատության մեջ և գոհ էր իր վիճակեն (Օտ.)։ 3. Նախ՝ բավական դրամ հավաքած էր, հետո պզտիկ խումբ մը կազմած իր քրոջմեն, դպրոցի կառավարիչեն, խանութպանե մը, անգործ երիտասարդե մը և նոր շրջանավարտ պատանիե մը (Օտ.)։ 4. Անորոշ խոստումներե և նույնիսկ բացարձակ մերժումներե ուրիշ դրական արդյունքի չէր հանգում (Օտ.)։ 5. .... Մենք որ ապրելու պետք ունինք, ստիպված ենք ժամանակին հարմարել. շատ անգամ բանթալոնեն բաճկոն և երգիծանքեն վեպ շինելով (Հ. Պ.)։ 6. Այս համառոտ բացատրութենեն ետքը դառնանք Աբիսողոմ աղային (Հ. Պ.)։ 7. Գործարանի պաշտոնյաներեն մին վազելով կերթա սափրիչ մը բերելու։ Քանի մը վայրկյանեն կուգա սափրիչն (Հ. Պ.)։ 8. Ամեն աղջիկ ընկերության մեջ, ընտանյաց մեջ դիրք մ՚ունենալե առաջ հայուհի մը պարտի լինիլ (Գ. Զ.)։ 9. Ամեն նոր երկ կամ պարբերական հրատարակություն իր հետաքրքիր նայվածքեն չէր վրիպած (Գ. Զ.)։ 10. Երկրաբանութենե մինչև աստղաբաշխության վրա խոսեին (Գ. Զ.)։ 11. Հիմա այդ լույսը երկու փոքրիկ պատուհաններեն, անթափանց դառնալու չափ աղոտ

ապակիներեն անցնելով, փոշիներով ծանրացյալ երկու ծուռ ու լուսավոր սյուներ կը կազմեր, որ դուրսեն ու բարձրեն կուգար, գետինը տախտակամածին վրա փակչելու համար (Գ. Զ.)։

Վարժություն 91: Կազմել նախադասություններ՝ հետևյալ բառերը դրանց մեջ գործածելով բացառական հոլովով:

Քար, գինի, տուն, կենդանի, մարդ, պետություն, հայր, քույր, մեքենագրուհի։

Գործիական հոլով

Հյուրերը Երևան ժամանեցին օդանավով:

Սուրենը սիրում է նկարել մատիտով:

Այս նախադասություններում օդանավով *և* մատիտով *բառերը ցույց են տալիս այնպիսի առարկաներ, որոնց միջոցով կատարվում է գործողությունը։*

Այդ բառերը գրված են գործիական հոլովով։ Գործիական հոլովը կարող է ցույց տալ նաև գործողության տեղը (Փողոցով *սլանում է ավտոմեքենան),* ժամանակը *(Երկու* օրով *նա բացակայում է Երևանից),* ձևը *(Կարինեն* հարգանքով *ու* սիրով *է վերաբերվում իր ընկերներին),* գինը *և* չափը *(Քսան* կոպեկով *ավտոբուսի չորս տոմս գնեցին)։*

Գործիական հոլովով դրված բառերը բայի լրացում են լինում։ Գործիական հոլովը պատասխանում է ումո՞վ, ինչո՞վ *հարցերին և ունի* –ով, *երբեմն նաև (յամ)*ը *վերջավորությունները։ (Յամ)*ը *վերջավորություն են ստանում ուղղականում* յուն *բառավերջ ունեցող բառերը* (արյուն–արյամբ, սառնություն–սառնությամբ), *ինչպես և* անուն *բառը* (անվամբ). *տարածված է նաև այս բառերի* ով *վերջավորությամբ կազմված գործիականը* (արյունով, սառնությունով, անունով):

Արևելահայերենում գործիական հոլովով դրված բառերը ը *կամ* ն *որոշիչ հոդ չեն առնում։*

Վարժություն 92: Գտնել ուղղական–հայցական, սեռական, տրական, բացառական և գործիական հոլովով դրված գոյականները:

1. Քամու դեմ կռվելով, նա մտավ իրենց նեղ ու ծուռ փողոցը, որի երկայնքով այս ու այն կողմը հենված էին... խղճուկ տնակներ, ցածր, հողածածկ կտուրներով, ծուռտիկ-մուռտիկ պատուհաններով, փտած դռներով, որը գետնի մեջ խրված, որը գետ-

նից քարձր (Ն—Դ)։ 2. Ոտաբոբիկ, պատառոտուն հագուստով, խճճված մազերով մի փոքրիկ աղջիկ դուռը բաց արեց և ցրտից սարսռալով, մի կողմ քաշվեց (Ն—Դ)։ 3. Գյուղի բնակիչները պարապում էին գլխավորապես երկրագործությամբ և մասամբ մեղվաբուծությամբ (Ն—Դ)։ 4. Եկողը իսկապես խեչան ապոր որդին էր՝ մի թխադեմ երիտասարդ շատ սև աչքունքով, նույնքան սև փոքրիկ բեղերով ու կարճ մորուքով և դեպի ետ սանրած երկայն փայլուն մազերով (Ն—Դ)։ 5. Ճանապարհին նրա միտքն ամբողջապես զբաղված էր յուր խոսած ճառով, այն ազդեցությամբ, որ գործել էր այդ ճառը ունկնդիրների վրա, այն ծափահարությամբ ու բացականչություններով, որոնցով վարձատրեցին նրան... (Ն—Դ)։ 6. Բժիշկը մտավ սենյակի նմանություն ունեցող կիսախավար մի նկուղ՝ աղյուսե հատակով, գաջով սվաղած խիստ խոնավ պատերով և գերանածածկ առաստաղով։ Նկուղը լուսավորվում էր տան հետևի փողոցի կողմից երկու փոքրիկ պատուհանով (Ն—Դ)։ 7. Մենք կաթով թեյ խմեցինք, նոր կտրած մեղրով սեր ու կարագ կերանք և վերջը մի համեղ ձվածեղ սպառելով վեր կացանք (Մ.)։ 8. Ձիերը այդտեղով քայլում էին զարմանալի զգուշությամբ (Մ.)։ 9. Ժայռի ճակատը ծածկված էր իրար զուգահեռ հորիզոնական նեղ շավիղներով, թարեքներով, կարնիզներով ու տեղ-տեղ էլ լայն դարևանդներով (Վ. Ա.)։

Վարժություն 93: Կազմել նախադասություններ հետևյալ բառերի գործական հոլովաձևերով։

Գինի, տուն, մանուշակ, կենդանի, մարդ, պետություն, հայր, այուն, քույր, արյուն։

Ներգոյական հոլով

Բակում *խաղում են երեխաները։*

Սևանա լճում *շատ ձուկ կա։*

Այս նախադասություններում բակում *և* լճում *բառերը ցույց են տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը։ Ներգոյական հոլովով դրված բառերը բայի լրացում են լինում։ Ներգոյական հոլովը ցույց է տալիս նաև գործողության* ժամանակը *(Քսան* տարեում *երևանից հասնում են էջմիածին)։ Ներգոյական հոլովը պատասխանում է* ինչո՞ւմ, *նաև* որտե՞ղ *հարցերին։*

Ներգոյական չեն կազմվում մարդկանց և կենդանիների անուններից։ Ներգոյականի իմաստ արտահայտելու համար այդ բառերի սեռականները դրվում են մեջ կապի հետ։

Օրինակ՝ Աշակերտի մեջ բոլոր ուսուցիչները բարձր են գնահատում ջանասիրությունն ու համեստությունը: Շան մեջ հնուց ի վեր իր տիրոջ նկատմամբ հավատարմություն է նկատված:

Ներգոյական հոլովը ը կամ ն որոշիչ հոդ չի վերցնում։

Վարժություն 94: Գտնել ուղղական-հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով օգտագործված բառերը:

I

1. Կուբանի ստորին հոսանքում խիտ եղեգնուտներ կան, իսկ հովտին զոսգահեռ շարված ցածր սարերը պատած են մանրածառ, խիտ անտառներով և իրար խճճված թփուտներով (Վ. Ա.)։ 2. Բարձունքներից գոչյունով ցած իջնող փրփրաբաշ գետերը տեղ-տեղ ճերմակին էին տալիս ձորերում։ Լեռների ծերպերում, անտառների մեջ ու ժայռերի տակ ծփում էին հայկական գյուղերը (Վ. Ա.)։ 3. Ժայռի կածաններից մեկի ծայրին վիթխարի եղջյուրներն օդում ճոճելով մի խոշոր նոխազ է փախչում (Վ. Ա.)։ 4. Նրանք ամեն կիրակի իրենց հանգիստը անց էին կացնում լեռներում՝ որսորդության մեջ։ Բերկրանքով վազում էին նրանք սուրացող այծյամների հետևից, կռիվ էին բռնվում վարազների ու արջերի հետ... (Վ. Ա.)։ 5. Մարիսյանն իր վերջին աշխատանքն էր կատարում այգում և փեթականոցում։ Նա նստած էի պատշգամբում և գիրք էի կարդում (Ն—Դ)։ 6. Մտածմունքները նոր ու նոր վերքեր էին բացում նրա սրտում և ամբողջապես խառնում նրա հոգու խորքում տարիներից ի վեր կուտակված մաղձը (Ն—Դ)։ 7. Հորիզոնում ծուխ է երևում, հեռվում մերթ ընդ մերթ կրակներ են փայլատակում (Վ. Ա.)։

II

Մարդը նախ ճանաչեց և ապա սովորեց հանել ու մշակել պղինձը, անագը, ոսկին և, վերջապես, երկաթը։ Աստիճանաբար կուտակվում էին դիտողություններն ու փորձը. պարզվեց, որ որոշ մետաղներ ավելի հաճախ հանդիպում են իրար հետ միասին, ինչպես, օրինակ, անագը, պղինձը և ցինկը, մի բան, որ մարդուն մղեց դեպի նրանց համաձուլվածքի՝ բրոնզի հայտնագործումը։ Եվ երբ Եվրոպայում զարգացավ լեռնագործությունը, սկսեցին որոշվել և գեոքիմիայի օրենքները։ Հանքերում ստեղծված էին գեոքիմիական գիտության հիմնական սկզբունքները. պարզվում էր, թե բնության մեջ ո՛ր նյութերն են հանդիպում միասին, ի՛նչ

պայմաններում, որոնք են այն օրենքները, որ հարկադրում են այս կամ այն տարրերին երկրի որոշ տեղերում կուտակվել և մյուս տեղերում ցրիվ գալ։

Մենք այդ լավ գիտենք նույնիսկ մեր առօրյա կյանքում։ Բնության տարրերից մի քանիսը հանդիպում են առավելապես մթնոլորտում, ինչպես ազոտը, թթվածինը և հազվադեպ ազնիվ գազերը։ Աղային լճերում կամ աղի հանքերում քլորի, բրոմի և յոդի աղերը գտնվում են միասին, կալիումի, նատրիումի, մագնեզիումի և կալցիումի հետ միացած վիճակում (ըստ «Հ. Գ.»)։

Վարժություն 95: Հետևյալ բառերով կազմել նախադասություններ՝ դրանք օգտագործելով ներգոյական հոլովով։

Սենյակ, սիրտ, հովիտ, պետություն, օդ, Երևան, այգի, մարմին, ավտոմեքենա, ծառուղի, ջուր, փողոց։

Վարժություն 96: Որոշել տեքստում օգտագործված գոյականների հոլովը։

1. Սկսվեց պատերազմը։

Խոնավ խրամատներում ազատասեր որսորդի կարոտով տենչում էի իմ ծանոթ որսասարը։ Ե՞րբ եմ նրա վեհապանծ բարձունքից նայելու քաղցր նիրհից զարթնող իմ հայրենի աշխարհին, վաղորդյան մշուշից դուրս ելնող Արարատի փառահեղ տեսքին, երբ եմ մեկ էլ լիաթոք ծծելու այն լեռան անապական օդը... Եվ այժմ, որպիսի բերկրանք, իմ իղձը կատարված է։ Հրացանը ձեռքիս՝ ուրախ տենդով բռնված մագլցում եմ ծանոթ ժայռերը, մրմունջով ողջունում եմ նրանց, մտնում եմ նրանց խորհրդավոր անձավները, տնտղում եմ քարայծերի հետքերը... և այդ ամենը, ամենը անչափ հարազատ է իմ սրտին։

Ամբողջ չորս տարի ես չեմ եղել այդ վայրերում։ Պատերազմը չորս տարով ընդհատեց իմ որսորդական կյանքը։ Չորս տարի կտրվել սիրած բնությունից՝ դա հավիտենականություն է որսորդի համար։ Պատերազմը վերջացավ մեր հաղթանակով, սիրտս կարոտով լիքը, առաջին անգամ որսի եմ գնում։ Եվ ես անհագ կերպով ըմպում եմ բնության արբեցուցիչ նեկտարը, և ուրախությունից սիրտս ուռչում է, հուզմունքը դեմ է առնում կոկորդիս... (Վ. Ա.)։

2. ....Վերջին ժայռն էլ բարձրացա ու շուռ եկա, ցած նայեցի։ Ամբողջ Արարատյան դաշտը իմ ոտքերի տակ է, իսկ Մասիսները՝ իմ դիմաց։ Դեղին եղեգնուտների միջով ոլոր-մոլոր Արաքսն է հո-

սում, նրա մյուս ափին օտար գյուղեր են ծխում։ Արաքսի այս ափով մշակված դաշտերի լայն գոտին է ձգվում։ Նրանց վրա փոշու ամպեր բարձրացնելով տրակտորների խմբերը վարում են արգավանդ հողերը. հեռվում ջրանցքները արծաթե ժապավենների նման փայլփլում են դաշտերի երկայնքով մեկ, ապա երևում են սովետական գյուղերի նոր, գեղեցիկ շենքերը, բարեկարգված կայարանները... մեծ սրահներ՝ գյուղատնտեսական մեքենաների համար։ Ինչ արագ է ընթանում կյանքը գետի այս ափին... Իսկ մյուս ափը անմշակ է, ողջ դաշտը ծածկված է թավուտներով, բարձր ու խառնիճաղանջ մոլախոտերով։ Ես նայում եմ այդ բարձունքից իմ կերպարանափոխված երկրի պայծառ դեմքին ու հոգիս փառավորվում է հրճվանքից թե այն պատճառով, որ սքանչելի այդ երկրի զավակն եմ, և թե այն, որ վերջապես նորից իմ սիրած սարերում եմ (Վ. Ա.)։

3. Գյուղը գտնվում է մի ձորակում, Խուստուփից գոչգոչյունով ցած եկող փրփրերախ գետակի ափին։ Գետակի երկու կողմերից վեր են ելնում թավուտներով պատած լանջեր, ուր տեղ-տեղ մամռապատ ժայռեր են երևում՝ թփերով ու փոքր ծառերով ծածկված։

Որսով հարուստ են գյուղը շրջապատող անտառները։ Լուսադեմին եթե դուրս գաս քեզ հյուրընկալող տնից և նայես գետակին, աղջամուղջի մեջ ջուր խմող կենդանիներ կտեսնես. եղնիկներն են թփուտներից ջրի իջել։ Շների հաչոցից խրտնած ահա վազում են նրանք գյուղի դիմացի լանջով դեպի իրենց թաքստոցները։ Եթե կտուրը բարձրանաս և նայես դեպի Խուստուփի բարձունքը, գյուղից վերև ճերմակին տվող սալ քարերի վրա կռացած մուգ կենդանիներ կնկատես, որոնք հապճեպ լիզում են աղաքարերը և երբեմն էլ դունչները վեր բարձրացնելով ականջ դնում զարթնող գյուղի ձայներին։ Այդ ժամանակ իրենց ամբողջ հոյակապությամբ երևում են նրանց եղջյուրները՝ թրերի նման դեպի ետ կռացած։ Քարայծերն են, որ գիշերով իջել են աղ լիզելու (Վ. Ա.)։

4. Մեր առօրյա փորձից գիտենք, որ կողմնացույցի սլաքի մի ծայրը միշտ ուղղված է լինում դեպի հյուսիս, մյուսը՝ հարավ։ Այդ պատճառով էլ մեզ առաջին հայացքից անհեթեթ կթվա հետևյալ հարցը. երկրագնդի ո՞ր տեղում է, որ կողմնացույցի սլաքն իր երկու ծայրով էլ հյուսիսը, կամ երկու ծայրով էլ հարավն է ցույց տալիս։

Հիշենք, որ երկրի մագնիսական բևեռները չեն համընկնում նրա աշխարհագրական բևեռներին։ Դեպի ո՞ւր ցույց կտա հարա-

վային աշխարհագրական բևեռում դրված կողմնացույցի սլաքը։ Նրա մի ծայրը կուղղվի դեպի մոտակա մագնիսական բևեռը, իսկ մյուսը՝ հակառակ ուղղությամբ։ Բայց հարավային աշխարհագրական բևեռից որ կողմն էլ որ գնանք, միշտ դեպի հյուսիս ենք ուղղվելու։ Հարավային աշխարհագրական բևեռից ուրիշ ուղղություն չկա, նրա չորս կողմը հյուսիս է։ Ուրեմն այնտեղ դրված մագնիսական սլաքի երկու ծայրերն էլ ցույց կտան հյուսիսը։

Ճիշտ այդպես էլ հյուսիսային աշխարհագրական բևեռ տեղափոխված կողմնացույցի երկու ծայրերն էլ ցույց կտան հարավը (ըստ «Հ. Ֆ.»)։

5. Ամեն մի մարմին շարունակում է մնալ դադարի կամ հավասարաչափ և ուղղաձիգ շարժման իր վիճակում այնքան և այն չափով, քանի դեռ նա կիրառված ուժերով չի հարկադրվում փոխել իր վիճակը։ Նետված մարմինը շարունակում է, պահպանել իր շարժումը, որչափ նրան չի դանդաղեցնում օդի դիմադրությունը, և որչափ ծանրության ուժը չի հարկադրում այդ մարմնին շարժվելու դեպի ցած։ Հոլը, որի մասերը, փոխադարձ կապակցության շնորհիվ, թույլ չեն տալիս իրար ուղղաձիգ շարժում կատարելու, չի դադարում պտտվել (հավասարաչափ), որչափ այդ պտտումը չի դանդաղեցվում օդի դիմադրությամբ։ Մոլորակների և գիսավորների մեծ մասսաները ազատ տարածության մեջ ավելի քիչ դիմադրության հանդիպելով, պահպանում են իրենց ինչպես համընթաց, այնպես էլ պտտական շարժումը շատ ավելի մեծ ժամանակի ընթացքում։

(Ֆիզիկայի դասագիրք)

Արևելահայերենի հոլովումները

Բոլոր գոյականները արևելահայերենում միատեսակ չեն հոլովվում։ Տարբերությունները հանդես են գալիս սեռական հոլովաձևերում։

Օրինակ՝ ուղղական՝ սեղան, գինի, տուն, սյուն, հայր, քույր, որ.
սեռական՝ սեղանի, գինու, տան, սյան, հոր, քրոջ, որվա։

Հոլովվելու տեսակները կոչվում են հոլովումներ, իսկ յուրաքանչյուր հոլովման սեռականի տարբերիչ նշանները՝ հոլովիչներ։ Հոլովիչը որոշվում է սեռականի վերջավորությամբ։

Արևելահայերենում կան ի, ու, ան, յան, որ, օջ, վա հոլովումները։

Ու հոլովում

Սեռականում ու վերջավորություն (հոլովիչ) են ստանում՝

ա) Այն բոլոր գոյականները, որոնք ուղղականում վերջանում են ի-ով։

Օրինակ՝ գինի-գինու, սինի-սինու, կենդանի-կենդանու, պատանի-պատանու։

Միավանկ բառերի հոլովման ժամանակ ու հոլովիչը ավելանում է ուղղակի բառի վրա (առանց ի-ի կորուստի)։

Օրինակ՝ ձի-ձիու, թի-թիու։

բ) Մարդ, ամուսին, անկողին *բառերը, ինչպես՝* մարդ-մարդու, ամուսին-ամուսնու, անկողին-անկողնու։

գ) Անորոշ դերբայը։

Օրինակ՝ գրել-գրելու *թուղթ,* ուտել-ուտելու *համար,* խոսել-խոսելու *նյութ և այլն։*

Հոլով.	Իր		Անձ	
	եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
Ուղղ.	այգի(ն)	այգիները(ը)	որդի(ն)	որդիները(ը)
Հայց.				
Սեռ.	այգու	այգիների	որդու	որդիներ(ը)
Տրակ.	այգու(ն)	այգիների(ն)	որդու(ն)	որդիների(ն)
Բաց.	այգուց	այգիներից	որդուց	որդիներից
Գործ.	այգով	այգիներով	որդով	որդիներով
Ներգ.	այգում	այգիներում	—	—

Ծանոթություն.— *1. Ի-ով վերջացող օտարազգի հատուկ անունների* (Քենեդի, Գորկի *և այլն) սեռականը կարող է ստանալ ի հոլովիչը* (Քենեդիի, Գորկիի)։

Մարդ *բառի եզակի ձևերը նման են* որդի *բառի ձևերին, իսկ հոգնակին ունի հետևյալ պատկերը՝ ուղղ.՝* մարդիկ, *սեռ.՝* մարդկանց, *տր.՝* մարդկանց, *հայց.՝* մարդկանց, *բաց.՝* մարդկանցից, *գործ.՝* մարդկանցով։

Ներգոյականը հոլովաձև չունի. դրա իմաստը արտահայտում են մեջ *կապով։*

Օրինակ՝ Մարդկանց մեջ բարձր պետք է գնահատել լավը։

Վարժություն 97: Գտնել *ու* հոլովման պատկանող բառերը և որոշել, թե *ո՞ր* հոլովով են դրանք օգտագործված տեքստում։

Բավական հեռավորության վրա երևում էր մի կանաչ գոտի։ Երբ գնացքը մոտեցավ, տեսանք, որ դա գարու մի անծայրածիր

արտ էր։ Մի գյուղացի կանգնած էր արտի կողքին և հավանաբար հսկում էր։ Գյուղացուց քիչ այն կողմը նստած էր մի պատանի, որ նրա որդին պիտի լիներ, իսկ նրա կողքին փարթամ կանաչի մեջ սրածում էր մի կենդանի։ Մենք չկարողացանք որոշել... ձի՞ էր, թե՞ ջորի .... *(«Հայոց լեզվի դասագրքից»)*

Վարժություն 98: Հետևյալ բառերի սեռական, տրական և բացառական հոլովաձևերով կազմել նախադասություններ:

Կղզի, կարդալ(ը), Գարիբալդի, դումարելի, քարտուղարուհի, այգի, անկողին, բաժանելի։

Վարժություն 99: Գրել *ու* հոլովման պատկանող 10 գոյական. հոլովել դրանցից երկուսը (մեկը անձ ցույց տվող, մյուսը՝ իր):

Ան հոլովում

Սեռականում ան *հոլովիչ են ունենում՝*

ա) Գրաբարում ն-ով *վերջացող և այժմ այդ* ն-ն *կորցրած բառերը։*

Օրինակ՝ Զուկն-ձուկ-ձկան, դուռն-դուռ-դռան, եզն-եզ-եզան, նուռն-նուռ-նռան, գառն-գառ-գառան, թոռն-թոռ-թոռան, մուկն-մուկ-մկան, ամառն-ամառ-ամռան, ձմեռն-ձմեռ-ձմռան:

բ) Ում (ումն) *ածանցով կազմված գոյականները։*

Օրինակ՝ ուսում-ուսման, հրում-հրման, զեկուցում-զեկուցման:

Այս բառերի գործիականը կազմվում է—բ վերջավորությամբ (ուսմամբ, զեկուցմամբ), *բայց կարող է ունենալ նաև* ով *վերջավորությունը (զեկուցումով)։*

գ) Ուղղականում ուն *վերջացող մի քանի բառեր՝* աշուն, գարուն: *Սրանց նման են հոլովվում նաև* տուն, շուն *բառերը։*

Հոլով.	Իր		Անձ	
	եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
Ուղղ.	տուն	տներ	թոռ(ը)	թոռներ(ը)
Հայց.				
Սեռ.	տան	տների	թոռան	թոռների
Տրակ.	տան(ը)	տների(ն)	թոռան(ը)	թոռների(ն)
Բաց.	տնից	տներից	թոռից	թոռներից
Գործ.	տնով	տներով	թոռով	թոռներով
Ներգ.	—	տներում	—	—

Մանոթություն.—1. Տուն բառի ներգոյականի իմաստը արտահայտելու համար շատ գործածական են տանը, տան մեջ ձևերը։

2. Անուն և ման գոյականները նույնպես պատկանում են ան հոլովման, բայց սեռականում ունենում են վան բառավերջը (անվան, մանվան)։

3. Մանուկ բառը ևս ան հոլովիչ է ստանում՝ մանկան[1]։

4. Ամառ և ձմեռ բառերը ենթարկվում են նաև վա հոլովման (ամառվա, ձմեռվա)։

Վարժություն 100։ Գտնել հետևյալ գոյականների սեռականի ձևերը և դրանք գործածել նախադասության մեջ։

Լուծում, աշուն, մոտեցում, թռչուն, սերմ, որոշում, սողուն, գարուն, անձ, նուռ, ձմեռ, դուռ, մաս, նուռ։

Յան հոլովում

Սեռականում յան *բառավերջ են ստանում բոլոր այն բառերը, որոնք ուղղականում վերջանում են* յուն-*ով։*

Օրինակ՝ արյուն-արյան, սյուն-սյան, գիտություն-գիտության *և այլն։*

Այս բառերի գործիականը կազմվում է և՛ (յամ)ը, *և՛* -ով *վերջավորություններով։*

Օրինակ՝ արյամբ-արյունով, տգիտությամբ-տգիտությունով *և այլն։*

Հոլովներ	Իր	
	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	խմբագրություն(ը)	խմբագրությունները(ը)
Հայց.		
Սեռ.	խմբագրության	խմբագրությունների
Տրակ.	խմբագրություն(ը)	խմբագրությունների(ն)
Բաց.	խմբագրությունից	խմբագրություններից
Գործ.	խմբագրությամբ խմբագրությունով	խմբագրություններով
Ներգ.	խմբագրությունում	խմբագրություններում

Մանոթություն.— Յուն ածանցով կազմված բառերը յան հոլովման չեն ենթարկվում, այլ՝ ի։

Օրինակ՝ մոնչյուն-մոնչյունի, ճնչյուն-ճնչյունի, դոփյուն-դոփյունի *և այլն։*

---

[1] *Եթե* Մանուկ-*ը հատուկ անուն է, հոլովում է այսպես՝* Մանուկ, Մանուկի, Մանուկի(ն), Մանուկից, Մանուկով։

Վարժություն 101: Գտնել *ու, ան* և *յան* հոլովման պատկանող բառերը:

Համբարձումը ծնվել է հեռավոր Ամերիկայում: Նրա պապը՝ Հակոբը, տխրության արցունքներն աչքերում, հաճախ էր պատմում նրան իրենց հեռավոր հայրենիքի մասին: Պատանու սիրտը լցվում էր անսահման կարոտով: Շատ էր երազում նա գեթ մի անգամ տեսնել Հայաստանը, նայել նրա դաշտերին, որտեղ արածում են գառներն ու եզները, քայլել այգիներով, ուր ծիրանին ու տանձենին են ծաղկում, ճաշակել անուշահամ նուռը... Սակայն երազանքի բերած ուրախությունը շատ կարճ էր լինում... Նա նույնիսկ իր անունը հայերեն գրել չգիտեր:

Եվ ահա բախտը նրանց էլ ժպտաց. նրանք տուն դարձան՝ Հայաստան:

Սովետական Հայաստանում ուսումը ձրի է, միայն պետք է ցանկություն ունենալ սովորելու,— գիտեին նրանք: Եվ Հակոբը ջանասիրությամբ ու եռանդով սկսեց պարապել: Գրելն ու կարդալը հիմա նրան չեն բավականացնում: Ուզում է բարձրագույն կրթություն ստանալ, իր օջախի այումը դառնալ: Հիմա նա էլ պայքարում է «եղբայրություն, հավասարություն, բարեկամություն» լոզունգի իրականացման համար:

Վա հոլովում

Սեռականում վա *հոլովիչ ստանում են ժամանակ ցույց տվող բառերը:*

Օրինակ՝ or–օրվա, տարի–տարվա, շաբաթ–շաբաթվա, առավոտ–առավոտվա *և այլն:*

Բացառություն են կազմում վայրկյան–վայրկյանի, ռոպե–ռոպեի, երեկո–երեկոյի, դար–դարի *(նաև* դարու*) բառերը:*

Հոլովներ	*Իր*	
	եզակի	*հոգնակի*
Ուղղ.	շաբաթ(ը)	շաբաթներ
Հայց.		
Սեռ.	շաբաթվա	շաբաթների
Տրակ.	շաբաթվա(ն)	շաբաթների(ն)
Բացառ.	շաբաթվանից(շաբաթից)	շաբաթներից
Գործ.	շաբաթով	շաբաթներով
Ներգ.	շաբաթում	շաբաթներում

Վարժություն 102: Գտնել *ան, յան, վա* հոլովման պատկանող բառերը:

1. Հայաստանի բնությունը միշտ էլ գեղեցիկ է՝ լինի գարուն, ամառ, աշուն, թե ձմեռ։ 2. Ամեն տարի հուլիս ամսվա երկրորդ շաբաթվա առաջին օրը ընկերուհիները գալիս են Սրբուհուն այցելության։ 3. Շունը, եզը և գառը ընտանի կենդանիներ են, ձուկը՝ ջրային, իսկ մուկը կրծող է։ 4. Գրելը և կարդալը նպաստում են մարդու մտավոր զարգացմանը։

Վարժություն 103: Գրել *վա* հոլովման պատկանող 5 բառ. կազմել նախադասություններ այդ բառերով:

Որ հոլովում

Որ *հոլովման են պատկանում* հայր, մայր, եղբայր *բառերը և այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը սրանցից որևէ մեկն է* (հորեղբայր, նախահայր *և այլն)։ Այս հոլովման պատկանող բառերը ներգոյական չունեն։*

Հոլովներ	*Անձ*	
	եզակի	*հոգնակի*
Ուղղ.		
Հայց.	*եղբայր(ը)*	*եղբայրներ(ը)*
Սեռ.	*եղբոր*	*եղբայրների*
Տրակ.	*եղբոր(ը)*	*եղբայրների(ն)*
Բացառ.	*եղբորից*	*եղբայրներից*
Գործ.	*եղբորով*	*եղբայրներով*
Ներգ.	—	—

Վարժություն 104: Կազմել նախադասություններ *մայր* բառի բոլոր հոլովաձևերով:

Ոջ հոլովում

Սեռականում ոջ *վերջավորություն են ստանում* քույր, կին, ընկեր, տեր, *հաճախ նաև՝* աներ, սկեսուր, տալ *բառերը, ինչպես և այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչն են դրանք* (հորաքույր, տանտիկին, խաղընկեր *և այլն)։*

Օրինակ՝ ընկեր–ընկերոջ, տեր–տիրոջ, քույր–քրոջ, սկեսուր–սկեսրոջ, աներ–աներոջ, մորաքույր–մորաքրոջ *և այլն։*

Այս հոլովման պատկանող բառերը ներգոյական հոլովաձև չունեն։

Հոլովներ	Անձ	
	եզակի	հոգնակի
Ուղղ. Հայց.	ընկեր(ը)	ընկերներ(ը)
Սեռ.	ընկերոջ	ընկերների
Տրակ.	ընկերոջ(ը)	ընկերների(ն)
Բաց.	ընկերոջից	ընկերներից
Գործ.	ընկերոջով	ընկերներով
Ներգ.	—	—

Կին բառի եզակին նման է ընկեր *բառի համապատասխան ձևերին, իսկ հոգնակին հոլովվում է այսպես՝*

ուղղ. հայց.	կանայք
սեռակ.	կանանց
տրակ.	կանանց
բացառ.	կանանցից
գործ.	կանանցով

Ի հոլովում

Ի հոլովման պատկանում են այն բոլոր բառերը, որոնք մյուս հոլովումներին չեն պատկանում։ Դրանք ճանաչման որևէ ձևային հատկանիշ չունեն։

Հոլով.	Իր		Անձ	
	եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
Ուղղ. Հայց.	փողոց(ը)	փողոցներ(ը)	ուսանող(ը)	ուսանողներ(ը)
Սեռ.	փողոցի	փողոցների	ուսանողի	ուսանողների
Տրակ.	փողոցի(ն)	փողոցների(ն)	ուսանողի(ն)	ուսանողների(ն)
Բաց.	փողոցից	փողոցներից	ուսանողից	ուսանողներից
Գործ.	փողոցով	փողոցներով	ուսանողով	ուսանողներով
Ներգ.	փողոցում	փողոցներում	—	—

Արևելահայերենում գոյականների մեծ մասը պատկանում է այս հոլովմանը։ Բոլոր բառերի եր և ներ վերջավորություններով կազմված հոգնակիները ենթարկվում են ի հոլովման։

Աղջիկ *և* **սեր** *բառերի հոլովումը*

Հոլով.	*Եզակի*	*Հոգնակի*
Ուղղ. *Հայց.*	աղջիկ(ը)	աղջիկներ(ը)
Սեռ.	աղջկա	աղջիկների
Տրակ.	աղջկա(ն)	աղջիկների(ն)
Բաց.	աղջկանից	աղջիկներից
Գործ.	աղջկանով	աղջիկներով
Ներգ.	—	—

Ուղղ. *Հայց.*	սեր(ը)
Սեռ.	սիրո
Տրակ.	սիրո, *(որոշյալ առում՝* սիրուն)
Բաց.	սիրուց
Գործ.	սիրով
Ներգ.	*չունի։*

Սեր *բառի հոգնակին գործածական չէ։*

Վարժություն 105: Գտնել տեքստում գործածված գոյականները և որոշել նրանց հոլովումն ու հոլովը:

1. Հինգ ամիս էր ընդամենը՝ Օդեսայումն էի, չորրորդ անգամ փոխեցի սենյակս։ Փոքրիշատե մեծ քաղաքում բնակվող մենակեցի համար մի առանձին հաճույք էր ստեպ-ստեպ կացարան փոխելը։ Անցնելով մի թաղից մյուսը, կարծում ես մի երկրից մյուսն անցար. նոր հարևանություն, նոր միջավայր, երբեմն այլ կենցաղով ու ոգով։

Այս անգամ պիտի բնակվեի քաղաքի աղմկալի փողոցներից մեկում, հինգհարկանի մի տան երրորդ հարկում։ Տանտիրուհիս իտալուհի էր, գեր, առողջ, ամրակազմ մի այրի, մոտ հիսուն տարեկան։ Նրա ամուսինը եղել էր իտալական օպերայի հուշարար, շատ վաղուց հայրենիքից տեղափոխված Ռուսաստան։ Մեռնելով՝ կնոջ ու միակ դստեր համար թողել էր իբրև ժառանգու-

թյուն հին նոտաների մի մեծ կապոց և իտալացի արտիստների ծանոթությունը։ Այրին, ապրելու ուրիշ միջոց չունենալով, պարապում էր սենյակները վարձու տալով։

(Շիրվանզադե)

2. Զմեռնամոտ օրերից մեկն էր։ Մութը դեռ բոլորովին չէր կոխել երկիրը։ Երկինքը պղտոր էր գարնան ջրի պես։ Կատաղի քամին վժժալով ներս էր պրծնում փողոցի մի բերանից, թոցնում էր առաջին պատահած մարդու գդակը, լիզում էր գետնից աղբն ու փոշին, ծեծում էր դռներն ու պատուհանները, բարձրացնում, պատով էր տալիս մանրավաճառի խանութի ճակատից կախված ցուցանակն ու կորչում փողոցի մյուս բերանից։ Լապտերավառը, սանդուղքն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին վազում էր լապտերները վառելու։ Փողոցի անկյունում արդեն վառված լապտերը, հողմածեծ, ծռել էր գլուխը և նայում էր շուրջը կեղտոտ ապակիների միջից՝ մարդու ցավագար, ճգնոտ աչքերի պես։ Ամայի փողոցում մի փոքրիկ շուն կուչ էր եկել մի փակ դռան առջև, սրթսրթում էր ամբողջ մարմնով և կաղկանձում (Ն—Դ)։

3. Լենինգրադը Սովետական Միության երկրորդ խոշոր քաղաքն է։ Նա ունի երեք միլիոնից ավելի բնակչություն։

Լենինգրադը Սովետական Միության խոշորագույն նավահանգիստն է։ Նա կառուցված է Նևա գետի վրա, Բալթիկ ծովի ափին։ Այնտեղից աշխարհի բոլոր երկրներն են գնում ու գալիս ամեն տեսակ ապրանքներով բեռնավորված նավեր։ Նավահանդիստներում ու երկաթուղային կայարաններում հազարավոր վերամբարձ կռունկներ ու այլ մեքենաներ վագոններից ու նավերից դատարկում ու տեղափոխում են ստացված ապրանքները կամ բարձում մեկնող նավերը։

Լենինգրադը շատ գեղեցիկ քաղաք է ու կուլտուրական կենտրոն։ Նրա ինստիտուտներում ու դպրոցներում, տեխնիկումներում ու այլ ուսումնական հաստատություններում սովորում են բազմահազար աղջիկներ ու պատանիներ։ Ուղիղ ու լայն պողոտաները, նորակառույց մետրոն, բազմահարկ հիանալի շենքերը, հարյուրավոր թանգարաններն ու զբոսայգիները, գեղեցիկ կամուրջները, անհաշիվ արձանները աննման տեսք են տալիս Լենինգրադին։

Առանձնապես հայտնի է Էրմիտաժը, աշխարհի ամենամեծ թանգարաններից մեկը, որտեղ հավաքված են աշխարհահռչակ նկարներ ու քանդակագործական աշխատանքի նմուշներ։

(«Հայրենի բնություն»)

Անձնական դերանունների հոլովումը

Արևելահայերենի անձնական դերանուններն են՝ ես, դու, նա, ինքը: *Այդ դերանունների հոգնակիներն են՝* մենք, դուք, նրանք, իրենք:

Անձնական դերանունների հոլովման պատկերը հետևյալն է.

Հոլով.	1-ին դեմք		2-րդ դեմք	
Ուղղ.	ես	մենք	դու	դուք
Սեռ.	իմ	մեր	քո	ձեր
Տրակ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ
Բաց.	ինձ(ա)նից	մեզ(ա)նից	քեզ(ա)նից	ձեզ(ա)նից
Գործ.	ինձ(ա)նով	մեզ(ա)նով	քեզ(ա)նով	ձեզ(ա)նով
Ներգ.	ինձ(ա)նում	մեզ(ա)նում	քեզ(ա)նում	ձեզ(ա)նում
Հոլով.	3-րդ դեմք			
Ուղղ.	նա	նրանք	ինքը	իրենք
Սեռ.	նրա	նրանց	իր	իրենց
Տրակ.	նրան	նրանց	իրեն	իրենց
Բաց.	նրանից	նրանցից	իրենից	իրենցից
Գործ.	նրանով	նրանցով	իրենով	իրենցով
Ներգ.	նրանում	նրանցում	իրենում	իրենցում

Ինքը դերանվան առաջին և երկրորդ դեմքերը՝ ինքս, ինքդ, *չեն հոլովվում. դրանց հոգնակիներն են՝* ինքներս, ինքներդ: *Ես և դու դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովները ունեն կրկնակի ձևեր՝* ինձնից *և* ինձանից, քեզնով *և* քեզանով, ինձնում *և* ինձանում *և այլն: Այդ երկու ձևերն էլ հավասարաչափ գործածվում են:*

Իմաստի սաստկացման համար հաճախ գործածվում են ես ինքս, դու ինքդ, նա ինքը *ձևերը:*

Օրինակ՝ Ես ինքս *իմ աչքով տեսա:* Դու ինքդ *գնա և հրավիրիր նրան:* Նա ինքը *այդ շատ լավ է հասկանում:*

Մանրություն.— Երբ երկրորդ դեմքի անձնական դերանվան հոգնակի ձևը (դուք) օգտագործվում է որպես քաղաքավարական ձև, գրվում է մեծատառով:

Օրինակ՝ Հարգելի՛ ընկեր դեկան. խնդրում եմ Ձեզ՝ թույլ տալ ինձ օգտվելու Ձեր ֆակուլտետի գրադարանից։

Վարժություն 106: Կազմել նախադասություններ *ես* դերանվան բոլոր ճոլովաձևերով՝ եզակի և հոգնակի։

Վարժություն 107: Գտնել անձնական դերանունները. որոշել նրանց դեմքը, թիվն ու հոլովը։

Որքան էլ քաջասրտություն ունենայի, Գրիգոր, որքան էլ նրա այդ խոսքերը ոչնչի տեղ չդնեի, բայց այնուամենայնիվ ես կին էի... ես դիմանալ չէի կարող այս բոլորին և ես մերձիմահ հիվանդացա... Այդ ժամանակվանից միայն իմ անգութ հայրս լռեց, այդ ժամանակվանից միայն նա հասկացավ, որ ինձ հետ շատ խիստ ու անխիղճ կերպով էր վարվում.... Այնուհետև նա ինձ մինչև օրս էլ ոչ մի անվայել խոսք չի ասել և ինձ հետ միշտ քաղցրությամբ է վարվել, իսկ մայրս, որ ինձ միշտ պաշտպանում էր, այժմ էլ ինձ սրբի տեղ պաշտում է... Եվ չնայելով, որ ես առողջացա, բայց մեր սիրո ցավը սարսափելի կերպով կրծում էր սիրտս. մանավանդ, որ քեզնից ոչ մի լուր չէի ստանում... Ամեն օր, ամեն րոպե իմ միտքը միշտ և միշտ քեզ մոտ էր։ ...Ես հիշում էի մեր անցյալը, մեր քաղցր անցյալը, երևակայում էի քո վիճակը և ո՞վ գիտե ինչեր էի մտածում քեզ վրա, ես վերջապես չկարողացա ինձ զսպել և լաց եղա... (Ն—Դ)։

Վարժություն 108: Վերածել արևելահայերենի։

1. Գաղափարներս քեզ ծանոթ են, քո վիճակդ գիս կտանջե... պետք է զքեզ երջանիկ ընեմ (Արփ. Արփ.)։ 2. Դուն ալ երիտասարդ ես, դուն ալ ապագա ունիս... դուն ալ զքեզ պետք է հոգաս... Միթե կը կարծես, որ քո երջանկությամբդ կրնաս զիս երջանիկ ընել (Արփ. Արփ.)։ 3. Դուք անոր ի՞նչն եք (Արփ. Արփ.)։ Հիվանդանոցը ձեզի համար է, ամենքս ձեզի համար կը հոգնինք (Արփ. Արփ.)։ 4. Քեզի բենչպարության գործ պիտի տա (Արփ. Արփ.) 5. Ինձի նայե, հանըմ... դուն քու տղուդ հասկցնելու էիր (Գ. Զ.)։ 6. Մայրս ինձի ըսավ, որ սենյակդ ես, ու եկա զքեզ գտա (Գ. Զ.)։ 7. Ճիշտ այս ծառայությունը պիտի խնդրեմ ձենե (Օտ.)։ 8. Ահավասիկ ձեզի կը ներկայացնեմ... նավապետը (Օտ.)։ 9. Տիկինը... ինե դժգոհ մնալու պատճառ մը չպիտի ունենա (Օտ.)։ 10. Առաջին գործս եղավ ձեզի դեմ ձեռք առնված խստությունները մեղմել (Օտ.)։

11. Այդպես հրաման եղած է մեզի (Օտ.)։ 12. Հաճեցեք ինձի ընկերանալ, որպեսզի ձեզի առաջնորդեմ (Օտ.)։ 13. Քիչ մը խրատեիք ու հարդարեիք զինքն, որ շատ չի հուզվի (Հ. Պ.)։ 14. — Տիկին, դուք ինտոր եք։— Ձեզի տեսանք, ավելի աղեկ եղանք (Հ. Պ.)։ 15. Կարծեմ քեզի սպասցուցի քիչ մը (Հ. Պ.)։ 16. Հատ մ'ալ քեզի տամ (Հ. Պ.)։ 17. Խոսքը ձեզի կուղղե վերստին (Հ. Պ.)։ 17. Ըսելիք ունիմ քեզ (Հ. Պ.)։ 18.—Գլխուս վրա, ձեզի անանկ կոշիկ մը շինեմ, որ թե մոտայի համաձայն ըլլա և թե ձեր ոտքերը չսխմեն։ — Եթե կարենաս զոհ ընել զիս, միշտ քու խանութը կգամ (Հ. Պ.)։ 19. Ինքզինքդ ինձի համար անհանգիստ մի ըներ (Հ. Պ.)։ 20. Ձեզի խոսելիք ունիմ, բայց նախ և առաջ կրնա՞ք ինձի ալ ձեր քովը առնել (Հ. Պ.)։ 21. Շատ ուրախ եմ... ձեզի հոս տեսնելուս համար (Հ. Պ.)։ 22. Ասանկ ձգելը մեզի անպատվություն է (Հ. Պ.)։ 23. Ինձի համար անհանգիստ մի ըլլաք (Հ. Պ.)։ 24. Քեզի հետ նույն երկնից ներքև ապրել, զքեզ իբրև եղբայր ճանչնալ, մխիթարել՝ փափաքներուս մեծագույնն պիտի ըլլար (Հ.Պ.)։ 25. Նա կսիրեր զիս, ես կը պաշտեի զինքն (Հ. Պ.)։ 26. Մեզի ամոթ, որ քեզի պես մարդու հանեցինք աղջիկ տվինք (Հ. Պ.)։ 27. Անոր հրամանը չկատարեր (Հ. Պ.)։ 28.—Իրավունք չունենալդ ասկե ալ հայտնի է որ ես չեմ ճանչնար զքեզ... և ինձմե չճանչցվողը ինչպես կրնա իրավունք ունենալ։—Հարցմանս իրավացի կամ անիրավ ըլլալն ի՞նչ վերաբերություն ունի ձեզմե ճանչցվելուն հետ (Հ. Պ.)։

Ցուցական սա, դա, նա դերանունների հոլովումը

Արևելահայերենում սա, դա, նա *դերանունները ցույց են տալիս անձ կամ առարկա։*

Օրինակ՝ Սա իմ եղբայրն է, դա՝ fn fույրը, իսկ նա՝ Հասմիկի fեռին։

Անահիտը ինձ մի մատիտ տվեց. «Սա լավ է գրում. դրա հետ լավ վարվիր, թե չէ նրա օրը կգցես»— զգուշացրեց նա ինձ հեռանալով։

Այս դերանունները որպես որոշիչ՝ այս, այդ, այն *դերանունների նման, հանդես գալ չեն կարող։ Չի կարելի ասել՝* սա գիրքը, դա մատիտը, *այլ միայն՝* այս գիրքը *կամ* սա, այդ մատիտը *կամ* դա *և այլն։*

Ծանոթություն.— *Արևելահայերենում չկան նաև* աս, ատ, ան, ասի, ատի, անի, ասիկա, ատիկա, անիկա *ցուցականները։ Դրանց իմաստը արտահայտում են* սա, դա, նա, *երբեմն նաև* այս, այդ, այն *դերանունները։*

Սա, դա, նա դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

Հոլով.	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Ուղղ. Հայց.	սա	սրանք	դա	դրանք	նա	նրանք
Սեռ.	սրա	սրանց	դրա	դրանց	նրա	նրանց
Տրակ.	սրան	սրանց	դրան	դրանց	նրան	նրանց
Բաց.	սրանից	սրանցից	դրանից	դրանցից	նրանից	նրանցից
Գործ.	սրանով	սրանցով	դրանով	դրանցով	նրանով	նրանցով
Ներգ.	սրանում	սրանցում	դրանում	դրանցում	նրանում	նրանցում

Մնացած ցուցականները, երբ հոլովվում են, ենթարկվում են ի հոլովման։

Վարժություն 109: Կազմել նախադասություններ սա դերանվան եզակի և դա դերանվան հոգնակի բոլոր հոլովաձևերով:

Միմյանց և իրար դերանունների հոլովումը

Այս դերանունները եզակի թիվ և ուղղական ու ներգոյական հոլովաձևեր չունեն։ Հոգնակի թվում սրանց հոլովումը այսպիսին է.

Սեռ.	իրար,	միմյանց
Տր.	իրար,	միմյանց
Բաց.	իրարից,	միմյանցից
Գործ.	իրարով,	միմյանցով

Վարժություն 110: Կազմել նախադասություններ իրար և միմյանց դերանունների բոլոր հոլովաձևերով:

Որ դերանվան հոլովումը

Ո՞ր հարցականը (Ո՞ր գիրքն է քոնը) և որը հարաբերականը (Վերցրու այն գիրքը, որը քեզ դուր է գալիս) հոլովվում են նույն կերպ՝ ի հոլովմամբ։

Ուղղ.	որ(ը)	որոնք
Սեռ.	որի	որոնց
Տրակ.	որի(ն)	որոնց
Բաց.	որից	որոնցից
Գործ.	որով	որոնցով
Ներգ.	որում	որոնցում

Վարժություն 111: Կազմել նախադասություններ *որը* դերանվան բոլոր հոլովաձևերով:

Վարժություն 112: Գտնել տեքստում գործածված դերանունները, որոշել հոլովված դերանունների հոլովը:

Մի անգամ մենք կենդանաբանության ուսուցչի ղեկավարությամբ էքսկուրսիայի գնացինք Արաքսի հովիտը։ Լույսը չէր բացվել, երբ մեր աշխույժ աղմուկից արթնացած, միմյանց ձայն տալով ու իրար օգնելով հավաքվեցին բոլոր երեխաները։ Մեր ճանապարհն անցնում էր եղեգնուտների միջով, որոնք երկու կողմից պատնեշի նման բարձրանալով ստիպում էին մեզ, որ քայլենք միմյանց ետևից։

Նախ նկատեցինք մի ոզնու, որը խաղում էր իր երկու ձագերի հետ։ Սրանք մոտենում էին միմյանց, փորձում իրար փշերով ծակել, ապա հեռանում իրարից։ Մայր ոզնին, որից մի քիչ հեռացել էին ձագերը, խեթ-խեթ նրանց էր նայում. նա անհանգստանում էր սրանց համար։

Դրանցից քիչ հեռու եղեգների մեջ իր ճանապարհն էր բացել վայրի խոզը. սրա կճղակների հետքերը դեռ երևում էին խոնավ հողի վրա։ Ուսուցիչը նախազգուշացրեց մեզ, որ մեզանից ոչ մեկը շարքերից դուրս չգա։

— Ձեզնից ոչ հեռու,— ասաց նա,— վայրի խոզն է իր ձագերի հետ, որը վտանգավոր կենդանի է։

Մեզ հետ շրջելու եկած որսորդ Վախթանգը առաջ անցավ։ Նա ուսից հանեց հրացանը, իսկ մենք, մեր ամբողջ հետաքրքրությունը լարած, հետևեցինք նրան։

Եղեգների աղմուկից ինչ-որ կենդանիներ իրար անցան։ «Դրանք կուղբեր են»,— գլխի ընկավ մեզանից մեկը,— «դրանցից շատ թանկագին մորթի են ստանում»։

Փոխանվանական հոլովում

Արևելահայերենում բոլոր ոչ գոյական խոսքի մասերը՝ խոսքում կարող են հանդես գալ որպես գոյական և հոլովվել։

Օրինակ՝ Սեղանին դրված են մեկ կարմիր մատիտ և մեկ սև մատիտ: Կարմիրը *Արամինն է,* սևը՝ *Պետրոսինը։ Զբոսանքի գնացին ութերորդ և իններորդ դասարանները։* Ութերորդը *վերադարձավ ժամը 6-ին,* իններորդը՝ *7-ին։ Որպես փոխանուն կարող են հանդես գալ նաև հոլովված ձևերը։*

Օրինակ՝ Քո գիրքը ինձ տուր։ Քոնը ինձ տուր։
Նրանց պարտեզը կանաչ է։ Նրանցը կանաչ է։
Հակոբի ձայնը դուրեկան է։ Հակոբինը դուրեկան է և այլն։
Բոլոր փոխանունները, բացառությամբ անորոշ դերբայի, ենթարկվում են ի հոլովման։ Անորոշ դերբայը պատկանում է ու հոլովման։

Հոլովներ					
Ուղղ. *Հայց.*	*սևը*	*ութերորդը*	*Հակոբինը*	*քոնը*	*կարդալը*
Սեռ.	*սևի*	*ութերորդի*	*Հակոբինի*	*քոնի*	*կարդալու*
Տրակ.	*սևին*	*ութերորդին*	*Հակոբինին*	*քոնին*	*կարդալուն*
Բաց.	*սևից*	*ութերորդից*	*Հակոբինից*	*քոնից*	*կարդալուց*
Գործ.	*սևով*	*ութերորդով*	*Հակոբինով*	*քոնով*	*կարդալով*
Ներգ.	*սևում*	*ութերորդում*	*Հակոբինում*	*քոնում*	*կարդալում*

Ստացական հոդեր

Որպես ստացական հայերենում օգտագործվում են **ս, դ, ն(ը)** *հոդերը։ Այս հոդերը ցույց են տալիս պատկանելություն՝ փոխարինելով* **իմ, քո** *և* **նրա** *դերանուններին։*

Օրինակ՝ **Գիրս** *նոր է =* **Իմ գիրքը** *նոր է։* **Մայրդ** *քեզ նամակ է ուղարկել=* **Քո մայրը** *քեզ նամակ է ուղարկել։ Երբ հատկացյալը հոգնակի է (Իմ* **գրքերը** *նոր են), հոդը դրվում է հոգնակի ձևի վրա։ Օրինակ՝* **Գրքերս** *նոր են=* **Իմ գրքերը** *նոր են։* **Եղբայրներս** *վերադարձել են արտասահմանից=* **Իմ եղբայրները** *վերադարձել են արտասահմանից։ Հոգնակի ստացական իմաստ արտահայտելու համար արևմտահայ —* **նիս,—նիտ,—նին** *ձևերի փոխարեն արևելահայերենը դնում է —* **ներս,— ներդ,— ները**:

Մեր գրքերը *նոր են=* **Գրքներս** *նոր են։*
Ձեր գրքերը *նոր են=* **Գրքներդ** *նոր են։*
Նրանց գրքերը *նոր են=* **Գրքները** *նոր են։*

Վարժություն 113: Գտնել ստացական ձևերը և դրանք արտահայտել դերանվամբ: Ստացական իմաստ արտահայտող դերանունները փոխարինել հոդերով՝ դրանք դնելով համապատասխան բառերի վրա:

...Եկ այս անգամ մի կողմ դիր ինքնասիրությունդ ու հպարտությունդ և ընդունիր առաջարկս։ Մի մոռանար, որ քո առող-

ջությունը հարկավոր է մեզ... Ինչ պիտի լինի ձեր վիճակը, եթե դրությունդ ծանրանա... Ասելս այն է, որ դու բարոյական տեսակետից իրավունք չունես հրաժարվելու իմ օգնությունից։

— Ես դեռ հույս ունեմ, որ հասանելիքս ստանամ։

— Այդ ավելի լավ, բայց ե՞րբ։ Իսկ քեզ հարկավոր է, որ որքան կարելի է շուտ գնաս քայքայված առողջությունդ վերականգնելու...

— Կգնամ հանգիստ կերպով կհասկացնեմ դրությունս, եթե պահանջս իրավացի համարի և հեռագիր տա, որ փողս ուղարկեն... լավ, թե չէ...

— Կընդունե՞ս առաջարկս... (Ն—Դ)։

Վարժություն 114: Վերածել արևելահայերենի:

1. Սիրածնիդ ու չսիրածնիդ զանազանելու անկարող կըլլաք (Գ. Զ.)։ 2. Ծովի մեջտեղը այս հյուլեները կը երերտկային շարունակ, ձևերնին, դիրքերնին, լուսերնին կը փոխեին (Գ. Զ.)։ 3. Որչափ որ կեցանք այնտեղ՝ անխոս մտերմության կապերով միացած զգացինք սրտերնիս (Գ. Զ.)։ 4. Գործերնուդ գացեք (Արփ. Արփ.)։ 5. Բան մը չէր հասկնար իմ խուսափումներես (Գ. Զ.)։

Ածականների համեմատության աստիճանները

Ածականները ցույց են տալիս առարկաների հատկանիշները։

Օրինակ՝ Գեղեցիկ *ծաղիկ,* մայրական *սեր,* փայտե *դուռ։*

Այս հատկանիշների մի մասը համեմատելի է, կարելի է համեմատել այլ առարկաների նույնպիսի հատկանիշների հետ՝ դրանց առավել կամ պակաս լինելը ցույց տալու համար։

Օրինակ՝ Համեմատում ենք իրար հետ երկու ծաղիկների հոտավետ լինելու հատկանիշը և ասում՝ Այս ծաղիկը *ավելի հոտավետ է,* քան մյուսը:

Նույն կերպ առարկաների համեմատելի հատկանիշները կարելի է համեմատել մեկի ամենաբարձր (գերազանց) լինելը ցույց տալով։

Օրինակ՝ Հայրապետը տասներորդ դասարանի ամենաջանասեր աշակերտն է:

Արևելահայերենը տարբերում է համեմատելի հատկանիշ ցույց տվող (որակական) ածականների երեք ձև։

ԱՌԱՋԻՆ՝ երբ առարկայի հատկանիշը չի համեմատվում մի այլ առարկայի նման հատկանիշի հետ։

Օրինակ՝ կարգապահ *աշակերտ,* գրավիչ *դաս,* կապույտ *մատիտ,* սպիտակ *թուղթ,* կարմիր *թանաք,* սև *հող,* կանաչ *ծառ,* գեղեցիկ *նկար,* լավ *տղա և այլն։*

ԵՐԿՐՈՐԴ՝ երբ ածականը ցույց է տալիս մի այնպիսի հատկանիշ, որը առավել կամ նվազ է մի այլ առարկայի նման հատկանիշից։ Ածականի այս ձևը արևելահայերենում կազմվում է ածականի վրա ավելացնելով ավելի *բառը։*

Օրինակ՝ ավելի գրավիչ, ավելի կապույտ, ավելի սպիտակ, ավելի կարգապահ, ավելի գեղեցիկ *և այլն։*

Հատկանիշի առավել լինելը խոսքի մեջ կարելի է արտահայտել հետևյալ կերպ։

1. Քան բառի միջոցով։

Ինչպես՝ Մասիսը ավելի բարձր *է, քան Արագածը։ Երևանը* ավելի մեծ *է, քան Լենինականը։ Անահիտը* ավելի ջանասեր *է, քան Հասմիկը։ Կանաչը* ավելի դուրեկան *է, քան կարմիրը։*

2. Համեմատվող հատկանիշն ունեցող առարկաներից մեկի անունը դնելով բացառական *հոլովաձևով։*

Ինչպես՝ Մասիսը Արագածից բարձր է։

Երևանը Լենինականից ավելի մեծ է։

Անահիտը Հասմիկից ավելի ջանասեր է։

Կանաչը կարմրից ավելի դուրեկան է։

Այս դեպքում ավելի *բառը կարելի է և չգործածել։*

Ինչպես՝ Մասիսը Արագածից բարձր է։

ԵՐՐՈՐԴ՝ երբ ցույց է տրվում այնպիսի մի հատկանիշ, որը այլ առարկաների նույն հատկանիշներից գերազանց է։

Ածականների այս ձևը կազմվում է երկու կերպ՝

ա) Ածականի սկզբից դնելով ամեն *բառը* ա *հոդակապով* (ամենա—)։

Օրինակ՝ ամենակարգապահ, ամենագրավիչ, ամենակապույտ, ամենասպիտակ, ամենակարմիր, ամենագեղեցիկ, ամենալավ *և այլն։*

Ամենա-*ձևը կարող է դրվել համեմատելի հատկանիշ ցույց տվող բոլոր ածականների վրա։*

*բ) Ածականի վրա դրվելով-*ագույն *վերջածանցը։*

Օրինակ՝ լավագույն, գեղեցկագույն, ճնագույն, խոշորագույն, մեծագույն, բարձրագույն *և այլն։*

—ագույն *ածանցը դրվում է համեմատելի հատկանիշ ցույց տվող միայն որոշ ածականների վրա։*

Գերազանց հատկանիշի գաղափար կարելի է արտահայտել նաև ամենից *բառի միջոցով։*

Օրինակ՝ Հայկանուշը իրենց դասարանի *ամենից ուշադիր* աշակերտուհին է։ Վարդը *ամենից գեղեցիկ* ծաղիկն է։

Վարժություն 115։ Գտնել համեմատելի հատկանիշ ցույց տվող ածականները և կազմել նրանց ձևերը։

1. Տարօրինակ աղջիկ էր Մարթան։ Միծաղ, ուրախ տրամադրություն ասած բանը կարծես բնավ ծանոթ չէր նրան. ծանրաբարո, սակավախոս, միշտ զգաստ, միշտ լուրջ (Ն—Դ)։ 2. Նա ուրիշ ոչ մի կերպ չի մտածում այդ մարդու մասին, եթե ոչ միայն մի աղնիվ, խելոք, հաստատակամ և անձնվեր ու ճշմարիտ բարեկամի մասին, որի նմանը շատ և շատ քիչ է պատահում (Ն—Դ)։ 3. Նա կլիներ մոտ քսանհինգ տարեկան, դեմքի ամենաճիշտ և գրավիչ գծագրությամբ, մի փոքր նիհար ու գունատ։ Նրա ընտանեկան սպիտակ հանդերձը ու սև մազերը, որոնք գեղեցիկ սանրած և կարմիր ժապավենով թույլ կապված՝ ընկած էին նրա մեջքի վրա, ավելի գեղեցկություն էին տալիս նրա գունատ դեմքին (Ն—Դ)։

Վարժություն 116։ Վերածել արևելահայերենի։

1. ...Պարահանդեսին է՛ն տաք միջոցին ...աննպատակ և անուշադիր կը պտըտեր (Գ. Զ.)։ 2. Իրավ է, որ տասը երկար տարիներ զիս այս տունեն կը բաժանեն, բայց երեկվան պես աչքիս առջևն է սա հեռավոր անցյալը։ Բոլորը երկու ամսվան կյանք մը այս տունին շուրջը, բայց է՛ն տագնապյալը, է՛ն դժբախտը, որ անցուցած եմ պատանությանս մեջ, է՛ն մեծ վրդովումը հիմիկվան խաղաղությունս ուղղելե առաջ. (Գ. Զ.)։ 3. Իր զավկըներուն է՛ն մեծը հազիվ տասերեք տարեկան կար (Գ. Զ.)։ 4. Կտոր մը միսով մարդ կը կշտանա՞. զրուցե սա անպիտանին, որ քիչ շատկեկ բերե (Հ. Պ.)։

Վարժություն 117։ Ինչպիսի համեմատելի հատկանիշներ ցույց տվող ածականներ կարելի է գործածել հետևյալ գոյականների հետ։

Սար, Հայաստան, ծառ, խաղող, ինքնաթիռ, ծով, ծաղիկ, ձյուն, աշխատանք։

Վարժություն 118: Թվարկեցեք ձեր շրջապատում գտնվող հինգ առարկաների համեմատելի հատկանիշները:

Թվականների ուղղագրությունը

Թվականները ցույց են տալիս՝

1. Թիվ, քանակ

Օրինակ՝ մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը (ինն), տասը (տասն), տասնմեկ, տասներեք, հարյուր հինգ *և այլն։*

Որպես փոխանուն գործածվելիս երկու *թվականը դառնում է* երկուս:

Օրինակ՝ Սուսաննան գրախանութից գնեց երեք մատիտ. երկուսը իրեն վերցրեց, իսկ մեկը տվեց Գայանեին:

Տասնմեկից *սկսած մինչև* իննսունինը *բոլոր թվականները գրվում են միասին, որպես մեկ բառ։*

Դրանցից բարձր քանակական թվականները գրվում են առանձին։

Օրինակ՝ Հարյուր մեկ, հարյուր տասնմեկ, հազար հինգ հարյուր իննսունինն *և այլն։*

Տասնավոր թվականներն են՝ տասը, քսան, երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, իննսուն:

1 000 000 և 1 000 000 000 թվերը գրվում են՝ միլիոն, միլիարդ:

2. Առարկաների հաջորդական կարգ

Օրինակ՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, տասնմեկերորդ, հարյուր հինգերորդ:

Այս թվականները կազմվում են հետևյալ կերպ։

Մեկ բառի դասականն է առաջին:

Երկու, երեք, չորս *թվականների դասականները կազմվում են* —րորդ *ածանցով՝* երկրորդ, երրորդ, չորրորդ:

Հինգ *և բարձր թվականների վրա գրվում է* — երորդ *ածանցը՝* հինգերորդ, քսանմեկերորդ, երեսուներեքերորդ, քառասունիններորդ, հիսունութերորդ, հարյուր մեկերորդ, հարյուր իններորդ: *Դասականները կարող են գրվել նաև՝ հռոմեական թվանշաններով (I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI և այլն), արաբական թվանշաններով (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ և այլն), մեր այբուբենի տառերով (ա. կամ ա), բ. կամ բ), գ. կամ գ) և այլն)։*

Ծանոթություն.—1-ին ձևը կարող է կարդացվել նաև մեկին:

Օրինակ՝ Սեպտեմբերի 1-ին (մեկին) սկսվեց նոր ուսումնական տարին։

3. Առարկաների հավասար բանակական բաշխում

Օրինակ՝ Աշակերտներին բաժանեցին *մեկական* տետր և երկուական մատիտ:

Բաշխականները կազմվում են-ական ածանցով, որը դրվում է քանակականների վրա։

Օրինակ՝ մեկ-մեկական, երկու-երկուական, հինգ-հինգական, տասնմեկ-տասնմեկական, հարյուր մեկ-հարյուր մեկական:

Թվականների առանձին տեսակ են կոտորակային թվականները, *որոնք ցույց են տալիս մեկից փոքր թվեր։ Կոտորակային թվականները գրվում են սովորաբար թվերով՝* $^1/_2$ *(կարդացվում է մեկ երկրորդ կամ մեկ երկրորդական),* $^1/_4$ *(մեկ չորրորդ, մեկ չորրորդական կամ մեկ քառորդ),* $^2/_3$ *(երկու երրորդ կամ երկու երրորդական),* $^3/_4$ *(երեք չորրորդ, երեք չորրորդական կամ երեք քառորդ) և այլն։*

Վարժություն 119: Արտագրել տեքստը՝ օգտագործված թվականները գրել տառերով:

Քանի՞ գնդասեղ կարելի է տեղավորել ջրով լի գինու բաժակի մեջ, այնպես որ բաժակի ջուրը չթափվի։ Սկսենք գնդասեղներ գցել և հաշվենք՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9։ Միայն թե պետք է ջրի մեջ նախ խնամքով ընկղմել գնդասեղի ծայրը և զգուշությամբ բաց թողնել, որպեսզի ջուրը դուրս չթափվի։

Արդեն 10, 11, 12, 19, 20, 30 գնդասեղ ենք տեղավորել բաժակի մեջ, իսկ ջուրը չի թափվում։ Շարունակենք՝ 50, 60, 70, 80, 88, 89, 90, 99, 100։ Արդեն 101 գնդասեղ կա բաժակի հատակին, իսկ ջուրը չի թափվում։ Ոչ միայն չի թափվում, այլև նկատելի չափով չի էլ բարձրացել բաժակի եզրից։ Շարունակենք ավելացնել նոր գնդասեղներ։ Գնդասեղների 1-ին հարյուրակին հաջորդում են 2-րդը, 3-րդը, 4-րդը, 5-րդը. եզրերից ոչ մի կաթիլ ջուր չի թափվում, բայց երևում է, թե ինչպես ջրի մակերևույթն ուռել է, բաժակի եզրերից մի քիչ բարձրանալով։ Շարունակենք ավելացնել նոր գնդասեղներ, չմոռանալով հաշվել՝ 551, 624։ 899-րդ, 989-րդ, 999-րդ՝ հաշվում ենք ու կարծեք բաժակը անհամեմատորեն մեծանում է։ Միայն ջուրը նորից մի քիչ բարձրանում է։ Բաժակի $^1/_4$*-ը,* $^1/_3$*-ը,* $^1/_2$*-ը,* $^2/_3$*-ը,* $^4/_5$*-ը արդեն զբաղեցնում են գնդասեղները։ Գնդասեղները նույնիսկ բաժակի եզրերից էլ դուրս են գալիս, իսկ ջուրը դեռ չի թափվում (ըստ «Հ. Ֆ.»)։*

Վարժություն 120: Հետևյալ թվականները գրել տառերով:

I, II, 1-ին, 4-րդ, 5-րդ, 9-րդ, 1/2, 5/9, 9/99, 3/4-րդ, 119-րդ, 10-րդ, 27-ական, 1111-րդ, 3-րդ:

Վարժություն 121: Բառերով գրել 1—10 բոլոր թվերի քանակականները, դասականները ու բաշխականները:

Վարժություն 122: Վերածել արևելահայերենի, բոլոր թվանշանները գրելով տառերով:

Մնունդ և մահ

Մնունդ — *Կարդա ուրեմն, որ հասկնամ քանի հոգի և ինչ հիվանդություններե մեռած են այս ամսվան մեջ:*

Մահ — *Շատ լավ:*

90 հոգի թոքախտե,
3 հոգի ուղեղի բորբոքումե,
7 հոգի իրենց տված նվերը լրագրի մը մեջ չհրատարակվելե,
3 հոգի շատ ուտելե,
4 հոգի քիչ ուտելե,
7 հոգի երկար հոդվածներ կարդալե,
4 հոգի ճոխ հանգ փնտրելե,
10 հոգի նեղ կոշիկներե,
4 հոգի խմբագրի մը տված ձանձրութենե,
106 հոգի օղիե,
2 հոգի սխալ թարգմանություններ կարդալե,
15 հոգի աժան գնված միսերե,
1560 հոգի համբակ բժիշկներե,
10 հոգի ագահութենե,
29 հոգի շռայլութենե,
5 հոգի համառ տգետ մը համոզել աշխատելե (Հ. Պ.):

Վարժություն 123: Արտագրել տեքստը՝ թվականները գրելով տառերով:

Ի՞նչ արագությամբ են շարժվում հետևյալ մարմինները (մ/վրկ-ներով):

Երկիրը՝ արեգակի շուրջը պտտվելիս	*29800*
Լուսինը՝ երկրի շուրջը	*1000*
Հրետանային արկը՝	*մինչև 1000*
Հրացանի գնդակը (փողից դուրս գալիս)՝	*900*

Մարդատար ինքնաթիռը՝	*250*
Հզոր շոգեքարշը գնացքը քարշելիս՝	*35*
Թեթև մարդատար ավտոմոբիլը՝	*30*
Ականակիրը՝	*17*
Ուժեղ քամին՝	*20*
Գետի հոսանքը՝	*10*
Հետիոտնը՝	*1,5—2*

Խոնարհում

Ընդհանուր նախագիտելիք

Բոլոր երկրների ժողովուրդները պայքարում են խաղաղության համար: Աշնանը ծառերի տերևները դեղնում են, կարմրում, անտառը հազարերանգ մի գորգի է նմանվում:

Առաջին նախադասության մեջ պայքարում են *բառը ցույց է տալիս գործողություն, մի բան անելը։*

Երկրորդ նախադասության մեջ դեղնում են, կարմրում *(են)*, նմանվում *(են) բառերը ցույց են տալիս եղելություն՝ մի բան լինելը։*

Գործողություն ցույց տվող բառերը կոչվում են բայ։

Պայքարում են, դեղնում են, կարմրում, նմանվում *բառերը բայեր են։*

Բայերը պատասխանում են ի՞նչ անել (լինել), ի՞նչ է արել (եղել), ի՞նչ է անելու (լինելու) *և նման հարցերի։*

Բայերը խոսքի մեջ գործողությունից (եղելությունից) բացի կարող են ցույց տալ նաև գործողություն կատարող առարկայի դեմքը և թիվը։

Օրինակ՝ Առավոտյան վեր եմ կենում, լվացվում, հագնվում, նախաճաշում և գնում դպրոց:

Այս նախադասության մեջ վեր եմ կենում, լվացվում (եմ), հագնվում (եմ), նախաճաշում (եմ), գնում (եմ) *բայերը ցույց են տալիս, որ գործողություն կատարողը խոսողն է* (ես), *այսինքն՝ ցույց է տալիս գործողություն կատարողի դեմքը։ Բայի այս ձևերը կոչվում են* դիմավոր բայեր, *կամ* բայի դիմավոր ձևեր: *Բայի դիմավոր ձևերը ցույց են տալիս նաև, թե երբ է կատարվում գործողությունը (ժամանակ) և գործողություն կատարողների թիվը (եզակի, հոգնակի)։*

Առավոտյան վե՛ր կենալ, լվացվե՛լ, հագնվե՛լ, նախաճաշե՛լ և գնա՛լ դպրոց *նախադասության մեջ* վեր կենալ, լվացվել, հագնվել,

նախաճաշել և գնալ բայերը, չնայած դիմավոր ձևերի նման նույնպես գործողություն են ցույց տալիս, բայց մատնացույց չեն անում գործողություն կատարողին, ժամանակ և թիվ ցույց չեն տալիս։

Այս ձևերը կոչվում են բայի անդեմ ձևեր կամ անդեմ բայեր, դերբայներ։

Վարժություն 124։ Գտնել տեքստում գործածված բայերը։ Որոշել՝ դիմավոր, թե անդեմ բայեր են դրանք։

Ծփացող արտի տեսքը նրան հանգստացրեց։ Գարունը խոստանում էր առատ բերք։ Նա ձին պահեց արտի ծայրին, մասրենու ծաղկած թփի մոտ. կռացավ գարու ցողունը պոկելու։ Ձին ետ-ետ քաշվեց, ականջները խլշեց, թփի մյուս երեսին մի բան շարժվեց, ոստերն իրար դիպան և սպիտակ վարդի թերթերը օրորալով վայր ընկան։ Մկրտումը ձիուց իջավ։ Մյուս երեսին, թփի ստվերում քաղհանավորներից մեկի մանուկն էր, փոքրիկ ճոճքի մեջ։ Մանուկը զարթնել էր, տրորում էր աչքերը և ճոճքը շարժվում էր, ոստերն իրար էին դիպչում, և թերթերը թափվում էին։ Մկրտումն ու մանուկը մի վայրկյան իրար նայեցին։ Մանուկը ժպտաց. Մկրտումն ուզեց կռանալ և մատը կարմրած թշին դնել, բայց մանկան դեմքից ժպիտն հանկարծ անհայտացավ, երևաց վախի արտահայտություն։ Փոքրիկը տեսել էր ձիու գլուխը՝ Մկրտումի թիկունքի հետև։ (Բակունց)

Ներգործական, կրավորական և չեզոք բայեր

Մայրը սիրում է որդուն։

Որդին սիրվում է մորից։

Մայրը քայլում է։

Առաջին նախադասության մեջ սիրում է *բայը ցույց է տալիս այնպիսի մի գործողություն, որը գործողություն կատարողից (մորից) անցնում է մի այլ առարկայի (որդուն)։*

Երկրորդ նախադասության մեջ առաջինին հակառակ՝ գործողություն կատարողը (որդին) իր վրա է կրում մի այլ առարկայի (մոր) գործողությունը։

Երրորդ նախադասության մեջ քայլում է *բայով արտահայտած գործողությունը չի անցնում մի այլ առարկայի կամ գործողություն կատարողը չի կրում իր վրա։*

Այսպիսով՝ սիրում է, սիրվում է, քայլում է *բայերը բացի այն, որ գործողություն են ցույց տալիս, արտահայտում են նաև գործողության և առարկաների տարբեր հարաբերություններ։ Բոլոր*

բայերը նման հարաբերություններ են ցույց տալիս։ Բայերի այդ հատկությունը կոչվում է բայի սեռ։

Արևելահայերենում բայը ունի երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք։

Ներգործական սեռ

Այս սեռի բայերը արտահայտում են այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է մի առարկա։

Օրինակ՝ Պետրոսը գնեց թուղթ, մատիտ և գրիչ։ *Այս նախադասության մեջ* գնեց *բայը ներգործական սեռի է, իսկ* թուղթ, մատիտ, գրիչ *բառերը՝ նրա լրացումները։ Ներգործական սեռի բայերի այս կարգի լրացումները դրվում են միշտ հայցական հոլովով։ Այս պատճառով էլ ներգործական սեռի բայերի այսպիսի լրացումները պահանջում են* ո՞ւմ *(անձերի անունների համար) և* ի՞նչ *(իրերի անունների համար) հարցերը։*

Օրինակ՝ սիրել*(ո՞ւմ)*—մորը, Սուրենին, ուսուցչին։

Սիրել *(ի՞նչ)*— գիրք, խաղաղություն, կարդալ։

Ներգործական սեռի բայերը տարբերվում են իրենց իմաստով։ Ներգործական սեռի են նաև բոլոր—եցն, —ացն, —ցն ածանց ունեցող (պատճառական) բայերը, ինչպես՝ ուրախացնել *(ո՞ւմ)*— հորը, քրոջը, ընկերուհուն. խմեցնել *(ի՞նչ)*— կաթ. դեղ. ջուր. *թաքցնել (ի՞նչ, ո՞ւմ)*—գաղտնիք, հայրենասերներին։

Վարժություն 125։ Հետևյալ ներգործական սեռի բայերով կազմել նախադասություններ՝ օգտագործելով հայցական հոլովով դրված լրացումներ։

Կտրել, գնել, ասել, ուղարկել, որսալ, պոկել, բռնել, օգտագործել, որոնել, լրացնել, կազմակերպել, քանդել, հագնել, ձայնագրել, նստեցնել, ճանաչել, խոստանալ։

Կրավորական սեռ

Այս սեռի բայերը արտահայտում են այնպիսի գործողություն, որը մեկ ուրիշ առարկայից իր վրա է կրում գործողություն կատարողը։

Օրինակ՝ Այս գրիչը օգտագործված է նրա կողմից։ *Կրավորական սեռի բայերի այս կարգի լրացումները դրվում են բացառական հոլովով և պահանջում են* ո՞ւմից, ինչի՞ց, ո՞ւմ կողմից *հարցերը։*

Կրավորական սեռի բայերը միշտ ունենում են վ ածանցը։ Կրավորական սեռի բայեր կարելի է կազմել ներգործական բոլոր բայերից, ըստ որում վ ածանցը դրվում է՝

ել խոնարհման բայերի անորոշի հիմքի և վերջավորության միջև։

Օրինակ՝ տեսնել-տեսնվել, երգել-երգվել, բռնել-բռնվել, գնել-գնվել։

Ալ խոնարհման բայերի՝ անցյալ կատարյալի հիմքի և վերջավորության միջև։

Օրինակ՝ զզալ-զզացվել, կարդալ-կարդացվել, հոգալ-հոգացվել։

—եցն, —ացն, —ցն *ածանց ունեցող բայերի կրավորականը կազմվում է ածանցի ն-ի փոխարեն վ դրվելով։*

Օրինակ՝ մոտեցնել-մոտեցվել, լրացնել-լրացվել, տեսնել-տեսնվել։

Վարժություն 126։ Կազմել հետևյալ ներգործական բայերի կրավորականները։

Ուտել, տեսնել, կտրել, գնել, մոռանալ, ասել, ուղարկել, հասունանալ, պոկել, բռնել, լրացնել, քանդել, նստեցնել, ճանաչել, խոստանալ, բանալ։

Վարժություն 127։ Հետևյալ կրավորական բայերով կազմել նախադասություններ. կազմել նրանց ներգործականները։

Բաժանվել, լռեցվել, իրագործվել, ծանրաբեռնվել, լրացվել, ողողվել, տպագրվել, արագացվել։

Չեզոք սեռ

Այս սեռի բայերի արտահայտած գործողության կատարման համար չի պահանջվում այնպիսի առարկա, որն իր վրա կրի այդ գործողությունը։

Օրինակ՝ կանգնել, վազել, քնել, հոգնել, վիճել, կատակել։

Մանրություն.—*Կրավորական վ ածանց ունեցող որոշ բայեր կրավորական սեռի չեն պատկանում, այլ չեզոք, քանի որ նրանց արտահայտած գործողությունը գործողություն կատարողը իր վրա չի կրում։ Այդ կարգի բայեր են՝* սաստկվել, հագնվել, լվացվել *և այլն։*

Վարժություն 128։ Գտնել բայերը, որոշել նրանց սեռը։

Հզոր առյուծը տկարացել, քաշվել էր իր որջը և ցավից ծանր հառաչում էր։ Բոլոր կենդանիները գալիս, խոնարհ հավաքվում էին նրա շուրջը, ողջույն տալիս կենդանիների արքային, հարցնում նրա առողջությունը և իրենց պարտքը կատարած թողնում ու հե-

ռանում։ Ամենավերջինը երևաց աղվեսը և երկյուղից ամբողջ մարմնով դողաց։ Դեռ նոր էր մոտեցել որջի մուտքին, երբ հանկարծ լսեց, թե ինչպես արջը շարախոսում էր իրեն։ Խորամանկ աղվեսն անօրինակ հմտությամբ անմիջապես ծրագրեց իր անելիքը և ներս մտնելով՝ խոնարհվեց առյուծի առաջ։

— Բարի ժամի չեկար, գարշելի՛։ Ասա՛, որտե՞ղ էիր մինչև հիմա, ինչու՞ ուշացար։

Աղվեսը լրջացավ և անմիջապես վրա բերեց.

— Մի՛ հուզվիր, տե՛ր թագավոր։ Երդվում եմ գլխովս, որ ուշք ու միտքս միայն քո առողջությունն է։ Այդ պատճառով այցելեցի շատ բժշկապետների, շատ չարչարանք ու տանջանք քաշեցի, բայց վերջիվերջո իմացա քո բժշկության միջոցը։

Առյուծն ուրախացավ և բարի դեմք ընդունելով ասաց.

— Բարի՛ եկար, իմաստուն կենդանի, քո ողջամիտ լինելն ինձ վաղուց է հայտնի։ Ասա՛, ո՞րն է այդ դեղը։

Աղվեսն աչքի տակով նայեց արջին, և մինչ դեռ վերջինս անմեղ ձևանալով քաշվել էր մի անկյուն ու չէր էլ նախազգում, թե ինչ դժբախտություն է գալիս իր գլխին, ասաց առյուծին.

— Տե՛ր արքա, բժշկապետներն ինձ ասացին, որ եթե արջի մորթին տաք-տաք գցեք հիվանդի վրա, իսկույն նրա ցավը կչքացնա, և հիվանդն անմիջապես կառողջանա։

Արջը դեռ լավ չէր հասկացել, թե ինչպես կարելի է իր մորթին տաք-տաք գցել առյուծի վրա, երբ նրան բռնեցին և քերթելով սկսեցին մորթին հանել։ Խեղճ արջը, դղջալով իր արածը, արցունք էր թափում, աղաչում էր խնայել իրեն, հառաչում էր ցավից, խոստանում անմիջապես նվեր բերել առյուծին գեր եղջերու, արջառ և այլ կենդանիներ, բայց նրան լսող չկար։

Աղվեսը միայն արջին լսելի ձայնով ասաց.

— Այդպես է պետք քեզ և բոլոր նրանց, ովքեր կչարախոսեն և կզրպարտեն ուրիշին։ (Այգեկցի)

Դերբայներ

(Բայի անդեմ ձևեր)

Արևելահայերենում բայի անդեմ ձևերը՝ դերբայները, յոթն են՝ անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական և ժխտական։

Անորոշ դերբայ

Վազել, երգել, կարդալ, գրել, լվանալ, տեսնել, փախչել բայերը ցույց են տալիս գործողության ընդհանուր գաղափար։ Այս

բայաձևերը անորոշ դերբայներ են։ Արևելահայերենում անորոշ դերբայները ունենում են ել կամ ալ վերջավորությունները։

Օրինակ՝ երգել, մոտեցնել, հասնել, մոտենալ, կարդալ, դողալ։ Այս վերջավորությունները դրվում են բառահիմքի վրա։ Անորոշ դերբայի հիմքը կարող է լինել պարզ և ածանցավոր։

Պարզ հիմք ունեն, օրինակ, հետևյալ անորոշ դերբայները՝ ազատել, ամաչել, եռալ, բուժել, բարձել, անել, աղալ, գալ, տալ և այլն։

Ածանցավոր կոչվում են այն բայերը, որոնք կազմված են արմատից և բայածանցից։

Օրինակ՝ մոտ-ենա-ալ, անհետ-ան-ալ, տես-ն-ել, փախ-չ-ել, կանգն-եցն-ել, խաղ-ացն-ել, տես-ցն-ել, ցատ-կոտ-ել, կոտրատ-ել, կտր-տ-ել, նստ-ոտ-ել, ջարդ-վ-ել։

Այս բայերի մեջ ածանցներն են —ենա, ան, —ն, —չ, —եցն, —ացն, —ցն, —կոտ, —ատ, —ոտ, —տ և —վ։

Անորոշ դերբայի ել և ալ վերջավորությունները կոչվում են խոնարհիչներ (լծորդներ)։

Անորոշ դերբայում ա խոնարհիչ ունեցող բայերը կոչվում են ա խոնարհման բայեր, ե խոնարհիչ ունեցողները՝ ե խոնարհման բայեր։

Անորոշ դերբայը կարող է հոլովվել։ Այն պատկանում է ու հոլովման։

Վարժություն 129: Կազմել հետևյալ բայերի անորոշ դերբայները։

Ծագում է, ամաչեց, զարթնեց, բազմած, եռաց, նայում էր, ժպտացել է, հալվեց, ընկավ, արտասվեց, հոսում է, խոսել էր, տալով, հալչում էին, հնչում էին, թռել է, դադարում է, բացվեց, ժպտաց, շնչելով, տվեց, կզջա, որոտացել, կխաղա, երգելու, փախան, դողացրեց, երևացին, խոսեի, խնդացինք։

Վարժություն 130: Հետևյալ գոյականներից և ածականներից կազմել բայեր՝ անորոշ դերբայի ձևով։

Ջար, լույս, տեր, խելոք, տող, ցուրտ, լող, հզոր, նվեր, կանաչ, հունձ, երկար, ծեփ, մռայլ, քանավեճ, տաք, ապացույց, նիհար, ժպիտ, նույն, պար, նոր, ակնարկ, անզգա, ծանոթ, գործ, պղտոր, մաքուր, դողալ, բարձր, երգ։

Օրինակ՝ չար-չարանալ-չարացնել, լույս-լուսանալ։

Բայերի հիմքերը

Արևելահայերենում բայի անդեմ և դիմավոր ձևերը կազմվում են երկու հիմքից՝ ներկայի *և* անցյալ կատարյալի:

Ներկայի հիմքը *անորոշ դերբայի հիմքն է (երբ անորոշ դերբայից անջատում ենք* -ել *և* -ալ *վերջավորությունները)։*

Օրինակ՝ խոս-ել, գր-ել, մոտեն-ալ, անհետան-ալ, տեսն-ել, փախչ-ել, կանգնեցն-ել, տեսցն-ել, ցատկոտ-ել, կոտրատ-ել, նստոտ-ել, ջարդվ-ել։

Պարզ բայերի և -ս, -ոտ, -կոտ, -ատ *ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքը ստացվում է անորոշ դերբայի վերջավորության* լ-ն ց-ի *փոխելով։*

Օրինակ՝ անորոշ դերբայ	անցյալի հիմք
խոսել	*խոսեց —*
գրել	*գրեց —*
կարդալ	*կարդաց —*
խաղալ	*խաղաց —*
ցատկոտել	*ցատկոտեց —*
կոտրատել	*կոտրատեց —*
ջարդոտել	*ջարդոտեց —*
կտրտել	*կտրտեց —*

-եցն, -ացն, -ցն *ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքը կազմվում է ածանցի* ն-ն *ր-ի փոխելու միջոցով։*

Օրինակ՝ անորոշ դերբայ	անցյալ կատարյալի հիմք
խաղացնել	*խաղացր —*
մոտեցնել	*մոտեցր —*
հագցնել	*հագցր —*

-են *և* -ան *ածանց ունեցող բայերի անցյալի հիմքը կազմվում է ածանցի* ն-ն ց-ի *փոխելու միջոցով։*

Օրինակ՝ անորոշ դերբայ	անցյալ կատարյալի հիմք
հագենալ	*հագեց —*
մոտենալ	*մոտեց —*
լվանալ	*լվաց —*
ստանալ	*ստաց —*

-ն և -չ ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքը կազմվում է ն և չ ածանցները հանելու միջոցով։

Օրինակ՝	անորոշ դերբայ	անցյալ կատարյալի հիմք
	տեսնել	*տես —*
	փախչել	*փախ —*
	հասնել	*հաս —*
	դիպչել	*դիպ —*

Վարժություն 131: Կազմել հետևյալ բայերի ներկայի հիմքերը։

Ազատել, գթալ, նստոտել, կոտրտել, ցատկոտել, խմեցնել, խոնավացնել, զարգացնել, անզորանալ, կամենալ, հագենալ, իմանալ, անցնել, դիպչել, պրծնել, հեծնել, ձանձրանալ, երգել, բերել։

Վարժություն 132: Կազմել հետևյալ բայերի անցյալի հիմքերը։

Աղալ, ափսոսալ, գթալ, գնալ, գոռգոռալ, դողալ, եռալ, երևալ, զգալ, զղջալ, նստոտել, զրնգալ, թմփալ, պատառոտել, թընդալ, լողալ, ջարդոտել, լվալ, խաղալ, խնդալ, կոտրտել, կչկչալ, կտրտել, հազալ, հևալ, թռչկոտել, մոնչալ, շողշողալ, որոտալ, որսալ, ջանալ, ցնծալ, սղղալ։

Վարժություն 133: Կազմել հետևյալ բայերի անցյալի հիմքերը։

Խմեցնել, սպիտակեցնել, հարստացնել, լսեցնել, թշշացնել, խլացնել, մանրացնել, կարդացնել, պսպղացնել, սևացնել, խոնավացնել, լռեցնել, զայրացնել, թուլացնել, տաքացնել, խոսեցնել, կանաչացնել, խորացնել, երկարացնել, քնեցնել, հաչեցնել, բթացնել, զարմացնել, հեռացնել, ցոլացնել, հարստացնել, ամրացնել, վազեցնել, խեղճացնել, հզորացնել, հասկացնել, շատացնել, կարճացնել, նույնացնել։

Վարժություն 134: Կազմել հետևյալ բայերի անցյալի հիմքերը։

Ածխանալ, անզորանալ, անէանալ, արթնանալ, կամենալ, սգնվանալ, մոտենալ, բարձրանալ, ունենալ, հագենալ, բազմանալ, պարծենալ, դյուրանալ, գոհանալ, վախենալ, երջանկանալ, զարգանալ, զորանալ, ընթանալ, թարմանալ, իմանալ, լվանալ, խորանալ, ծերանալ, կարծրանալ, ձանձրանալ, չորանալ, քարանալ։

Վարժություն 135: Կազմել հետևյալ բայերի անցյալի հիմքերը։

Անցնել, դիպչել, կպչել, հանգչել, մտնել, բուսնել, թռչել, հագնել, սառչել, պրծնել, գտնել, կորչել, համբնկնել, ուռչել, տես-

նել, դիպչել, փախչել, հասնել, փլչել, ելնել, հեծնել, թողնել, ընկնել, իջնել, մեռնել։

Վարժություն 136։ Դուրս գրել բայերը։ Որոշել՝ ներկայի, թե անցյալ կատարյալի հիմքով են կազմված դրանք։

Բարձրանալ օդ և թռչունի նման ճախրել օդում. դա մարդկության վաղուցվա ցանկությունն է եղել։ Առաջին անգամ մարդիկ փորձ արեցին օդ բարձրանալ այն ժամանակ, երբ իմացան, որ տաք օդը սառը օդից թեթև է։

Մեզանից ավելի քան 235 տարի առաջ՝ 1731 թվին, օդ բարձրանալու առաջին հաջող փորձը կատարեց ռուս Կրյակուտնին։ Դիտելով ծխնելույզից բարձրացող ծուխը, նա որոշեց օդ բարձրանալ ծխով լցված օդապարիկով։ Նա պատրաստել տվեց թեթև, բայց սնթափանցիկ պատերով գնդաձև մի մեծ պարկ, այն լցրեց տաք ծխով, իսկ ինքը նստեց պարկի բերանին ամրացրած օղակի վրա։ Գունդը բարձրացավ օդի մեջ։ Քամին նրան քշեց դեպի եկեղեցու գմբեթը։ Օդապարիկը կպավ գմբեթին, իսկ Կրյակուտնին կարողացավ ցած իջնել եկեղեցու զանգերին ամրացրած պարանների օգնությամբ։

Հոգևորականները Կրյակուտնիի այդ արարքը համարեցին աստծու նկատմամբ անարգանք և նրան վտարեցին քաղաքից։ Կրյակուտնիից 52 տարի հետո նույնպիսի փորձ են կատարում ֆրանսիացի Մոնգոլֆյե եղբայրները։ Օդապարիկից կախված զամբյուղում նրանք տեղավորել էին մի ոչխար, աքաղաղ և բադ, ստուգելու համար, թե շատ վերևում շնչելու օդ կա՞ արդյոք։

Շուտով մարդիկ հնարեցին այնպիսի օդապարիկներ, որոնց մեջ արդեն ոչ թե ծուխ էին լցնում, այլ օդից թեթև ջրածին գազ։ Այս էլ, իհարկե, մարդկանց չգոհացրեց։ Չէ՞ որ այդ օդապարիկները շարժվում էին քամու օգնությամբ։ Հարկավոր էր այնպես անել, որ օդապարիկը շարժվեր այն ուղղությամբ, որ մարդն է ցանկանում։ Այդ գործը ձեռնարկեց ռուս նշանավոր գյուտարար Ալեքսանդր Մոժայսկին։ Նրա պատրաստած ինքնաթիռը մարդու ղեկավարությամբ օդ բարձրացավ։ Դա աշխարհում առաջին թռիչքն էր ինքնաթիռով։

Այժմ այնպիսի հզոր ինքնաթիռներ են պատրաստում, որոնք հարյուրավոր մարդիկ են տեղափոխում, հարյուրավոր տոննաներով ծանրություն օդ բարձրացնում և մեկ ժամում 1000 կմ-ից ավելի թռչում։ Նրանք հասնում են օդի վերին շերտերին՝ ավելի քան 20 կմ. բարձրությամբ։ («Հայրենի բնություն»)

Անկատար դերբայ

Վազում, վազելիս, երգում, երգելիս, կարդում, կարդալիս, լվանում, լվանալիս, տեսնում, տեսնելիս *բայերը արտահայտում են ընթացքի մեջ գտնվող գործողության գաղափար։*

Այս բայաձևերը անկատար դերբայներ են։ Անկատար դերբայը ունի երկու վերջավորություն՝ -ում *և* -իս։

Ում *վերջավորությունը դրվում է անորոշ դերբայի հիմքի վրա՝ նրա* ել *և* ալ *վերջավորությունների փոխարեն։*

Օրինակ՝ ազատել–ազատում, ամաչել–ամաչում, ափսոսալ–ափսոսում *և այլն։*

Իս *վերջավորությունը դրվում է անորոշ դերբայի վրա՝* -ել *և* -ալ *վերջավորություններից հետո։*

Օրինակ՝ տալ–տալիս, գալ–գալիս, լալ–լալիս, ազատել–ազատելիս, ամաչել–ամաչելիս *և այլն։*

Տալ, լալ *և* գալ *բայերը ունեն միայն* -իս *վերջավորությամբ անկատար դերբայներ, մնացած բոլոր բայերը՝ և՛* ում, *և՛* իս։

Վարժություն 137: Կազմել հետևյալ բայերի անկատար դերբայները։

Ծագել, ամաչել, զարթնել, նայել, ժպտալ, հալվել, ընկնել, արտասվել, խոսել, տալ, հնչել, թռչել, դադարել, բացվել, շնչել, դրոշմել, երգել, խաղալ, որոտալ, զզջալ, դողալ, փախչել, մոտենալ, երևալ, խոսել։

Վարժություն 138: Գտնել անկատար դերբայները. կազմել այդ բայերի անորոշ դերբայը։

Օրը մթնում էր։ Իրար հետևից վառվում էին ճրագները։ Երբեմն ճրագը ձեռքին մեկն անցնում էր բակով։ Հեռվից այնպես էր երևում, ասես մութի մեջ լույսն ինքն իրեն էր շարժվում ու հանկարծ հանգչում։ Նախիրից ետ մնացած մի կով բառաչում էր գյուղի ծայրին։ Գետի մյուս ափին, գյուղի դիմացն ընկած անտառի բացուտում, խարույկը բոցավառվում էր։ Կրակը մեկ հանդարտվում էր, մեկ վեր սլանում, և միլիոնավոր կայծեր ցրվում էին խավարի մեջ։ Ասես հսկա մի աստղ էր թպրտում ծառերի արանքում։ *(Բակունց)*

Ապառնի դերբայ

Վազելու, երգելու, կարդալու, խաղալու, տեսնելու, փախչելու *բայերը արտահայտում են կատարելիք գործողության ընդհա-*

նուր գաղափար։ Այդ բայաձևերը ապառնի դերբայներ են։ Ապառնի դերբայի վերջավորությունն է ու, *որը դրվում է անորոշ դերբայի վրա։*

Օրինակ՝ լողալ–լողալու, ծլել–ծլելու, արթնանալ–արթնանալու, սիրել–սիրելու։

Վարժություն 139: Կազմել հետևյալ բայերի ապառնի դերբայները։

Ծագել, ամաչել, զարթնել, մաքրել, հրճվել, համարել, լինել, որոտալ, նախազգալ, խղճալ, հարվածել, ղողանջել, երևալ, մտածել, մաշել, թռչել, փախչել, մրսել, ձգտել, գալ, ճեղքել, նստել, ապրել, խոսեցնել, կարել, գրկել, մշուշվել, դողալ, նվագել։

Վաղակատար դերբայ

Սկսվել է ձմեռը։ Ջյուռը եկել, ծածկել է դաշտ ու ձոր։ Ամառվա տապը վաղուց ենք մոռացել։ Զվող թռչունները հեռացել են տաք երկրներ։

Այս նախադասություններում սկսվել, եկել, մոռացել *և* հեռացել *բայաձևերը արտահայտում են կատարված գործողության գաղափար։ Դրանք վաղակատար դերբայներ են։*

Վաղակատար դերբայի վերջավորությունն է –ել։ Ել *խոնարհման պարզ (ածանց չունեցող) և* –տ, –ատ, –ոտ, –կոտ *ածանց ունեցող բայերի վաղակատար դերբայը ձևով նման է անորոշին։*

Օրինակ՝	անորոշ	վաղակատար
	գրել	*գրել*
	վազել	*վազել*
	խոսել	*խոսել*
	կտրատել	*կտրատել*
	գրոտել	*գրոտել*
	կրծոտել	*կրծոտել*

Մնացած բայերի վաղակատարը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից՝ ել *վերջավորության հավելման միջոցով։*

Օրինակ՝

անորոշ դերբայ	անց. կատ. հիմք	վաղակատար
կարդալ	*կարդաց-*	*կարդաց-ել*
խաղալ	*խաղաց-*	*խաղաց-ել*

աղալ	*աղաց-*	*աղաց-ել*
գնալ	*գնաց-*	*գնաց-ել*
խաղացնել	*խաղացր-*	*խաղացր-ել*
մոտեցնել	*մոտեցր-*	*մոտեցր-ել*
հագենալ	*հագեց-*	*հագեց-ել*
մոտենալ	*մոտեց-*	*մոտեց-ել*
տեսնել	*տես-*	*տես-ել*
փախչել	*փախ-*	*փախ-ել*

Վարժություն 140: Կազմել հետևյալ բայերի վաղակատար դերբայները:

Խմեցնել, ազատել, խոնավացնել, հագենալ, երգել, ձանձրանալ, աղալ, ափսոսալ, գնալ, կտրել, զղջալ, սպիտակեցնել, սեվացնել, լռեցնել, թուլացնել, թուլանալ, կարմրացնել, կարմրել, հզորացնել, հզորանալ, նույնանալ, նույնացնել, անզորանալ, անզորացնել, մոտենալ, մոտեցնել, բազմանալ, բազմացնել, երջանկանալ, երջանկացնել, խորանալ, խորացնել, անցնել, դիպչել, հանգչել, մտնել, թռչել, հագնել, սառչել, գտնել, կորչել, ելնել, հեծնել, ընկնել, իջնել։

Վարժություն 141: Գտնել վաղակատար դերբայները: Կազմել մյուս բայերի վաղակատարները:

1. Բացվել էր գարունը, աշնան ցանած արտերը ծփում էին ծովի նման, մոխրագույն կոհակներ տալիս... Կարմրաքարն էլ էր կերպարանափոխվել։

Տերևակալել էին տների առաջ եղած հատ ու կենտ ծառերը, փտած գերանների վրա սունկերը շար էին ընկել, կտուրներին կանաչ էր բուսել, ու կախվել (Բ.)։

2. Սիմոնը դադարեցրել էր մուրճի զրնգոցն ու երեսը դարձրել խոսողների կողմը (Բ.)։ 3. Նա աչքի տակով նայեց թափած քարերին, փորած հիմքը տեսավ, մտավ մեջը, կռացավ և աչքի չափով ստուգեց պատի ուղղությունը (Բ.)։ 4. Արզումանը քարի գլխից բարկացած իջավ ու այնպիսի մի մեծ քար գրկեց, որ Եգորը մնաց զարմացած։ Վերև տանելուց գոտու կապերը կտրվեցին և գոտին ընկավ (Բ.)։

Հարակատար դերբայ

Ինձորենիներից կախված էին կարմրաթուշ պտուղները:

Քաղաքի կենտրոնական հրապարակում կանգնած է Լենինի արձանը:

Երեխան քնած է: *Այս նախադասություններում* կախված, կանգնած, քնած *բայաձևերը ցույց են տալիս անցյալում կատարված գործողության գաղափարը՝ նրա հետևանքի հարատևումով: Սրանք հարակատար դերբայներ են: Հարակատար դերբայի վերջավորությունն է* –ած:

Հարակատար դերբայը կազմվում է վաղակատարի նման, այսինքն՝ ել *խոնարհման պարզ (ածանց չունեցող) և* –տ, –ատ, –ոտ, –կոտ *բազմապատկական ածանց ունեցող բայերի հարակատարը կազմվում է անորոշի հիմքից (*ել, ալ *ածանցները փոխարինվում են* ած-*ով):*

Օրինակ՝	անորոշ	հարակատար
	երգել	*երգած*
	ասել	*ասած*
	կտրտել	*կտրտած*
	վազել	*վազած*
	թռչկոտել	*թռչկոտած*

Մնացած բայերի հարակատարը կազմվում է անցյալ կատարյալի հիմքին ած *ածանցը ավելացնելու միջոցով:*

Օրինակ՝

անորոշ դերբայ	անց. կատ. հիմք	հարակատար
կարդալ	*կարդաց-*	*կարդացած*
խաղալ	*խաղաց-*	*խաղացած*
գնալ	*գնաց-*	*գնացած*
խաղացնել	*խաղացր-*	*խաղացրած*
մոտեցնել	*մոտեցր-*	*մոտեցրած*
հագեցնել	*հագեցր-*	*հագեցրած*
տեսցնել	*տեսցր-*	*տեսցրած*
մոտենալ	*մոտեց-*	*մոտեցած*
խոստանալ	*խոստաց-*	*խոստացած*
փախչել	*փախ-*	*փախած*
տեսնել	*տես-*	*տեսած*

Վարժություն 142: Կազմել հետևյալ բայերի հարակատար դերբայները:

Խմել, թռչել, խլացնել, հավաքել, պահել, գրել, կախվել, ծծել, կանգնել, լսել, քանդել, զրնգացնել, ստանալ, վազել, տապալել, հասնել, հոգնել, քնել, փչացնել, տեսնել, մնալ, ոչնչանալ, գնալ,

ջարդել, մտնել, ընկնել, ասել, աղալ, պրծնել, վերածնել, ընտրել, մեծացնել, բերել, դեղնել, չորանալ, ծեծել, տեղավորել։

Վարժություն 143: Գտնել հարակատար դերբայները: Կազմել մնացած բայերի հարակատարի ձևերը:

1. Ծառերին փաթաթված վազերն օրորվում էին քամուց (Բ.)։ 2. Հազարավոր չորացած ծաղիկներ բուրում էին խոտի խուրձերի միջից (Բ.)։ 3. Խիտ կանաչով պատած մի լեռան լանջով սողացի վեր (Վ. Ան.)։ 4. Կրակեցի հոտից քիչ հեռու նստած մի մեծ այծյամի վրա (Վ. Ան.)։ 5. Մայրը և ուլը իրար գտած սլանում էին փախած հոտի ետևից (Վ. Ա.)։ 6. ... Արաբ զորավար Բեշիրը, վիրավոր վագրի պես զայրացած ու կատաղած, գալիս էր դեպի Ոստան (Մուր.)։ 7. Հայերը երկու հաղթությունից արդեն քաջալերված էին (Մուր.)։ 8. Թշնամին գլուխը կորցրած պատրաստվում էր փախչելու (Մուր.)։

8. Էն Լոռու ձորն է, որ հանդիպակաց
Ժայռերը խորունկ նոթերը կիտած,
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ (Հ. Թ.)։
9. —Ո՛վ քնած եք՝ արթուն կացեք (Հ. Թ.)։
10. —Բարո՛վ, Դավիթ, հոգնած ես դեռ (Հ. Թ.)։

Ենթակայական դերբայ

Ենթակայական դերբայը ցույց է տալիս առարկայի մի բան անող կամ եղող լինելը։

Օրինակ՝ գրող, կարդացող, փախչող, տեսնող, մոտեցող *և այլն։*

Ենթակայական դերբայի վերջավորությունն է -ող, *որը դրվում է՝ ել խոնարհման բայերի ներկայի հիմքի վրա։*

Օրինակ՝ գրել-գրող, հասնել-հասնող, մտնել-մտնող:

ալ խոնարհման բայերի անցյալի հիմքի վրա։

Օրինակ՝ կարդալ-կարդաց-կարդացող, աղալ-աղաց-աղացող:

Ժխտական դերբայ

Դերբայական այս ձևը կազմվում է անորոշի ձևից լ վերջավորությունը հանելով, և եթե բայը ել խոնարհման է, ե լծորդը ի դարձնելով։

Օրինակ՝ գրել-գրե-գրի, տեսնել-տեսնե-տեսնի, կարդալ-կարդա, մոտենալ-մոտենա:

Այս դերբայը օգտագործվում է միայն ժխտական խոնարհման ժամանակ։

Օրինակ՝ չեմ երգի, չես խաղա, չի փախչի, չենք տեսնի *և այլն։*

Վարժություն 144: Կազմել հետևյալ բայերի ժխտական դերբայները:

Գալ, ծաղկել, երգել, թշչալ, վարարել, պարել, թռչել, աճել, աղալ, վազել, դողալ, գնալ, գիտենալ, անել, ամաչեցնել, իրականանալ, իրականացնել, թանձրանալ, կորչել, կորցնել։

Վարժություն 145: Գտնել տեքստում գործածված դերբայները: Կազմել դիմավոր բայերի դերբայական ձևերը:

Հզոր առյուծը տկարացել, քաշվել էր իր որջը և ցավից ծանր հառաչում էր։ Բոլոր կենդանիները գալիս, խոնարհ հավաքվում էին նրա շուրջը, ողջույն տալիս կենդանիների արքային, հարցնում նրա առողջությունը և իրենց պարտքը կատարած թողնում էին ու հեռանում։ Ամենավերջինը եկավ աղվեսը և երկյուղից ամբողջ մարմնով դողաց։ Դեռ նոր էր մոտեցել որջի մուտքին, երբ հանկարծ լսեց, թե ինչպես արջը չարախոսում է իրեն։ Խորամանկ աղվեսն անօրինակ հմտությամբ անմիջապես ծրագրեց իր անելիքը և ներս մտնելով, խոնարհվեց առյուծի առաջ։

— Բարի ժամի չեկար, գարշելի՛։ Ասա՛, որտե՞ղ էիր մինչև հիմա, ինչու՞ ուշացար։

Աղվեսը լրջացավ և անմիջապես վրա բերեց.

— Մի՛ հուզվիր, տե՛ր թագավոր։ Երդվում եմ գլխովս, որ ուշք ու միտքս միայն քո առողջությունն է։ Այդ պատճառով այցելեցի շատ բժշկապետների, շատ շարշարանք ու տանջանք քաշեցի, բայց վերջիվերջո իմացա քո բժշկության միջոցը։ Առյուծն ուրախացավ և բարի դեմք ընդունելով ասաց.

— Բարի՛ եկար, իմաստո՛ւն կենդանի, քո ողջամիտ լինելը ինձ վաղուց է հայտնի։ Ասա՛, ո՞րն է այդ դեղը։

Աղվեսն աչքի տակով նայեց արջին, և մինչդեռ վերջինս անմեղ ձևանալով քաշվել էր մի անկյուն ու չէր էլ նախազգում, թե ինչ դժբախտություն է գալու իր գլխին, ասաց առյուծին.

— Տե՛ր արքա, բժշկապետներն ինձ ասացին, որ եթե արջի

մորթին տաք-տաք գցեք հիվանդի վրա, իսկույն նրա ցավը կչքանա, և հիվանդն անմիջապես կառողջանա։

Արջը դեռ չէր հասկացել, թե ինչպես կարելի է իր մորթին տաք-տաք գցել առյուծի վրա, երբ նրան բռնեցին և քերթելով սկսեցին մորթին հանել։ Խեղճ արջը, զղջալով իր արածը, արցունք էր թափում, աղաչում էր խնայել իրեն, հառաչում էր ցավից, խոստանում անմիջապես նվեր բերել առյուծին գեր եղջերու, արջառ և այլ կենդանիներ, բայց նրան լսող չկար։

Աղվեսը միայն նրան լսելի ձայնով ասաց.

— Այդպես է պետք քեզ և բոլոր նրանց, ովքեր կչարախոսեն և կզրպարտեն ուրիշներին։

(Այգեկցի)

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ[1]

Օժանդակ բայը և նրա ուղղագրությունը

Օժանդակ բայ է կոչվում եմ բայը, որը դերբայների հետ միասին գործածվելով, կազմում է բայի դիմավոր ձևեր։

Օրինակ՝ կարդում եմ, կարդացել եմ, կարդալու եմ։

Օժանդակ բայը ունի երկու ժամանակ՝ ներկա և անցյալ։

Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ եմ, ես, է, ենք, եք, են։

Օժանդակ բայի անցյալի ձևերն են՝

էի, էիր, էր, էինք, էիք, էին։

Օժանդակ բայի ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ պետք է հիշել հետևյալը՝

ա) Օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերը գրվում են դերբայներից առանձին։ Օրինակ՝ գրում էի, կարդացել եմ. տեսնրված չէ։

բ) Օժանդակ բայի ներկայի բոլոր ձևերը, բացառությամբ եզակի երրորդ դեմքի, գրվում են ե-ով, որը ձայնավորից հետո կարդացվում է յէ, իսկ մնացած դեպքերում՝ է։

Ինչպես՝ խոսելու եմ (կարդացվում է խոսելույէմ), երգելու ենք (յէրգելույէնք), երեխա է (յէրեխայէ), տղա ես (տղայէս), գրում եմ (գրումէմ), գրված է (գրվածէ)։

գ) Անցյալի ձևերը բոլորը գրվում են է-ով, որի և հաջորդ ի-ի միջև հնչվում է յ։

---

1 Բայերի ժամանակները և նրանց կազմությունը նկարագրելիս օգտվել ենք Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատությունից։

Ինչպես՝ էի *(կարդացվում է* էյի*),* էինք *(կարդացվում է* էյինք*)*:

դ) չ ժխտական ածանցի հետ բաղադրվելիս օժանդակ բայի ձևերը պահպանում են իրենց ուղղագրությունը։

Օրինակ՝ Այդպիսի բերք մեր կողմերում տեսնված չէ։ Չէի (չէիր, չէր, չէինք, չէիր, չէր, չէին) *սպասում։*

Ժխտական օժանդակ բայը գրվում է դերբայից առաջ։

Օրինակ՝ Գրում եմ–չեմ գրում, տեսնելու էի–չէի տեսնելու, գրված է–չի գրված։ *Երբ հարակատարի ժխտականը կազմվում է* ի *օժանդակ բայով, այն գրվում է դերբայից հետո՝ նստած չեմ, նստած չես, նստած չէ, նստած չէի, նստած չէիր, նստած չէր և այլն։*

Արևելահայերենում օժանդակ բայի հաստատական ձևերի շարադասությունը աղատ է։ Դրանք կարող են գրվել և՛ դերբայից առաջ, և՛ հետո։ Օժանդակ բայը գրվում է նախադասության այն անդամից հետո, որի վրա ընկնում է տրամաբանական շեշտը։

Օրինակ՝ Արամը գրո՛ւմ է դասը *(և ոչ թե կարդում)։* Արա՛մն է գրում դասը *(և ոչ թե Սուրենը)։ Արամը* դա՛սն է գրում *(և ոչ թե նամակ)։*

ե) Օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի ժխտական ձևը (չէ)*, հատկապես նախադաս գործածության դեպքում և ժողովրդական լեզվում, հաճախ դառնում է* չի։

Օրինակ՝ Տեսնում է–չի տեսնում, գրված է– գրված չէ–չի գրված։

Վարժություն 146: Գտնել օժանդակ բայերը. բացատրել նրանց ուղղագրությունը։

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում։ Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել։ Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում են գայլերը...

Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի։ Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է...

Հիմա էլ Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլեզներ կան, մարդու երես չտեսած, մարդուց երկյուղ չունեցող։ Պառկում են քարերի վրա, արևի տակ. ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարկվում փորի մաշկը, թույլ երակի պես, կարող եք բռնել նրանց։ Խլեզները Մթնաձորում մարդուց չեն փախչում (Ա. Բ.)։

ԲԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Բայի հիմնական ժամանակները երեքն են՝ ներկա, անցյալ, ապառնի:

Ներկա ժամանակ

Ներկա ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է խոսելու ժամանակ, նրա ընթացքում։ Ներկա ժամանակը կազմվում է անկատար դերբայի և օժանդակ բայի ներկայի ձևերի համադրմամբ։

Օրինակ՝

ել խոնարհում		ալ խոնարհում	
երգում եմ	*երգում ենք*	*խաղում եմ*	*խաղում ենք*
երգում ես	*երգում եք*	*խաղում ես*	*խաղում եք*
երգում է	*երգում են*	*խաղում է*	*խաղում են*

ժխտական խոնարհում

չեմ երգում	*չենք երգում*	*չեմ խաղում*	*չենք խաղում*
չես երգում	*չեք երգում*	*չես խաղում*	*չեք խաղում*
չի երգում	*չեն երգում*	*չի խաղում*	*չեն խաղում*

Վարժություն 147: Արտագրել ներկա ժամանակով դրված բայերը. կազմել համապատասխան արևմտահայերենները:

1. Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում։ Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել։ Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում են գայլերը..., վարազները ժանիքով փորում են սև հողը, փտած կաղիններ ժողվում։

...Ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին։ Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնաձորում ստվերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում, արջերը որսի են դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր

խմելու, իր որջի առաջ զիլ ոռնում է գայլը, ոռնոցը հազարբերան արձագանքում, զրնգում է Մթնաձորում (Բակունց)։

2. Ե՞րբ ենք մենք արեգակի շուրջը ավելի արագ շարժվում՝ ցերեկը, թե գիշերը։

Այս հարցը տարակուսանք է առաջ բերում. չէ՞ որ միշտ երկրի մի կողմում ցերեկ է լինում, մյուսում՝ գիշեր։ Ուրեմն ի՞նչ իմաստ ունի հարցը։ Ըստ երևույթին ոչ մի իմաստ էլ չունի։ Սակայն այդ այդպես չէ։ Չ՞է որ հարցն այսպես չի տրվում՝ «Երբ է ամբողջ երկիրն ավելի արագ շարժվում», այլ՝ «Ե՞րբ ենք մենք՝ մարդիկս, ավելի արագ շարժվում աստղերի միջև»։ Սա ամենևին անիմաստ հարց չէ։ Արեգակնային համակարգության մեջ մենք երկու շարժում ենք կատարում՝ պտույտ ենք գործում արեգակի շուրջը և միևնույն ժամանակ պտտվում ենք երկրագնդի առանցքի շուրջը։ Այդ երկու շարժումները գումարվում են, բայց տարբեր արդունք է ստացվում, նայած թե մենք երկրի ցերեկային թե գիշերային կեսում ենք գտնվում։ Կես գիշերին պտտվելու արագությանն ավելանում է երկրի առաջընթաց արագությունը, իսկ կեսօրին, ընդհակառակը, հանվում է նրանից, ուրեմն կես գիշերին մենք ավելի արագ ենք շարժվում արեգակնային համակարգության մեջ, քան կեսօրին և ընդհանրապես՝ երկրագնդի գիշերային կեսում մարդիկ արեգակի շուրջը ավելի արագ են շարժվում, քան ցերեկային կեսում («Հ. Ֆ.»)։

Վարժություն 148: Արևմտահայերենի ներկայի ձևերը վերածել արևելահայերենի:

1. Մտիկ չեն ըներ ինծի, կը խնդան, կը մարին խնդալեն (Գ. Զ.)։ 2. Վար կիջնեմ ակամա, կը հետևիմ իրեն (Գ. Զ.)։ 3. Գլուխները կ'երերան, չեն հավատար, նորեն կը հարցնեն իրարու (Գ. Զ.)։ 4. ... Դրան մեջ աղմուկը կը մեծնա։ Բոլոր բանտարկյալները մեկեն տեսնել կը փափագին Պոլսեն եկող փաստաբանը, կը պնդեն, կը պահանջեն։ Տեղի կուտամ անձիս համար ցույց տրված այս հետաքրքրության. ներս կը մտնեմ։ (Գ. Զ.)։ 5. Հուսածիս չափ կը պատասխանեմ, կը հուսադրեմ։ Բայց իմ մարդս չեմ տեսներ դեռ... (Գ. Զ.)։ 6. Գաղթականներուն գյուղը հրացանի ձայնով կ'արթննա, սխալմամբ մեկը կը զարնվի, և այս շփոթության մեջ ավազակը պատուհանեն կը ցատկե, կը փախչի։ Կը հալածեն Նյուշը, Քլանտյուք կը հաջողի մոտենալ անոր անտառի մեջ ու կսպաննե զայն (Գ. Զ.)։ 7. Ներսը կը խորհրդակցին,

կը վիճին, թեր ու դեմ կարծիքներ կու տան (Գ. Զ.)։ 8.— Ինչու՞ չեք պարեր։— Չեմ ախորժիր... (Գ. Զ.)։ 9. Վոսփորը կերևար, կ'ընդհատվեր հանկարծ, նորեն կը սկսեր, կը դառնար, կը գալարեր տիտանյան օձի մը պես (Գ. Զ.)։ 10. Աբիսողոմ աղա բան մը չհասկանալով նոր եկողին երեսը կը նայի անբարբառ։ Քովի բարեկամն ալ ձայն չհաներ... չուզեր անոր պատասխանել...., դարձյալ պատասխան չտար (Հ. Պ.)։

Վարժություն 149: Փակագծում դրված բայերը դնել ներկա ժամանակի համապատասխան դեմքով ու թվով։

Գիշերային այդ ժամին քաղաքի այն խուլ փողոցներից.... (դուրս գալ) մի վտիտ մարդ, մի անանուն մարդ։ Նա (կանգնել) երեք բարդիների առաջ (նայել) ներքև, (տեսնել) փողոցի գետինը, որ (շողալ) լույսերի տակ և (լսել) ջրերի ձայնը։ Հետո նա (բարձրացնել) բարակ վերարկուի օձիքը և մայթի վրայով (գնալ) դեպի վեր։ Փողոցի վերջում նա (անհայտանալ) և երկար ժամանակ (չերևալ)։ Նա (նստել) մի փոքրիկ բարձրության վրա և այնտեղից (նայել) քաղաքի լույսերին...

Մութի մեջ (ցցվել) Արարատի սպիտակ գագաթը։ Ստորոտը, որտեղ ձյուն չկա, (կորչել) մութի մեջ, և (երևալ) միայն ձյունոտ գագաթը, որ հեռուներում (դողալ), ինչպես վիթխարի ամպ։ Նրա աչքին ահա (երևալ) այդ սպիտակ գագաթը և քաղաքը, որի կրակները քանի (հեռանալ), այնքան (խառնվել) իրար, և (ստացվել) կրակների ծփացող ծով (Ա. Բ.)։

Անցյալ ժամանակ

Անցյալ ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է խոսելու ընթացքից, ժամանակից առաջ։ Օրինակ՝ կարդում էի, կարդացի, կարդացել եմ։ Արևելահայերենը ունի անցյալ ժամանակի մի քանի ենթաժամանակներ։

Սահմանականի անցյալ անկատար

Անցյալի այս ձևը ցույց է տալիս խոսելու ընթացքից, ժամանակից առաջ հաստատ սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն։

Անցյալ անկատարը կազմվում է անկատար դերբայի և օժանդակ բայի անցյալի ձևերի համադրմամբ։

Օրինակ՝

ել խոնարհում		ալ խոնարհում	
եզակի	*հոգնակի*	*եզակի*	*հոգնակի*
երգում էի	*երգում էինք*	*խաղում էի*	*խաղում էինք*
երգում էիր	*երգում էիք*	*խաղում էիր*	*խաղում էիք*
երգում էր	*երգում էին*	*խաղում էր*	*խաղում էին*

ժխտական խոնարհում

եզակի	*հոգնակի*
չէի երգում	*չէինք երգում*
չէիր երգում	*չէիք երգում*
չէր երգում	*չէին երգում*
չէի խաղում	*չէինք խաղում*
չէիր խաղում	*չէիք խաղում*
չէր խաղում	*չէին խաղում*

Վարժություն 150: Գտնել անցյալ անկատար ժամանակով դրված բայերը:

Երկինքը բարձր էր, շատ բարձր և բարձրությունից նայում էր ներքև բաց-փիրուզի անփայլ կապույտով։ Արևի ճառագայթները հուրհրատում էին եկեղեցու և զանգակատան կաթուղիկեների եռանկյունիները ծածկող արծաթագույն թիթեղների մեջ։ Հարևան խարխուլ տան կտրան ծայրին, նորաբույս առատ կանաչի մեջ կանգնած էր հազիվ մի ամսական սպիտակ մի գառ՝ ականջները սուր ցցած, նայում էր դեպի եկեղեցու բակը, մայում էր համառորեն, և նրա սուր ձայնը զիլ արձագանք էր տալիս գարնանային պարզ օդում։ Ծտերը խմբովին թևերի ամբողջ թափով շեշտակի դալիս նստում էին բակի մեջ տնկված հակակի ծառերի վրա, ճվճվում-ծլվլում էին արևի ճաճանչների տակ պեծին-պեծին տվող մատաղ տերևների մեջ և հանկարծ, կարծես մի ազդանշանով, պոկ էին գալիս բոլորը միասին ու կորչում օդի մեջ։ Օդը շարժվում էր անդադար ինչ-որ անհանգիստ հունչով — մերթ սառը, մերթ տաք։ Այդ ձմեռն էր, որ օրհասի վերջին շունչն էր փչում, և գարունն էր, որ իր տաք շնչառությամբ բնության վերածընությունն էր ավետում։

Եկեղեցին գտնվում էր քաղաքի աղմկալի կենտրոններից հեռու, և բակում հանգուցիչ անդորրություն էր տիրում (Ն. Դ.)։

Վարժություն 151: Արևմտահայ անցյալ անկատար ձևերը վերածել արևելահայերենի:

1. Չէր պատասխաներ, և բժիշկը կը համառեր իր դարմանքին մեջ, ու իմ ալ կարծիքս ասել ուզելով, կը կրկներ շարունակ... (Գ. Զ.): 2. Այդ կյանքը կը գուշակեր, կը տեսներ, գրեթե կը վայելեր կանխավ, իր երևակայության մեջ (Գ. Զ.): 3. Բացեիբաց կ'արհամարհեր անոնց, որ հազիվ օտար լեզվի մը մեջ դեռավարժ, իրենց ազգությունն ամոթ ու նվաստություն կը համարին ու մայրենի լեզուն կը վճռեն անհամ, կոշտ ու տձև. նույնչափ կ'արհամարհեր գուցե անոնք, որք գիտությանց նախնական ծանոթություններն ստանալով անմիջապես աշխարհաքաղաքացի կը դառնան (Գ. Զ.): 4. Երբեք այսպիսի պատահականություն մը չէինք սպասեր (Օտ.): 5. Սուրբիկ ուրիշ բան չէր լսեր անոր խոսքերեն, բայց եթե հեշտալուր մրմունջ մը, որ իր լսողությունը կը հմայեր (Գ. Զ.): 6. Անձրև մը կու գար՝ միօրինակ և անընդհատ, սև քողի մեջ մը պարփակելով ծովն ու ցամաքը (Գ. Զ.): 7. Փախչիլ մը կը ձևացներ, բայց կը ձևացներ միայն ու կը ժպտեր (Գ. Զ.):

Վաղակատար և անցյալի վաղակատար

1. Ծառերի տերևները թափվել են: Զյունը ծածկել է սար ու ձոր: *Այս նախադասություններում* թափվել են, ծածկել է *բայաձևերը ցույց են տալիս խոսելու ժամանակից՝ ներկա ժամանակակետից առաջ հաստատ ավարտված գործողություն: Դրանք դրված են վաղակատար ժամանակով:*

Վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի ներկայի ձևերի համադրմամբ:

Պարզ բայեր

ել խոնարհում		ալ խոնարհում	
եզակի	*հոգնակի*	*եզակի*	*հոգնակի*
երգել եմ	երգել ենք	խաղացել եմ	խաղացել ենք
երգել ես	երգել եք	խաղացել ես	խաղացել եք
երգել է	երգել են	խաղացել է	խաղացել են

–անցն, –եցն և –ցն *ածանց ունեցող բայեր՝*

Խաղացրել եմ, խաղացրել ես, խաղացրել ենք, խաղացրել եք և այլն: Մոտեցրել եմ, մոտեցրել է, մոտեցրել ենք, մոտեցրել են և այլն: Տեսցրել եմ, տեսցրել է, տեսցրել ենք, տեսցրել են և այլն:

–են և –ան ածանց ունեցող բայեր՝

Մոտեցրել եմ, մոտեցրել է, մոտեցրել ենք, մոտեցրել են և այլն։

Խոստացել եմ, խոստացել է, խոստացել ենք և այլն։

–ն, –չ ածանց ունեցող բայեր՝

Փախել եմ, փախել է, փախել ենք և այլն։ Տեսել եմ, տեսել է, տեսել ենք և այլն։

Ժխտական խոնարհումը սովորական է (չեմ գրել, չեմ խաղացել, չեմ մոտեցել և այլն), միայն պետք է հիշել, որ եզակի երրորդ դեմքում ե-ն դառնում է ի (չի երգել, չի խաղացել, չի մոտեցել, չի խաղացրել, չի փախել, չի տեսել և այլն)։

2. Վաղակատար դերբայի և օժանդակ բայի անցյալի ձևերի հարադրմամբ կազմվում է անցյալի վաղակատար ժամանակը, որը ցույց է տալիս անցյալ ժամանակակետից առաջ հաստատ ավարտված գործողություն։

Օրինակ՝ Անցյալ ձմեռ գնացել էի մեր գյուղը։ Արգեն ձյունը եկել ու ծածկել էր սար ու ձոր։

Անցյալի վաղակատարով խոնարհման պատկերը հետևյալն է։

Պարզ բայեր

ել խոնարհում		ալ խոնարհում	
եզակի	*հոգնակի*	*եզակի*	*հոգնակի*
երգել էի	երգել էինք	խաղացել էի	խաղացել էինք
երգել էիր	երգել էիք	խաղացել էիր	խաղացել էիք
երգել էր	երգել էին	խաղացել էր	խաղացել էին

–ացն, –եցն և –ցն ածանց ունեցող բայեր՝

Խաղացրել էի, խաղացրել էիր, խաղացրել էինք, խաղացրել էին և այլն։ Մոտեցրել էի, մոտեցրել էր, մոտեցրել էինք և այլն։ Տեսցրել էի, տեսցրել էր, տեսցրել էինք և այլն։

–են և –ան ածանց ունեցող բայեր՝

Մոտեցել էի, մոտեցել էր, մոտեցել էինք և այլն։ Խոստացել էի, խոստացել էր, խոստացել էինք և այլն։

–ն և –չ ածանց ունեցող բայեր՝

Փախել էի, փախել էր, փախել էինք և այլն։

Տեսել էի, տեսել էր, տեսել էինք և այլն։

Ժխտական խոնարհումը սովորական է (չէի երգել, չէի խաղացել, չէի մոտեցել, չէի տեսել, չէի խաղացրել, չէր փախել և այլն)։

Վարժություն 152: Գտնել վաղակատար ժամանակով գործածված բայերը:

Այս ծառի տակ քեզ օրորել եմ ես,
Ամեն անգամ, երբ ժպտացել ես դու,
Օրորոցքիդ թեքված համբուրել եմ քեզ,
Ասես գարուն է բացվել իմ հոգում
Ամեն անգամ, երբ ասել ես մի բառ,
Երբ քո առաջին քայլերն ես գցել,
Ես աշխարհի մեջ դարձել եմ աշխարհ,
Ուրախությունից լացել, խնդացել...
Ամեն անգամ, երբ ընկերներով
Մեր թթենու տակ սեղան ես բացել,
Առանց խմելու եղել եմ գինով,
Ես ուրախության գինի եմ դարձել... (Գ. Սարյան)

Վարժություն 153: Արտագրել՝ փակագծում դրված բայերը գործածելով վաղակատար ժամանակով: Կազմել դրանց անցյալի վաղակատարները:

(լինել) մի մանուկ վեց տարեկան։ Ծնողները (սիրել) նրան իրենց հոգու ամբողջ ջերմությամբ։ (Շոյել) ու (փայփայել) ու ոչինչ (չխնայել) նրա համար, ոչինչ։ Մանուկը (լինել) երջանիկ այդ սիրով և (պաշտել) ծնողներին ու (սիրել) կյանքը։

Եվ աշխարհն այնքան հաճելի (լինել) նրա համար, որ ոչ մի վիշտ, ոչ մի դառնություն (չընկճել) նրա մատաղ հոգին։ (Ապրել) ու (աշխատել), (աշխատել) ու (ապրել) մինչև խորին ծերություն, միշտ ուրախ, միշտ զվարթ։ Նա (հավատալ) կյանքին խորին հավատով և սիրելով կյանքն ու իր զավակներին (արհամարհել) մահը և միշտ (հեգնել) ու (ծաղրել) է նրան... Արեգակը նրա համար երկիրը (լուսավորել), ծառերը նրա համար (բարձրանալ), նրա համար (բարձրանալ) ուռենիները, նրա համար (բուսնել) ու անուշ բուրմունք տարածել, գետերը նրա համար (հոսել), աղբյուրները նրա համար (կարկաչել), թռչունները նրա համար (երգել) (Շ.)։

Վարժություն 154: Վերածել արևելահայերենի:

I

1. Վրայեն չորս տարի անցեր էր, երբ այս պատմությունը իմացա ...(Գ. Զ.)։ 2. Տղաբերքը Հաճի Տյուրիկին տանը մեջ եղեր անցեր էր (Գ. Զ.)։ 3. Քով քովի մեծցեր էին լեռներու կողերի վրա

վազվռտելով շարունակ, բայց չափահասության տարիքին՝ մահացու թշնամիներ դարձեր էին հանկարծ իրարու դեմը (Գ. Զ.)։ 4. Իրեն ալ ճիշտ վեց տարի առաջ այսպես ուրախությամբ տոներ էին հարսնիքը, դրացի ու գյուղացի եկեր էին, այո, ճիշտ այսօրվա պես հազար մաղթանքներ ընելու։ Բայց քանի մը օր վերջը երիկը ձգեր գացեր էր զինքը ու ալ չէր երևցեր (Գ. Զ.)։ 5. Շուտով մտերմացեր էին այս երիտասարդներն (Գ. Զ.)։ 6. Սրահին մեջ գտնվող բոլոր հայերն ոտքի ելեր էին միևնույն զսպանակեն մղյալ, դերասանուհին Մայր Արաքսիի առաջին տունը երգեր էր (Գ. Զ.)։

II

1. Նամանավանդ զարմացեր ու հավներ էր ձևերուն (Գ. Զ.)։ 2. Խոսրով պարզապես հմայվեր մնացեր էր (Գ. Զ.)։ Հետո կամաց-կամաց օդին մեջ նետված այն խորհուրդը խտացեր, կազմըվեր, պաղեր ու որոշ ձև մը առեր էր (Օտ.)։ 4. Ես անանկ խայտառակություններ չեմ սիրեր (Հ. Պ.)։

5. — Լսեցի, որ շոգենավուն մեջ մեկու մը հետ քիչ մը առեր տվեր եք, և այն մեկը ձեր պատվույն դեմ ծանր խոսքեր ըրեր է։

— Ամենևին։

— Թե դուք ալ անոր քանի մը խոսք ըրեր եք։

— Բնավ։

— Թե վերջը ծեծկըվուքի եղեր եք։

— Անանկ բան մը բնավ եղած չէ։

— Թե դուք անոր գլխուն զարկեր եք...

— Սուտ է։

— Թե անիկա ալ ձեզի ապտակ մը տվեր է...

— Բոլորովին սուտ։

— Թե երրորդ մը մեջ մտեր է...

— Երկրորդ չկա, որ երրորդ ըլլա։

— Թե քու թևեդ քաշեր է...

— Սխալ։

— Թե անոր ալ ձեռքը բռներ է...

— Սուտ։

— Թե ասանկով գձեզ բաժներ է...

— Բնավ տեղ չկա։

— Թե դուք ալ բաժանումեն զոհ չըլլալով՝ դատ բանալ ուզեր եք...

— Որչա՜փ սուտ։

— *Թե վարպետ փաստաբան մը փնտրեր եք...*
— *Ամենն ալ սուտ։*
— *Թե զիս կանչել տալ ուզեր եք... (Հ. Պ.)։*

Հարակատար և անցյալի հարակատար

1. Այգի գնալով տեսա, որ Սուրենը նստած է ծառի տակ, իսկ Արամը կանգնած է նրա կողքին:

Այս նախադասության մեջ նստած է, կանգնած է բայաձևերը ցույց են տալիս խոսելու ժամանակից առաջ հաստատ կատարված վերջացած մի այնպիսի գործողություն, որը թողել է մնայուն հետևանք։

Հարակատար ժամանակը կազմվում է հարակատար դերբայի և օժանդակ բայի ներկայի ձևերի համադրմամբ։

Ել խոնարհում

Եզակի	*Հոգնակի*
կանգնած եմ	*կանգնած ենք*
կանգնած ես	*կանգնած եք*
կանգնած է	*կանգնած են*

Ալ խոնարհում

Եզակի	*Հոգնակի*
հավատացած եմ	*հավատացած ենք*
հավատացած ես	*հավատացած եք*
հավատացած է	*հավատացած են*

2. Սուրենը նստած էր ծառի տակ, իսկ Արամը կանգնած էր նրա կողքին *նախադասության մեջ նստած էր և կանգնած էր բայաձևերը նույնպես ցույց են տալիս հաստատ կատարված վերջացած գործողություն, որը թողել է մնայուն հետևանք, բայց անցյալ ժամանակակետի համեմատությամբ։*

Անցյալի հարակատարը կազմվում է հարակատար դերբայի և օժանդակ բայերի անցյալի ձևերի համադրմամբ։

Ել խոնարհում

Եզակի	*Հոգնակի*
կանգնած էի	*կանգնած էինք*
կանգնած էիր	*կանգնած էինք*
կանգնած էր	*կանգնած էին*

ալ խոնարհում

եզակի	*հոգնակի*
հավատացած էի	*հավատացած էինք*
հավատացած էիր	*հավատացած էիք*
հավատացած էր	*հավատացած էին*

Ժխտականը կազմվում է չ ժխտական մասնիկի հավելմամբ օժանդակ բայի վրա՝ կանգնած չէի, կանգնած չէիր, կանգնած չէր, կանգնած չէինք, հավատացած չէին *և այլն։*

Արևելահայերենում առավել գործածական են կրավորական բայերի հարակատարները, ինչպես և այն չեզոք բայերինը, որոնց արտահայտած գործողությունը կարող է մնայուն հետևանք թողնել (կանգնել–կանգնած եմ, հոգնել–հոգնած եմ, քնել–քնած եմ, նստել–նստած եմ *և այլն)։*

Վարժություն 155: Գտնել հարակատար ժամանակով գործածված բայերը:

1. Տիկինը նստած էր ամուսնու դեմ ու դեմ և լուռ լսում էր նրա որոշումները... Այժմ նա պաշտում էր ամուսնուն և կատարելապես համոզված էր, որ ինքն էլ պաշտվում է նրանից (Շ.)։ 2. Տների կտուրները ծածկված էին եղյամով... (Ն. Դ.)։ 3. Ամեն մեկը զբաղված է մի որևիցե բանով (Ն. Դ.)։ 4. Արդյո՞ք Բարսեղի սրտի մեջ արդեն մեռած էին բոլոր քնքուշ, գեղեցիկ զգացմունքները, թե նրա միտքը դարձյալ զբաղված էր յուր գործով (Ն. Դ.)։ 5. Թվում էր, որ նա հիացած էր իր ազգականի կնոջ սիրունությամբ (Շ.)։ 6. Եղիսաբեթը, որ նստած էր նրա դիմացը, նայում էր այդ օտարոտի մարդուն (Ն. Դ.)։ 7. Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին (Վ. Տ.)։

Վարժություն 156: Կազմել հետևյալ բայերի հարակատար և անցյալի հարակատար ժամանակների եզակի երրորդ դեմքը:

Ընկնել, կառուցվել, պառկել, ավարտվել, ասվել, քրտնել, վճռվել, զարմանալ, շրջապատվել, քնել, ամրացվել, լցվել, հավատալ, տեսնվել, բաժանվել, դառնանալ, քողարկվել զայրանալ, հիանալ, ողողվել, մեռնել։

Օրինակ՝ ընկած է–ընկած էր:

Վարժություն 157: Փակագծում դրված բայերը գործածել հարակատար կամ անցյալի հարակատար ժամանակներով:

1. Նա (չվիրավորվել), այլ (վշտանալ) (Շ.)։ 2. Ինքը՝ Սամսոն Ֆրանգուլյանը այնքան ուրախ էր, այնքան (զգացվել), որ ամուր գրկեց ամուսնուն և համբուրեց (Շ.)։ 3. Ամեն ինչ կարգին էր, սենյակները (կահավորվել) ու (զարդարվել) (Շ.)։ 4. Դեմքը կարծես բրոնզից էր (ձուլվել) (Ն—Դ)։ 5. Ես (նստել) պատշգամբում և գիրք էի կարդում (Ն. Դ.)։ 6. Նա չկարողացավ այդ տարի արտասահման գնալ, որովհետև Սամսոնը (զբաղվել) (Շ.)։ 7. Մելանյան (հիանալ) նոր բնակարանով (Շ.)։ 8. Մի օր Սամսոնը Մելանյային արգելեց ինչ-որ պարերեկույթ գնալու հենց այն պահին, երբ տիկինն արդեն (հագնվել) ... (Շ.)։

Վարժություն 158: Վերածել արևելահայերենի:

1. ... Տրապիզոնի շոգենավեն նոր ելած էր... 2. Այս ճամփորդն օժտված էր զույգ մը խոշոր և սև աչքերով... 3. Սունտուկներն և անկողինն, որ քուրջի մը մեջ ներփակված էր, նավակեն հանելուն պես... բեռնակիր մը կանչեց... 4. Այտերն նեղութենե կարմրիլ սկսած էին։ 5. Ահա հյուրերնիս այսօր եկած է և ժամեմ մը հոս պիտի գա։ 6. Շատ հոգնած եմ, քիչ մը հոս կը նստիմ։ 7. Շոգենավեն հազիվ դուրս ելած էի, խմբագիրն մեկը երկու ժամ պլուխս ցավուվ.... 8. Այն խուցն, որուն մեջ Աբիսողոմ աղան ապաշխարանք քաշած էր, ուներ յուր դեմն սենյակ մը, որ խոհանոցի քովն էր և որ ճաշի հատկացված էր։ Այդ սենյակը մտավ Աբիսողոմ աղան միջնորդությամբ տիկնոջ, որ սեղանը պատրաստած էր վերջապես։ Աբիսողոմ աղան ճաշի սենյակը մտնելով բարևեց Մանուկ աղան, որ սեղանին շուրջը աթոռներ շարելու զբաղած էր։ 9. ... Միտքն ... ապուրին ինչպես շինվելուն դնացած էր և բնավ ունկն չէր դրած Մանուկ աղայի խոսքերուն։ 10. ... Իմ Պոլիս գալս իմանալով՝ առավոտյան կանուխ հետս խոսելու եկած է։ 11. Կյանքիս մեջ հարյուր անգամեն ավելի հանդիպած եմ այս տեսարանին (Հ. Պ.)։

Անցյալ կատարյալ

Ձմեռն անցավ: Կռունկները նորից վերադարձան ու նորոգեցին իրենց բները: Թփերի տակ ծաղկեց մանուշակը:

Այս նախադասություններում անցավ, վերադարձավ, նորոգեցին, ծաղկեց *բայաձևերը ցույց են տալիս այնպիսի գործողություններ, որոնք սկսվել և ավարտվել են մի անցյալ ժամանակակետում (առանց համեմատելու որևէ ժամանակակետի հետ)։ Դրանք դրված են անցյալ կատարյալ ժամանակով։*

Պարզ և պատճառական -եցն, -ացն, -ցն *ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից, որին ավելանում են* -ի, -իր, -, -ինք, -իք, -ին *վերջավորությունները։*

Պ ա ր զ բ ա յ ե ր

ել խոնարհում		ալ խոնարհում	
ե զ ա կ ի	*հ ո գ ն ա կ ի*	*ե զ ա կ ի*	*հ ո գ ն ա կ ի*
գրեցի	*գրեցինք*	*կարդացի*	*կարդացինք*
գրեցիր	*գրեցիք*	*կարդացիր*	*կարդացիք*
գրեց	*գրեցին*	*կարդաց*	*կարդացին*

-եցն, -ացն, -ցն *ածանց ունեցող բայեր*

ե զ ա կ ի	*հ ո գ ն ա կ ի*	*ե զ ա կ ի*	*հ ո գ ն ա կ ի*
կանգնեցրի	*կանգնեցրինք*	*սպիտակացրի*	*սպիտակացրինք*
կանգնեցրիր	*կանգնեցրիք*	*սպիտակացրիր*	*սպիտակացրիք*
կանգնեցրեց	*կանգնեցրին*	*սպիտակացրեց*	*սպիտակացրին*

ե զ ա կ ի	*հ ո գ ն ա կ ի*
հասցրի	*հասցրինք*
հասցրիր	*հասցրիք*
հասցրեց	*հասցրին*

-են, -ան, -ն *և* -չ *ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալը կազմվում է անցյալի հիմքին* -ա, -աr, -ավ, -անք, -աք, -ան *վերջավորությունները ավելացնելով։*

ե զ ա կ ի	*հ ո գ ն ա կ ի*	*ե զ ա կ ի*	*հ ո գ ն ա կ ի*
մոտեցա	*մոտեցանք*	*տեսա*	*տեսանք*
մոտեցար	*մոտեցաք*	*տեսար*	*տեսաք*
մոտեցավ	*մոտեցան*	*տեսավ*	*տեսան*
խոստացա	*խոստացանք*	*փախա*	*փախանք*
խոստացար	*խոստացաք*	*փախար*	*փախաք*
խոստացավ	*խոստացան*	*փախավ*	*փախան*

Անցյալ կատարյալի ժխտականը կազմելու համար բայաձևերի վրա (սկզբից) դրվում է չ ժխտական մասնիկը։

Օրինակ՝ գրեցի-չգրեցի, կարդացի-չկարդացի, մոտեցա-չմոտեցա, տեսա-չտեսա *և այլն։*

Վարժություն 159: Գտնել անցյալ կատարյալ ժամանակով դրված բայերը: Կազմել դրանց անորոշ դերբայները:

Իջավ ձորը, լսեց թե ինչպես սառույցի տակ խոխոջում է ջուրը: Ջրի ձայնը նրան հիշեցրեց եռման կաթսան, տունը, վառած օջախը: Տանը երևի սպասում են արդեն:

Հետևից ճյուղի կոտրվելու ձայն լսվեց: Թվաց, թե ձյունի ծանրոցից մի ճյուղ ջարդվեց: Վեր բարձրանալիս Ավին զգաց, որ մեկը հետևում է իրեն: Ետ նայեց, մի մարդաբոյ արջ էր կանգնել քիչ հեռու, ճյուղն ուսին, չոքանի մահակի պես:

Երբ արջը թքոտելով դեն գցեց ուսի փայտը, չորքոտանի դարձավ, հրացանը որոտաց, կրակոցի ձայնին ձորերն արձագանք տվին, ծառի ճյուղերից ձյուն թափվեց: Արջը ոռնաց: Հրացանի ծխի միջից Ավին տեսավ, թե ինչպես արջը մի ոստյուն արեց, թաթերը հրացանի փողին մեկնեց: Մթնաձորում սկսվեց անհավասար կռիվ մարդու և գազանի մեջ:

...Հանկարծ արջը հրացանի փողը բերանն առավ, սկսեց կրծոտել: Ավու ձեռքը սահեց հրացանի վրայով, մատը բնազդաբար սեղմեց կեռ երկաթին, հրացանը մի անգամ էլ որոտաց: Արջը ոռնաց առաջվանից էլ պինդ, մեջքի վրա ընկավ, գլորվեց որպես կտրած գերան: Սառույցին որ հասավ, կանգնեց ոտքի, փորձեց վեր բարձրանալ:

Ավին երկրորդ անգամ կրակեց, հրացանի գնդակը խրվեց ձյունի մեջ, զզաց, ինչպես շիկացած խոփը դարբնոցի ջրաքուրայում: Երրորդ կրակոցը նրա հրացանի վերջին ճիչն էր: Ավին մինչև վերջն էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը հրացանը ներս չառավ:

Արջը ոռնոցով մի ոստյուն էլ արեց: Ավին շատ մոտ զգաց վիրավոր գազանի տաք շունչը, ծռվեց և երբ արջը թաղվեց ձյունի մեջ, Ավին ետ վազեց... *(Բակունց)*

Վարժություն 160: Վերածել արևելահայերենի:

1. Իր աչքին առջև պարզվող այս հուլիսի առտուն շլացուց զինքը (Գ. Զ.): 2. Երբոր դուռը հասավ, վայրկյան մը կեցավ լիաթոք շունչ մը առնելու համար ու նայվածքը շուրջը պտտցուց անգամ մը (Գ. Զ.): 3. Տիգրանուհին հասկցավ անոր միտքը ու ետ քաշվեցավ (Գ. Զ.): Օր մը շարունակ ասոնցմով զբաղեցավ, ամեն բան իր ձեռքովը կարգի դրավ (Գ. Զ.): 4. Մեկու մը չի բացավ իր վիշտն ու մեկու մը չի գանգատեցավ (Գ. Զ.): 5. Ալ չի խոսեցան

ասոր վրա (Գ. Զ.)։ 6. Չի մտածեց այլևս անոր, բայց չի ջնջեց անոր սերն իր սրտեն (Գ. Զ.)։ 7. Թիկնապահները ... չի կրցան արդյունքի մը հասնիլ (Օտ.)։ 8. Սուրբիկ ապշեցավ, ամչցավ ու զայրացավ (Գ. Զ.)։ 9. Աշոտ ինքն ալ աշակերտներուն չափ ուրախ դուրս նետվեցավ դասարանեն և ուղղվեցավ խոսարան կոչված մութ ու աղոտ սենյակը... (Օտ.)։ 10. Քիչ մը առաջ խանութ եկավ մաղը կտրել տալու, գավազանը դրավ անկյունը, նստեցավ (Օտ.)։ 11. Այն օրը ոչ ոք երեսը չնայեցավ (Գ. Զ.)։

Վարժություն 161: Փակագծում դրված բայերը, օգտագործել անցյալ կատարյալ ժամանակով:

1. Անծանոթը (դուրս գնալ) խրճիթից։ Դուռը կողպեքով (կողպել), բանալին (կոխել) գրպանը և փաթաթվելով վերարկուի մեջ, շտապ քայլերով (հեռանալ)։ Նա, մի քանի փողոցներ անցնելուց հետո, վերջապես (մտնել) մի մեծ փողոց, որտեղ գտնվում են քաղաքի հայտնի և հարուստ վաճառականների խանութները։ Նա (բացել) այդ խանութներից մեկի մեծ և խնամքով մաքրած ապակիավոր դուռը և ...(ներս մտնել) (Ն—Դ)։ Աղջիկը իսկույն (վերցնել) առջևը դրված ջրով լի բաժակը և (մոտեցնել) նրա շրթունքներին (Ն—Դ)։ 3. Մանկահասակ կինը (ետ քաշել) յուր ձեռքերը, (վեր կենալ) և առանց մի խոսք անգամ արտասանելու (առաջ ընկել) դեպի տուն։ Գ. Զաքարյանը (հետևել) նրան (Ն—Դ)։ 4. Սենյակում (տիրել) լռություն (Ն—Դ)։ 5. Մայրը (ծիծաղել), իսկ երեխան, պինդ փաթաթվելով նրա վզովը, մի քանի անգամ (համբուրել) նրան և դուրս (վազել) սենյակից։ Մայրը (նայել) նրա հետևից... Մի քանի րոպե (մնալ) անշարժ նրա հետևից նայելիս (Ն—Դ)։

Ապառնի ժամանակ

Վաղը շուտ պիտի արթնանամ, որովհետև գնալու եմ էջմիածին:

Ինձ հետ կգան նաև Շուշանիկն ու Գայանեն: Լավ կլինի դուք բոլորդ էլ գաք, միասին գնանք:

Այս նախադասություններում պիտի արթնանամ, գնալու եմ, կգան, գաք, գնանք *բայաձևերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը կատարվելու է խոսելու ընթացքից, ժամանակից հետո։*

Դրանք դրված են ապառնի ժամանակով։

Արևելահայերենը ունի ապառնի ժամանակի մի քանի ենթաժամանակներ։

Սահմանական ապառնի և անցյալ ապառնի

1. Երեկոյան անձրև է գալու և թրջելու է տներն ու փողոցները:

Այս նախադասության մեջ գալու է, թրջելու է *բայաձևերը ցույց են տալիս այնպիսի մի գործողություն, որը ստուգապես կատարվելու է խոսելու ժամանակից՝ ներկա ժամանակակետից հետո։ Դրանք դրված են սահմանական ապառնի ժամանակով։*

Սահմանականի ապառնին կազմվում է ապառնի դերբայի և օժանդակ բայի ներկայի ձևերի համադրմամբ։

ել խոնարհում		ալ խոնարհում	
Եզակի	*Հոգնակի*	*Եզակի*	*Հոգնակի*
երգելու եմ	*երգելու ենք*	*խաղալու եմ*	*խաղալու ենք*
երգելու ես	*երգելու եք*	*խաղալու ես*	*խաղալու եք*
երգելու է	*երգելու են*	*խաղալու է*	*խաղալու են*

2. Սահմանականի անցյալի ապառնին *կազմվում է ապառնի դերբայի և օժանդակ բայերի անցյալի ձևերի համադրմամբ։*

Երեկոյան անձրև էր գալու և տներն ու փողոցները թրջելու:

Այս նախադասության մեջ գալու էր, թրջելու էր *բայաձևերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որը մի անցյալ ժամանակակետից հետո ստուգապես կատարվելու էր։ Դրանք դրված են սահմանականի անցյալի ապառնի ժամանակով։*

ել խոնարհում		ալ խոնարհում	
Եզակի	*Հոգնակի*	*Եզակի*	*Հոգնակի*
երգելու էի	*երգելու էինք*	*խաղալու էի*	*խաղալու էինք*
երգելու էիր	*երգելու էիք*	*խաղալու էիր*	*խաղալու էիք*
երգելու էր	*երգելու էին*	*խաղալու էր*	*խաղալու էին*

Ժխտականը կազմվում է սովորական ձևով (չեմ երգելու, չի երգելու, չի խաղալու, չէի խաղալու, չէիր երգելու *և այլն)։*

Վարժություն 162: Գտնել ապառնի ժամանակով դրված բայերը:

Հիմա ես ամեն-ամեն իրիկուն
Մտնելու եմ տուն, քեզ չեմ գտնելու,
Ու մտամոլոր գիշերներն անքուն

Մանուկ օրերդ եմ մտաբերելու.
Մաշելու են ինձ կասկածները չար
Թվալու է ինձ վայրկյանը տարի,
Նստելու եմ ես լուռ, անմխիթար
Հայացքս ուղղած քո ճանապարհին... (Գ. Սարյան)

Վարժություն 163: Փակագծում դրված բայերը օգտագործել ապառնի ժամանակով:

Երևակայո՞ւմ եք, թե ինչպե՛ս (փոխվել) Երևանը մեկ երկու տարի հետո։ Էջմիածնից Երևան եկողը հանկարծակի (կանգնել) ծփուն ծովի առաջ, որը (փռվել) ճանապարհի աջ կողմում։ Հսկա պատնեշ — կամուրջը (փակել) փրփրադեզ Հրազդանի ջուրը և իր ետևում (ստեղծել) Երևանյան լիճը։ Պատնեշի վրայով անընդհատ (սլանալ) տրամվայներն ու ավտոմեքենաները։ Լճի ափերին վեր (խոյանալ) հյուրանոցներն ու բազմահարկ բնակելի շենքերը։ Մանր ավազով ծածկված լողափերին (վազվզել) ժիր մանուկները։ Լճի վրա նավակներով զբոսնել ու իրենց հանգիստն (անցկացնել) աշխատավորները։ Ջմայլված (բարձրանալ) Աբովյան փողոցով։ Այնտեղ, ուր հատվում են Աբովյան և Սայաթ-Նովա փողոցները, (բարձրանալ) բազմահարկ հյուրանոցը, որի առջև ծաղիկներն ու վարդերը գորգեր (հյուսել)։ Ավանի ձորով դեպի նոր բնակելի թաղամասն (ձգվել) լայնահուն պողոտան, որով անաղմուկ (սահել) տրոլեյբուսները։ Քաղաքի կենտրոնից Նորքի սարահարթ երևանցիները (հասնել) ընդամենը 10—15 րոպեում։ Շատ-շատ (փոխվել) քաղաքամայր Երևանը մոտակա տարիներին։

Ըղձական ապառնի և անցյալի ապառնի

1. Դասերս շուտ սովորեմ, որ ընկերներիս հետ Սևան գնամ: *Այս նախադասության մեջ* սովորեմ, վերջացնեմ, գնամ *բայաձևերը ցույց են տալիս խոսողի ցանկությունը, իղձը, մի կատարելի գործողության վերաբերյալ։ Դրանք դրված են ըղձական ապառնի ժամանակով։*

Ըղձական ապառնին կազմվում է ներկայի հիմքից։

Եվ *խոնարհման բայերի ըղձական ապառնին կազմելու համար ներկայի հիմքին ավելացնում են* եմ, ես, ի, ենք, եք, են *վերջավորությունները։*

Գրեմ	*գրենք*	*մոտեցնեմ*	*մոտեցնենք*
գրես	*գրեք*	*մոտեցնես*	*մոտեցնեք*
գրի	*գրեն*	*մոտեցնի*	*մոտեցնեն*

Ալ խոնարհման բայերի ըղձական ապառնին կազմվում է ներկայի հիմքին -ամ, -աս, -ա, -անք, -ա՛ք, -ան վերջավորությունների հավելման միջոցով։

խաղամ	խաղանք	մոտենամ	մոտենանք
խաղաս	խաղաք	մոտենաս	մոտենաք
խաղա	խաղան	մոտենա	մոտենան

Ժխտականը կազմվում է չ նախամասնիկի միջոցով (չգրեմ, չգրես, չխաղամ, չխաղանք):

Վարժություն 164: Որոշել ըղձական ապառնի ժամանակով գործածված բայերը:

Զանգերն ուրախ զողանջեն, ժամացույցները խնդան,
Վերջին, վերջին թերթիկը օրացույցից ընկնի վար,
Ամենուրեք բաժակներն իրար խփվեն, զրնգան,
Ու նոր տարին վեհորեն երկինքներից գա աշխարհ։

Տոնածառերը փայլեն ամեն-ամեն հարկի տակ,
Ու աշխարհով մեկ փովի հոգիս ուրախ ու անտես,
Մտքով անցնեմ երկրներ, մտնեմ գյուղեր ու քաղաք,
Ու բոլորին-բոլորին շնորհավոր ասեմ ես։

Կյանքի բերկրանք մաղթեմ ես զրկվածներին ամենուր,
Մանուկներին մաղթեմ ես երջանկություն անմարում,
Տարեցների առաջ թող բացվի ամեն բախտի դուռ,
Մաղթեմ բոլոր սրտերին տենչանքների կատարում։

Հզորություն մաղթեմ մեր հայրենիքին փառահեղ,
Ժողովրդին, որ իր վեհ ոգին տվեց մեր դարի,
Ժողովրդին, որի մեծ երգն է հնչում ամեն տեղ.
Խաղաղությո՛ւն աշխարհին, խաղաղությո՛ւն աշխարհին։

(Գ. Սարյան, «*Խաղաղություն աշխարհին*»)

2. Ըղձականի անցյալ ապառնին ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որի կատարումը անցյալում ցանկալի էր։

Օրինակ՝ Թող հրավիրեր, ես էլ վեր կենայի հյուր գնայի նրան։

Այս նախադասության մեջ հրավիրեր, վեր կենայի, գնայի *բայաձևերը դրված են ըղձական անցյալի ապառնիով։*

Դասերս շուտ սովորեի վերջացնեի, որ ընկերներիս հետ Սևան գնայի:

Այս նախադասության մեջ սովորեի, վերջացնեի, գնայի *բայաձևերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որի իրականացումը ցանկալի, բայց անհնար կամ քիչ հավանական է։*

Ըղձական անցյալի ապառնու վերջավորություններն են՝ ել *խոնարհման բայերի համար՝* -ի, -իր, -ր, -ինք, -իք, -ին։ ալ *խոնարհման բայերի համար՝* -այի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային։

Այս վերջավորությունները դրվում են ներկայի հիմքի վրա։

ել խոնարհում		ալ խոնարհում	
եզակի	*հոգնակի*	*եզակի*	*հոգնակի*
գրեի	*գրեինք*	*խաղայի*	*խաղայինք*
գրեիր	*գրեիք*	*խաղայիր*	*խաղայիք*
գրեր	*գրեին*	*խաղար*	*խաղային*

Ժխտականը կազմվում է չ նախամասնիկի միջոցով (չգրեի, չգրեինք, չխաղայի, չխաղայինք)։

Վարժություն 165։ Գտնել ըղձական անցյալ ապառնիով դրված բայերը։

Լինեի չոբան սարերում հեռու,
Գայիր անցնեիր վրանիս մոտով,
Իրար նայեինք անուշ կարոտով,
Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու։

Գնայիր աղբյուրն ու ետ դառնայիր,
Թեթև որպես վիթ, ելնեիր ձորից,
Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից
Ու վրանիս մոտ հանգստանայիր։

Ու վերջալույսին մի օր, օ՜, մի օր,
Մանուշակագույն սարերի լանջին
Բացվեինք իրար խոսքերով շնչին,
Բայց ոսխտը լիներ անխորտակ ու խոր։

Ու երբ գնայիր, գիշերս անքուն
Դառնար գալիքի մի թովիչ խոստում,
Ու վառվեր հոգիս պարզ ու իմաստուն
Իմ վրանի տակ սարերի գրկում։

(Վ. Տերյան)

Վարժություն 166: Փակագծում դրված բայերը օգտագործել ըղձական անցյալի ապառնի ժամանակով: Սազմել մյուս բայերի ըղձական անցյալ ապառնին:

(Թռչել) մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն
Ապասում էր որդուն
Անհանգիստ ու անքուն։

(Տեսնել) այն առուն,
Որ ամեն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում։

(Թեքվել) աղբյուրին,
Կարոտած պաղ ջրին,
Նրա զով համբյուրին
Ու թավիշ մամուռին։

(Լինել) հանդերում,
Ուր ծաղկունքն է բուրում,
Ուր մանուկ օրերում
Հովն էր ինձ համբուրում։

Ու հանդարտ, մեղմաբար
Հոտն (իջնել) սարից վար,
(Գրկել) ես մի գառ
Ու հոգիս (մանկանալ)...

Եվ հոգնած ու նկուն
Երբ (իջնել) իրիկուն,
Մի ծառի շվաքում
Աչքերիս (իջնել) քուն...

(Գ. Սարյան)

Պայմանական ապառնի և անցյալի ապառնի

1. Նա ինքը չգիտեր, թե երբ կվերադառնա, գուցե վաղը, մյուս օրը, գուցե դեռ երկար ժամանակ կմնա:

Այս նախադասության մեջ կվերադառնա, կմնա *բայաձևերը ցույց են տալիս այնպիսի մի գործողություն, որը կատարվելու է որևէ պայմանով կամ ենթադրաբար։ Դրանք դրված են պայմանական ապառնի ժամանակով։ Պայմանական ապառնին կազմվում է ըղձական ապառնուց* կ *եղանակիչի հավելման միջոցով։*

ըղձական ապառնի		պայմանական ապառնի	
եզակի	*հոգնակի*	*եզակի*	*հոգնակի*
գնամ	*գնանք*	*կգնամ*	*կգնանք*
գնաս	*գնաք*	*կգնաս*	*կգնաք*
գնա	*գնան*	*կգնա*	*կգնան*

Պայմանականի ժխտական ձևը կազմվում է եմ բայի ներկայի ժխտական ձևերի (չեմ, չես, չի, չենք, չեք, չեն) *և ժխտական դերբայի* (գնա) *համադրմամբ, ըստ որում օժանդակ բայի ժխտական ձևը դրվում է բայի սկզբից և գրվում է առանձին։*

Օրինակ՝	հաստատական	ժխտական
	կգնամ	*չեմ գնա*
	կգնաս	*չես գնա*
	կգնա	*չի գնա*

Պայմանական ապառնու ձևերը արևելահայերենում շատ հաճախ օգտագործվում են հաստատ կատարելիք գործողություն ցույց տալու համար։

Օրինակ՝ Մարդը կնվանի տիեզերքը։

2. Պայմանականի անցյալի ապառնին կազմվում է ըղձականի անցյալի ապառնու ձևի վրա կ եղանակիչի հավելման միջոցով։

ըղձականի անցյալի ապառնի	պայմանականի անցյալի ապառնի
երգեի	*կերգեի*
երգեիր	*կերգեիր*
երգեր	*կերգեր*
երգեինք	*կերգեինք*
երգեիք	*կերգեիք*
երգեին	*կերգեին*

Այս բայաձևը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը մի անցյալ ժամանակում ենթադրաբար, որոշ պայմանով կկատարվեր, բայց չի կատարվել մեկ այլ գործողություն տեղի չունենալու պատճառով։

Օրինակ՝ Անտառում ինչքան սունկ կլիներ, եթե անձրև գար (բայց քանի որ անձրև չի եկել, անտառում շատ սունկ չկա)։

Ժխտականը կազմվում է ժխտման դերբայի և եմ օժանդակ

բայի անցյալի ժխտական ձևերի (չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին) *համադրմամբ։*

հաստատական	ժխտական
կխաղայի	*չէի խաղա*
կխաղայիր	*չէիր խաղա*
կխաղար	*չէր խաղա*
կխաղայինք	*չէինք խաղա*
կխաղայիք	*չէիք խաղա*
կխաղային	*չէին խաղա*

Վարժություն 167: Գտնել պայմանական եղանակի բայաձևերը. կազմել նրանց ներկաները:

1. Ամեն մարդ, ընկե՛ր, ախ ունի սրտում.
Բայց նա կհասնի կռվում մեծ բախտի,
Ով արիությամբ իր հոգու խորքում
Իրեն սեփական վախը կհաղթի,
Մահը աշխարհում ճիշտ նման է շան,
Որքան կծկվես՝ վրադ կհաչի.
Բայց երբ համարձակ վռնդես նրան՝
Նա սարսափահար քեզնից կփախչի։

(Գ. Սարյան)

2. Դու կգաս ու կրկին հեքիաթով կդյութես,
Լուսերես կցրես մառախուղն իմ հոգու,
Ոսկեշող հայացքով և քնքուշ խոսքերով, որ գիտես միայն դու։
Կփարվես մեղմորեն, կփռես, կվառես անթառամ՝
Կուսական աշխարհիդ ծաղիկներն անծանոթ,
Կնստենք իրար մոտ, և հեռու կլինի առօրյան միաձայն ու աղոտ։
Սև թախիծն իմ սրտից, մութ խոհերն իմ հոգուց կգնան,
Լույսիդ դեմ կցրվեն ստվերները մռայլ,
Տառապանքը քեզ հետ՝ քաղցր հուշ և խոսքերդ խորհուրդ կդառնան, կհագնես ուրիշ փայլ։
Մթագին գիշերում, աշխարհում մթամած, խավարում,
Կվառենք չմեռնող, չմարող կրակը մեր հոգու,
Մեր ողջույնը սիրով կնետենք և՛ մարդկանց, և՛ երկրին, և՛ հեռուն ես ու դուն։

(Վ. Տերյան)

Վարժություն 168: Փակագծում դրված բայերը գործածել պայմանական եղանակով:

1. Պատկերացրեք, որ դուք գտնվում եք ինքնաթիռում, որը մեծ արագությամբ սլանում է երկնքում: Ներքևում ծանոթ վայրեր են: Հիմա դուք (թռչել) այն տան վրայով, որտեղ ապրում է ձեր բարեկամը: «Լավ (լինել) նրան ողջույն ուղարկեի»,— անցավ ձեր մտքով: Դուք արագորեն գրում եք մի քանի բառ հուշատետրի թերթի վրա, կապում նամակը քարին և սպասում, մինչև որ տունը գտնվի ճիշտ ձեր ներքևում: «Հիմա ես քարը (բաց թողնել) և այն (ընկնել) ուղիղ տան մոտ»,— մտածում եք դուք: Սակայն քարը բոլորովին էլ այնտեղ (չընկնել), չնայած այգին ու տունը գտնվում էին ճիշտ ձեր ներքևում, երբ դուք քարը բաց թողիք: Երբ քարը հասնի գետնին, նա (գտնվել) շատ ավելի առաջ, քան ձեր նշած տեղը (ըստ «Հ. Ֆ.»):

2. Մի բոպե պատկերացրեք, թե ինչ տեսք (ունենալ) երկիրը առանց ածխածնի: Չէ որ այդ (նշանակել), որ (չլինել) ոչ մի հատ կանաչ տերև, ո՛չ ծառ, ո՛չ խոտ: (չլինել) և կենդանիներ: Միայն մերկ ժայռերը ցցված (լինել) անկենդան ավազների մեջ և երկրի լուռ անապատներում: (Չլինել) ոչ ածուխ, ոչ նավթ: Չէր (լինել) ածխաթթու գազը և դրա հետևանքով երկրի կլիման (լինել) ավելի խիստ և ցուրտ: Ջրերը նույնպես (անկենդանանալ) («Հ. Գ.»):

Վարժություն 169: Վերածել արևելահայերենի:

1. Որչափ ուրախ կըլլայի, թե ձեր վաղվան լրագիրն առտուն տպեիք... Բայց վնաս չունի իրիկվան թող ըլլա, բավական է, որ անունս խոշոր գիրերով գրվի:

— Այդ մասին հանգիստ եղեք, վաղը իրիկուն անպատճառ կը ղրկիմ լրագիրն ընկալագրով: 2. Չես ըսեր, կնիկ, թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք... 3. Մանո՛ւկ աղա, Մանո՛ւկ աղա... — Ուզածիդ չափ պոռա, ալ ետ չեմ դառնար... 4. Ես ինչ ըսի քեզի... ամեն բան ինձի ձգե, ես կը հոգամ: 5. Երկու ամիս պիտի սպասեմ, որ մուսաս գա և ներշնչե ինձի, առանց մուսայի ոտանավոր չի գրվի: 6. Հրամանքնիդ նստեցեք, ես ալ կը նստիմ,— պատասխանեց հյուրն, նստելով իրեն ցույց տրված տեղը: 7. Եթե ձեզի գավաթ մը օղի տամ, կը տնկեք, ախորժակ կը բանա: 8. — Պարո՛ն, զքեզ երկու ժամ մտիկ ընելու համար երկու ոսկի կուզեմ. երկու ոսկիեն լումա մը պակաս եթե տաս, չեմ ընդունիր: 9.— Ի՞նչ կըսեք, ասկից ավելի օգտակար ինչ կա. եթե ձեր

բարեկամներեն մեկուն այցելություն մը տալ ուզեք և ժամանակ չունենաք, ձեր մեկ պատկերը կղրկեք, կը լմննա կերթա. եթե կարգված եք, ձեր ամուսնույն կը ղրկեք, որ ձեր բացակայության ատեն անոր վրա նայելով կարոտը կառնե. եթե ամուսնացած չեք, շատ աղջիկներ ձեր պատկերը կտեսնեն և ձեր ով ըլլալը կը հասկնան, որով ընկերություններու մեջ ձեր անունը կը խոսվի։ 10. ... Եթե անոնք չունենաս, քու վրադ աղեկ աչքով չեն նայիր։ (Հ. Պ.)։

Հարկադրական ապառնի և անցյալի ապառնի

1. Ամեն մի ուսանող պետք է ձգտի դառնալու լավ մասնագետ, պիտի ճշտությամբ կատարի իր պարտականությունները։

Այս նախադասության մեջ պետք է ձգտի, պիտի կատարի *բայաձևերը ցույց են տալիս խոսքի պահից հետո հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողություն։*

Դրանք դրված են հարկադրական ապառնի ժամանակով։

Հարկադրական ապառնին կազմվում է պիտի *կամ* պետք է *եղանակիչի և ըղձական եղանակի բայաձևերի հարադրմամբ։*

ել խոնարհում		ալ խոնարհում
ըղձական ապառնի		հարկադրական ապառնի
գրեմ	*պիտի գրեմ*	*պիտի խաղամ*
գրես	*պիտի գրես*	*պիտի խաղաս*
գրի	*պիտի գրի*	*պիտի խաղա*
գրենք	*պիտի գրենք*	*պիտի խաղանք*
գրեք	*պիտի գրեք*	*պիտի խաղաք*
գրեն	*պիտի գրեն*	*պիտի խաղան*

Ժխտականը կազմվում է չ մասնիկով, որը դրվում է պիտի (պետք է) *եղանակիչի վրա* (չպիտի գրեմ, չպիտի խաղամ, չպետք է գրեմ, չպետք է խաղամ)։

2. Երեկ Կարինեն պիտի գար և գիրք պետք է բերեր ինձ համար։

Այս նախադասության մեջ պիտի գար, պետք է բերեր *բայաձևերը ցույց են տալիս խոսողի համոզմամբ մի անցյալի ժամանակակետում անհրաժեշտորեն, հարկադրաբար կատարելի գործողություն։*

Դրանք դրված են հարկադրականի անցյալի ապառնի ժամանակով։ Հարկադրական անցյալի ապառնին կազմվում է պիտի

(պետք է) հարկադրական եղանակիչի և ըղձական անցյալի ապառնու համադրմամբ։

պիտի (պետք է)	գրեի	պիտի (պետք է)	խաղայի
»	գրեիր	»	խաղայիր
»	գրեր	»	խաղար
»	գրեինք	»	խաղայինք
»	գրեիք	»	խաղայիք
»	գրեին	»	խաղային

Ժխտական կազմելու համար չ մասնիկը դրվում է եղանակիչի վրա սկզբից (չպիտի, չպետք է գրեի. չպիտի, չպետք է խաղայի և այլն)։

Վարժություն 170: Վերածել արևելահայերենի:

1. ... Բեռնակիր մը կանչեց։ Հինգ բեռնակիրներ ներկայացան իրեն։ Տարակույս չկար, որ եթե հինգ կանչեր, քսան և հինգ պիտի ունենար յուր առջև... 2.—Ո՞ր կողմը պիտի երթաք, աղա՛... — Բերա, Ծաղկի փողոց, թիվ երկու պիտի երթամ... 3.— Եթե հանգիստ չըլլայիք, վաղվան լրագրույս մեջ պիտի գրեի և ընկերության ուշադրությունը պիտի հրավիրեի... 4. ... Ես լեզվագետ պիտի ըսեմ ձեզի համար և ձեր վրայոք գովեստով պիտի խոսիմ։ 5. ...Դուք բաժանորդ պիտի ըլլաք իմ լրագրույս՝ մեկ ու կես ոսկի վճարելով ինձի։ 6. Վաղը լրագրի մեջ իմ անունս տեսնողները անշուշտ իրար պիտի անցնին և հետաքրքրություն պիտի ունենան ինձի հետ տեսնվելու. վաղը պետք է որ կիրակի օրվան հագուստներս հագնիմ... Ամեն մարդ պիտի իմանա վաղը, որ մեծ մարդ մը եկած է Կ. Պոլիս ... Յուրաքանչյուր կնիկ պիտի ըսե իր էրկանը. «Մեր աղջիկը սա Աբիսողոմ աղային տանք»։ Էրիկն ալ պիտի պատասխանե կնկանը. «Նայինք՝ Աբիսողոմ աղան մեր աղջիկը կառնե՞, անիկա հարուստ տեղեն մը աղջիկ առնել կուզե հարկավ»։ Այս պատասխանին վրա էրկան և կնկան մեջ վեճ մը պիտի ծագի և իրարու գլուխ պիտի պատռեն... 7. Ահա հյուրերնիս ա՛յսօր եկած է և ժամե մը հոս պիտի գա։ 8. ... Կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան։ 9. Բան մը պիտի ըսեմ։ 10.— Կերակուրդ պատրաստվելու վրա է, հիմա պիտի բերեմ... 11. Ատենաբանը կայնած տեղը այնպես կը դողար, որ Աբիսողոմ աղայի սիրտը կը հատներ, թե կազը գետինը պիտի իյնար (Հ. Պ.)։

Հրամայականի կազմությունը

Բայի հրամայական ձևերը ունեն միայն երկրորդ դեմք։

Օրինակ՝ Գրի՛ր, խաղա՛, տե՛ս, փախե՛ք, բռնեցե՛ք:

Արևելահայերենում հրամայականը ունի մի քանի վերջավորություններ։ Եվ խոնարհման պարզ (ածանց չունեցող) բայերի հրամայականը եզակիում կազմվում է ներկայի հիմքով և -իր վերջավորությամբ,

Օրինակ Վազել-վազի՛ր, խոսել-խոսի՛ր, նետել-նետի՛ր:

Այ խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականը կազմվում է ներկայի հիմքով և ա վերջավորությամբ։ Օրինակ՝ խաղալ-խաղա՛, զգալ-զգա՛, լողալ-լողա՛:

-ն, -չ, -են և -ան ածանց ունեցող բայերի եզակի հրամայականը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից -իր վերջավորության հավելմամբ։

Օրինակ՝ հասնել-հասի՛ր, փախչել-փախի՛ր, հագենալ-հագեցի՛ր, խոստանալ-խոստացի՛ր:

-եցն, -ացն, -ցն ածանց ունեցող բայերի հրամայականը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից ու վերջավորության հավելմամբ։

Օրինակ՝ մոտեցնել-մոտեցրո՛ւ, խաղացնել-խաղացրո՛ւ, հագցնել-հագցրո՛ւ:

Նշված բոլոր բայերի հոգնակին կազմվում է անցյալի հիմքից -եք վերջավորության հավելմամբ։

Օրինակ՝ լողալ-լողացե՛ք, հասնել-հասե՛ք, խոստանալ-խոստացե՛ք, պարացնել-պարացրե՛ք:

Հրամայական բայերի ժխտական ձևերը կազմվում են մի արգելական մասնիկի միջոցով, որը դրվում է հրամայականի հաստատական ձևերի վրա։

Օրինակ՝ վազի՛ր-մի՛ վազիր, վազե՛ք-մի՛ վազեք, լողա՛-մի՛ լողա, լողացե՛ք-մի՛ լողացեք, հասի՛ր-մի՛ հասիր, հասե՛ք-մի՛ հասեք, խոստացի՛ր-մի՛ խոստացիր, խոստացե՛ք-մի՛ խոստացեք, պարացրո՛ւ-մի՛ պարացրու:

Մանրություն.—*Բացի նկարագրված ժամանակներից արևելահայերենը ունի նաև այլ ժամանակներ, որոնք կազմվում են -իս վերջավորությամբ անկատար դերբայի (խաղալիս, երգելիս), ապառնի (խաղալու, երգելու) ու հարակատար (երգած, խաղացած)* դերբայների և լինել *բայի խոնարհված ձևերի համադրմամբ։*

Օրինակ՝ խաղալիս եղա, խաղալիս պիտի լինեմ, խաղալիս կլինեմ, երգելու կլինեմ, երգած եմ եղել, խաղացած էի լինում *և այլն։*

Սրանք այսպես կոչված երկրորդական բաղադրյալ ժամանակներ են:

Վարժություն 171: Գտնել հրամայական բայաձևերը, կազմել մնացած բայերի հրամայականը:

1. Է՜յ, հսկեցե՛ք, ի՞նչ եք քնում,
Քաջ զինվորներ Թաթուլի.
Ո՞վ է, տեսե՛ք, տանջվում մթնում,
Քուն չի աչքին մոտ գալի։

Վե՜ր կացեք, վե՜ր, ամբողջ գիշեր
Մարդ է գնում ու գալի.
Հե՜յ, զարթնեցե՛ք, առյուծ քաջեր,
Պահապաններ Թաթուլի։

Դա՜վ... դա՛վ... ելե՛ք... կոչնա՜կ... պահնա՜կ...
Ձե՛նք առեք շուտ, ձի՛ հեծեք, ձի՛...
Ճոնչում են, դղրդում են
Դարբասները երկաթի... (Հ. Թ.)։

2. Հոկտեմբերին

Հեռացի՛ր աշուն, համբորեն լացող,
Ողջույն քեզ, մրրիկ ահեղաշաչյուն,
Ողջույն քեզ, կովի առաջին հնչյուն,
Լույսի պես կարող խոսքի պես խոցող...
Գրկի՛ր իմ հոգին մարտի ցնծությամբ,
Բորբոքի՛ր սիրտս, ազատության երգ,
Շողա՛ մռայլում, ըղձալի եզերք,
Որոտա՛, շաչի՛ր, փոթորկավետ ամպ... (Վ. Տերյան)

3. Ջարդեցե՛ք անդուլ, անգութ, անխնա,
Ջնջեցե՛ք աշխարհն ապական ու հին,
Թող քարը քարի վրա չմնա,
Ողջը մատնեցե՛ք հրին ու մահին։
Եվ կործանեցե՛ք բանտերը վերջին,
Փշրեցե՛ք վերջին շղթաները պիրկ,
Որ կաշկանդել են մեր միտքն ու հոգին։
Որպես փոթորիկ, իջե՛ք ավերիչ
Եվ խորտակեցե՛ք աշխարհն այս զազիր,
Փոշի՛ դարձրեք այստեղ ամեն ինչ։ (Վ. Տերյան)

Վարժություն 172: Վերածել արևելահայերենի:

I

— Կաղաչեմ քաղցրությամբ վարվե հետս։

— Ի՞նչ ըրած ունիմ քեզի։

— Զեզի պիտի աղաչենք, որ...

— Ի՞նչ, շո՛ւտ ըսե...

— Մի պոռար երեսս ի վար, հոգի՛դ սիրես, հիմա կսկսիմ լալ... Նորեն սկսավ լալ գրագիրը։

— Տե՛ր աստված, դուն համբերություն տուր ինձի,—ըսավ Աբիսողոմ աղան մեկուսի։

— Խնդիրքս սա էր, որ կուզեի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

— Գնա տպել տուր, քո ձեռքեդ բռնող կա՞...

— Կը խնդրեմ, սիրտս արդեն խոցված է։ Դուք ալ նոր վերք մի բանաք հոս։

— Ինչո՞ւ վերք պիտի բանամ եղեր, գնա՛ բանդ, եղբայր, փորձանք եղա՞ր գլխուս։

— Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է, ամենաթեթև խոսքե մը կը վիրավորվի։ Այս նյութին վրա ոտանավոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ ըրեք։

— Ոտանավոր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Կաղաչեմ ոտանավորիս հետ խստությամբ մի վարվիք... Կաղաչեմ, ոտանավորիս համար գեշ մի զրուցեք... Կը խնդրեմ, թույլ տվեք ինձ կարդալ զայն անգամ մը... (Հ. Պ.)։

II

1. Տիգրան Էֆենտի շատ ճշտություն կը պահե յուր պաշտոնին մեջ. օրինակի համար, եթե պատիվ ունենաս օր մը իրեն ներկայանալու... նախ և առաջ քեզ պիտի ըսե.

Նախ՝ սա կողմը անցիր։

Երկրորդ՝ Շիտակ կայնե։

Երրորդ՝ Գլուխդ վեր բռնե,

Չորրորդ՝ Ձեռքդ վար առ (Հ. Պ.)։

2. — Խոսե։

— Եթե քիչ մը համարձակ խոսելու ըլլամ՝ չես վռնտեր ա։

— Մի վախնար (Հ. Պ.)։

3. — Վարպե՛տ, Կիրակո՛ս, Մարգա՛ր... ջո՞ւր բերեք, ջո՞ւր...

— Ի՞նչ կա, կրա՞կ կա։

— Չէ՛, չէ՛, հանրմը մարեցավ, շուտ ըրեք, վարպե՛տ, դուն ջուրը բեր, Կիրակո՛ս, դուն բժշկին վազե, Մարգա՛ր, դուն ալ դեղագործին գնա... Արթնացա՞ր, անուշիկս ... Ես կատակ ըսի, խենթ եմ, որ շրջազգեստիդ ստակը Նիկոմիդիայի աղքատներուն տամ...

Դուք ալ, Նիկոմիդիացի եղբարք, քիչ մը ակռանիդ սեղմեցեք, որ Պոլսո հանրմները ձեր պատճառով չմարին (Հ. Պ.)։

4. Մին ինձի կըսե.

— Գնա սա մարդուն ըսե, որ հոս գա։

Հաղիվ թե կերթամ ըսելու՝ մյուսը ետևես կը կանչե ու կը հրամայե.

— Գնա, ըսե սա մարդուն, որ հոս չգա։

Հիմա դուն իմ տեղս եղիր ու՝ գործ տես նայիմ։

Ի՞նչ ընեմ, ես ալ երկուքին ալ խոսքը հավատարմությամբ տեղը տանելու համար կերթամ այդ մարդուն կըսեմ.

— Էֆենտիմ, նախ եկո՛ւր, հետո մի՛ գար ու նոր հրահանգի սպասե (Հ. Պ.)։

Վարժություն 173: Կազմել հետևյալ բայերի եզակի և հոգնակի հրամայականը:

Թռչել, նետվել, պայթել, շաչել, ծլել, ծաղկել, զարդարել, նարկաչել, հոսել, եռալ, ջրել, խաղալ, իջնել, մոտենալ, սովորեցնել, նստել, կարդալ, մտնել, հասկացնել, խոսել, գալ, փախչել, թոցնել, իմանալ, խաղացնել, մոտենալ։

Վարժություն 174: Գտնել բայերը և որոշել նրանց ժամանակը:

I

— Մի անգամ իմ բարեկամ մի որսորդ մեր հանդի անտառում սարերից մի եղնիկ նվեր բերեց երեխաներիս համար։

Այսպես սկսեց ընկերս աշնանային մի երեկո, երբ նստած միասին նրա պատշգամբում, հիացած նայում էինք հեքիաթական վերջալույսով վառվուն սարերին, որոնց վրա մակաղած հոտերի նման մեղմօրոր հանգչում էին ոսկեգեղմ անտառները։

— Այդ մի մատաղ ու խարտյաշ եղնիկ էր, խորունկ, սև ու ջինջ աչքերով, որ ծածկվում էին երկայն, նուրբ թարթիչների տակ։

Երբ բռնում էի նրան, քնքուշ մարմինը կուչ էր գալիս գրկիս մեջ, և սիրտը վախից թրթռում էր այնպես արագ, թիթեռի թևերի նման։

Կամաց-կամաց մեր վրա սովորեց նա։ Էլ չէր փախչում, չէր վախենում մեզնից. մանավանդ շատ մտերմացել էր երեխաներիս հետ, նրանց հետ միասին վազվզում էր պարտեզում, նրանց հետ ճաշում էր, նրանց հետ քնում։

Մի բան ինձ շատ էր զարմացնում։ Եղնիկը թեև այնպես ընտելացել էր մեզ, սովորել էր մեր տանն ու դռանը, բայց մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանում էր այս պատշգամբը և ուշագրավ, լռիկ նայում էր հեռու անտառներով փաթաթված սարերին. ականջները լարած խորասույզ լսում էր անտառների խուլ ու անդուլ շառաչը, որ երբեմն ուժեղանում էր. նա այնպես անթարթ և այնպես ինքնամոռաց էր, որ երբ պատահում էր բարձրանում էի պատշգամբը, ինձ բավական միջոց չէր նկատում, և երբ հանկարծ ուշքի էր գալիս, նետի պես ծլկվում էր մոտիցս...

Արդյոք գիտե՞ր նա, որ ինքը այդ ղողանջուն անտառների ազատ երեխան է եղել, որ իր մայրը այնտեղ է կաթ տվել իրեն, որ այնտեղ է իր հայրը եղջյուրները խփել կաղնիներին։ Արդյոք գիտե՞ր, որ այդ խուլ շառաչը անուշ-անուշ օրորել է իրեն առաջին անգամ, և ո՞վ գիտե, գուցե երազներ է բերել իրեն, սիրուն երազներ...

Խեղճ եղնիկ... Կարոտ իր սիրած գուրգուրող անտառներից ու վանգակ աղբյուրներից, իր խարտյաշ մորից և շնկշնկան հովերի հետ վազող ընկերներից՝ հիմա տանջվում, տառապում է մեզ մոտ, մտածում էի ես։ Եվ այնպես սրտանց ցավակցում էի նրան ... Չէ՞ որ նա էլ է մեզ պես մտածող և զգայուն սիրտ ունի...

Ես շատ էի հարգում նրան, խնդրեմ չծիծաղես վրաս, այո՛, այնքան, որ երբ նա բարձրանում էր պատշգամբը, հեռացնում էի երեխաներիս, և թողնում էինք նրան մենակ իր ապրումների հետ...

Երբ գրկում էի նրան, այդ նազելի էակին և նայում էի լեռնային աղբյուրների նման վճիտ աչուկների մեջ՝ տեսնում էի այնտեղ մի թախծալի երազուն կարոտ...

Մի գիշեր, մի քամի գիշեր, սարերից անսանձ փչում էր քամին, դուռն ու պատուհաններն ծեծում ու ծեծկում։ Պարզ լսվում էր, որ այնտեղ, անտառում դարավոր կաղնիներն ու վայրի ընկույզները ճակատում էին հողմի դեմ, աղմկում և գոռում։ Եվ քամին բերում էր անընդհատ՝ անտառի այդ լիակուրծք խշշոցն ու

մռունչը, ու թվում էր, թե հենց մեր դռան առջևն է աղմկահույզ, հողմածեծ անտառը։

Երեխաներս վախից կուչ էին եկել, մինչդեռ եղնիկը դողում էր մի խենթ սարսուռով։ Աչքերը կայծակին էին տալիս։ Անթարթ, ամբողջովին լսելիք դառած՝ ականջ էր դնում նա անտառի հուժկու շառաչին, որ խոսում էր նրա հետ մայրենի լեզվով։

«Անտառը կանչում էր նրան, ընկերների ազատ վազքն է տեսնում նա մթին թավուտների հացառատ ժայռերն ի վեր»,— մտածում էի ես։

Մի փոքր հետո ավելի սաստկացավ քամին՝ փոթորիկ դառնալու չափ. մեկ էլ աղմուկով բացվեցին լուսամուտի փեղկերը, և մի ուժգին շառաչ միանգամից ներս խուժեց։ Եղնիկը հանկարծակի մի ոստումով ցատկեց լուսամուտի գոգը՝ աչքերը սուզելով շառաչուն խավարի մեջ։ Ես իսկույն վրա վազեցի բռնելու նրան, սակայն նա մի ակնթարթի մեջ թռավ լուսամուտից պարտեզը և ծածկվեց խավարի մեջ։

Դե՜հ, հիմա գնա ու գտիր նրան իր հայրենի անծայր անտառներում...

(Ավ. Իսահակյան, «Եղնիկը»)

II

Որևէ ընկերոջ հետ փակվեցեք մի մեծ նավի տախտակամածի տակ գտնվող դահլիճում և ներս թողեք այնտեղ ճանճեր, թիթեռներ և ուրիշ նման փոքրիկ թռչող կենդանիներ։ Հենց այդտեղ էլ թող լինի ջրով լի մի մեծ անոթ՝ մեջը ձկներ։ Այդ նույն դահլիճում առաստաղից կախեցեք մի գավաթ, որի միջից ջուրը կաթիլ առ կաթիլ դուրս հոսի և թափվի գավաթի տակ գտնվող մի այլ անոթի մեջ։ Քանի դեռ նավը կանգնած է իր տեղում, դիտեցեք, թե ինչպես այդ թռչող կենդանիները հավասար արագությամբ կթռչեն սենյակի բոլոր կողմերը. ձկները կշարժվեն, անտարբեր լողալով դեպի բոլոր կողմերը. ընկնող կաթիլները բոլորն էլ կընկնեն գավաթի տակ դրված անոթի մեջ, և դուք, ձեր ընկերոջը որևէ իր նետելիս, ստիպված չեք լինի դեպի մի կողմը ավելի մեծ ուժով նետելու, քան դեպի մյուսը, եթե միայն հեռավորությունները միատեսակ են, և ցատկելով, դուք բոլոր ուղղություններով էլ հավասար հեռավորություններ կանցնեք։ Այդ բոլորը որքան հնարավոր է ուշադիր նկատեցեք (թեև ոչ մի կասկած չկա, որ այդպես էլ կլինի, քանի նավը կանգնած է) և ստիպեցեք նավը շարժման մեջ դնել ցանկացած արագությամբ։ Եվ ահա (եթե միայն շարժումը հավասարաչափ է, այլ ոչ տատանողական՝ դեպի

այս կամ այն կողմ) դուք չեք նկատի ընչին փոփոխություն անգամ բոլոր վերը նշված երևույթների մեջ և դրանցից ոչ մեկի հիման վրա ի վիճակի չեք լինի դատելու՝ շարժվում է արդյոք նավը, թե կանգնած է իր տեղում։ (Գալիլեո Գալիլեյի «Երկխոսություն աշխարհի երկու սիստեմների մասին» գրքից)։

Կրկնակի ժխտում

Արևելահայերենում բայերի ժխտական ձևերի հետ նույն նախադասության մեջ կարող են օգտագործվեն ժխտական դերանուններ և ժխտական եղանակավորող բառեր (կրկնակի ժխտում)։

Օրինակ՝ Ոչ nf չի *ուշանում դասից։ Նրա ասածից* ոչինչ չհասկացա։ *Անձրևից հողը* ամենևին չթրջվեց։ *Պետրոսը Երևանը* բնավ չէր տեսել։

Վարժություն 175։ Վերածել արևելահայերենի։

1. Այն օրը ոչ ոք երեսը նայեցավ (Գ. Զ.)։ 2. Ոչ ոք կար փողոցներուն մեջ (Գ. Զ.)։ 3. Մինչև Փենտիք ոչինչ կը հետաքրքրի զիս (Գ. Զ.)։ 4. Երրորդին ոչ ոք գիտե ուր ըլլալը (Գ. Զ.)։ 5. Իրենց մեջ ոչ ոք այդ տեսակ գաղափար մը կարող եղած էր հղանալ մինչև այն ատեն (Օտ.)։ 6. Ոչ ոք հոն էր այդ ժամուն (Օտ.)։ 7. Դրան հանդեպ բացվող ընդարձակ սրահին մեջ ոչ ոք կար (Օտ.)։ 8. Ոչ ոք կը համարձակվեր բերանը բանալ և խոսք մը ըսել (Օտ.)։

Անկանոն բայերի խոնարհումը

Մի շարք բայեր շեղվում են ժամանակների կազմության ընդհանուր կանոններից. դրանք անկանոն բայեր են։

Արևելահայերենում անկանոն են գալ, լալ, տալ, ասել, առնել, անել, բերել, բանալ, դառնալ, դնել, ելնել, զարկել, թողնել, լինել, լվանալ, տեսնել, տանել *բայերը։*

Ստորև տրվում են այդ բայերի անկանոն ձևերը։

Գալ

Անկատար դերբայ՝ գալիս, *վաղակատար՝* եկել, *հարակատար՝* եկած, *ենթակայական՝* եկող։

Սահմանական անցյալ կատարյալ՝ եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկան։

Հրամայական՝ ե՛կ, եկե՛ք, մի՛ գա, մի՛ գաք (մի՛ եկ, մի՛ եկեք)։

Եզակի թվի համար գործածական է նաև ժողովրդական արի՛ *ձևը։*

Լալ

Անկատար դերբայ՝ լալիս, *վաղակատար՝* լացել, *հարակատար՝* լացած, *ենթակայական՝* լացող:

Սահմանական անցյալ կատարյալ՝ լացի, լացիր, լացեց, լացինք, լացիք, լացին:

Տարածված է նաև՝ լացեցի, լացեցիր, լացեց, լացեցինք, լացեցիք, լացեցին:

Հրամայական՝ լա՛ց, լացե՛ք, մի՛ լար, մի՛ լաք, *նաև՝* մի՛ լացեք: Մի՝ լար *ձևը այժմ ավելի գրքային է համարվում. ժողովրդական է* մի՛ լա:

Լալ *բառի խոնարհված ձևերի փոխարեն ավելի գործածական են* լաց լինել *բայի ձևերը* (լաց եմ լինում, լաց եղա *և այլն)։*

Տալ *(կրավորական՝* տրվել)

Անկատար դերբայ՝ տալիս, *վաղակատար՝* տվել, *հարակատար՝* տված, *ենթակայական՝* տվող:

Անցյալ կատարյալ՝ տվեցի, տվեցիր, տվեց, տվեցինք, տվեցիք, տվեցին:

Հրամայական՝ տո՛ւր, տվե՛ք, մի՛ տուր, մի՛ տվեք:

Անցյալ կատարյալ ժամանակի համար գրականության մեջ տարածված են նաև տվի, տվիր, տվեց, տվինք, տվիք, տվին *ձևերը, որոնք բարբառային երանգ ունեն։*

Ասել

Անցյալ կատարյալ՝ ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին:

Հրամայական՝ ասա՛, ասացե՛ք *(նաև՝* ասե՛ք), մի՛ ասա, մի՛ ասեք:

Ոչ գրական են՝ ասի, ասիր, ասինք, ասիք, ասին *ձևերը։*

Առնել

Հրամայական՝ ա՛ռ, առե՛ք, մի՛ առնիր, մի՛ առնեք *(նաև՝* մի՛ առ, մի՛ առեք):

Անել *(կրավորական* արվել)

Վաղակատար դերբայ՝ արել, *հարակատար՝* արած, *ենթակայական՝* անող:

Անցյալ կատարյալ՝ արեցի, արեցիր, արեց, արեցինք, արեցիք, արեցին:

Հրամայական՝ արա՛, արե՛ք, մի՛ անիր, մի՛ անեք:

Գործածվում են նաև՝ արի, արիր, արեց *(արավ),* արինք, արիք, արին, մի՛ արա, մի՛ արեք *ձևերը։*

Բերել

Անցյալ կատարյալ՝ բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, բերեցիք, բերեցին: *Հրամայական՝* բե՛ր, բերե՛ք, մի՛ բեր, մի՛ բերեք:

Գործածական են նաև բերի, բերիր, բերեց, բերինք, բերիք, բերին *ձևերը։*

Բանալ *(կրավորական՝* բացվել)

Վաղակատար դերբայ՝ բացել, *հարակատար՝* բացած, *ենթակայական՝* բացող: *Անցյալ կատարյալ՝* բացի, բացիր, բացեց, բացինք, բացիք, բացին: *Հրամայական՝* բա՛ց, բացե՛ք, մի՛ բանա, մի՛ բանաք *(նաև՝* մի՛ բաց, մի՛ բացեք): *Խոնարհված ձևերը հաճախ շփոթվում են* բացել *բայի ձևերի հետ* (բացեցի, բացեցիր...)։

Դառնալ

Վաղակատար դերբայ՝ դարձել, *հարակատար դերբայ՝* դարձած, *ենթակայական՝* դարձող:

Անցյալ կատարյալ՝ դարձա, դարձար, դարձավ, դարձանք, դարձաք, դարձան:

Հրամայական՝ դարձի՛ր, դարձե՛ք, մի՛ դառնա, մի՛ դառնաք *(նաև՝* մի՛ դարձիր, մի դարձեք):

Գործածական են նաև՝ դառա, դառար, դառավ, դառանք, դառաք, դառան, դարի՛ր, դարե՛ք, մի դարեք *ձևերը։*

Դնել *(կրավորական՝* դրվել)

Վաղակատար դերբայ՝ դրել, *հարկադրական՝* դրած:

Անցյալ կատարյալ՝ դրեցի, դրեցիր, դրեց, դրեցինք, դրեցիք, դրեցին:

Հրամայական՝ դի՛ր, դրե՛ք, մի՛ դնիր, մի՛ դնեք *(նաև՝* մի՛ դիր, մի՛ դրեք):

Անցյալ կատարյալի համար գործածական են նաև դրի, դրիր, դրեց, դրինք, դրիք, դրին *ձևերը։*

Ելնել

Հրամայական՝ ե՛լ, ելե՛ք, մի՛ ելնիր, մի՛ ելնեք:

Գործածական են նաև ելի՛ր, մի՛ ելիր *ձևերը։*

Զարկել

Անցյալ կատարյալ՝ զարկեցի, զարկեցիր, զարկեց, զարկեցինք, զարկեցիք, զարկեցին:

Գործածական են նաև՝ զարկի, զարկիր, զարկինք, զարկիք, զարկին *ձևերը։*

Հրամայական՝ զա՛րկ, զարկեցե՛ք, զարկի՛ր, զարկեցե՛ք, մի՛ զարկիր, մի՛ զարկ, մի՛ զարկեք:

Թողնել *(կրավորական՝* թողնվել)

Անցյալ կատարյալ՝ թողեցի, թողեցիր, թողեց, թողեցինք, թողեցիք, թողեցին:

Գործածական են նաև՝ թողի, թողիր, թողինք, թողիք, թողին:

Հրամայական՝ թո՛ղ, թողե՛ք, մի՛ թող, մի՛ թողեք *(նաև՝* մի՛ թողնիր, մի՛ թողնեք):

Լինել

Անցյալ կատարյալ՝ եղա, եղար, եղավ, եղանք, եղաք, եղան:

Հրամայական՝ եղի՛ր, եղե՛ք, մի՛ լինիր, մի՛ լինեք *(նաև՝* մի՛ եղիր, մի՛ եղեք):

Լվանալ

Անցյալ կատարյալ՝ լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, լվացին:

Հրամայական՝ լվա՛, լվացե՛ք, մի՛ լվանա, մի՛ լվանաք *(նաև՝* մի՛ լվա, մի՛ լվացեք):

Տանել *(կրավորական՝* տարվել)

Վաղակատար դերբայ՝ տարել, *հարակատար՝* տարած: *Անցյալ կատարյալ՝* տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան:

Հրամայական՝ տա՛ր, տարե՛ք, մի՛ տանիր *(նաև՝* մի՛ տար), մի՛ տանեք:

Տեսնել

Հրամայական՝ տես՛, տեսե՛ք, մի՛ տեսնիր, մի՛ տեսնեք *(նաև՝* մի՛ տես, մի՛ տեսեք):

ՎԵՐԱՑԵԼ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ

Փունջին անկողինը

1. Փունջին ուրբաթ ավուր թերթին մեջ կը կարդանք, որ մարդուն մեկը անկողին մ'է հնարեր։ Այս անկողինը իրիկվընե կը հարդարես եղեր և արթննալ ուզած ժամուդ՝ քեզի վեր վեր նետե-

լով՝ կարթնցնե եղեր, և մինչև որ չելնես նե՝ հանգիստ չկենար եզեր։

Ատիկա նոր գյուտ մը չէ, ասանկ անկողիններ մայրաքաղաքիս մեջ շատ կը գտնվին, և որոնք ոչ թե միայն ուզած ժամանակդ, այլ չուզած ժամանակդ ալ քեզ կը ցատկեցնեն և թող չեն տալ, որ քնանաս։

Ասոնց մեկ աղեկ տեսակն ալ կա, որ ամենևին չքնացներ. այս տեսակ անկողիններուն մեջ պառկողները հետևյալներն են.

...Լրագիրնին դադրած և չդադրած խմբագիրներ։

Ամսականնին չառնող վարժապետներ։ Խոսքերնին չքալեցնող երեսփոխաններ։

Իրենց վիճակեն հեռու գտնվող առաջնորդներ։

Ի նպաստ իրենց տրված ներկայացումներեն վնասվող դերասաններ։

....Մնդուկին տակեն ծակած թաղականներ։

Թրամվեյ բանող փողոցները գտնվող տներուն մեջ նստողներ։

(Հ. Պ.)

2. Իր բոլոր ջանքերին հակառակ, իմ սենյակս միայն չկրցավ կարգի կանոնի բերել. օրը տասն անգամ կը շտկեր ու տասն անգամ կ'ավշտկեի իր բոլոր տանտիկին խնամքին արդյունքը. ըզգեստներս հոս կը նետեի ու ճերմակեղեններս հոն, գիրքերս ցիր ու ցան բազմոցին վրա կամ գետինը անկյուն մը ձգված. և այս բոլորը հարյուր անգամ իր տեղը կը դրվեր, ժամ մը վերջը առջի վիճակին վերադառնալու համար։ Մրցում մը կար կարծես իր անսպառ հոգածությանը ու իմ անկարգությանս մեջ։ Չէր գանգատեր, եթե երբեք իր լռիկ մնջիկ անօգուտ բազմապատկությունը գանգատ մը չէր ինքնին իմ տված նեղությանս համար, ալ ավելի կը համառեր հիմա իր համբերատարությամբ ամչցնելով զիս...

(Զոհրապ, «Թեֆարիկ»)

3. Գիշեր էր, նոյեմբերի տրտում ու խոնավ գիշեր, որին մթությանը մեջ ընկղմած էր Փերայի մեծ փողոցը իր քարաշեն ու բազմահարկ ապարանքներովը։ Փոշիի պես բարակ ու ասեղի պես սուր անձրև մը կուգար ու կը լվար ամայի ու թափուր քարահատակը։ ....Պահականոցին դեմ երկու կառապան՝ հապաղած անցորդ մը գտնելե հուսաբեկ՝ ցուրտեն պատսպարվելու համար

իրենց կառքին մեջ կը մրափեին։ Մարդ չկար, ու այդ աղմկալից փողոցի ժխորեն ուրիշ բան չէր մնացեր, բայց եթե առջի իրիկվընե ի վեր տեղացող անձրևին անընդհատ ձայնը իր հուսահատական միօրինակությամբ։ Հեռվե հեռու, ուղիղ ու լայն ճամփան բոլոր երկայնությամբ, մութին մեջ կը տեսնվեր շարք մը կարմիր ու արյունագույն կետերու, որոնք կազերուն՝ տամուկ ու դողդոջուն լույսերն էին։

....Զբոսավայրերը շատոնց գոցված էին, անոնց տեղ, հոս՝ մսավաճառի, հոն՝ կաթնավաճառի խանութ մը իր դուռը կը բանար. և մութուն ելլելու վարժվող այս խանութպաններու աշկերտները՝ դեռ նոր արթնցած, կես քուն, կես արթուն, կանթեղի լույսով գիշերեն կ'սկսեին իրենց օրական աշխատությունը։

(Զոհրապ, «Այրին»)

4. Զայն ձուն չկար դեռ, ու գիշերապահը 12 կը զարներ փողոցին հնչուն մայթին վրա։ Պատի մը տակ, մարդը մը՝ անշուշտ խաղատան մը մեջ ունեցածը չունեցածը կորսնցնելե ետքը, կրծկրտած էր լուսանալուն սպասելով, պառկելու տեղ մը գտնելե հուսակտուր, վասնզի այս հյուրընկալ փողոցը ստակ չունեցողներու համար չէ։ Ասդին անդին քուրջեր հավաքող մարդիկ, լապտեր մը ձեռքերնին, լռիկ ու գլխահակ, իրենց ուսի կողովը կը լեցնեին։

Բայց հետզհետե մութը իր խստությունը կը կորսնցներ։ ....Վաճառատուներուն մեջ ձայներ կը լսվեին, ու քիչ-քիչ անցորդներ երևան կելլեին փողոցին մեջ։ Բանջարեղեններով ու կաթի ամաններով բեռնավորված ձիեր հանդարտյալ կու գային, կ'անցնեին վիզերնուն կապված զանգակներուն ձայներովը արթնցնելով քարուկիր շենքերուն արձագանքը։

Հիմա ա՛լ լուսնալուն մոտ էր, ու Փերայի տունները կը ճըշտվեին ստվերամած հորիզոնին վրա։ Զայները երթալով կը շատնային, խանութներու երկաթե փեղկերը կը շարժեին. կանուխ ելլող սպասավորներ, պահապաններ, փեղկին մեջ բացված դռնակեն դուրս կ'ելլեին ու վաճառատուներուն առջևի սալաքարերը կը մաքրեին խանութին ներսը ավելելե վերջը, ...վաճառողները պոռալով կ'սկսեին իրենց առտվան առուտուրը, այդ ծառաներուն, բեռնակիրներուն ու պահապաններուն բերելով ածան գինով նախաճաշ մը. «բարի լույս»-եր կը փոխանակվեին դրացի մարդոց մեջ։

(Գ. Զոհրապ, «Այրին»)

5. Պ. Դուրյան*

ԼՃԱԿ

Ինչու՞ ապշած ես, Լրճակ,
Ու չեն խայտար քու ալյակք,
Մի՞թե հայլվուդ մեջ անձկավ
Գեղուհի՞ մը նայեցավ։

Եվ կամ մի՞թե կզմայլին
Ալյակքդ երկնի կապույտին,
Եվ այն ամպոց լուսափթիթ,
Որք նմանին փրփուրիդ։

Մելամաղձոտ Լրճակ իմ
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պես ես ալ
Գրավիչ, լռել ու խոկալ։

Որքան ունիս դու ալի,
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր,
Սիրտս այնքան խոց ունի բյուր։

Այլ եթե գոգդ ալ թափին
Բույլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չե՛ս կրնար դուն
Հոգվույս՝ որ է բոց անհո՛ւն։

Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկներն հոդ չե՛ն թոռմիր,
Ամպերը չեն թրջեր հոդ,
Երբ խաղաղ եք դու և օդ։

Լրճա՛կ, դո՛ւ ես թագուհիս,
Զի թ'հովե մ'ալ խորշոմիս,
Դարձյալ խորքիդ մեջ խրռով
Զիս կը պահես դողդղալով։

Շատերը զիս մերժեցին,
«Քնար մ' ունի սոսկ»,— ըսին.
Մին՝ «Դողդոջ է, գույն չունի»,
Մյուսն ալ ըսավ.— «Կը մեռնի՞»։

---

* Պ. Դուրյանի «Լճակ», «Իմ մահը» և Դ. Վարուժանի «Կարոտի նամակ» բանաստեղծությունները պետք է վերածել արձակի։

Ոչ ոք ըսավ.— «Հեք տղա,
Արդյոք ինչու՞ կը մըխա՝
Թերևս ըլլա գեղանի,
Թե որ սիրեմ, չը մեռնի»։

Ոչ ոք ըսավ.— «Սա տղին
Պատռենք սիրտը տըրտմագին.
Նայինք ինչե՛ր գրված կան...»
— Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան։

Հոն կա մոխի՞ր... հիշատա՞կ...
Ալյակքդ հուզին, թող ևրճակ,
Զի քու խորքիդ մեջ անձկավ,
Հուսահատ մը նայեցավ...

Ճ. Պ. Դուրյան

ԻՄ ՄԱՀԸ

Եթե տժգույն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնե իմ դեմ,
Շոգիանան ցավքս ու հոգիս,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե սընարբս իմ տիպար
Մոմ մը վըտիտ ու մահադեմ,
Ո՜հ, նըշուլե ցուրտ ճառագայթ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե ճակտովս արտոսրազօծ
Ձիս պատանքի մեջ ցուրտ զերդ վեմ
Փաթթեն, դընեն սև դագաղը,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե հընչե տխուր կոչնակ,
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնե իր համբ քայլ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե մարդիկն այն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դեմ,
Համասրփռեն խունկ ու աղոթք,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթ' հարդարեն իմ հողակույտ,
Եվ հեծեծմամբ ու սրգալեն

Իմ սիրելիքը բաժնըվին,
Գիտցե՛ք որ մի՞շտ կենդանի եմ։
Իսկ աննշան եթե մնա
Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,
Եվ հիշատակս ալ թառամի,
Ո՜հ, այն ատեն ես կը մեռնիմ։

7. Հ. Պարոնյան

Քաղաքավարության վնասները
(հատված)

Սեդրաք աղան կոշկակարի մը խանութը կը մտնե։

— Բարեկամ,— կըսե կոշկակարին,— զույգ մը կոշիկ կուզիմ ապսպրել։

— Շատ աղեկ։

— Կոշիկներուն քիթը նեղ ըլլալու չեն։

— Հիմիկվան մոտայեն չեք ուզեր ըսել էֆ։

— Միայն կուզեմ, որ ոտքս կոշիկի մեջ կարենա շարժիլ. նեղ ոտքի աման չեմ ուզեր, որովհետև նասըր ունիմ։

— Գլխուս վրա, ձեզի անանկ կոշիկ մը շինեմ, որ թե մոտայի համաձայն ըլլա, և թե ձեր ոտքերը չսեխմեն։

— Եթե կարենաս գոհ ընել զիս, միշտ քու խանութը կուգամ։

— Վստահ եղեք։

Կոշկակարը Սեդրաք աղային ոտքի չափը կառնե և կիմացնե, թե քանի մ'օրեն պատրաստ պիտի ըլլան կոշիկները։

Սեդրաք աղան քանի մ'օրեն կերթա կոշկակարին։

— Պատրա՞ստ են կոշիկներս։

— Այո՛, պատրաստ են։

Կոշկակարին աշակերտը Սեդրաք աղային կը ներկայացնե կոշիկները։

— Եղբայր, կըսե Սեդրաք աղան, ասոնք պզտիկ են։

— Ընդհակառակն, մեծ են։

— Ասոնք քիթերը նեղ են։

— Չեմ կարծեր, շատ լայն քիթերն այսօր մաքպուլ չեն. կաղաչեմ, անգամ մը ձեր ոտքն անցունեիք սա կոշիկները։

Սեդրաք աղան կը նստի։ Կոշկակարին աշակերտը քառակուսի տախտակ մը կը դնե Սեդրաք աղային ոտքերուն տակը։ Սեդրաք

աղան կը ձեռնարկե նոր կոշիկներն հագնելու։ Կոշիկները կապըստամբին։

— Ոտքդ ուժով կոխե,— կպոռա կոշկակարն։

— Ոտքի վրա ել ու այնպես կոխե,— կըսե կոշկակարին քալֆան։

— Ուժով ոտքդ գետինը զարկ,— կը խրատե կոշկակարին աշակերտը։

— Ծո՜, սա փոշիեն ցանե քիչ մը կոշիկներուն մեջ, որ Սեդրաք աղային ոտքերը դյուրությամբ սահին ու մտնեն,— կը հրամայե կոշկակարն պզտիկ աշակերտին։

Հրամանը կկատարվի։

Կոշիկներն հաստատամիտ են։

— Էո՜ֆ, քրտնեցա, պե ատա՛մ,— կըսե Սեդրաք աղան՝ երեսը թթվեցնելով,— քեզի քառասուն անգամ ապսպրեցինք, որ մեծ ըլլան, լայն ըլլան, երկար ըլլան։

— Կերևա, որ ոտքերդ ալ քրտնած են և անոր համար...

— Չէ, քուզո՛ւմ, չէ, ճա՛նըմ... կոշիկները նեղ են։

— Անգամ մը հագնիս նե, կը բացվին։ Լայն ոտքի ամաններն ավելի կը վնասեն նասըրներուն։

— Դեմ կրնար կոր հագնել։

Կոշկակարն քալֆայովն և աշակերտներովն Սեդրաք աղային օգնելու կերթա։ Երկու հոգի Սեդրաք աղային թևը կը մտնե. կոշկակարը Սեդրաք աղային մեկ ոտքը կը բռնե և կաշխատի կոշիկին մեջ դնել։ Ամբողջ կոշկակարյան խումբը կը քաջալերե Սեդրաք աղան.

— Հա՛, հա՛, կը մտնա կոր...

— Քիչ մ՚ալ համբերություն...

— Քիչ մ՚ալ հաստատամտություն...

— Օ՛ն, քաջալերվե...

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ...

— Քիչ մը դիմացիր, էֆենտիմ...

— Անգամ մը մտնա նե...

— Ոտքս կոտրեին նե, ավելի աղեկ էր...

— Հա՛, հա՛, քիչ մնաց...

— Քիչ մ՚ալ ճահտ ընես նե, կը լմննա, կերթա։

— Հոգնեցար նե, քիչ մը հոգնություն առ տե...

— Ջեմ ուզեր, պե ատա՛մ, թող տվեք հանեմ ոտքս, ճիյերս սզլամըշ կըլլա կոր...

— Բան մը չէ, կանցնի։

— Հարյուր անգամ ալ ապսպրեցի, որ ես մոտա չեմ ուզեր, ոտքերուս հանգստությունը կուզեմ...

— Կոխե ոտքդ...

— Ինչպե՞ս կոխեմ, ճանըմ, չեք հասկնար կոր, որ ոտքերս կէրին կոր, կարծես թե կրակին մեջ կոխած եմ... թող տվեք, աստվածնիդ սիրեք, սա ի՞նչ խոսք չհասկցող մարդոց հանդիպեցանք։

— Քիչ մ'ալ ղայրեթ ըրե, էֆենտի։

— Ղայրեթնիդ ալ գետնին տակը անցնի, կոշիկնիդ ալ... Թող տվեք ոտքս, վազ անցա։

— Բարկանալու իրավունք չունիք, Սեդրաք աղա...

— Չունիմ, աղբար, չունիմ, դուք իրավունք ունիք բարկանալու, թող տվեք, սա ոտքս քաշեմ։

Կոշկակարն ուժով բռնած է Սեդրաք աղային ոտքեն, որուն ինը տասներորդ մասը մտած է կոշիկի մեջ։

— Շատ բծախնդիր եք, Սեդրաք աղա։

Սեդրաք աղան կզգա, թե գերի բռնված է, ուստի անձնատուր կըլլա կոշկակարին, որ յուր խումբովը կը հաջողի կոշիկներն անցնել յուր հաճախորդին ոտքերուն։

— Տեսա՞ր, ինչպես աղեկ եղավ... ոտքի վրա կայնե քիչ մը. ո՜հ... մինչև տուն կերթաս նե, ոչ ցավ մը կը մնա, ոչ բան... սանկ քալե՛, նայիմ։

— Ի՞նչպես քալեմ, ճանըմ, նասըրներս կը ցավին կոր... Հանեցեք սըվոնք։

— Քիչ մը խոսք մտիկ ըրե, Սեդրաք աղա, մինչև տուն գնա, ոտքերդ պիտի վարժվին ու...

— Քիչ մը լայնկեկ շինեիք նե, չէ՞ր ըլլար։

— Չըլլար, Սեդրաք աղաս, չըլլար, ամեն խանութ նամուս ունի, մենք մեր խանութին պատիվը չենք կրնար կոտրել անանկ մեծ, լայն ու տձև կոշիկներ կարելով. ամեն մարդ իր գործը գիտե։

— Աղեկ, աղեկ, ի՞նչ պիտի տանք։

— Ոսկի մը ու մեճիտիե մը։

— Առեք։

— Շնորհակալ եմ։ Մեզի մի՛ մոռնաք, Սեդրաք աղա։

Սեդրաք աղան այդ կոշիկներով դուրս կելնե կոշկակարին խանութեն, նասըրներու ցավեն ամեն քայլափոխին հառաչելով, երբեմն ալ արտասվելով։ Կզգա վերջապես, թե չպիտի կրնա շա-

ունակել ճամբան, զբոսարան մը կը մտնե, բազմոցի վրա կը նստի և կոշիկները հանել կուզե։ Չհաջողիր։ Սրճարանին սպասավորը կը կանչե, որ կոշիկներն քաշե։ Սպասավորը բոլոր ուժը կսպառե, կարելի չէ կոշիկները հանել։ Իմաց կը տրվի կոշկակարին, որ քալֆային ընկերակցությամբ կը հասնի ու մեծ դժվարությամբ կը հաջողի ազատել Սեդրաք աղան յուր ոտքերուն ձեռքեն։ Սեդրաք աղան կը հագնի հին կոշիկները, զորս կոշկակարի խանութեն հետն առած էր, և կը հանգստանա։

— Բնավ սրխրի չեք գար կոր, Սեդրաք աղա,— կըսե կոշկակարը,— ձևավոր և ճաշակավոր բան մը հագնելու համար քիչ մը ակռան սխմելու է մարդս. ինչ որ է, տվեք սա կոշիկներն ինձի, վաղը ես զանոնք աղվոր խալըպի մը զարնեմ տե, ղրկեմ ձեզի։

— Շատ աղեկ,— կը պատասխանե Սեդրաք աղան ու խահվե մը խմելուն պես կը մեկնի։

Հետևյալ օրը Սեդրաք աղան շուկա կերթա, ապայե լաբճին մը ու լաստիկ մը կը գնե, կը հագնի ու գործին կերթա։

Դիտողությունները կսկսին։

— Սա Սեդրաք աղան շատ թոհաֆ մարդ է։

— Ապտալ է պարզապես։

— Տիվանե ըսեք սրվոր, երթա։

— Ես ալ տեսա, ապա լաբճին մը անցուցեր է ոտքը, վրան ալ լաստիկ հագեր է...

— Խայտառակություն է։

— Ինչ մեղքս պահեմ, հետը պտտելու կամշնամ կոր։

— Թող գյուղ մը երթա, նստի, էֆենտիմ։

— Ատ ոտքերով ընկերությանց մեջ մտնել կարելի չէ։

Այս դիտողություններն Սեդրաք աղային ականջը կհասնի։ Սեդրաք աղան կը համոզվի, թե քաղաքավարությունը չհակառակիր նասրրի, բայց սարսափելի թշնամի է ապա լաբճինի։ Սեդրաք աղան կը ստիպվի հանել լաբճինները և ընդունել մոտային համաձայն կոշիկներն ու անոր հարվածները։

8. Իր աչքին առջև պարզվող այս հունիսի առտուն շլացուց զինքը։ Վոսփորը կերևար, կընդհատվեր հանկարծ, նորեն կը ըսկըսեր, կը դառնար, կը գալարեր, տիտանյան օձի մը պես երկու դիեն բարձրացող բլուրներու մեջ։ Արևին ձգած լուսավոր շավիղը անհամար ադամանդներու սփռում մըն էր հոն, ավելի մութցնելով կարծես ծովին թավիշի կապույտը։

Ծովեզերքին մոտ, այն կողմեն ուրկե կը նայեր... այս ադամանդները մեկ մեկ կը զանազանվեին, բայց ավելի մերձենալով իրարու։ Եվ ավելի հեռուն փոստրուկ մըն էր այլևս, լուսաճաճանչ փոշիներու տարածություն մը որ միապաղաղ մակարդակով մը կը ձևացներ, դյութական փողփողումի մեջ անշարժացած։

Ծովին մեջտեղը այս հյուլեները կ՝երերկտային շարունակ, ձևերնին գիրքերնին, լույսերնին կը փոխեին, իրարու առջև կը վազեին, իրարմե խույս կուտային, անհնարին ու խոլական ոստումներով, արշավներով, համեցումներով, այս կապույտ անջրպետին վրա ակնախտիղ պար մը շինելով։

(Զոհրապ, «Ժամին բակը»)

Ցամաքին վրա առավոտը ոչ նվազ հիացուցիչ էր։ Լեռները իրենց դալարիքը ու նոր հերկված հողերուն կարմիր ուռեցքները քովե քով կարգով կը տարածվեին։ Անդին՝ ածուներու անդաստաններն ալ զուգահեռական գիծերու անհատնում շարքերով, ու ավելի հեռուն, հորիզոնին վրա, ծառերու հոծ խումբ մը, կանաչներու ամենավառ երանգները մեկ տեղ բերած, այն կանաչեն, որ դեղինին կը մոտենա, մինչև այն որ սևին հետ կը շփոթվի։ Այս կանաչության վրա մերթ պզտիկ սարսուռ մը կը վազեր ու իսկույն կանաչ ու համր կոհակներու ծովացում մը կը տեսնվեր։

Գետինը, խոտերուն վրա գիշերվընե մնացած ցողը կը շոգիանար արևին ջերմությենեն։

Զան ձուն ու շարժում չկար գեղի մեջ։ Բյուրեղի հստակություն մը և չեմ գիտեր ինչ տեսակ սպասումի մեջ էր կարծես իր բոլորտիքը։

Հետո ճերմակ ամպերու ծվեններ երկինքին լուրթ բեհեզին վրա երևցան. թեթև հով մը եղավ։ Քանի մը եղներ քնաշրջիկի քայլվածքով մը անցան. կաթնավաճառ մը իր պղնձե ամաններուն աղմկովը լռությունը վրդովվեց։

(Գ. Զոհրապ, «Ժամին բակը»)

Յ. Դ. Վարուժան

Կարոտի նամակ

Կը գրրե մայրրս.—«Ով իմ որդյակրս պանդուխտ,
Դեռ մինչև ե՞րբ պիտ անծանոթ լուսնի տակ
Օրերն անցնին, դեռ մինչև երբ հեգ գլուխդ
Ես չրսեղմեմ լանջքիս տակ։

Հերիք օտար սանդուղքներե ելլեն վեր
Ոտքերդ, որ օր մ՚ափերուս մեջ տաքցուցի.
Հերիք ալ սիրտդ ուր իմ ծիծերս եմ պարպել
Դատարկ սրրտես դուրս հյուծի։

Ջահրակին տակ թևերս աշխատ հոգներ եմ.
Կ՚հյուսեմ պատանքս ալ ծամերովս ըսպիտակ.
Ախ, քեզ տեսնեն անգամ մ՚աչքերս ու փակեն
Թող հոգիս ալ իրենց տակ։

Դրրանս առջև կը նըստիմ միշտ տխրալիր,
Լուր կուզեմ վրադ ամեն կոունկե՝ որ կ՚անցնի,
Այն ճյուղն ուռի զոր քու ձեռքով տընկեցիր,
Վրրաս կընե հովանի։

Իրիկունները զո՛ւր դարձիդ կըսպասեմ.
Կու գան կ՚անցնին գյուղին քաջերը համակ.
Մշակը կանցնի, կ՚անցնի կովարածը վսեմ.—
Կը մնամ լուսնին հետ մինակ։

. . . . . .

Եկո՛ւր, որդյակ, հայրենի տունդ շենցուր.—
Դուռն են կոտրեր, մառաններն ողջ դատարկեր.
Կը մտնեն ներս լուսամուտեն ջարդուփշուր
Գարնան ամբողջ ծիծառներ։

Այն բազմաթիվ հոտեն գոմին մեջ, եղո՛ւկ,
Մընացեր է խոյ մը միայն քաջարի՝
Որուն մայրն օր մ՚հիշե որդյակ—դեռ գառնուկ,
Կերավ ափիդ մեջ գարի։

Դարձիդ՝ պճնած վարդերով գլուխն իր համակ՝
Պիտի մորթեմ կյանքիդ համար ծաղկատին.
Իր արյան մեջ պիտի լվամ, քաղցր որդյակ,
Ոտքերդ հոգնած պանդուխտի։

10. Ժամանակով իմաստասերին մեկը ըսած է... «Քիչ խոսե ու շատ մտիկ ըրե»։ Թեպետ և որոշ չգիտցվիր, թե իմաստասերն որ պարագայի մեջ ըսած է այդ խոսքը, բայց կը կարծվի, թե տասը կանգուն երկայնությամբ հոդվածներ գրող խմբագիրներեն մեկուն ըսած ըլլա. հավանական է նաև, որ պարտատերն իրմե ստակ ուզելու գացած ըլլա և անոր ըսած ըլլա, կրնա ըլլալ, որ... բայց

Ի՞նչ փույթ մեզ, որու ուզե, թող անոր ըսած ըլլա, բավական է, որ այդ խոսքը շատ իրավացի խոսք մըն է, որովհետև շատ խոսողները բան մ'ալ չեն խոսիր, ամենեն շատ խոսողները ամենեն քիչ խոսողներն են, ասիկա այնչափ ճշմարտություն մ'է, որ դեսպան մ'անգամ չկրնար ուրանալ։

Ուրիշ իմաստասեր մը մեր իմաստասերին այս խոսքին շատ հավնելով՝ քայլ մ'ալ ինք առավ և ըսավ.

«Բնավ մի խոսիր ու շարունակ մտիկ ըրե»։

(Հ. Պարոնյան, «Կսմիթներ»)

11. Դեսպանաժողովն ալ համը փախցունել սկսավ։ Մինչև հիմա վեց նիստ ըրավ։ Ահա բոլոր ըրածը։

Ամեն մարդ հետաքրքրութենե ճաթելու վիճակին հասավ, դեսպանաժողովին հոգն անգամ չէ, գործելու մասին իրեն օրինակ բռնած է կրիան։

Մեկ նիստին մեջ առաջարկություն մը կըլլա։

Երկրորդին մեջ այդ առաջարկությունը կը մերժվի։

Երրորդին մեջ այդ մերժումը կը մերժվի։

Չորրորդին մեջ ինչու համար մերժվելուն պատճառները կը բացատրվին։

Հինգերորդին մեջ այդ բացատրություններուն մութ կետերը կը լուսավորվին։ Վեցերորդին մեջ լուսավորյալ կետերը կը մթննան։

Ահա քեզի վեց նիստ, որ մեկ նիստ չարժեր։

(Հ. Պարոնյան, «Կսմիթներ»)

12. Հազար ութը հարյուր յոթանասուն... չեմ հիշեր՝ քանիին, սեպտեմբեր երեսունըմեկին,— ներեցեք, երեսունին պիտի ըսեի, վասնզի սեպտեմբերն երեսուն օր միայն ունի—երկար և ընդարձակ թիկնոցի մը մեջ փաթթված միջահասակ և գիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի շոգենավեն նոր ելած էր, Ղալաթիո նավամատույցին վրա կայնած, նավակե մը յուր սնտուկները հանել կաշխատեր։

Կը տեսնիք՝ որչափ պարզությամբ սկսա։ Պատմությունս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար չըսի, թե նույն օրն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կուգար, թե խուռն բազմություն մը հե-

տաքրքրությամբ դեպի Ղալաթիո հրապարակը կը վազեր, թեոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն խոսքեր, որով վիպասաններն կսկսին միշտ իրենց վեպերը։ Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նույն օրն ոչ հով կար, որ անձրև, ոչ խուռն բազմություն և ոչ ձերբակալված աղջիկ մը։

Արդ, առանց կասկածելու հավատացեք պատմությանս, որ ժամանակակից դեպք մ' է։

Այս ճամբորդն օժտված էր զույգ մը խոշոր և սև աչքերով, զույգ մը հաստ և երկար հոնքերով, զույգ մը մեծ ականջներով և զույգ մը քիթով... չէ՛, չէ՛ մեկ քիթով, թեպետև բայց զույգ մը քիթերու տեղ կրնար ծառայել, անոր մեծությունը սխալեցուց զիս...

Սնտուկներն ու անկողինն, որ քուրջի մը մեջ ներփակված էր, նավակեն հանելուն պես ճամբորդն քաշեց քսակն և նավավարին իրավունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց։ Հինգ բեռնակիրներ ներկայացան իրեն։

(Հ. Պարոնյան, «Մեծապատիվ մուրացկաններ»)

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

մաթեմատիկական, ֆիզիկական և քիմիական որոշ տերմինների

Վարժություն 1. Կարդալ տեքստը՝ արտագրելով ընդգծված տերմինները:

Թվաբանության մեջ հայտնի են չորս գործողություններ՝ գումարում *(3+4)*, հանում *(5—2)*, բազմապատկում *(6×5)* և բաժանում *(12:6)*:

Այն թվերը, որոնք գումարվում են, կոչվում են գումարելիներ, *իսկ գումարման արդյունքը՝* գումար:

Օրինակ՝ 5+4=9 (հինգին գումարած չորս հավասար է իններ):

Այս օրինակում 5-ը և 4-ը գումարելիներ են, իսկ 9-ը՝ նրանց գումարը:

Հանման ժամանակ այն թիվը, որից հանվում է, կոչվում է նվազելի, *որը հանում են՝* հանելի, *իսկ արդյունքը՝* տարբերություն:

Օրինակ՝ 17—8=9 (տասնյոթից հանած ութ հավասար է իններ):

Այս օրինակում 17-ը նվազելին է, 8-ը՝ հանելին, իսկ 9-ը՝ տարբերությունը:

Բազմապատկման գործողության դեպքում՝ բազմապատկվող թվերը կոչվում են բազմապատկիչներ, *իսկ բազմապատկման արդյունքը՝* արտադրյալ:

Օրինակ՝ 7×8=56 (յոթ անգամ ութ հավասար է հիսունվեցի):

Այս օրինակում 7-ը և 8-ը բազմապատկիչներն են, իսկ 56-ը՝ արտադրյալը:

Բաժանման ժամանակ այն թիվը, որը բաժանում են, կոչվում է բաժանելի, *որի վրա բաժանում են՝* բաժանարար, *իսկ արդյունքը՝* քանորդ:

Օրինակ՝ 15:3=5

Այս օրինակում 15-ը բաժանելին է, 3-ը՝ բաժանարարը, իսկ 5-ը՝ քանորդը։ Երբեմն բաժանման դեպքում ստացվում է ոչ թե ամբողջական թիվ, այլ կոտորակային թիվ։

Օրինակ՝ 5:2=2½ (հինգը բաժանած երկուսի հավասար է երկու ամբողջ մեկ երկրորդականի)։

Կոտորակները լինում են հասարակ՝ ³/₄ (երեք քառորդ) և տասնորդական՝ 3,4 (երեք ամբողջ չորս տասնորդական)։

$3\frac{1}{4}$, $2\frac{1}{5}$ *և այլն խառը կոտորակներ են։*

Վարժություն 2. Կարդացե՛ք հետևյալ օրինակները։

20— 4=16	13×4= 52
42+ 4=46	27×5=135
10+18=28	39×3=117
49— 6=43	45 : 9= 5
12+ 3=15	159 : 3= 53
13+ 4=17	18 : 9= 2
52—44= 8	268 : 2=134
98+ 1=99	81 : 9= 9
236 : 4=59	16 : 4= 4

Օրինակներ՝ 20—4=16 (քսանից հանած չորս հավասար է տասնվեցի)։ 42+4=46 (քառասուներկուսին գումարած չորս հավասար է քառասունվեցի)։ 45:9=5՝ քառասունհինգը բաժանած իններ հավասար է հինգի։ 13×4=52՝ տասներեք անգամ չորս (տասներեքը բազմապատկած չորսով) հավասար է հիսուներկուսի։

Վարժություն 3. Կարդացե՛ք բազմապատկման աղյուսակը։

2× 1= 2	3× 1= 3	4× 1= 4	5× 1= 5
2× 2= 4	3× 2= 6	4× 2= 8	5× 2=10
2× 3= 6	3× 3= 9	4× 3=12	5× 3=15
2× 4= 8	3× 4=12	4× 4=16	5× 4=20
2× 5=10	3× 5=15	4× 5=20	5× 5=25
2× 6=12	3× 6=18	4× 6=24	5× 6=30
2× 7=14	3× 7=21	4× 7=28	5× 7=35
2× 8=16	3× 8=24	4× 8=32	5× 8=40
2× 9=18	3× 9=27	4× 9=36	5× 9=45
2×10=20	3×10=30	4×10=40	5×10=50

6× 1= 6	7× 1= 7	8× 1= 8	9× 1= 9
6× 2=12	7× 2=14	8× 2=16	9× 2=18
6× 3=18	7× 3=21	8× 3=24	9× 3=27
6× 4=24	7× 4=28	8× 4=32	9× 4=36
6× 5=30	7× 5=35	8× 5=40	9× 5=45
6× 6=36	7× 6=42	8× 6=48	9× 6=54
6× 7=42	7× 7=49	8× 7=56	9× 7=63
6× 8=48	7× 8=56	8× 8=64	9× 8=72
6× 9=54	7× 9=63	8× 9=72	9× 9=81
6×10=60	7×10=70	8×10=80	9×10=90

Օրինակ՝ 2×1=2՝ երկու անգամ մեկ հավասար է երկուսի։ 5×6=30՝ հինգ անգամ վեց հավասար է երեսունի։ 9×7=63՝ ինն անգամ յոթ հավասար է վաթսուներեքի։

Վարժություն 4. Կարդացե՛ք հետևյալ հասարակ և տասնորդական կոտորակները։

ա. $\frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{1}{4}, \frac{5}{2}, \frac{6}{12}, \frac{3}{4}, \frac{9}{14}, \frac{1}{6}, \frac{5}{8}, \frac{4}{9}, \frac{13}{5},$

$\frac{5}{7}, \frac{3}{10}, \frac{6}{11}, \frac{8}{12}, \frac{1}{16}, \frac{10}{18}, \frac{13}{20}, \frac{13}{23}$։

Օրինակ՝ $\frac{1}{2}$՝ մեկ երկրորդական, $\frac{1}{3}$՝ մեկ երրորդական, $\frac{1}{4}$՝ մեկ չորրորդ (ական) կամ մեկ քառորդ, $\frac{5}{2}$՝ հինգ երկրորդ (ական), $\frac{13}{20}$՝ տասներեք քսաներորդ(ական), $\frac{13}{23}$՝ տասներեք քսաներեքերորդ(ական)։

բ. 0,2. 3,02. 0,004. 1,3. 6,05. 0,18. 4,024. 3,118, 12.012. 1,001. 2,12։

Օրինակ՝ 0,2՝ զրո ամբողջ երկու տասնորդական, 3,02՝ երեք ամբողջ երկու հարյուրերորդական, 0,004՝ զրո ամբողջ չորս հազարերորդական։

Վարժություն 5. Կարդալ տեքստը՝ արտագրելով ընդգծված տերմինները։

I

Թվաբանության դասին մենք լուծում ենք խնդիրներ *և* վարժություններ, *օգտագործելով* թվաբանական *բոլոր* չորս գործողություններ՝ բազմապատկում, բաժանում, գումարում *և* հանում։

Ուսումնասիրում ենք կոտորակների հատկությունները, կրճատում կոտորակները, հասարակ կոտորակները վերածում տասնորդական կոտորակների, իսկ տասնորդականները դարձնում հասարակ կոտորակներ։

Դասի ժամանակ անհայտներով հավասարումներ ենք կազմում և գտնում հավասարման անհայտ անդամը: Մինչև խնդիրները լուծելը պարզում ենք մեզ համար խնդրի պայմանը, իսկ լուծելուց հետո ստուգում պատասխանը:

II

Այժմ մենք ուսումնասիրում ենք մեխանիկան՝ ֆիզիկական մարմինների շարժման մասին գիտությունը։

Մեխանիկայում հայտնի են շարժման երեք ձևեր՝ համընթաց, պտտական և տատանողական:

Մեխանիկան ուսումնասիրում է նյութի շարժման առավել պարզ ձևերը՝ որոշ ֆիզիկական մարմինների տեղափոխությունը մյուսների նկատմամբ։ Մարմինների յուրաքանչյուր մեխանիկական շարժումը, հարաբերական է։ Այդ նշանակում է, որ տվյալ մարմնի շարժումը ուսումնասիրվում է մյուս մարմնի նկատմամբ՝ տվյալ դեպքում ընդունելով, որ վերջինը անշարժ է։ Մենք այդպես ծանոթ ենք ուղղագիծ շարժմանը, իսկ այսօր կուսումնասիրենք ուղղագիծ հավասարաչափ-փոփոխական շարժումը։ Մենք գրում և սովորում ենք այդ շարժման բանաձևերը: Շուտով կուսումնասիրենք նաև մարմնի ազատ անկումը, այսինքն՝ մարմինների անկումը անօդ տարածության մեջ, որտեղ օդի դիմադրությունը բացակայում է։

III

Մեր շրջապատում կան բազմաթիվ տարբեր մարմիններ՝ տներ, ծառեր, օդ, ջուր, արև, ապակի և այլն։ Դրանք բոլորը ֆիզիկական մարմիններ են։ Ֆիզիկական մարմինները կարելի է տեսնել, լսել նրանց, շոշափել, տարբերել ըստ համի, հոտի այսինքն՝ զգալ։

Մեր զգայական օրգանների միջոցով մենք ուսումնասիրում ենք ֆիզիկական մարմիններ։

Նյութը գտնվում է անընդհատ փոփոխության, զարգացման, այսինքն՝ շարժման մեջ։ Չկա որևէ մարմին, որը գտնվեր բացարձակ հանգստի վիճակում։ Բնության մեջ ամեն ինչ փոխվում է, ամեն ինչ շարժվում։ Նյութը առանց շարժման չի կարող գոյու-

թյուն ունենալ այնպես, ինչպես չի կարող լինել շարժում առանց նյութի։

Օրինակ՝ ջուրը բնության մեջ անընդհատ շարժվում է։ Այն գոլորշիանում է գետերի և ծովերի մակերևույթից։ Ստացվում է գոլորշի, որը տաք օդի հետ միասին բարձրանում է մթնոլորտի վերին շերտերը։ Այնտեղ գոլորշին սառչում է և նորից թափվում երկրի վրա որպես անձրև, կարկուտ կամ ձյուն։ Գարնանը ձյունը հալչում է, և ամեն ինչ նորից կրկնվում է։ Ամեն օր, ամեն գիշեր երկնակամարում կարելի է տեսնել երկնային մարմինների՝ արևի, լուսնի, աստղերի շարժումը։

Շարժվում է նաև երկիրը։

Կան նյութի շարժման շատ տարբեր ձևեր։ Նյութի շարժումը տեղի է ունենում որոշակի օրենքներով։

IV

Այնպիսի մարմիններ, ինչպես քարը, կավիճը, ծառը, երկաթը, սառույցը, կոչվում են պինդ մարմիններ։ Դրանք այն մարմիններն են, որոնք պահպանում են իրենց ծավալը և դիմադրողականություն են հանդես բերում, եթե դրանք ծռենք, սեղմենք, ձգենք։

Այնպիսի մարմիններ, ինչպես թանաքը, ջուրը, սպիրտը, սընդիկը, աղաթթուն և այլն, կոչվում են հեղուկ մարմիններ կամ հեղուկներ։ Դրանք ընդունում են այն անոթների ձևը, որոնց մեջ գտնվում են։ Հեղուկները կարելի է հեշտությամբ մասերի բաժանել, բայց հեղուկների ծավալը դժվարությամբ է փոխվում։

Օդը, թթվածինը, ածխաթթու գազը, ջրի գոլորշին կոչվում են գազային մարմիններ կամ գազեր։ Գազերը նույնպես իրենց ձևը չունեն։ Գազերի ձևը փոխելը ավելի հեշտ է, քան հեղուկներինը։ Գազերը հեշտությամբ կարելի է սեղմել, այսինքն՝ փոքրացնել նրանց ծավալը։ Բոլոր մարմինները կարող են լինել հեղուկ, գազային կամ պինդ վիճակում։

V

Ֆիզիկական մարմինների հետ կատարվող ամեն մի փոփոխություն կոչվում է երևույթ։

Օրինակ, երբ մենք գրում ենք, տեղի են ունենում մի շարք երևույթներ՝ ձեռքի շարժումը, գրչածայրի և թղթի շփումը, թանաքի քսվելը թղթին և այլն։

Մոմի այրումը ֆիմիական երևույթ է, որովհետև այն նյութը, որից ստացված է մոմը, փոփոխվում է, մոմի փոխարեն ստացվում են գազեր, մոխիր, ծուխ։

Երբ կավիճը ընկնում է գետին, ջարդվում և բաժանվում է մանր մասերի։ Կավիճի ընկնելը և մասերի բաժանվելը ֆիզիկական երևույթներ են՝ նյութը չի փոխվում։

Եթե կավիճը դնենք փորձանոթի մեջ և վրան աղաթթու լցնենք, կտեսնենք, որ գազ է անջատվում։ Սա ֆիմիական երևույթ է, նյութը փոխվում է, և նոր նյութ՝ ածխաթթու գազ է անջատվում։ Հաճախ քիմիական և ֆիզիկական երևույթները միասին են հանդես գալիս։

VI

Քիմիան ուսումնասիրում է նյութերը, նրանց հատկությունները ու փոփոխությունները։ Քիմիան ուսումնասիրում է ֆիմիական երևույթները, այսինքն՝ այն երևույթները, երբ նյութի փոփոխություն է կատարվում, նոր նյութ է ստացվում։ Քիմիական երևույթները կոչվում են ֆիմիական ռեակցիաներ։

Ռեակցիաները լինում են՝ քայքայման ռեակցիա, միացման ռեակցիա, փոխանակման ռեակցիա։

Քայքայման ռեակցիայի ժամանակ մեկ նյութից ստացվում են մի քանի նոր նյութեր։

Միացման ռեակցիայի ժամանակ մի քանի նյութերից մեկ նյութ է ստացվում։

Փոխանակման ռեակցիայի դեպքում երկու նյութերի փոխարեն երկու նոր նյութ է ստացվում։

Նյութերը կարող են լինել պարզ և բարդ։

Պարզ նյութերը կոչվում են տարրեր (էլեմենտներ), օրինակ՝ պղինձը, ծծումբը, քլորը, տարրեր են, իսկ աղերը, թթուները և հիմքերը, բարդ նյութեր։

Բարդ նյութերը կազմված են լինում մի քանի տարրերից։ Յուրաքանչյուր տարր ունի իր ատոմային և մոլեկուլային կշիռը։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԵՐ

1. Մի աշխատանքային ընկեր ունեմ։ Պատրաստվում է ֆիզիկայի ֆակուլտետ ընդունվելու։ Շատ է սիրում ձմռանը դահուկներով սահել։ Անցյալ շաբաթ հեռախոսով զանգահարեց՝ ինձ հրավիրելով կիրակի օրը իր հետ դահուկով զբոսանքի գնալ անտառ։

— Միայն տաք հագնվիր, չմրսես,—նախազգուշացրեց նա ինձ։

Առավոտյան վեր կացա, նախաճաշեցի, հագա դահուկորդի համազգեստը, բայց տեսնելով, որ դրսի ջերմաչափը հինգ աստիճան ցրտություն է ցույց տալիս, ոչխարենի մուշտակս էլ առա և շտապեցի ընկերոջս մոտ։

— Մուշտա՞կդ ինչու ես վերցրել,—տեսնելով ինձ քուրքի մեջ փաթաթված՝ հարցրեց նա։

— Չե՞ս տեսնում ցուրտը,—ասում եմ,—վերցրել եմ, որ տաքացնի մեջքս. դու գիտես, որ ես մրսկան եմ։

— Մուշտակը քեզ տաքացնի՞,—սկսեց նա իր սովորական կիսահեգնական ոճով,—իսկ մուշտակը ամենևին էլ չի տաքացնում։

— Ինչպե՞ս թե չի տաքացնում։

— Ուզում ես՝ ստուգենք։ Հապա հանիր մուշտակդ։

Դժկամությամբ հանեցի մուշտակս ու մեկնեցի իրեն։ Նա վերցրեց ջերմաչափը, որը ցույց էր տալիս հինգ աստիճան զրոյից ցածր, փաթաթեց մուշտակով ու դրեց պատշգամբում։

— Դե՛, հիմա գնանք մեկական բաժակ թեյ խմենք, մինչև մուշտակդ մի քիչ կտաքացնի իմ ջերմաչափը։

Ի՜նչ արած։ Մտանք ներս, խմեցինք, խոսեցինք, անցավ կես ժամ։ Դուրս ենք գալիս, բացում մուշտակը և ա՜յ քեզ բան։ Նորից հինգ աստիճան զրոյից ցածր։ Ընկերս սկսեց.

— Մուշտակները, սիրելիս, իսկապես չեն տաքացնում, եթե դրա տակ հասկանանք ջերմահաղորդում։ Լամպը տաքացնում է, վառարանը տաքացնում է, մարդկային մարմինը նույնպես տաքացնում է, որովհետև դրանք բոլորը ջերմության աղբյուրներ են։ Իսկ քո մուշտակը այդ իմաստով բոլորովին էլ չի տաքացնում։ Նա իր ջերմությունը չի տալիս քեզ, այլ միայն չի թողնում, որ քո մարմնի ջերմությունը քո մարմնից դուրս գա։ Ահա թե ինչու մարդը, որի մարմինը ջերմության աղբյուր է, մուշտակի մեջ իրեն ավելի տաք է զգում, քան առանց նրա։ Ոչ թե մուշտակն է մեզ տաքացնում, այլ մենք նրան։

— Դե ինչ արած, կարևորն այն է, որ մուշտակի մեջ ես ինձ տաք եմ զգում,—կոտր ընկած պատասխանում եմ ես, հագնվում ու ճանապարհ ենք ընկնում։ Բայց ճանապարհին ամբողջ ժամանակ մտմտում եմ՝ «Արի սրան մի այնպիսի հարց տամ, որ բռնվի ու էլ դլխիս գիտնականություն չբանեցնի»։

Բավականին ուշ էր արդեն. ձմեռային կարճ ցերեկը մթնշաղի էր փոխվում, և հարցը ստացվեց ինքնին։

— Կարո՞ղ ես ասել ձմռան ցրտի պատճառած ամենամեծ չարիքը որն է,—հարցնում եմ։

Նա ըստ երևույթին իսկույն գլխի ընկավ, որ ինչ-որ խաղ եմ պատրաստում, ծիծաղը մի կերպ զսպելով պատասխանեց՝

— Այն, որ ցրտից ցերեկները կարճանում են։

Ճիշտ իմ ուզած պատասխանը։ Բռնեցի՛։

— Մի՞թե սուտ է,—ասում եմ,—որ ձմռանը ցրտից ցերեկները կարճանում են, իսկ ամռանը շոգից երկարում։

Նա, ինչպես երևում է, իրեն այլևս զսպել չկարողացավ, քրքջաց, հասավ վրաս ու ինձ թավալեց ձյան մեջ։ Ա՜յ քեզ գիտական բացատրություն...

Ի՞նչ արած... Մոռթս ավելի կախեցի։ Սկսեցինք վերադառնալ։ Երբ հասանք իրենց շենքի մոտ, դարձավ ինձ թե՝ գնանք տաք լոգանք ընդունիր ինձ մոտ, շախմատ խաղանք, հետո տուն կգնաս, մեկ է, վաղը երկրորդ հերթի ես աշխատանքի գնալու։

Շախմատը իմ թուլությունն է, նա հիանալի գիտե այդ, դրա համար մեջտեղ բերեց։ Գայթակղվեցի և գնացի։ Ես լողացա, դուրս եկա, նա մտավ վաննայի մեջ։ Մի ժամի չափ սպասեցի։ Ձանձրույթից վերցրի սեղանին դրված առաջին իսկ գիրքը և թերթում եմ՝ Յու. Պերելման, «Հետաքրքրաշարժ ֆիզիկա», գիրք առաջին։ Թերթում եմ ու մտքումս հոխորտում՝ հիմա ես քեզ մի երեք անգամ մատ կանեմ, այն ժամանակ կիմանաս, թե ինչպես են ձմռանը ցերեկները ցրտից կարճանում։ Դուրս եկավ։ Շորերը հագել էր պրծել, իսկ կոշիկները ոտները չեն մտնում։ Ինչ ուզում ես արա, չեն մտնում ու չեն մտնում։ Ոնց որ իսկի չի էլ հագել դրանք երբևէ։

Նախ մտածեց, որ փոխել եմ կատակի համար։ Նայում է՝ իր կոշիկներն են, բայց որ չեն մտնում, փաստ է։ Իսկ ես բազկաթոռին նստել եմ ու աչքի տակով մեկ-մեկ նրան եմ նայում ու ծաղրանքով ժպտում։ Գլխումս մի միտք իսկույն փայլատակեց։

— Հիմա էլ կասես, որ ոտքերդ ջերմությունից չեն ընդարձակվել, հա՞։ Իսկ ինչու՞ կոշիկներիդ մեջ չեն մտնում։

Ասում եմ ու հաղթական ժպտում, չէ որ փաստ է, որ ոտքերը կոշիկների մեջ չեն մտնում, ուրեմն ոտքերը ջերմությունից ընդարձակվել են։

Մոտեցավ, առավ ձեռքիցս գիրքը, մի քիչ թերթեց, գտավ ինչ-որ բան ու գիրքը դրեց առաջս։ «Կարդա»,— ասում է,—«մինչև ես

ջերմությունից ընդարձակված ոտքերս ցրտությամբ փոքրացնում ու կոշիկներս հագնեմ»։

Կարդում եմ վերնագիրը՝ «Առասպել կոշիկի մասին»։ «...Ով չի լսել, կամ կարդացել բաղնիքում կոշիկի մեջ չմտնող տաքացած ոտքի մասին, իբրև թե այն պատճառով, որ ոտքի ծավալը տաքանալուց մեծացել է»։

«Իբրև թե»—նշանակում է՝ կորա, բայց այնուամենայնիվ շարունակում եմ։

«Նախ մարդու մարմնի ջերմությունը բաղնիքում գրեթե չի բարձրանում, մարդկային օրգանիզմը հաջողությամբ պայքարում է շրջապատող միջավայրի ջերմային ազդեցությունների դեմ և իր սեփական ջերմաստիճանը պահպանում է որոշ կետում։ Մարմնի ջերմաստիճանի բարձրացումը բաղնիքում կազմում է 0—2 աստիճան։

Բայց մեկ երկու աստիճան տաքանալու ժամանակ մարմնի ծավալն այնքան չնչին չափով է մեծանում, որ կոշիկները հագնելիս այդ չի էլ կարելի նկատել։ Մարդկային մարմնի կարծր և փափուկ մասերի ընդարձակման գործակիցը մի քանի տասնհազարերորդականից չի անցնում։ Հետևապես, թաթի լայնությունը և երունքի հաստությունը կարող են մեծանալ ընդամենը սանտիմետրի ինչ-որ հարյուրերորդական չափով։ Իսկ մի՞թե կոշիկները կարում են սանտիմետրի 0,001 մասի՝ մազի հաստության ճշտությամբ։

Բայց չէ՞ որ փաստը անառարկելի է. բաղնիքից հետո կոշիկները դժվարությամբ են մտնում։ Պատճառը ոչ թե ջերմային ընդարձակումն է, այլ այն, որ արյունը առատությամբ հոսում է դեպի մարմնի արտաքին խոնավ մակերևույթը և դրա նման երևույթներ, որոնք ընդհանուր ոչինչ չունեն ջերմային ընդարձակման հետ»։

Ա՜յ քեզ ջերմությունից ընդարձակում և ցրտությունից սեղմում (ըստ «Հ. Ֆ.»)։

2. Ի՞ՆՉՆ Է ԱՎԵԼԻ ԾԱՆՐ, ՄԵԿ ՏՈՆՆԱ ՓԱՅՏԸ, ԹԵ ՄԵԿ ՏՈՆՆԱ ԵՐԿԱԹԸ

Երբ այս հարցը հանկարծակի է տրվում, ապա չմտածելով սովորաբար պատասխանում են, որ մեկ տոննա երկաթը ավելի ծանր է, առաջացնելով ընդհանուր ծիծաղ։

Կատակասերները հավանորեն ավելի բարձր կծիծաղեն, եթե նրանց պատասխանեն, որ մի տոննա փայտն ավելի ծանր է, քան մի տոննա երկաթը։

Բանն այն է, որ Արքիմեդի օրենքը կիրառելի է ոչ միայն հեղուկների, այլև գազերի նկատմամբ։ Յուրաքանչյուր մարմին օդում կորցնում է իր կշռից այնքան, որքան կշռում է նրա դուրս մղած օդը։ Փայտն ու երկաթը նույնպես օդի մեջ կորցնում են իրենց կշռի մի մասը։ Որպեսզի նրանց իսկական կշիռը ստանանք, պետք է կորուստն ավելացնենք։ Հետևապես փայտի իսկական կշիռը հավասար կլինի մեկ տոննա՝ գումարած փայտի ծավալով օդի կշիռը, իսկ երկաթի իսկական կշիռը հավասար կլինի մեկ տոննա՝ գումարած երկաթի ծավալով օդի կշիռը։ Բայց մեկ տոննա փայտի ծավալը 15 անգամ ավելի մեծ է, քան մեկ տոննա երկաթի ծավալը, դրա համար էլ մեկ տոննա փայտի իսկական կշիռը ավելի է մեկ տոննա երկաթի իսկական կշռից։ Ավելի ճիշտը արտահայտվելով պետք էր ասել՝ այն փայտի իսկական կշիռը, որն օդի մեջ մեկ տոննա է կշռում, ավելի շատ է այն երկաթի իսկական կշռից, որն օդի մեջ մեկ տոննա է կշռում։

Իսկ քանի որ մեկ տոննա երկաթի ծավալը մեկ ութերորդական խորանարդ մետր է, իսկ մեկ տոննա փայտի ծավալը երկու խորանարդ մետր է, ապա դրանց դուրս մղած օդի տարբերությունը երկուս ու կես կիլոգրամ է։

Ուրեմն մեկ տոննա փայտը իրականում ծանր է մեկ տոննա երկաթից երկուս ու կես կիլոգրամով («Հ. Ֆ.)։

3. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼՈՒ ԱՄԵՆԱԷԺԱՆ ԵՂԱՆԱԿԸ

«Մի անգամ Փարիզի թերթերում տպվեց մի հայտարարություն, որը յուրաքանչյուրին խոստանում էր քսանհինգ սանտիմով ցույց տալ էժան և առանց հոգնածության ճանապարհորդելու միջոց։ Գտնվեցին այնպիսի դյուրահավատ մարդիկ, որոնք ուղարկեցին պահանջվող քսանհինգ սանտիմը։ Ի պատասխան դրանցից յուրաքանչյուրը փոստով ստացավ հետևյալ բովանդակությամբ մի նամակ.

«Քաղաքացի, մնացեք հանգիստ ձեր անկողնում և հիշեցեք, որ մեր երկիրը պտտվում է. Փարիզի 49-րդ զուգահեռականում դուք ամեն օր անցնում եք ավելի քան քսանհինգ հազար կիլոմետր։ Իսկ եթե դուք սիրում եք գեղարվեստական տեսարաններ, ետ գցեք լուսամուտի վարագույրը և հիացեք աստղալից երկնքով»։ Խարդախության համար դատի տրված այս կատակի հեղինակը, լսեց դատավճիռը, վճարեց իր վրա դրված տուգանքը և, ասում են, բե-

մական դիրք ընդունելով, հանդիսավոր կրկնեց Գալիլեյի նշանավոր բացականչությունը.

— Բայց և այնպես նա պտտվում է։

Պտտվո՞ւմ է։ Իսկ եթե երկրից վեր բարձրանանք և օդում մնանք թեկուզ մի քանի րոպե, չէ՞ որ այդ ժամանակ երկիրը կշարունակի պտտվել և մենք կիջնենք արդեն բոլորովին այլ տեղում, հեռու արևմուտքում։

17-րդ դարի ֆրանսիական գրող Սիրանո դե Բերժերակը այդպես էլ պատկերել է իր մի ճանապարհորդությունը։

Մի անգամ ֆիզիկայից ինչ-որ փորձեր կատարելու ժամանակ նա, անհասկանալի պատճառներով, իր բոլոր գործիքների հետ երկրից շատ վեր բարձրացավ։ Երբ մի քանի ժամից հետո նրան հաջողվեց նորից գետին իջնել, ապա նա զարմանքից ապշեց. ինքը գտնվում էր արդեն ոչ թե հայրենի Ֆրանսիայում և անգամ ոչ Եվրոպայում, այլ Հյուսիսային Ամերիկայի մայր ցամաքում՝ Կանադայում։ Ատլանտյան օվկիանոսի վրայով գործած իր անսպասելի թռիչքը ֆրանսիական գրողը, սակայն, միանգամայն բնական է համարում։ Նա այդ բացատրում է նրանով, որ քանի դեռ ինքը գտնվում էր երկնքում, երկիրը շարունակում էր առաջվա պես պտտվել դեպի արևելք։ Ուրեմն կարելի է օդում անշարժ կախվել և սպասել, մինչև որ երկիրն ինքը մոտեցնի ճանապարհորդին նշանակված տեղը։ Ցավոք սրտի, ճանապարհորդության այս զարմանալի եղանակը միայն երևակայություն է։

Օդ բարձրանալով մենք փաստորեն դեռ չենք կտրվում երկրագնդից, այլ մնում ենք կապված նրա գազային թաղանթի հետ, որը նույնպես երկրի հետ միասին պտտվում է նրա առանցքի շուրջը։ Օդը, ավելի ճիշտ նրա ստորին ավելի խիտ շերտերը, պտտվում են երկրի հետ միասին՝ տանելով իր հետ այն ամենը, ինչ գտնվում է նրա մեջ՝ ամպերը, սավառնակները, բոլոր թռչուններին, միջատներին և այլն։

Եթե օդը երկրագնդի հետ չպտտվեր, ապա գտնվելով երկրի վրա, մենք անընդհատ պետք է զգայինք մի այնպիսի սաստիկ քամի, որի համեմատությամբ ամենասարսափելի փոթորիկն անգամ մեղմ զեփյուռ կթվար։ Չէ՞ որ միևնույնն է՝ կանգնած ենք մենք տեղում, և օդը շարժվում է մեր մոտով, թե ընդհակառակը՝ օդն անշարժ է, իսկ մենք տեղափոխվում ենք նրա միջով։ Երկու դեպքում էլ մենք զգում ենք նույն ուժի քամին։

Իսկ եթե երկիրը շրջապատվա՛ծ չլիներ օդով կամ՝ չէ՞ որ կա-

բելի է բարձրանալ երկիրը շրջապատող մթնոլորտի շերտից շատ բարձր և այնտեղ սպասել։

Այս դեպքում էլ չէր հաջողվի օգտվել ճանապարհորդելու ամենաէժան եղանակից և ահա թե ինչու։

Կտրվելով պտտվող երկրի մակերևույթից, մենք շարունակում ենք իներցիայով շարժվել նախկին արագությամբ, այսինքն՝ այն արագությամբ, որով ներքևում շարժվում է երկիրը։ Այդ պատճառով էլ, երբ մենք կրկին ցած ենք իջնում, հայտնվում ենք ճիշտ այն կետում, որտեղից բարձրացել ենք (ըստ «Հ. Ֆ.»)։

4. ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ՕՐԵՆՔԸ

Մեխանիկայի երեք հիմնական օրենքներից ոչ մեկը չի առաջացնում այնպիսի տարակուսանք, ինչպես Նյուտոնի ազդման և հակազդման օրենքը։

Ազդումը, ասում է օրենքը, միշտ հավասար է և հակառակ է ուղղված հակազդմանը։ Սա նշանակում է, որ եթե ձին քաշում է սայլը, ապա սայլն էլ ձիուն ետ է քաշում նույն ուժով։

Նու՞յն ուժով։ Բայց չէ՞ որ այդ դեպքում սայլը պետք է մնա իր տեղում կանգնած։ Իսկ ինչու՞ է այն այնուամենայնիվ շարժվում։ Ինչու՞ այդ ուժերը չեն հավասարակշռում մեկը մյուսին, եթե հավասար են։

Ուժերը չեն հավասարակշռում մեկը մյուսին այն պատճառով, որովհետև նրանք կիրառված են տարբեր մարմինների նկատմամբ, մեկը՝ ձիու, մյուսը՝ սայլի։ Ուժերը հավասար են, այդ ճիշտ է, բայց միթե՞ հավասար ուժերի ազդեցությունները միշտ միատեսակ են։ Միթե՞ հավասար ուժերը բոլոր մարմիններին հավասար արագացումներ են հաղորդում։ Չէ՞ որ ուժի ազդեցությունը մարմնի վրա կախված է մարմնից՝ այն «դիմադրության» մեծությունից, որը մարմինը ցույց է տալիս ուժին։

Տարակուսանք չէր առաջանա, եթե օրենքը չձևակերպվեր իր սովորական համառոտ ձևով՝ «ազդումը հավասար է հակազդմանը», այլ այսպես՝ «հակազդող ուժը հավասար է ազդող ուժին»։ Չէ՞ որ այստեղ հավասար են միայն ուժերը, իսկ ազդեցությունները սովորաբար հավասար չեն լինում, երբ կիրառվում են տարբեր մարմինների նկատմամբ։

Մարմինների անկումը նույնպես ենթարկվում է հակազդման օրենքին, չնայած այդ երկու ուժերը միանգամից չեն երևում։ Բայց ամեն ինչ պարզվում է, եթե հիշենք, որ անկումը ձգողության ուժի

ազդեցությունից առաջացած շարժումն է։ Ձգողության ուժը մարմնի և երկրի փոխազդեցության ուժն է։ Ուրեմն մարմնին և երկրին կիրառված են հավասար, բայց հակառակ ուղղված ուժեր։ Այստեղից պարզ է, որ խնձորն ընկնում է երկրի վրա, որովհետև նրան ձգում է երկրագունդը։ Խնձորն էլ ճիշտ նույն ուժով ձգում է դեպի իրեն մեր մոլորակը։ Խստորեն ասած՝ խնձորն ու երկիրը ընկնում են մեկը մյուսի վրա, բայց խնձորի և երկրի համար այդ անկման արագացումը և, հետևաբար, արագությունը տարբեր է։

Փոխադարձ ձգողության հավասար ուժերը հաղորդում են խնձորին 10 մետր արագացում, իսկ երկրագնդին՝ դրանից այնքան անգամ պակաս, որքան անգամ երկրի մասսան մեծ է խնձորի մասսայից։ Եվ քանի որ երկրի մասսան գործնականորեն անվերջ անգամ մեծ է խնձորի մասսայից, այդ պատճառով էլ երկիրն այնքան չնչին չափով է տեղափոխվում, որ այն կարելի է ընդունել հավասար զրոյի։ Այդ է պատճառը, որ ասում ենք, թե խնձորն ընկնում է երկրի վրա, փոխանակ ասելու՝ «խնձորն ու երկիրն ընկնում են մեկը մյուսի վրա»։

Ընթերցողը, իհարկե, այժմ լավ պատկերացում կազմեց Նյուտոնի երկրորդ օրենքի մասին։ Այդ ստուգելու հեշտ միջոց կա։ Փորձեցեք ճիշտ պատասխանել հետևյալ հարցին։ Ձեռքում պահելով մի ձու, դուք հարվածում եք դրան մյուսով։ Երկու ձվերն էլ միատեսակ ամուր են և բախվում են միևնույն մասերով։ Նրանցից ո՞րը պետք է ջարդվի, այն, որին հարվածում են, թե այն որով հարվածում են։ Ինչո՞ւ։

(«Հ. Ֆ.»)

Ի. ԿՈՒԼՈՎ

5. ԿԱՐԱՊԸ, ԽԵՑԳԵՏԻՆԸ ԵՎ ԳԱՅԼԱՁՈՒԿԸ

Ինչքան ուզեն իրենց տանջեն,
Երբ ընկերներն համերաշխ չեն,
Օգուտ չունեն բռնած գործից.
Ա՜յ, մի առակ կյանքի փորձից,
Թեև անցուկ,
Բայց ոչ մոռցուկ։
Մի կարապ, մի խեցգետին, մի գայլաձուկ
Բարձած սայլը տեղից քաշել ուզեցին.
Եվ երեքով եկան սայլին լծվեցին.

Ի՛նչ են անում,
Ի՛նչ չեն անում
Սայլը տեղից չի էլ շարժվում։
Շատ թեթև է բեռը թվում,
Բայց կարապը վեր է թևում,
Խեցգետինը քաշում է ետ,
Գայլաձուկն էլ՝ հո՞, դեպի գետ.
Ո՞վ է արդար, ո՞վ մեղավոր,
Մենք չդատենք, բանն այն է, որ
Մինչև այսօր
Թե՛ սայլ, թե՛ բեռ
Նույն տեղն են դեռ։

Փորձե՞լ եք դուք քննարկել այս առակը մեխանիկայի տեսակետից։

«Մեր առաջ դրված է մի մեխանիկական խնդիր, որը վերաբերվում է մեկը մյուսի նկատմամբ անկյան տակ ազդող մի քանի ուժերի գումարմանը։ Ուժերի ուղղությունը որոշվում է առակի հետևյալ տողերից՝

Բայց կարապը վեր է թևում,
Խեցգետինը քաշում է ետ,
Գայլաձուկն էլ՝ հո՛, դեպի գետ։

Սա նշանակում է, որ մի ուժը՝ կարապի ձգումը, ուղղված է դեպի վեր, մյուսը՝ գայլաձկան ձգումը, դեպի մի կողմ, իսկ երրորդը՝ խեցգետնի ձգումը, դեպի ետ։ Զմոռանանք, որ գոյություն ունի նաև մի չորրորդ ուժ՝ սայլի ծանրությունը, որն ուղղված է ուղղաձիգ դեպի ներքև։ Առակը պնդում է, որ «մինչև այսօր թե՛ սայլ, թե՛ բեռ նույն տեղն են դեռ». այլ կերպ ասած՝ սայլի նկատմամբ կիրառված բոլոր ուժերի համազորը հավասար է զրոյի։

Տեսնենք, արդյո՞ք այդ այդպես է։

Դեպի ամպերը նետվող կարապը չի խանգարում խեցգետնի և գայլաձկան աշխատանքին, այլ նույնիսկ օգնում է նրանց։ Ծանրության ուժին հակառակ ուղղված կարապի ձգումը փոքրացնում է անիվների շփումը գետնի և առանցքների հետ, որով և թեթևացնում է սայլի կշիռը, իսկ գուցե նույնիսկ լիովին հավասարակշռում է սայլը։ Չէ՞ որ բեռը մեծ չէ («շատ թեթև է բեռը թվում»)։ Ենթադրելով, պարզության համար, թե տեղի ունի վերջին դեպքը, մենք տեսնում ենք, որ մնում են միայն երկու ուժեր՝ խեցգետնի ձգումը ու գայլաձկան ձգումը։ Այդ ուժերի ուղղության մասին

ասված է՝ «խեցգետինը քաշում է ետ, գայլաձուկն էլ՝ հո՛, դեպի գետ»... այսինքն՝ խեցգետնի և գայլաձկան ուժերը ուղղված են մեկը մյուսի նկատմամբ անկյան տակ, իսկ եթե այդ այդպես է, ապա նրանց համազորը ոչ մի կերպ չի կարող հավասար լինել զրոյի... Սայլը տեղից կշարժվի ...Այլ հարց է, թե ինչ ուղղությամբ կշարժվի սայլը՝ առաջ, ետ, թե դեպի մի կողմ։ Սա արդեն կախված է ուժերի հարաբերությունից և նրանցով կազմված անկյան մեծությունից»։

Իսկ եթե կարապի ձգումը չի՛ հավասարակշռում սայլի կշռին։

«...Այս դեպքում էլ սայլը չի կարող անշարժ մնալ։ Միայն մի պայմանով այդ երեք ուժերի ազդեցությամբ սայլը կարող է չշարժվել—եթե նրա անիվների շփումը առանցքների և գետնի հետ ավելի մեծ է, քան կիրառված ճիգերի համազորը, բայց դա էլ չի բռնում այն պնդմանը, որ «շատ թեթև էր բեռը թվում» (ըստ «Հ. Ֆ.»)։

6. ԿԱՐՈ՞Ղ ԷՐ ԱՐԴՅՈՔ ԱՐՔԻՄԵԴԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԵՐԿԻՐԸ

«Տվեք ինձ հենակներ, և ես կբարձրացնեմ երկիրը»—այս բացականչությունը լեգենդը վերագրում է Արքիմեդին, հին աշխարհի հանճարեղ մեխանիկին, որը հայտնագործել է լծակի օրենքները։

«Մի անգամ Արքիմեդը,—գրում է Պլուտարքոսը,—նամակով հայտնում է Սիրակուզայի թագավոր Հիերոնին, որն իր ազգականը ու ընկերն էր, թե տվյալ ուժով կարելի է ամեն մի ծանրություն տեղից շարժել»։ Ապացույցների ուժով հափշտակված նա ավելացնում է, որ եթե լիներ մի ուրիշ երկիր, ինքը նրա վրա փոխադրվելով տեղից կշարժեր մեր երկիրը։

Արքիմեդը գիտեր, որ չկա այնպիսի ծանրություն, որը լծակի օգնությամբ հնարավոր չլինի բարձրացնել ամենաթույլ ուժով։ Բավական է միայն այդ ուժը կիրառել լծակի շատ երկար բազուկին, իսկ կարճ բազուկով ազդել ծանրության վրա։ Այդ պատճառով էլ նա մտածում էր, թե սեղմելով լծակի չափից դուրս երկար բազուկի վրա, կարելի է ձեռքերի ուժով բարձրացնել նաև այն ծանրությունը, որի մասսան հավասար է երկրագնդի մասսային։

Բայց եթե հին աշխարհի մեծ մեխանիկն իմանար, թե որքան մեծ է երկրի մասսան, նա հավանորեն ձեռնպահ կմնար իր հպարտ բացականչությունից։ Մի րոպե պատկերացնենք, թե Արքիմեդին տվել են այն «ուրիշ երկիրը», հենակետը, որը նա փնտրում էր։ Պատկերացնենք այնուհետև, որ նա պատրաստել է անհրաժեշտ երկարության լծակը։ Գիտե՞ք արդյոք, թե որքան ժամանակ կպա-

հանջվեր երկրի մասսային հավասար մասսա ունեցող ծանրությունը գոնե մեկ սանտիմետրով բարձրացնելու համար։ Ոչ պակաս, քան երեսուն հազար բիլիոն տարի։ Իրոք։ Երկրի մասսան աստղաբաշխներին հայտնի է. այդպիսի մասսա ունեցող մարմինը երկրի վրա կկշռեր կլոր թվով 6 000 000 000 000 000 000 000 տոննա։

Եթե ընդունենք, որ սովորական մարդը կարող է անմիջականորեն բարձրացնել միայն 60 կգ., ապա երկիրը բարձրացնելու համար նա պետք է իր ձեռքերով հրի լծակի երկար բազուկը, որը կարճից մեծ է՝ 100 000 000 000 000 000 000 000 անգամ։

Պարզ հաշվարկը մեզ կհամոզի, որ մինչև կարճ բազուկի ծայրը բարձրանա մեկ սանտիմետր, մյուս ծայրը տիեզերքում կգծի մի հսկայական աղեղ՝ 1 000 000 000 000 000 000 կմ երկարությամբ։

Այդպիսի աներևակայելի երկար ճանապարհ պետք է անցնի լծակը շարժող Արքիմեդի ձեռքը, որպեսզի «երկիրը բարձրացնի» միայն մի սանտիմետրով։ Իսկ ինչքա՞ն ժամանակ կպահանջվի դրա համար, եթե ընդունենք, թե Արքիմեդը վաթսուն կիլոգրամ ծանրությունն ընդունակ է բարձրացնել մեկ մետր բարձրությամբ 1 վայրկյանում (այս աշխատունակությունը կազմում է համարյա մեկ ձիաուժ հզորություն)։ Այդ դեպքում էլ 1 սանտիմետրով «երկիրը բարձրացնելու» համար կպահանջվի 1 000 000 000 000 000 000 000 000 վայրկյան, կամ 30 հազար բիլիոն տարի։ Իր ամբողջ երկարատև կյանքի ընթացքում Արքիմեդը, սեղմելով լծակը, «երկիրը չէր բարձրացնի» նույնիսկ ամենաբարակ մազի հաստությամբ։ Հանճարեղ գյուտարարի և ոչ մի հնարամտությունը չէր օգնի նրան կրճատելու այն ժամանակամիջոցը։ «Մեխանիկայի ոսկե օրենքի» համաձայն ուժի մեջ շահելը անխուսափելի կերպով ուղեկցվում է տեղափոխման երկարության, այսինքն ժամանակի համապատասխան կորուստով։ Եթե նույնիսկ Արքիմեդը հասցներ իր ձեռքի արագությունը մինչև բնության մեջ հնարավոր մեծագույն արագությունը՝ մեկ վայրկյանում 300 000 կմ (լույսի արագությունը), ապա այդպիսի ենթադրության դեպքում էլ նա երկիրը կբարձրացներ մեկ սանտիմետրով միայն 10 միլիոն տարվա աշխատանքից հետո (ըստ «Հ. Ֆ.»)։

7. ԿՇՌԻ ՊԱԿԱՍՈՐԴԸ

Մի անգամ մի կատակասեր հայտարարել էր, որ նա գիտե, թե ինչպես կարելի է առանց խաբեության ապրանքը թերակշռել։ Գաղտնիքը այն է, որ պետք է ապրանքը դնել հասարակածային

երկրներում, իսկ վաճառել բևեռների մոտիկ տեղերում։ Վաղուց հայտնի է, որ հասարակածի մոտ իրերը ավելի փոքր կշիռ են ունենում, քան բևեռների մոտ։ Հասարակածից դեպի բևեռ տեղափոխված յուրաքանչյուր մեկ կիլոգրամը ծանրանում է 5 գրամով։ Սակայն անհրաժեշտ է օգտագործել ոչ թե սովորական, այլ զսպանակավոր կշեռք, այն էլ այնպիսին, որ պատրաստված է (աստիճանավորված է) հասարակածի վրա, թե չէ ոչ մի օգուտ չի ստացվի։ Ինչքան որ ծանրանա ապրանքը, այնքան էլ կծանրանա կշռաքարը։

Եթե մեկ տոննա ոսկի գնենք, օրինակ, Պերուում և ծախենք, ասենք, Իսլանդիայում, թերևս կարելի լինի մի քիչ վաստակել, եթե, իհարկե, տեղափոխումը ձրի լինի...

Հասարակածից հեռանալիս ծանրության ուժը իրոք մեծանում է։ Դա առաջանում է նրանից, որ հասարակածի վրա երկրի պտույտի ժամանակ մարմինները գծում են ամենամեծ շրջանները, ինչպես և նրանից, որ երկրագունդը հասարակածում ասես թե ուռած է։ Կշռի պակասորդի գլխավոր մասը պայմանավորված է երկրի պտույտով, որը հասարակածի մոտ մարմնի կշիռը պակասեցնում է նույն մարմնի բևեռներում ունեցած կշռի 1/290-րդ մասով։

Եթե երկիրը պտտվեր 17 անգամ ավելի արագ, ապա հասարակածի վրա մարմինները ամենևին կշիռ չէին ունենա, քանի որ կենտրոնախույս ուժը աճում է արագության քառակուսուն համեմատական (17×17≈290) (ըստ «Հ. Ֆ.»)։

8. ԾՈՎ, ՈՐԻ ՄԵՋ ԱՆՀՆԱՐ Է ՍՈՒԶՎԵԼ

Այդպիսի ծով կա այն երկրում, որը մարդկությանը հայտնի է հնագույն ժամանակներից։ Դա Պաղեստինի հայտնի Մեռյալ ծովն է։ Նրա ջուրն այնքան արտասովոր աղի է, որ նրա մեջ ոչ մի կենդանի էակ չի կարող ապրել։ Պաղեստինի անձրևազուրկ, կիզիչ կլիման շատ արագ գոլորշիացնում է ջուրը ծովի մակերևույթից։ Բայց գոլորշիանում է միայն մաքուր ջուրը, իսկ լուծված աղերը մնում են ծովում և մեծացնում ջրի աղիությունը։ Ահա թե ինչու Մեռյալ ծովը պարունակում է ոչ թե երկու կամ երեք % աղ (ըստ կշռի), ինչպես ծովերի և օվկիանոսների մեծ մասը, այլ 27 և ավելի տոկոս։ Խորության հետ միասին աղիությունը աճում է։ Այսպիսով Մեռյալ ծովի պարունակության քառորդը նրա ջրում լուծված աղերն են։ Այդ աղերի ընդհանուր քանակը մոտավորապես հաշվվում է 40 միլիոն տոննա։

Մեռյալ ծովի մեծ աղիությունը կապված է նրա մի հետաքրքիր հատկության հետ. նրա ջուրը ծովի սովորական ջրից զգալիորեն ծանր է։ Այդպիսի ծանր հեղուկի մեջ սուզվել հնարավոր չէ. մարդկային մարմինը նրանից թեթև է։

Երգիծաբան Մարկ Տվենը, որն այցելել է այդ ծով-լիճը, ծիծաղաշարժ մանրամասնությամբ նկարագրում է այն անսովոր զգացումները, որոնք ունեցել են ինքն ու իր ուղեկիցները Մեռյալ ծովի ծանր ջրերում լողալիս։

«Դա զվարճալի լող էր։ Մենք չէինք կարողանում սուզվել։ Այդտեղ կարելի է ամբողջ հասակով փռվել ջրի վրա, մեջքի վրա պառկած և ձեռքերը կրծքին ծալած, ըստ որում մարմնի մեծ մասը կմնա ջրի վրա։ Կարելի է նաև բոլորովին բարձրացնել գլուխը, դուք կարող եք շատ հարմար պառկել մեջքի վրա, ծնկները կզակին մոտեցնելով և ձեռքերով բռնելով, բայց շուտով կշրջվեք, որովհետև գլուխը կգերակշռի։ Դուք կարող եք տնկվել գլխի վրա և կրծքի կեսից մինչև ոտքերի ծայրը դուրս կմնաք ջրից...

Դուք չեք կարող մեջքի վրա լողալով փոքր-ինչ առաջ շարժվել, որովհետև ձեր ոտքերը դուրս են ցցվում ջրից, և դուք ստիպված եք լինում ջրից հրվել միայն կրունկներով։ Իսկ եթե փորձեք լողալ կրծքի վրա, ապա ոչ թե առաջ կգնաք, այլ դեպի ետ։

Ձին այնքան անկայուն է, որ չի կարող ոչ լողալ, ոչ էլ կանգնել Մեռյալ ծովում. նա իսկույն կողքի վրա է ընկնում (ըստ «Հ. Ց.»)։

9. ՏԱՔ, «ՁՈՐ» ՍԱՌՈՒՅՑԻ ԵՎ ՑՐՏԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք վարժվել ենք մտածել, որ ջուրը չի կարող գոյություն ունենալ պինդ վիճակում 0-ից բարձր ջերմաստիճանում։ Բայց իրականում այդ այդպես չէ։ Շատ մեծ ճնշման տակ ջուրը պնդանում է և մնում է այդ վիճակում 0-ից զգալիորեն բարձր ջերմաստիճանում։

Օրինակ՝ 20600 մթնոլորտ ճնշման տակ այսպես կոչված № 5 սառույցը կարող է մնալ պինդ վիճակում մինչև 76°C և չհալչել։ Այդպիսի սառույցը կայրեր մարդու մատները, եթե հնարավոր լիներ ձեռք տալ նրան։

«Տաք սառույցը» խիտ է ինչպես սովորական սառույցից, այնպես էլ ջրից. նա ջրում սուզվում է։

Ածուխը սովորաբար օգտագործվում է տաքություն ստանալու համար։ Բայց որոշ գործարաններում ածուխը այրվում է կաթսաներում, առաջացող ծուխը մաքրվում է, և նրա միջից ածխաթթու գազը անջատվում է որևէ ալկալիական լուծույթի օգնությամբ։ Այնուհետև տաքացման միջոցով մաքուր վիճակում անջատվող ածխաթթու գազը սառեցնելով և 70 մթնոլորտ ճնշման տակ սեղմելով հեղուկացվում է։ Սա էլ հենց այն հեղուկ ածխաթթու գազն է, որ օգտագործվում է «գազով ջրերի» արտադրության մեջ։

Երբ հեղուկ ածխաթթու գազը փոքր ճնշման տակ գոլորշիացնում են, ստացվում է չոր սառույց։ Ինչո՞ւ չոր։ Այդ սառույցը, որի կտորները արտաքնապես ավելի շուտ նման են մամլած ձյան, երբեք թաց չի լինում և իր շուրջը բոլորովին չի խոնավացնում։ Ջերմության ազդեցությամբ այն միանգամից գազ է դառնում առանց հեղուկանալու։ Չնայած նրա ջերմաստիճանը շատ ցածր է (—78°), բայց զգուշությամբ ձեռքը վերցնելիս նրա սառնությունը մատներով չի զգացվում։ Մեր մարմնին հպվելուց առաջացած ածխաթթու գազը մաշկը պահպանում է սառնության ազդեցությունից։ Միայն չոր սառույցի ձողիկը ձեռքում սեղմելիս ցրտահարման վտանգի ենք ենթարկում մեր մատները։

Իսկ ինչու՞։ Միթե՞ սառույցը ցրտի ճառագայթներ է արձակում։ Տարածված է այն կարծիքը, որ իբր տաքացնող ճառագայթներից բացի գոյություն ունեն նաև սառեցնող, ցրտի ճառագայթներ։ Չէ՞ որ սառցի կտորը իր շուրջը սառնություն է տարածում այնպես, ինչպես վառարանը իր շուրջը ստեղծում է ջերմություն։ Սա չի՞ խոսում արդյոք այն մասին, որ սառույցից ելնում են ցրտի ճառագայթներ այնպես, ինչպես տաքացնող ճառագայթները վառարանից։

Բայց նման մեկնաբանությունը սխալ է։ Ցրտի ճառագայթներ գոյություն չունեն։ Սառույցին մոտ գտնվող իրերը ավելի սառն են դառնում ոչ թե «ցրտի ճառագայթների» ազդեցության տակ, այլ որովհետև տաք իրերը ճառագայթների արձակման միջոցով կորցնում են ավելի շատ ջերմություն, քան նրանք ստանում են սառույցից։ Ե՛վ տաք իրը, և՛ սառը սառույցը ճառագայթման միջոցով ջերմություն են արձակում։ Տաք իրը սառույցին ավելի շատ ջերմություն է տալիս, քան ստանում է։ Ջերմության մուտքի հոսքն ավելի քիչ է, քան ելքի հոսքը, և իրը սառչում է (ըստ «Հ. Ֆ.»)։

Ընթերցանության տեքստեր քիմիայից

1. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՆՈՒՆՆԵՐ ՏՐՎԵԼ ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻՆ (ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻՆ)

Քիմիական գիտությանը հայտնի են մոտ հարյուր տարրեր։ Բոլոր այդ տարրերը ունեն իրենց անունները, իսկ այդ անունների լատիներենի առաջին տառերից էլ կազմվում են քիմիական նշանները՝ Fe *(ֆերում—երկաթ),* As *(արսենիկում—արսեն) և այլն։*

Քիմիկոսները նոր հայտնագործված տարրերը կոչում են այն երկրի ու քաղաքի անունով, որտեղ գտնվել է տվյալ տարրը կամ տվյալ նյութի միացությունը։ Այդ պատճառով էլ մեզ համար միանգամայն հասկանալի են այնպիսի անուններ, ինչպիսիք են՝ եվրոպիում, գերմանիում, գալիում (Ֆրանսիայի հին՝ Գալիա անունից), սկանդիում (Սկանդինավիա)։ Բայց ավելի դժվար է հիշել մյուս անունները, որոնց մեջ օգտագործված են որևէ քաղաքի կամ երկրի պատմական անունները։

Երբ 1924 թվականին Կոպենհագենում հայտնագործեցին մի նոր տարր, այն անվանեցին հաֆնիում, որը Դանիայի հին, պատմական, վաղուց մոռացված անունից է կազմված։ Նույն ձևով է ստացել իր անունը լյուտեցիումը՝ Փարիզի պատմական անվան հիման վրա։ Տալիում մետաղն իր անունը ստացել է Շվեդիայի և Նորվեգիայի հին սկանդինավյան անունից։

Ռուտենիում մետաղը, որը քիմիկոս Կլաուսը գտել է Կազանում, իր անունը ստացել է ի պատիվ Ռուսաստանի և նշանակում է «ռուսական»։

Իսկ ահա թե ինչ պատահեց Շվեդիայում՝ Ստոկհոլմի մոտ գտնվող դաշտային շպատի մի հանքի հետ։ Իտերբիի հանքում գտնվեցին մեծ քանակությամբ նոր տարրեր և ստեղծվեցին իտերբիում, իտրիում, էրբիում և տերբիում անունները։

Քիմիական տարրերի շատ անուններ տրվել են նրանց ֆիզիկական և քիմիական հատկությունների հիման վրա։ Քանի որ մի շարք քիմիական տարրեր հայտնաբերվել են սպեկտրոսկոպում ստացված գունավոր գծերի հիման վրա, ապա նրանք իրենց անունը ստացել են ըստ այդ գույների անունների։ Այսպես, ինդիումը՝ կապույտ գծի, ցեզիումը՝ փիրուզե-կապույտ, ռադիումը՝ կարմիր, տալլիումը՝ կանաչ։ Բազմաթիվ տարրեր անուններ են ստացել ըստ իրենց աղերի գույնի։ Օրինակ՝ քրոմ հունարեն նշանակում է «գույն»։ Այդ տարրը այդպես է կոչվել, քանի որ քրոմական աղերը

վառ գունավորում ունեն։ Քիմիկոսներից շատերը տարվում էին աստղաբաշխությամբ և տարրերը կոչում էին մոլորակների կամ աստղերի անուններով։ Այսպես տրվեցին ուրանի, պալադիումի, ցերիումի, տելիումի, սելենի, հելիումի անունները։ Հայտնի է, որ հելիումը առաջին անգամ հայտնաբերվել է արևի վրա (հելիոս— «արև»)։ Նույն կերպ առաջացան նեպտուն, պլուտոն անունները։ Ավելի մեծ քանակությամբ անուններ տրվել են հին աշխարհի աստվածների և աստվածուհիների պատվին։ Այդպիսի անուն է վանադիումը։ Կոբալտը և նիկելը, որոնք արծաթահանքերի վնասակար ուղեկիցներ են, իրենց անունները ստացել են իբր թե սաքսոնական հանքերում ապրող չար գաճաճների անուններից։

Հին դիցաբանական ծագում ունեն տանտալ, նիոբիում, տիտան և թորիում անունները։

Քիմիական էլեմենտների մոտ երեսուն անուն վերցված են արաբական և հնդկական գրականությունից։ Մարիա Կյուրիի պատվին կյուրի կոչվեց № 96 տարրը։

Այսպիսով ընդամենը հարյուր անուն, որոնց մեջ՝ հունական, արաբական, հնդկական, պարսկական, լատինական, սլավոնական արմատներ, աստվածներ, աստվածուհիներ, աստղեր, մոլորակներ, քաղաքներ, երկրներ, ազգանուններ... (ըստ «Հ. Գ.»)։

Իսկ ինչպե՞ս են կազմվել տարրերի հայերեն անունները։ Դրանց մի մասը բարդ բառեր են և իրենց կազմությամբ հասկանալի։

Օրինակ՝ ջրածին, թթվածին, ածխածին։

Արծաթ բառը բուն հայկական հնդեվրոպական բառ է, անագ ասորական ծագում ունի, արույր, պղինձ և արճիճ բառերը՝ պարսկական, նիկել, պլատին և ալյումին՝ եվրոպական լեզուներից են մտել հայերենի մեջ։ Հայտնի չէ կապար, ծծումբ, երկաթ և ոսկի բառերի ծագումը։ Մնացածների մեծ մասի անունները հայերենում լատինական նոր փոխառություններ են։

2. ՄԵՆԴԵԼԵՎԸ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՑ ԻՐ ՕՐԵՆՔԸ

Պետերբուրգի համալսարանի քիմիական լաբորատորիայի հին շենքում նստած էր մի երիտասարդ, բայց արդեն հայտնի պրոֆեսոր։ Դա Դիմիտրի Իվանովիչ Մենդելեևն էր։ Նա հենց նոր էր համալսարանում ստացել ընդհանուր քիմիայի ամբիոնը և զբաղված էր ուսանողների համար դասընթաց կազմելով։ Նա այդ ժամանակ որոնում էր ամենահարմար ձևը քիմիայի օրենքների շարադրման

համար, առանձին տարրերի պատմությունը շարադրելու համար և համառ կերպով մտածում էր այն մասին, թե ինչպես դասավորի իր շարադրությունը։ Ինչպե՞ս կապել իրար հետ պատմությունները կալիումի, նատրիումի կամ լիթիումի մասին, երկաթի, մանգանի և նիկելի մասին։ Նա արդեն զգում էր, որ առանձին քիմիական ատոմների միջև կան ինչ-որ դեռևս ոչ լրիվ հասկանալի կապեր։

Լավագույն կարգը գտնելու համար նա վերցրեց առանձին թերթիկներ և նրանց վրա մեծ տառերով գրեց տարրի անունը, նրա ատոմական կշիռը և մի քանի գլխավոր հատկությունները։ Այնուհետև նա այդ քարտերը սկսեց դասավորել, տարրերը խմբավորել իրենց հատկությունների համաձայն։ Եվ ահա պրոֆեսորը նկատեց մի սքանչելի օրինաչափություն։ Նա բոլոր քիմիական տարրերը դասավորեց իրար ետևից ատոմական կշռի աճման կարգով և պարզվեց, որ քիչ բացառություններով, որոշակի ընդմիջումներից հետո, էլեմենտների հատկություններն սկսեցին կրկնվել։ Այդ ժամանակ նա սկսեց հաջորդ թերթիկները դասավորել առաջին շարքի տակ և կազմեց երկրորդը, իսկ յոթ էլեմենտներից հետո սկսեց դասավորել երրորդ շարքը։

Այս շարքում հարկավոր եղավ դասավորել արդեն տասնյոթ էլեմենտ, որպեսզի նման ատոմներն ընկնեին իրար տակ, բայց այս դեպքում էլ ամեն ինչ հարթ չէր գնում, ազատ տեղեր էին մնում։ Այնուհետև նորից այդպիսի տասնյոթ վանդակներ՝ ստացվեց հաջորդ ոչ վատ շարքը։ Այնուհետև գործը ավելի բարդացավ. մի շարք ատոմներ բոլորովին չէին ուզում մտնել իրենց վանդակները, բայց այնուամենայնիվ հատկությունների կրկնությունը նկատվում էր պարզորեն։

Այսպիսով Մենդելեևին հայտնի բոլոր տարրերը դասավորվեցին առանձին աղյուսակի ձևով, ընդ որում, քիչ բացառություններով, նրանք բոլորը մեկը մյուսին հաջորդում էին հորիզոնական շարքերով՝ իրենց ատոմական կշռի աճման կարգով, իսկ նման էլեմենտները դասավորվեցին ուղղահայաց խմբերով։

1869 թվականի մարտին Մենդելեևը իր օրենքի մասին առաջին համառոտ հաղորդումն ուղարկեց Պետերբուրգի ֆիզիկո-քիմիական ընկերությանը։ Հետո, զգալով իր կատարած հայտնագործության հսկայական նշանակությունը, նա սկսեց դրա վրա համառորեն աշխատել, ճշտել, շտկել իր աղյուսակը։ Նա շուտով համոզվեց, որ աղյուսակում կան դատարկ տեղեր։ «Սիլիցիումից, բորից և ալյումինիումից հետո եկող այդ դատարկ տեղերում կգտնվեն նոր նյութեր»,— ասում էր նա։ Այդ կանխատեսումը շուտով իրականա-

ցավ, և դատարկ վանդակներում տեղավորվեցին գալիումը, գերմանիումը և սկանդիումը։ Այսպես ռուս քիմիկոս Մենդելեևը կատարեց քիմիայի պատմության մեջ մեծագույն հայտնագործությունը (ըստ «Հ. Գ.»)։

3. ԵՐԿԱԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

«Երկաթի հանքագործները»—գրել է Պլինիոսը՝ հին Հռոմի ժամանակներում,—մարդուն տալիս են ամենահրաշալի և խիստ շքեղագործ զենք։ Քանի որ զենքովն այս մենք հերկում ենք հողը, տնկում ենք տնկիներ, մշակում ենք պտղատու այգիներ և, կըտրելով վայրի խաղողի ճութերը, ստիպում ենք նրանց ամեն տարի երիտասարդանալ։ Զենքովն այս կառուցում ենք տներ, կոտրատում ենք քարերը և բանեցնում ենք երկաթը ամեն անհրաժեշտ դեպքում։ Բայց միևնույն երկաթով էլ մարտեր ենք մղում, կռվում ու թալանում և գործադրում ենք ոչ միայն մոտիկում, այլև, թևավորելով՝ գցում ենք այն հեռու հուժկու ձեռքերով, մերթ հրակնատից, մերթ որպես փետրավորված սլաք։

Իմ կարծիքով դա մարդու մտքի ամենաախտավոր հնարքն է, քանի որ մահը մարդուն շուտ հասցնելու համար նրան դարձրել են թևավոր և երկաթին տվել են փետուրներ։ Այդ իսկ պատճառով թող որ մեղքն ընկնի մարդկանց վրա, այլ ոչ թե բնության»։

Մարդկության ամբողջ պատմության ընթացքում պայքար է տեղի ունեցել երկաթի համար, սկսած 4—3-րդ հազարամյակից (մեր դարաշրջանից առաջ), երբ մարդն առաջին անգամ փորձել տիրապետել այդ մետաղին։ Կարող է պատահել, որ սկզբում նա հավաքում էր երկնքից ընկած քարերը՝ երկնաքարերը և նրանցից մշակում էր իրեր, ճիշտ այնպես, ինչպես մենք այդ տեսնում ենք Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների, Գրենլանդիայի էսկիմոսների, Մերձավոր Արևելքի բնակիչների մոտ։ Զուր չէ, որ գոյություն ունի արաբական մի հին լեգենդ այն մասին, որ երկաթը երկնային ծագում ունի։ Կոպտերենում այն նույնիսկ կոչվում է «երկնքի քար»։ Երկար ժամանակ երկաթը չէր կարող ունենալ լայն տարածում, քանի որ հանքաքարը հալելու միջոցով երկաթ ստանալը շատ դժվար էր, իսկ երկնաքարերը քիչ էին։ Միայն մեր դարաշրջանի առաջին հազարամյակում մարդը սովորեց երկաթ ստանալ երկաթի հանքաքարից, և բրոնզե դարին եկավ փոխարինելու երկաթե

դարը, որը կուլտուրայի պատմության մեջ շարունակվում է մինչև մեր օրերը։ Մեր շրջապատող բնության մեջ մետաղներից ամենից շատ կա ալյումին, այնուհետև՝ երկաթ, որը կազմում է երկրի կեղևի 4,5 %-ը։ Դա հսկայական թիվ է, բայց մինչև վերջերս գիտնականները գուշակում էին, որ մի հիսուն-յոթանասուն տարի հետո երկաթի համաշխարհային հանքաքարերը կսպառվեն, և մարդկությունը ստիպված կլինի «յոլա գնալ» առանց երկաթի։

Երկաթը երկրի երեսին բնական պայմաններում անկայուն է. նա հեշտությամբ քայքայվում է, ծածկվում է ժանգով։ Դա երկաթի ամենաոխերիմ թշնամին է։ Մարդը պայքարում է երկաթի այդ թշնամու դեմ. երկաթը ծածկում է ցինկի կամ անագի շերտով, մեքենաների կարևոր մասերը նիկելապատվում և քրոմապատվում են, ծածկվում են զանազան ներկերով, երկաթը մշակվում է զանազան ֆոսֆորական աղերով։

Բայց երկաթը միայն մեքենաների և գործիքների համար չէ, որ պետք է մարդուն։ Առանց երկաթի բույսերը չեն կարող գոյություն ունենալ։ Եթե ծաղկած սիսեռը զրկենք երկաթից, ապա կտեսնենք, որ նրա ծաղիկները շուտով կկորցնեն իրենց գույնը և հոտը, տերևները կդեղնեն, կսկսեն թառամել։ Այն կենսարար քլորոֆիլը, որն ստեղծում է կենդանի բջջի ամբողջ ուժը, որը ածխաթթվից վերցնում է ածխածինը, օդին տալով թթվածինը, այդ քլորոֆիլն առանց երկաթի գոյություն ունենալ չի կարող։ Մարդու արյան կարմիր գնդիկները այդ մետաղի ճամփորդության բազմաթիվ փուլերից մեկն են, և առանց երկաթի կյանք լինել չի կարող (ըստ «Հ. Գ.»)։

Ընթերցանության տեքստեր բժշկական խմբերի համար

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԸ

Մարդու մարմինը բաժանվում է հետևյալ մասերի՝ գլուխ, պարանոց, իրան և վերջավորություններ (ձեռքեր և ոտքեր)։

Իրանի ներսում կա մի մեծ խոռոչ, որը բարակ թաղանթն միջնապատով բաժանվում է երկու մասի՝ կրծքի խոռոչի և որովայնի խոռոչի։ Կրծքի խոռոչում գտնվում են սիրտը և թոքերը, իսկ որովայնի խոռոչում՝ ստամոքսը, աղիքները, լյարդը, երիկամները և այլն։

ԿՄԱԽՔ

Մարդու մարմնի բոլոր ոսկորները միասին վերցրած կազմում են կմախքը։ Մեր մարմնի փափուկ մասերի համար կմախքը հենարան է հանդիսանում։ Կմախքին ամրացած են մկանները։ Բացի այդ, կմախքի որոշ մասերը պաշտպանում են մեր ներքին օրգանները (գլխուղեղը, սիրտը, թոքերը և այլն) դանազան վտանգներից։

Կմախքի հիմնական մասը ողնաշարն է։ Այն կազմված է մի շարք իրար միացած մանր ոսկորներից, որոնք կոչվում են ողեր։ Ողերը անցք ունեցող ոսկորներ են և իրար այնպես են միացած, որ ողնաշարի ամբողջ երկարությամբ առաջացնում են մի խողովակ, որտեղ տեղավորված է ողնուղեղը։ Ողնաշարը պահպանում է ողնուղեղը վնասվելուց։ Պարանոցի առաջին ողի վրա նստած է գանգը։ Գանգը բաղկացած է երկու մասից՝ գանգի տուփից և դեմքի ոսկորներից։ Գանգի տուփի մեջ տեղավորված է գլխուղեղը, որը մեր օրգաններից ամենանուրբն է։

Կրծքի ողերին աջ ու ձախ կողմից կպած են բարակ և տափակ աղեղնաձև ոսկորներ՝ կողոսկրներ։ Դրանց մեծ մասը միանալով կրծքոսկրին՝ կազմում են կրծքի խոռոչը, որտեղ տեղավորված են սիրտը և թոքերը։

Վերջավորությունները երկու զույգ են։ Վերևի զույգը կոչվում է ձեռքեր, ներքևի զույգը՝ ոտքեր։

Ձեռքի ոսկորներն են՝ մեկ բազուկոսկր, նախաբազուկի (կանոնի) երկու ոսկորներ և դաստակի շատ ոսկորներ։

Ոտքի ոսկորներն են՝ ազդրոսկր, սրունքի երկու ոսկորներ և թաթի շատ ոսկորներ։

ՄԿԱՆՆԵՐ

Բոլոր տեսակի շարժումները մենք կատարում ենք մկանների միջոցով։ Մկաններ կան մարմնի բոլոր մասերում։ Մկանները միմյանց հետ խիտ կերպով միացած մանր, բարակ, փափուկ թելերի խրձեր են։ Կենդանիների լավ եփած միսը (մկանը) հեշտությամբ բաժանվում է մանր թելերի։ Մկանները ոսկորներին ամրանում են իրենց ջլերով։

Մկանները կարող են կծկվել. այն ժամանակ նրանք կարճանում և հաստանում են։ Մկանները կծկվելիս, ոսկորներին ամրացված ջլերի միջոցով շարժման մեջ են դնում կմախքի մասերը։

Ինչպե՞ս զարգացնել և ամրապնդել մկանները։

Մկանները որքան կանոնավոր են գործածության մեջ դրվում, այնքան նրանք ավելի են զարգանում և այնքան ավելի ամուր ու ուժեղ են լինում։

Դաշտում, այգում, բանջարանոցում և տանն աշխատելով, փայտ ջարդելով, սենյակ մաքրելով, ջուր բերելով, արդուկելով... մարդ ամրացնում է իր մկանները, ամրապնդում իր մարմինը։

Ֆիզիկական աշխատանքից խուսափող մարդկանց մկանները ճարպակալում են և թուլանում։ Այդպիսի մարդիկ ավելի շուտ են հոգնում և ավելի դժվարությամբ են կարողանում պայքարել հիվանդությունների դեմ։

ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ

Մարդու կյանքի համար անհրաժեշտ է սնունդը։ Մարդը ամենակեր է։ Նա սնվում է և՛ բուսական, և՛ կենդանական սնունդով։ Հացը, ձավարեղենը, բանջարեղենը, պտուղները, բուսական յուղը, շաքարը համարվում են բուսական սնունդ։ Ձուն, միսը, կաթը, կաթնամթերքները, յուղը, կարագը, մածունը համարվում են կենդանական սնունդ։ Դրանից բացի մենք օգտագործում ենք աղ և ջուր։

Տեսնենք, թե ինչ է կատարվում մեր ընդունած սնունդի հետ։

Կերակուրը բերանի խոռոչում ատամների միջոցով մանրանում և տրորվում է։ Այդ գործին օգնում է լեզուն՝ պատառը շուռ ու մուռ տալով։ Թուքը փափկացնում է այդ պատառը և փոփոխության ենթարկում նրան։ Դրանից հետո կուլ տալու միջոցով կերակուրը կերակրափողով անցնում է ստամոքսը։

Ստամոքսը տեղավորված է որովայնի խոռոչում դեպի ձախ։ Նրա մկանային պատերի ուժեղ կծկումների շնորհիվ կերակուրը մանրանում է, տրորվում է, ապա ստամոքսային նյութերի ազդեցության տակ որոշ չափով մարսվում և անցնում է աղիքները։ Աղիքներում սննդանյութերը նորից են ենթարկվում քայքայման և վերջնականապես մարսվում են։ Հեղուկ սնունդը, արյան հետ միասին, տարածվում է մարմնի բոլոր մասերը։ Չմարսված նյութերը մարմնից դուրս են գալիս։

Բերանը, ստամոքսը, աղիքները մարսողական օրգաններ են։

ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Բացի կերակրից և ջրից մարդու կյանքի համար անհրաժեշտ է նաև օդ։ Առանց կերակրի մարդ կարող է մի քանի օր, նույնիսկ մի քանի շաբաթ ապրել, առանց ջրի նույնպես կարելի է որոշ ժա-

մանակ դիմանալ, իսկ առանց օդի մի քանի րոպե անգամ մարդ չի կարող ապրել։

Օդը մարդը ստանում է շնչառության միջոցով։ Մեր շնչառության օրգաններն են՝ քթի խոռոչը, կոկորդը, շնչափողը և թոքերը։ Քթի խոռոչի ներքին պատերը ծածկված են մազմզուկներով և լորձունքով։ Դրանց շնորհիվ օդն այնտեղ անցնելիս մաքրվում է փոշուց ու մանրէներից (միկրոբներից) և միաժամանակ տաքանում է։ Քթի խոռոչից օդը անցնում է կոկորդը, այնտեղից էլ շնչափողը և ապա՝ թոքերը։

Կոկորդը շնչափողի սկզբի մասն է, նա կազմված է կրճիկներից։

Շնչափողը, որը նույնպես կրճկային կազմություն ունի, բաժանվում է երկու ճյուղի՝ բրոնխների։ Բրոնխները թոքերում ճյուղավորվում են ավելի ու ավելի մանր ճյուղերի։

Ներշնչման ժամանակ թոքերը լցվում են թթվածնով հարուստ օդով, իսկ արտաշնչման ժամանակ թոքերից հեռանում է ածխաթթու գազով հարուստ օդը։

Թոքերը համարվում են շնչառության ամենակարևոր օրգանը, նրանք տեղավորված են կրծքի խոռոչի աջ և ձախ կողմերում։

ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Արյուն կա մեր մարմնի բոլոր մասերում։ Դրանում կարող ենք համոզվել, եթե ասեղի ծայրով ծակենք մեր մարմնի որևէ տեղը։ Ծակած տեղից դուրս կգա կարմիր գույնի հեղուկ, դա հենց արյունն է։

Արյունը շատ մեծ նշանակություն ունի մարդու կյանքի համար։ Մեր կերած սննդարար նյութերը մարսվում և ներծծվում են արյան մեջ ու արյան միջոցով էլ տարածվում են մարմնի բոլոր մասերը։ Արյունը մեր մարմնին մատակարարում է նաև թթվածին և միաժամանակ հեռացնում է նրանից ածխաթթու գազը և ուրիշ զանազան անպետք ու վնասակար նյութեր։

Արյունը մեր մարմնի մեջ տարածվում է արյունատար անոթների միջոցով։ Արյանը շարժման մեջ է դնում սիրտը։ Նա գտնվում է կրծքի խոռոչում՝ թոքերի արանքում։ Մարդու ամբողջ կյանքի ընթացքում սիրտը անընդհատ բաբախում է։ Հասակավոր մարդու սիրտը մեկ րոպեում բաբախում է մոտավորապես 70—80 անգամ, իսկ երեխաներինը՝ 100—130 անգամ։ Հիվանդության դեպքում

սրտի բաբախումը կամ արագանում կամ դանդաղում է։ Բժիշկը զարկերակների բաբախումները ստուգելով պարզում է հիվանդի վիճակը։

ՍՐՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԱՄՔԸ

Սիրտը որքան ուժեղ լինի, այնքան ավելի կանոնավոր կաշխատի, այսինքն՝ արյուն, հետևաբար և՛ սննդանյութեր, և՛ թթվածին ֆմատակարարի մեր մարմնին։

Որպեսզի սիրտը ուժեղ և առողջ լինի, անհրաժեշտ է ամրապընդել այն։ Դրա համար պետք է զբաղվել ֆիզիկական աշխատանքով, մարմնամարզությամբ։

Սրտի մարզումը պետք է կատարվի սիստեմատիկաբար, ամեն օր։ Պետք է զգուշանալ սիրտը չափից ավելի հոգնեցնելուց։ Չի կարելի այն ծանրաբեռնել ուժից վեր աշխատանքով, չի կարելի նաև չափից ավելի զբաղվել շատ հոգնեցնող խաղերով։ Դրանից սիրտը կհոգնի, կթուլանա և չի կարողանա բավարար կերպով արյուն մատակարարել օրգաններին։ Սրտի համար չափազանց վնասակար է ալկոհոլը, ծխելը, մանավանդ փոքր հասակում։

Արյունը մեր օրգանիզմի գործունեության համար կարևոր նյութ է. պետք է հետևել, որ մեր մարմնից արյան կորուստ չլինի։ Դրա համար արյունահոսության որևէ դեպք պատահելիս, եթե այն կապելու միջոցով հնարավոր չէ դադարեցնել, պետք է իսկույն դիմել բժշկի։ Արյուն շատ կորցրած մարդուն արյուն են սրսկում (ներարկում)։

Շատ զգույշ պետք է լինել նաև արյան վարակումից։ Այն առաջանում է արյան մեջ վնասակար մանրէներ թափանցելուց։ Ուստի ամեն մի վերքի խնամք պետք է կատարել բժշկի խորհուրդով։ Երբեք հեքիմներին չպետք է դիմել։

ՈՒՂԵՂ ԵՎ ՆԵՐՎԵՐ

Մեր մարմնում անընդհատ աշխատանք է կատարվում։ Մեր բոլոր օրգանները՝ թոքերը, սիրտը, աղիները, ստամոքսը և այլն, աշխատում են իրար հետ համաձայնեցված, համերաշխ ձևով։ Եվ այդ ամենը կատարվում է շնորհիվ գլխուղեղի և ողնուղեղի գործունեության։

Գլխուղեղը, որն ունի շատ բարդ կազմություն, տեղավորված է գանգի տուփի մեջ, իսկ ողնուղեղը՝ ողնաշարի խողովակում։ Ողնուղեղը և գլխուղեղը մարմնի բոլոր մասերի հետ կապված են ներվերի միջոցով։ Ներվերը տարբեր երկարության սպիտակ թելի

տեսք ունեն։ Նրանք սկիզբ են առնում գլխուղեղից ու ողնուղեղից և ճյուղավորվելով տարածվում են մարմնի բոլոր մասերում։ Ներվերի հատկությունն է՝ ընդունել և հաղորդել գրգիռներ։ Օրինակ արտաքին աշխարհից զգայարանների՝ աչքի, ականջի, լեզվի, քթի և մաշկի միջոցով մարդը ստանում է լույսի, ձայնի, համի, հոտի, ցավի և այլ գրգիռներ։ Մեր զգայարաններում գտնվող ներվերը, ընդունելով այդ գրգիռը, հաղորդում են ողնուղեղին և գլխուղեղին։ Գլխուղեղից և ողնուղեղից ուրիշ ներվերով գրգիռը հաղորդվում է մարմնի մկաններին, որոնց կծկումների շնորհիվ մարդը կատարում է համապատասխան շարժումներ։ Աչքը մեր տեսողության զգայարանն է, ականջը՝ լսողության, լեզուն՝ ճաշակելիքի, քիթը՝ հոտառության, մաշկը՝ շոշափելիքի։

ՀԱՆԳԻՍՏ ԵՎ ՔՈՒՆ

Անընդհատ աշխատելով՝ ուղեղը հոգնում է։ Ուստի չափազանց մեծ նշանակություն ունի նրա կանոնավոր աշխատանքը և հանգիստը։ Դա պետք է կարգավորել օրվա ռեժիմի պահպանմամբ, որը շատ կարևոր է թե՛ մեծերի և թե՛ երեխաների համար։ Օրվա ռեժիմի միջոցով կարգավորվում է մարդու աշխատանքը, հանգիստը և քունը։

Հանգիստը չպետք է պատկերացնել որպես լիակատար անգործություն։ Մաքուր օդում զբոսնելը, ֆիզիկական թեթև աշխատանքը, ինչպես նաև սպորտը հանգստի լավ միջոց են։

Քունը շատ կարևոր է այն պատճառով, որ քնի ժամանակ ուղեղը հանգստանում է։ Քնելուց առաջ պետք է սենյակը օդափոխել։ Պետք է ունենալ մաքուր և առանձին անկողին, բայց ոչ շատ փափուկ։ Լավ է քնել աջ կողքի վրա, ձախ ձեռքը վերմակի վրա դնելով։

Անբավարար քունը կարող է առաջացնել հիվանդություններ։

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիվանդ մարդուց առողջ մարդուն անցնող հիվանդությունները կոչվում են վարակիչ։

Վարակիչ հիվանդություններից են կարմրուկը, քութեշը, դիֆտերիան, կապույտ հազը, գրիպը, դիզենտերիան և այլն։ Այդ հիվանդությունները հիվանդից առողջ մարդուն անցնում են մանրէների միջոցով։

Մանրէներն այնքան մանր են, որ նրանց կարելի է տեսնել միայն մանրադիտակի միջոցով, որը դրանց մեծացնում է 1000 և ավելի անգամ։

Վարակիչ հիվանդություններից կարելի է պաշտպանվել միայն այն դեպքում, եթե իմանանք, թե այդ հիվանդության մանրէները հիվանդ մարդուց առողջին ինչպես են փոխանցվում։

Մի քանի վարակիչ հիվանդությունների, օրինակ՝ քութեշի, կարմրուկի, դիֆտերիայի, թոքախտի, գրիպի մանրէները փոխանցվում են օդի միջոցով։ Երբ հիվանդը խոսելիս, հազալիս կամ փռշտալիս բերանը, քիթը թաշկինակով չի ծածկում, այդ դեպքում մանրէներով վարակում է օդը։ Առողջ մարդիկ, շնչելով այդ օդը, իրենց մարմնի մեջ են ընդունում հիվանդաբեր մանրէներ և հիվանդանում։ Այդ տեսակետից չափազանց վտանգավոր է թոքախտ հիվանդությունը։ Թոքախտով հիվանդի խորխի մեջ միլիոնավոր մանրէներ կան, որոնք ցրվում են ամեն կողմ, երբ հիվանդը հազում է։ Այդ մանրէները կարող են մարդու մարմնի մեջ թափանցել ոչ միայն օդի միջոցով, այլ նաև այն դեպքում, երբ առողջ մարդը օգտագործի հիվանդի ամանեղենը, երեսսրբիչը, հագուստը, մահճակալը։

Աղիքային հիվանդությունների (դիզենտերիայի, որովայնային տիֆի) մանրէները փոխանցվում են կերակրի և ջրի միջոցով։

Այդ հիվանդությունների տարածմանը նպաստում են հատկապես ճանճերը, որոնք մտնելով բաց զուգարանները, կեղտաջրի փոսերը, այնտեղից հիվանդաբեր մանրէներ են փոխադրում բնակարանները։

Աղիքային հիվանդություններից պաշտպանվելու համար անհրաժեշտ է պայքարել ճանճերի դեմ, խուսափել կեղտոտ ջուր խմելուց, չլվացած պտուղներ ու բանջարեղեն ուտելուց։ Ուտելուց առաջ պետք է ձեռքերը լվանալ, պետք է ուտել և խմել առանձին ամանից։

Մի քանի հիվանդությունների մանրէները տարածվում են միջատների միջոցով։ Օրինակ, բծավոր տիֆը տարածում են ոջիլները։ Նրանք հիվանդ մարդու արյունը ծծելով և տեղափոխվելով առողջ մարդու վրա, նրանց վարակում են այդ հիվանդությամբ։

Բոլոր հիվանդությունների դեմ պայքարի հիմնական միջոցը օրգանիզմի ամրապնդելն է և մաքրությունը։

Մարդիկ հիվանդանում են նաև մրսելուց։ Չի կարելի քրտնած ժամանակ սառը ջուր խմել, բաց պառկել կամ կանգնել միջանցիկ քամու դեմ։

(«Հայրենի բնություն»)

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Լսի՛ր, որդիս, պատգամ որպես
Սիրող քո մոր խո՛սքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզո՛ւն հազարագանձ։
Կտրել է նա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի.
Շառաչել է խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի,
Եվ Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել երթը մեր անաղարտ...
Նրանով է մրմնջացել
Հայ պանդուխտը վերքն իր սրտի.
Նրանով է որոտացել
Կռվի երգն իմ ժողովրդի,
Նրանո՛վ է մայրս ջահել
Ինձ օրորոց դրել մի օր,
Հիմա եկել, քե՛զ է հասել
Նրա կարկաչը դարավոր...
Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛ քո շուրթերին
Մեր ալեհե՛ր հայոց լեզուն։
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
Արարատի սուրբ ձյունի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ,
Քո պապերի աճյունի պես,
Ու ոսոխի դարկիցը սև
Դու պաշտպանիր կրծքով նրան,
Ինչպես մորդ կպաշտպանես,
Թե սո՛ւր քաշեն մորդ վրա։

Ու տե՛ս, որդի՛ս, ո՛ւր էլ լինես,
Այս լուսնի տակ, ո՞ւր էլ գնաս,
Թե մո՛րդ անգամ մտքից հանես,
Քո մա՞յր լեզուն չմոռանա՛ս...

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ
(Կրճատումներով)

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին-հին դարուց հիշատակ
Այլաց մեջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ հեղհեղուկ,
Պըղտոր ջրով եղերքին
Դարիվ-դարիվ խփելով
Փախչում էին լալագին։

— «Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սըգավոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սեգ, հըպարտ աչքերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պըղտորիլ հատակըդ,
Հանդարտ հոսե խայտալով,
Մանկությունը քու կարճ է,
Շուտ կըհասնիս դեպի ծով։

Վարդի թըփեր թող բըսնին
Քու հյուրընկալ ափի մոտ,
Սոխակները նոցա մեջ
Երգեն մինչև առավոտ։

Մրշտադալար ուռիներ
Սառ ծոցի մեջ քու ջրին
Ճկուն ոստրն ու տերև
Թող թաց անեն տապ օրին։

Ափերիդ մոտ Երգելու
Հովիվք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քու վրձիտ
Ջուրը մրտնին միշտ արձակ»։

Մեջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով
Էսպես խոսեց հատակից.

— «Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարևոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցավերը բյուրավոր։

Սիրելիի մահից ետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գլուխ պըճնվի
Իր զարդերով թանկագին,

Կար ժամանակ, որ ես էլ՝
Շըքեղազարդ հարսի պես
Հազար ու բյուր պըշրանքով,
Փախչում էի ափերես։

Հատուկս պարզ ու վճիտ,
Ներհակներըս ոլորուն,
Լուսաբերը մինչև այդ
Ջրիս միջին էր լողում։

Ի՞նչըս մնաց էն օրից,
Ո՞ր ջրամոտ գեղերըս,
Ո՞ր իմ շեն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս։

Տուրքը ջրի ամեն օր
Իր սուրբ ծոցին Արարատ
Մայրախընամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ։

Մինչ իմ որդիք,—ո՞վ գիտե,—
Մարավ, նոթի, անտերունչ
Օտար աշխարհ հածում են
Թույլ ոտքերով կիսաշունչ...

Քանի որ իմ զավակունք
Այսպես կու մընան պանդո՛ւխտ,—
Ինձ միշտ սրգվոր կը տեսնեք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»

Էլ չի խոսեց Արաքսը,
Հորձանք տվեց ահագին,
Օղակ-օղակ օձի պես
Առաջ սողաց մոլեգին։

ՊԱՏԳԻ

«ՍԱՄՎԵԼ»
(հատվածներ վեպից)

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԱՌԱՎՈՏԸ

Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը։

Արևի առաջին ճառագայթների ներքո Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողքերով, որոնք աչք էին շլացնում։ Արագածի պսակաձև գագաթը չէր երևում։ Նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսիկ, որ սքողում է յուր դեմքը անթափանցիկ շղարշով։ Կանաչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով։ Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի այլակոծությամբ։

Գեղեցի՞կ էր այդ առավոտը։

Թռչուններն ուրախ-ուրախ ճախրում էին մի թուփից դեպի մյուսը։ Գույնզգույն թիթեռները, գույնզգույն ծաղիկների նման, ցանված էին օդի մեջ։ Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևքերով թափահարում էր, շտապելով դեպի Արաքսի մորուտները։ Ձեռնասուն եղջերուները, վայրի վիթն ու այծյամը դուրս էին եկել խոսրովի արքայական անտառներից և ազատ, համարձակ վազվզում էին շրջակա մարգերի վրա։

Չէր երևում միայն մարդը։

Ամեն առավոտ թռչունը կարդում էր յուր նախարշալույսյան մեղեդին, և նրա հետ լսելի էր ժրաջան մշակի երգը։ Փայլում էր մանգաղը, եռում էր գործը, և ոսկեղեն հունձը յուր լիառատ բեղմնավորությամբ պարգևատրում էր վաստակաբեկ շինականի աշխատանքը։ Իսկ այս առավոտ չկար հնձվորը. չկար և հերկավորը։ Հասունացած արտը մնացել էր կիսաքաղ, և անվաստակելի արտրը անգործ ընկած էր դեռ չվերջացրած ակոսների մոտ։

Ամեն առավոտ սուրբ տաճարի կոչնակի առաջին հնչման հետ զարթնում էր հովիվը։ Ոչխարների անուշ բառաչը, արջառների ուրախ ձայնարկությունը կենդանացնում էին խոտավետ հովիտները խիստ ախորժելի աղմուկով։ Իսկ այս առավոտ չէին երևում ո՛չ հովիվը և ո՛չ նրա հոտերը։ Ցիրուցան գառնուկները թափառում էին սար ու ձոր և հայրակորույս որբուկների նման, կարծես որոնում էին հովվին։

Ամեն առավոտ, երբ ծագում էր ավնջյան լուսատուն, նրա առաջին ճառագայթները ողջունում էին շինական աղջիկների աշխատանքը։ Կարմիր, դեղին, կապույտ հագուստներով, որպես կարմիր, դեղին, կապույտ ծաղիկներ, սփռված էին լինում նրանք այգիներում, բանջարանոցներում և ագարակներում։ Երգում էին և գործում էին։ Եվ նրանց ուրախությանը ձայնակից էր լինում երգասեր սոխակը։ Իսկ այս առավոտ չէին երևում անխոնջ մշակուհիների այդ գեղեցիկ զարդերը։ Այգիները մնացել էին անխնամ, ագարակները կորցրել էին իրենց սիրելի բանվորներին։

Արևը բարձրացավ, և որքան բարձրանում էր նա, այնքան Արարատյան ընդարձակ դաշտավայրը, որպես մի հսկայական բուրվառ, խնկարկում էր յուր վաղորդյան անուշահոտությունը։ Ամբողջ հովիտը ծխում էր, գոլորշիանում էր։ Ցողազարդ բուսականությունը ետ էր տալիս երկնքին յուր ընդունած մարգարտյա կաթիլները։

ԱՐԱՔՍԻ ՈՐՈԳԱՅԹՆԵՐԸ
(Կրճատումներով)

...Արևը բավական բարձրացել էր, և առավոտյան զով օդը հետզհետե լցվում էր խիստ ախորժելի ջերմությամբ։

Որսորդների ասպախումբը դեռ շարունակում էր հանդարտ և ուրախ ընթացքով առաջ գնալ։

Սամվելը նստած էր մի գեղեցիկ, ոսկեգույն նժույգի վրա, որ այն առավոտ ընծա էր ստացել յուր հորից։ Նրա հետևից գնում էր պատանի Հուսիկը, որ զինակրի պաշտոն էր կատարում։ Նա կրում էր յուր իշխանի երկար նիզակը, լայնալիճ աղեղը, նետերով լի կապարճը և մի երկար, կաշյա բարակ ճոպան, որ փաթաթված կախ էր տվել յուր ձիու թամբից։ Իսկ ինքը Սամվելը կրում էր մի սուր միայն և մի արծաթյա փոքրիկ փող, որ քարշ էր ընկած նրա ոսկյա կամարից։

Ծերունի Արբակը, կարծես, բոլորովին մանկացել էր։ Նա գտնվում էր կատարյալ զինավառության մեջ։ Նա առաջ էր ընկած, և նրա հետևից գալիս էին Սամվելի քառասուն զինված ծառաները։ Նրանցից ոմանք ձեռքերի վրա կրում էին որսորդական բազեներ, ոմանք բռնած ունեին անհանգիստ բարակների փոկերի ծայրից, որ կապված էին նրանց երկար պարանոցներին։ Ազատ էին թողած միայն փոքրիկ, սորամուտ սկունդներին և ահագին թավամազ գամփռներին, որոնց որսորդների լեզվով կոչում էին «գայլ խեղդողներ»։ Այս բոլոր պատրաստությունը Սամվելին ընծայել էր հայրը։

Որսորդական հուշարարները, դեռ արևը չծագած, վաղ առավոտյան գնացել էին դիտելու, հետազոտելու բոլոր վայրերը, որ տեսնեն, թե ո՛րտեղ ի՛նչ երեներ կան։

Սամվելին ուղեկցում էր հայրը, շրջապատված յուր թիկնապահներով։ Իսկ փոքր-ինչ հեռու, յուր հայտնի սպիտակ նժույգի վրա նստած, գնում էր Մերուժանը յուր առանձին խմբով։ Նրանց հետ էր պարսից Կարեն զորապետը յուր մի քանի սպաներով։ Որսորդությանը չմասնակցեց Հայր-Մարդպետը։

Առջևից գնում էին մի խումբ պարսիկ տղաներ, որոնց թվումն էր և պատանի Արտավազդը։ Այդ մանկահասակ որսորդները իրանց շքեղ զինավառությամբ գրավել էին ամենքի հիացքը։ Բայց բոլորի մեջ ավելի փայլում էր, ավելի աչքի էր ընկնում պատանի Արտավազդը։ Ոգելից մանուկի ուրախությունը չափ չուներ։ Յուր աշխույժ նժույգի հետ ներկայացնում էր նա մի մարմնացած զվարճություն։

Ձախ կողմից՝ կապած ուներ ուսին նետերով լի արծաթյա կապարը, իսկ աջ կողմից ձգած ուներ լայնալիճ աղեղը, որ նրա համար բավական մեծ էր։ Ձեռքում կրում էր մի թեթև նիզակ, իսկ գոտիկից քարշ էր ընկած երկսայրի սուրը արծաթապատ պատյանով։

Սամվելն ընկղմված էր լուռ մտախոհությունների մեջ։ Երբեմն միայն հարևանցի կերպով նայում էր յուր շուրջը, նայում էր դեպի հեռուն, շատ հեռու և, կարծես, աշխատում էր միանգամից ծանոթանալ բոլոր տեղորայքի հետ։ Նրա վշտահար դեմքը, որպես միշտ, չէր ցույց տալիս ոչ մի բավականություն, թեև կցանկանար գոնե փոքր-ինչ ուրախ ձևանալ։ Իսկ յուր տխրության մեջ անգամ սքանչելի էր նա։ Ուրախ էր միայն նրա ամեհի նժույգը, որ անդադար ոստոստում էր և ահագին թռիչքներ էր գործում։ Բայց նա վարժ ձեռքերով այնպես հեշտությամբ դարձնում էր խստերախ երիվարի սանձը, կարծես մի հեզ գառնուկ լիներ։ Հայրը նայում էր նրա վրա և հիանում էր։ Նա սաստիկ փափագում էր, որ որդին բաժանվեր խմբից և մի թեթև ձիախաղ կատարեր այն հարթ տափարակի վրա, որ կանաչ թավշի նման տարածված էր նրանց առջև։ Նա մինչև անգամ ակնարկեց որդուն, բայց Սամվելը հրաժարվեց, ասելով.

— Անհարմար է, հայր, որովհետև այդ գեղեցիկ նժույգը, որ այսօր ընծայեցիր ինձ, տակավին վարժված չէ իմ ձևերին, և ոչ ես ծանոթ եմ նրա բնավորության հետ։ Կարող ենք չհասկանալ միմյանց։

— Ոչ, ընդհակառակն,— պատասխանեց հայրը ժպտալով,— նա որքան դյուրագրգիռ է, որքան համառ է, այնքան և խելացի։ Նրան կարելի է մոմի նման դեպի ամեն կողմ շուռ տալ։ Դա Շապուհ արքայի ախոռատան ամենաընտիր նժույգներից է, որ ընծա էր ստացել Համավերանի իշխանից։ Երբ վերջին անգամ ներկայացա արքայից արքային իմ խոնարհ հրաժեշտը տալու, նա պարգևեց ինձ այդ նժույգը, ասելով. «Գնա, Մամիկոնյան տեր, պայծառ Արամազդի օգնությանն եմ հանձնում քեզ, գնա և այդ նժույգով կատարիր քո արշավանքը Հայաստանում, նա անպատճառ բարեբեր ու բարեհաջող ազդեցություն կունենա քո ձեռնարկությունների վրա»։

Վերջին խոսքերի միջոցին հայրը ձեռքը մեկնեց դեպի Սամվելի նժույգի ճակատը, հարցնելով.

— Դու դեռ չե՞ս նկատել այդ սպիտակ աստղը նրա ճակատին։

Նա ցույց տվեց բոլորակ խալը, որ, ճերմակ աստղի նման, բնությունը նկարել էր նժույգի ճակատի մեջտեղում։

— Առաջին անգամն եմ տեսնում,— ասաց Սամվելը։

— Դա հաջողության նշան է,— կրկնեց հայրը։

— Չգիտեմ՝ ո՛րքան այդ աստղը կառաջնորդե ինձ դեպի հաջողություն...— ասաց Սամվելը, երկդիմի ժպտալով։— Բայց կարծեմ, մենք ճահիճների մոտով ենք գնում։ Այդ կողմերում թաղթաղուկ տեղեր շատ կան։ Կարող է պատահել, որ Շապուհ արքայի ընծայած նժույգի աստղը յուր նշանակությունը կորցնի Արաքսի թաղթաղուկների մեջ...

— Կարող է պատահել,— ասաց հայրը, թաքցնելով յուր տհաճությունը, որ պատճառեց նրան որդու կծու հեգնական ակնարկությունը։— Բայց մենք թաղթաղուկներից անցանք արդեն։

Հոր և որդու խոսակցության միջոցին մոտեցավ պատանի Արտավազդը։

— Ես թաղթաղուկներից չեմ վախենում,— ասաց նա ուրախ դեմքով։— Իմ ձին թեև հաջողության աստղ չունի, բայց անդունդների վրայից անգամ կարող է թռչել։ Սամվելն իզուր նազ է անում, նա գիտե միշտ այդպես թանկ ծախել յուր շնորհքը։ Տեսեք՝ ես ի՛նչպես եմ խաղացնում իմ ձիուն։

Առանց սպասելու, որ խնդրեն նրան, պատանին, յուր ձիու սանձը սաստիկ քաշելով, սկսեց մտրակել և զայրացնել նրան, որ ավելի գրգռե։ Ձին տաքացավ, բորբոքվեցավ, սկսեց սաստիկ ոստյուններ գործել։ Նրա ահագին թռիչքները նայողի վրա սարսափ էին ազդում։ Ամեն վայրկյան կարելի էր սպասել, որ զայրացած նժույգը յուր հանդուգն հեծյալին դեպի ցած կնետե։ Բայց պատանին նրա հետ ամուր կերպով ձուլված էր։ Կարծես նրա անդամներից մեկը լիներ։ Նա այնքան ազատ և համարձակ էր պահում իրան, որ անկարելի էր երևակայել այն աստիճանի ինքնավստահություն։

Երբ ձին բոլորվին բորբոքվեցավ, պատանին սկսեց զանազան ճարպիկ շրջաններ գծել տափարակի վրա։ Ձին իր բոլոր թափով պտտվում էր, իսկ ինքը, միևնույն ժամանակ, զարմանալի արագությամբ անցնում էր նրա պարանոցով և կրկին նստում թամբի վրա։ Այդ միջոցին նա մի արագաշարժ ճախարակ էր, որ հոլովվում էր յուր առանցքի շուրջը։ Նրան հետևեցին մի քանի պարսիկ պատանիներ, որոնց ճարպկություններն ևս ոչ սակավ հետաքրքիր էին։ Բայց ամենը նսեմացան պատանի Արտավազդի գործողությունների առջև, մանավանդ, երբ սկսեց նա յուր անհնարին նիզակախաղը կատարել։ Ձիու սրարշավ փախուստի միջոցին նետում էր նիզակը, և ամեն անգամ նիզակը շեշտակի կերպով ցցված էր մընում նշանակած կետի վրա, առանց յուր նպատակից վրիպելու։

Նա իսկույն կայծակի նման հասնում էր, խլում էր նիզակը և կըրկին նետում էր։ Իսկ երբ պատահում էր, որ նիզակը յուր ծայրի վրա ցցված չէր մնում, այլ վայր էր ընկնում, այդ դեպքում, նա առանց մի բոպե կորցնելու, շուտով վրա էր հասնում, առանց ոտները ասպանդակներից հանելու, թամբի միջից թեքվում էր և բարձրացնում ընկած նիզակը...

Մի քանի այլ զինամարզություններ ևս կատարվեցան, մինչև ամեն կողմից լսվեցան հավանության բազմաձայն աղաղակներ. «Շա՜տ ապրի Արտավազդը, շա՜տ ապրի Արտավազդը»... Պատանին քրտնած, կարմրած մոտեցավ խմբին։ Նրա վառվռուն աչքերը՝ ուժերի սաստիկ լարվելուց՝ փայլում էին մանկական ոգևորության բոլոր կյանքով։

— Դու քո զարմանալի ճարպկություններով նսեմացրիր մեր պատանիներին, Արտավազդ,— նկատեց պարսից Կարեն զորապետը։— Ասպարեզի փառքը քեզ է պատկանում...

Բավական ժամանակ պատանին խոսակցության առարկա էր դարձել, մինչև հասան Արաքսի ափերին։ Այդ կողմերում Արաքսի ափերը ծածկված էին փափուկ, կարմրագույն ավազով։ Նույն պարարտ փափկության վրա աճել էին զանազան թուփեր և թավախիտ մացառներ, որ կանաչ ժապավենի նման զարդարում էին նրա գեղեցիկ եզերքը։ Ջուրը նույնպես կարմիր գույն էր ստացել։ Գետը, անցնելով կարմրագույն լեռների միջով և յուր ընթացքում քերելով նրանց կուրծքը, ստացել էր նրանց գույնը։

Այդ կողմերում Արաքսի խաղաղ և լուռ ընթացքն այնպիսի տպավորություն էր գործում, կարծես թե ջուրը կանգնած լիներ։ Գետի մեջտեղում, գեղեցիկ օազիսի նման, երևում էր «Իշխանաց կղզին», որի վրա պետք է կատարվեր այնօրվա որսորդությունը։

Կղզին գետի ձախ կողմից ավելի մոտ էր ցամաքին, որից բաժանված էր բավական անձուկ նեղուցով։ Որսորդության ժամանակ դնում էին նեղուցի վրա տախտակյա շարժական կամուրջ և անցնում էին, իսկ մյուս ժամանակներում վեր էին առնում կամուրջը։ Այն օր դրած էր։ Նրա մի ծայրը՝ ցամաքի կողմից՝ հենված էր ամուր ապառաժի վրա, իսկ մյուս ծայրը՝ կղզու կողմից՝ դրված էր արհեստական թումբի վրա։ Կամուրջի տակից սրընթաց կերպով վազում էր ջուրը, որ բավական խորություն ուներ։ Կամուրջն այնտեղ նեղ էր և երկար, որ ամեն անգամ մի ձիավոր միայն կարող էր անցնել։ Այս էր պատճառը, որ բավական ժամանակ տևեց, մինչև ամենքն անցան։

Դեռ վաղ առավոտյան, կղզու մեջ, գեղեցիկ կանաչ տափարակի վրա, կազմել էին մի քանի վրաններ՝ որսորդների հանգստանալու համար։ Այնտեղ Մերուժանի խոհարարները կրակ էին վառել և նախաճաշիկի պատրաստություն էին տեսնում։ Ճաշը պետք է պատրաստվեր հետո, որսի մսից։

Երբ հասան վրաններին, ամենքը ձիերից ցած իջան, որ փոքրինչ հանգստանան, մի բան ուտեն և ապա սկսեն որսորդությունը։ Պատանի Արտավազդը չսպասեց մինչև նախաճաշիկը տային, իսկույն առեց մի պատառ հաց ու պանիր և, ձեռքում ուտելով, վազեց կղզու մեջ պտտելու։ Սամվելը մնաց հոր մոտ։ Մերունի Արբակը Սամվելի ծառաների հետ նստեց վրանների մոտ, խոտերի վրա։ Իսկ Մերուժանը, պարսից Կարեն զորապետի ձեռքից բռնած, ճեմում էր վրանների առջևում, և ինչ-որ հարցի մասին ջերմ կերպով խոսում էին։

Կղզին բավական ընդարձակ էր և ձվաձև։ Գետի ընթացքի երկարությամբ սեղմվել էր նրա երկու բաժանված ճյուղերի մեջ։ Այնտեղ բնակություններ չկային։ Երևում էին մի քանի փոքրիկ տաղավարներ միայն, որ այժմ դատարկ էին, և որոնց մեջ բնակվում էին առաջ կղզու պահապանները։

Գեղեցի՞կ էր կախարդական կղզին յուր վայրենի չքնաղության մեջ։ Որքա՜ն սեր, որքա՜ն արտասուք թափվել էր այնտեղ։ Գալիս էր երբեմն Սյունյաց իշխանը, յուր հետ բերելով յուր հարճերի և յուր նվագածուների բազմությունը։ Նվագարանները հնչում էին, հարճերը պարում էին, գինին զեղվում էր արծաթյա մեծ գավաթներով, և ամբողջ գիշերներ լուսանում էին ուրախ, անհոգ, աղմկալի խրախճության մեջ։ Արաքսի ամոթխած հավերժահարսունքն անգամ նախանձում էին՝ տեսնելով, թե ո՛րպես անսպառ կերպով վայելել գիտե մարդը կնոջ սերը և նրա գեղեցկությունը։

Այո՛, գեղեցի՞կ էր կախարդական կղզին։ Բարձր, ուղղաձիգ եղեգնաբույսերը, իրանց ճերմակ, փնջաձև կատարներով, ծածանվում էին զեփյուռի մեղմ շունչից, արձակելով մի խորհրդավոր սոսափյուն, որ նման էր սիրաբորբոք հեշտախոսության։ Ուշիմ եղջերուն, երկար ու ճարպուկ պարանոցը մեկնած, մի առանձին ախորժակով քաղում էր եղեգների թարմ տերևները։ Նա իսկույն անհայտացավ, երբ լսեց կասկածավոր այցելուների ոտնաձայնը։ Իսկ այնտեղ, շամբուտների խոնավ մթության մեջ, թավալվում էր ամեհի վարազը և յուր սառն, տղմային անկողնում գոռոզաբար արհամարհում էր արևի կիզիչ ճառագայթների ներգործությունը։ Երկչոտ նապաստակը, երբեմն կանգ առնելով, երբեմն յուր շուրջը նայե-

լով, շտապով վազվզում էր խոտերի մետաքսային փափկության միջով։ Իսկ վրդովված այծյամը մամռապատ ժայռի գլխին դեռ շփոթված կերպով դիտում էր՝ ստուգելու, արդյոք ո՛վքեր են նորեկ հյուրերը։

Հարուստ բուսականությունը հիացման չափ ճոխ էր և շռայլ։ Թարմ, հյութալի կանաչազարդության միջից իրենց փայլուն գլխիկներով վառվում էին ջրածաղկի զանազան տեսակները, որոնք ուրիշ տեղերում միայն ճահիճների պչրանքն են ներկայացնում։ Տեղ-տեղ բարակ ծղոտներով և երկար թրաձև տերևներով բարձրացել էր վայրենի շուշանը, որ յուր նուրբ անուշահոտությամբ լցրել էր օդը խիստ ախորժելի բուրմունքով։ Տեղ-տեղ քյաֆուր վարդը բաց էր արել յուր շքեղ ծաղիկը, որ ժպտում էր թավշյա ծիրանեգույն թերթիկներով։ Զանազան կողմերում թուփերը, մացառները այն աստիճան աճել էին, որ մի փոքր հեռավորության վրա մարդ յուր ընկերին տեսնել չէր կարողանում։ Ձիաներով անհնար էր շրջել այնտեղ, որովհետև ամեն քայլում մացառների խիտ հյուսվածքը ծածկում էր հազիվ նշմարվող շավիղները։ Ավելի հեշտ էր ոտքով։

Երբ վերջացրին նախաճաշիկը, յուրաքանչյուրն առեց յուր զենքերը, և պատրաստվեցան սկսելու որսորդությունը։ Արթուն հուշարարները խուզարկու շների հետ վազուց արդեն ներս էին մտել մացառների մեջ և սուրալով խարխափում էին, որ դուրս վանեն անասուններին։

Երբ ճանապարհ ընկան, որսորդները բաժանվեցան մի քանի փոքրիկ խմբերի և տարածվեցան դեպի կղզու զանազան կողմերը։ Պատանի Արտավազդը միացավ Մերուժանի խմբի հետ, իսկ Սամվելը՝ յուր հոր խմբի հետ։ Վերջինների թվում էր և պարսից Կարեն զորապետը։ Ծերունի Արբակը, Սամվելի ծառաների հետ, հետևում էր նրան։ Պարսից մնացյալ սպաներն առանձին խմբեր կազմեցին և բաժանվեցան մյուսներից։

Սամվելը երկար, հաստատուն նիզակը ձեռին, լուռ առաջ էր գնում։ Նրա մուգ դեմքը սովորաբար պղնձի գույն էր ստանում, երբ գտնվում էր հոգեկան սաստիկ ալեկոծության մեջ։ Այդպես էր այժմ նրա դեմքը։ Այդպես լինում էր նա կռվի ջերմ փոթորկի ժամանակ, այդպես լինում էր նա և որսորդության զվարճալի հրապույրների ժամանակ։ Բայց դրանցից և ոչ մեկը չէր, որ նույն բոպեներում բորբոքում էր, վրդովեցնում էր երիտասարդական սիրտը։ Նրան խռովության մեջ էին դրել բոլորովին այլ մտատանջություններ...

— Սամվե՛լ,— նկատեց նրան հայրը մի այնպիսի ձայնով,

որի մեջ լսվում էր ծնողական սրտի բոլոր գորովը, բոլոր ջերմությունը,— զգուշացի՛ր, երբ վարազների հանդիպես։ Այստեղի վարազները սաստիկ կատաղի են։

— Կցանկանայի, հայր, վագրերի հանդիպել, առյուծների հանդիպել,— պատասխանեց Սամվելը թախծոտ ձայնով։— Բայց ասիսո՞ս, որ այստեղ ո՛չ վագրեր կպատահեն և ո՛չ առյուծներ։ Կցանկանայի գոնե Արաքսի սոսկալի նհանգներից մեկը հրեշավոր գլուխը ջրերից վեր բարձրացներ և յուր բոլոր կատաղությամբ հարձակվեր իմ վրա...

Սամվելը պարծենկոտ չէր։ Այդ գիտեր հայրը։ Ուրեմն ի՞նչը առիթ տվեց նրան այս տեսակ ցնորքների մեջ ընկնելու։ Նախաճաշիկի ժամանակ նա շատ քիչ խմեց։ Այդ տեսավ հայրը։ Ուրեմն գինին ևս չէր կարող գրգռել նրա երևակայությունը։ Այսուամենայնիվ, հայրը հարցրեց.

— Երևի նրա համար են այդ գեղեցիկ ցանկությունները, Սամվել, որ ցույց տաս քո քաջությունը։ Բայց քո քաջությունը, անտարակույս, այս տեսակ ապացույցների կարոտ չէ։

— Ոչ, հայր, դրա համար չէ։ Ես հեռու եմ ամեն փառասիրությունից։ Միայն կցանկանայի կռվել... ի մա՜հ կռվել...

Հայրն սկսեց տխրել։ «Նա ցանկանում է մահվան համար կռվել»... «Ի՞նչը ձանձրացրել է սիրելի որդու լուսապայծառ, ծաղկափթիթ կյանքը»... Այս մտքերն սկսեցին սարսափեցնել նրան։

Հոր և որդու խոսակցությունն ընդհատեց հուշարարներից մեկի փողի ձայնը։ Սամվելը վազեց դեպի այն կողմը, որտեղից լսվեցավ ձայնը։ Նրան հետևեցին պատանի Հուսիկը, որ զինակրի պաշտոն էր կատարում, և յուր ծառաներից մի քանիսը։

Հայտնվողը Սամվելի փափագած որսերից և ոչ մեկը չէր։ Ուռենիների թավուտներից դուրս հարձակվեցավ մի ահագին եղջերու ծանր, բազմաճյուղ եղջյուրներով։ Անփույթ կերպով նայեց յուր շուրջը և, եղջյուրները դեպի քամակը դարձնելով, փորձում էր փախչել, բայց իսկույն շները շրջապատեցին նրան։ Նրանցից ոչ մեկը չէր համարձակվում մոտենալ։ Սուր եղջուրները ոչ միայն վահանի գործ էին կատարում, այլև աշտեի։ Դեպի ո՛ր կողմը և դառնում էր նա, շները խմբով փախչում էին նրա առջևից։ Սամվելը վրա հասավ։ Եղջերուն կատաղի կերպով հարձակում գործեց և անշուշտ սուր եղջյուրներով կթափեր յուր համարձակ ախոյանի փորը, եթե երիտասարդի նիզակը շեշտակի կերպով չմխվեր նրա աջ ուսի մեջ։ Նիզակը խոցեց միայն, բայց մահվան չափ ազդել չկարողացավ։ Շները դարձյալ շրջապատեցին նրան։ Սամվելը կրկնեց նիզակի

զարկը։ Այս անգամ դիպավ ազդրին։ Եղջերուն ո՛չ թե ստացած հարվածների երկյուղից, այլ ավելի՝ խրտչելով անակնկալ դեպքից, պատռեց շների շղթան և սկսեց փախչել։ Ծառաներից ոչ մեկը չըկարողացավ նրա առաջն առնել։ Սամվելը հետամուտ եղավ։ Զարմանալի էր սրարշավ անասունի փախուստը։ Բայց նրանից ոչ սակավ արագավազ էր Սամվելը։ Վազելու սովորած էր նա սկսյալ մանկությունից, որ նրա կրթության գլխավոր հրահանգներից մեկն էր եղած։ Հայրը, յուր ուղեկիցների հետ կանգնած, անհամբերությամբ նայում էր, որ տեսնե, թե ի՛նչպես կվերջացնի որդին յուր որսի հետ։ Այդ միջոցին եղջերուի երկար ճապուկ ոտները հազիվհազ դիպչում էին գետնին, և յուր վազելու սաստկության ժամանակ ահագին թռիչքներ էր գործում։ Սամվելը հետևից անդադար նետեր էր արձակում։ Նետերը թեև դիպչում էին, բայց փետուրյա գրիչների նման ցցվում մնում էին նրա մարմնի վրա։ Վիրավոր անասունը շարունակում էր փախչել, յուր շավղի վրա թողնելով հոսող արյան կարմիր հետքերը։ Ոչ սակավ զայրացած էին Սամվելի ծառաները։ Նրանք շների հետ վազեցին դեպի զանազան կողմեր և ամեն կողմից կտրելով համառ անասունի ճանապարհը, աշխատում էին պահել նրա առաջը, որպեսզի, միգուցե հասներ կղզու ափին և, նետվելով գետի մեջ, լողալով անցներ մյուս կողմը։ Սամվելի հետևից վազում էր միայն նրա զինակիրը՝ պատանի Հուսիկը։

— Տու՛ր ինձ արկանը,— դարձավ նա դեպի պատանին,— եթե ոչ, այդ անիրավը բոլորովին կհոգնեցնի ինձ։

Պատանին տվեց նրան կաշյա երկար պարանը։ Սամվելը արկանի մի ծայրը փաթաթեց ձախ թևքին, իսկ մնացած մասը, կաժի ձևով հավաքելով աջ ձեռքում, յուր որսի սաստիկ փախչելու միջոցին ձգեց դեպի նրա գլուխը։ Արկանը փաթաթվեցավ բազմաճյուղ եղջյուրներին և անցավ նրա պարանոցով։ Այժմ ուժ էր հարկավոր պահելու կատաղի անասունին։ Եթե ոչ, նա յուր հետևից քարշ կըտար հանդուգն արկանարկուին։ Բայց Սամվելի բազուկների մեջ նրան զսպելու չափ զորություն կար։ Նա յուր արկանով այնպես կաշկանդեց ուժեղ անասունին, որպես ճանճը կաշկանդվում է սարդի ոստայնի մեջ։ Այդ միջոցին վրա հասավ պատանի Հուսիկը և, նիզակն ուղղելով՝ կամենում էր խրել նրա կողքի մեջ։ Սամվելն արգելեց, ասելով.

— Թող տուր, ես դրան կենդանի պետք է տանեմ հորս մոտ։

Հայրը տեսավ, և նրա սիրտը լցվեցավ անսպառ ուրախությամբ։ Նրա մոտ կանգնած էր պարսից Կարեն զորապետը։

— Ի՞նչպես երևաց քեզ,— դարձավ նա դեպի զորապետը։

— Սքանչելի՜ է, պայծառ Արամազդը վկա, սքանչելի՜ է,— բացականչեց ապշած պարսիկը։— Գիտե՞ս, իշխան, եղջերուի որսն ավելի դժվար է, քան թե առյուծի կամ վագրի որսը, որովհետև եղջերուն արագավազ ոտներ ունի և փախչում է, բայց առյուծը կամ վագրն ամոթ են համարում փախչելը, նրանք կռվում են։ Իսկ կըռվողի հետ հեշտ է կռվել, կա՛մ հաղթել, կա՛մ հաղթվել։

Սամվելը, յուր որսը հետևից քարշ տալով, մոտեցավ հորը։

— Ես իմ բաժինը վերջացրի,— ասաց նա քրտինքը սրբելով,— մեր ճաշի համար այժմ բավական խորովածացու միս ունենք։

— Մի՞թե չես կամենում շարունակել,— հարցրեց հայրը։

— Կցանկանայի մի փոքր հանգստանալ. այդ անիրավը բավական հոգնեցրեց ինձ։— Նա ձեռքը տարավ դեպի եղջերուն։

Ծառաները մոտեցան, տարան որսը։ Սամվելը հոր հետ դիմեց դեպի վրանների կողմը։ Հուսիկը չբաժանվեցավ յուր իշխանից։ Իսկ պարսից Կարեն զորապետը գնաց տեսնելու, թե ի՛նչ են անում մյուս որսորդները։

Երբ հասան վրաններին, հայրը ցույց տվեց նրանցից մեկը, ասելով.

— Մտնենք այդ վրանը, դա մեզ համար է պատրաստված։

— Ես կցանկանայի մի փոքր շրջագայել կղզին և հիանալ նրա գեղեցկությամբ,— պատասխանեց Սամվելը։— Այդ վրանները կատարելապես ձանձրացրին ինձ։ Պարզ երկինքը, մետաքսյա կանաչը և Արաքսի սքանչելի ափերը թողած, այժմ մինչև անգամ մեղք կլիներ փակվել վրանների մեջ։

Հայրը դարձյալ նկատեց որդու մեջ մելամաղձային դրություն։ Ի՞նչն էր անհանգստացնում նրան։ Այն օրվա բոլոր պատրաստությունները միայն նրան զբաղեցնելու և միայն նրան զվարճացնելու համար էին։ Իսկ որդին, կարծես, խույս էր տալիս այդ բոլորից։ Նա որոնում էր առանձնություն, որոնում էր ամայի վայրերի խլություն, որ յուր սրտի հետ խոսեր, որ յուր հոգու հետ խորհրդակցեր։ Հայրը չթողեց նրան միայնակ գնալ, թեև Սամվելը կցանկանար միայնակ լինել։ Հայրը բռնեց նրա ձեռքը, և երկուսը միասին սկսեցին ճեմելով դիմել կղզու այն կողմը, որ ավելի ազատ էր մացառներից։

Հեռվից լսելի էր լինում որսորդների փողերի ձայնը, լսելի էին լինում և խառնաձայն աղաղակներ։ Այդ միջոցին հայր և որդի հանդարտ քայլերով անցնում էին փափուկ խոտերի վրայով, որ միախառնվելով գույնզգույն ծաղիկների հետ, նախշուն գորգի նման սփռված էին նրանց առջև։ Երկար անխոս գնում էին նրանք, մինչև

հասան կղզու ափին։ Այնտեղ մի խումբ վարսավոր ուռենիներ հրավիրեցին նրանց իրանց ախորժելի ստվերի ներքո։ Հայր ու որդի նստեցին միմյանց մոտ։ Գեղեցի՜կ էր փոքրիկ հովանոցը։ Այնտեղ ուռենիներն իրանց անթափանցիկ գրկում սնուցանում էին խիստ զվարթարար զովություն, չնայելով, որ արեգակի միջօրեական ճառագայթներն արդեն սկսել էին այրել։

Հոր և որդու մեջ տիրում էր մի տեսակ բռնադատյալ լռություն։ Երկուսն էլ ցանկանում էին խոսել, բայց դժվարանում էին, թե ի՛նչ խոսեն, թեև շատ բան ունեին միմյանց ասելու։ Այդ առաջին անգամն էր, որ նրանք գտնվում էին միասին և այս տեսակ մեկուսացած առանձնության մեջ։ Յուրաքանչյուրը ցանկանում էր բաց անել յուր սիրտը։ Հայրը ցանկանում էր մի առ մի բացատրել որդուն յուր բոլոր դիտավորությունները, թե ի՛նչ նպատակներ ունի նրա ապագայի մասին կամ որպե՛ս մտածում է տնօրինել նրա բախտավորությունը։ Բացի դրանից, կամենում էր բացատրել և յուր քաղաքական նպատակները, որ վերաբերում էին առհասարակ հայոց աշխարհի գործերին։ Իսկ որդին նոր բացատրությունների կարոտ չէր։ Նա գիտեր և վաղուց հասկացած էր բոլորը։ Նա միայն ցանկանում էր հայտնել հորը, թե այն ամենը, ինչ որ կատարել է նա և կամ ինչ որ տակավին կատարելու դիտավորություն ունի, անտարակույս, կտանեն հայրենի աշխարհը դեպի անդառնալի կորուստ, իսկ որդին չէր ցանկանա յուր հայրենիքի ավերակների մեջ գտնել յուր փառքը...

...Սովորական քամին բարձրացավ, և պարզ օդը հետզհետե լցվեցավ նուրբ կարմրագույն փոշիով։ Այդ քստմնելի երևույթը, մանավանդ տեղային հանգամանքներին ծանոթ մարդու վրա, խիստ տխուր և ահարկու տպավորություն է գործում։ Հանկարծ պայծառ հորիզոնը ներկվում է բոսորային գույնով, և նրան այնպես է թվում, որ երկնքից մանր փոշետեսակ արյան անձրև է տեղում։ Բայց Սամվելին ձգեց նա մի առանձին մելամաղձության մեջ, որ արտահայտություն էր նրա նույնպես խռովյալ սրտի։

— Զարմանալի՜ հատկություններ ունի Արաքսը,— ասաց նա, ինքն յուր հետ խոսելով,— զարմանալի՜ բնավորություն ունեն և նրա խորհրդավոր շրջակայքը։ Պարզ, լուսապայծառ առավոտին հաջորդում է տխուր, վհատական երեկո, յուր կարմրագույն մռայլով, իսկ ուրախ, անհոգ զվարճությանը՝ խիստ սրտամաշ թախծություն։ Տխու՜ր է, տխու՜ր... Ես կարծում էի, թե կարող եմ փոքր-ինչ ուրախ լինել, փոքր-ինչ մոռանալ ինձ... Բայց իզու՜ր... Երանի՜ թե չար լինեի... Երանի՜ թե եղեռնագործ լինեի... Գուցե ինձ

ես վիճակվեր նույն օրհասը, որ վիճակվեցավ բարի Արտաշեսի շար որդուն... Նա կորավ որսորդության միջոցում, նա յուր ձիու հետ խորասույզ եղավ Արաքսի մերձակա անդունդների մեջ... գետինը չկարողացավ տանել շար արքայազնին, որ շարությամբ պիտի լցներ հայոց երկիրը... Գետինը բաց արավ յուր ահարկու բերանը և կլանեց նրան...

Հայրը սարսափով լսում էր։

— Ինչո՞ւ հիշեցիր այդ տխուր անցքը,— հարցրեց նա, դողդողջուն ձեռքով բռնելով որդու աջը։

— Չգիտեմ ինչու... երևի նրա համար, որ շատ հեռու չենք այն եղերական վայրերից, ուր պատահեց այդ անցքը։ Թշվառ շարագործը կորավ, անհետացավ Արաքսի անդունդների մեջ, բայց հանգստանալ չկարողացավ... Մասիսի քաջքերը տարան, շղթայեցին նրան մի մթին այրի մեջ, ուր մինչև այսօր տանջվում է նա...

— Սամվե՞լ,— գոչեց հայրը շփոթված ձայնով։— Ի՞նչ պատահեց քեզ հետ, ի՞նչը գցեց քեզ այդ ցնորքների մեջ։ Դու մահ ես ցանկանում, քեզ համար անտանելի է դարձել կյանքը այն հասակում, երբ դեռ նոր սկսվում է քո երջանկության ծաղկափթիթ գարունը։ Ի՞նչ է պակաս քեզ։ Քո հայրը պատրաստ է ծնողական բոլոր սիրով ամեն ինչ լցուցանել։ Լսի՛ր, Սամվել, դու չես հասկանում քո անսահման բախտավորությունը, որի մեջն ես, և որը յուր լիառատ բարություններով դեռևս սպասում է քեզ։ Հազարավոր իշխանազն երիտասարդներ պիտի նախանձեն քո փառքին, հազարավոր իշխանազն օրիորդներ պիտի փափագեն քո ամուսինը լինելու։ Բայց դու կընտրես քեզ չքնաղներից չքնաղագույնը՝ արյաց արքայի աննման դուստրը։

— Դրանցից և ո՛չ մեկը չէ կարող բուժել այն վերքերը, որ դրած են իմ սրտում, հայր, դրանցից և ո՛չ մեկը չէ կարող վանել այն վշտերը, որ օր ու գիշեր տանջում են ինձ։ Կյանքը, իրավ, անտանելի է դարձել ինձ, հայր, մահը շատ ցանկալի կլիներ ինձ, եթե գիտենայի, որ մահից հետո մի այլ կյանք չկա։ Բայց մարդիկ իրանց վշտերը իրանց հետ գերեզման են տանում։ Դա ավելի անտանելի է, քան հավիտենական տանջանքը դժոխքի խորքում...

Վերջին խոսքերի միջոցին նա յուր գունաթափ դեմքը դարձրեց դեպի հայրը և շարունակեց մի այնպիսի ձայնով, որ արտահայտում էր նրա հուզված սրտի խորին ալեկոծությունը.

— Հայր, այստեղ մենք միայնակ ենք, այստեղ մեզ ոչ ոք չի լսի. թո՛ւյլ տուր ինձ խոստովանելու քեզ իմ բոլոր ցավերը, իմ բոլոր տանջանքները։

— Խոսի՛ր, զավակս, բա՛ց արա հորդ առջև լցված սիրտդ։ Ի՞նչն է այդպես տանջում քեզ։ Այն օրից, որ եկել ես դու, ես նկատում եմ միշտ քո մեջ մի տեսակ հոգեկան անհանգստություն, մի տեսակ բարոյական վրդովմունք։ Մի՛ թաքցրու ցավերդ, և հավատացած եղիր, որ հայրդ այնքան սեր ունի դեպի քեզ, որ կարող է քո կարիքներին կարեկից լինել և քո ցավերին՝ ցավակից։

— Ինչպե՞ս չցավել, հայր, ինչպե՞ս չվշտանալ, հայր։ Մի սիրտ, որ քարից լիներ կազմված, մի հոգի, որի մեջ մեռած լիներին ամեն մարդկային զգացմունքներ, դարձյալ չէր կարող անզգա մնալ, տեսնելով այն, ինչ որ ես տեսա և ինչ որ տակավին տեսնելու դժբախտություն պիտի ունենամ։ Այն օրից, որ դուրս եկա մեր ամրոցից, այն օրից, որ թողի Տարոնը, մինչև այստեղ հասնելս ես անցա մի շարք ավերակների, մի շարք բարբարոսությունների միջով։ Տեսա մոխիր դարձած քաղաքներ, տեսա անմարդացած գյուղեր, տեսա կործանված վանքեր և տաճարներ... Ամեն քայլափոխում՞ ես ոտք էի կոխում արյան վրա, և իմ՞ հայրենակիցների արյան վրա... Ո՞վ կատարեց այդ անգթությունները, հա՛յր, և ինչո՞ւ համար...

Հայրը բնավ չէր սպասում, որ որդին մի այսպիսի հարց կառաջարկեր։ Նա շփոթվեցավ, պապանձվեցավ, և նրա բոլոր անձնասիրությունը խորտակվեցավ այն դառն հանդիմանության առջև, որով որդին արտահայտեց յուր սրտի վշտերը։

— Դու լռում ես, հայր, դու չես պատասխանում։ Ես հասկանում եմ քո լռության իմաստը։ Բայց հայրենիքի կործանումները և բյուրավոր աչքերի լացն ու արտասուքը համարձակություն են տալիս դժբախտ որդուդ ասելու քեզ, որ այդ բոլոր անգթությունները կատարվել են երկու անձանց ձեռքով, դրանցից մեկն իմ հայրն է՝ դո՛ւ, իսկ մյուսն իմ մոր եղբայրն է՝ Մերուժան Արծրունին...

— Մեծ գործերը մեծ զոհ են պահանջում...— ընդհատեց հայրը որդու խոսքերը։

— Ճշմարիտ է, մեծ գործերը մեծ զոհ են պահանջում,— պատասխանեց որդին դառնացած ձայնով,— բայց դու, հայր, արդյոք լավ կշռե՞լ ես գործի մեծության հետ և հանցանքի մեծությունը։ Ոչնչացնել հայրենի աշխարհը, ոչնչացնել հայրենի կրոնը, եկեղեցին, և Հայաստանի ավերակների վրա հիմնել մի պարսկական թագավորություն,— ահա ա՛յս է այն գործը, որ դու, հայր, մեծ ես կոչում։

— Ինչո՞ւ պարսկական թագավորություն,— հարցրեց հայրը զայրացած ձայնով։— Մի՞թե Մերուժանը պարսիկ է։

— Ապա ի՞նչ է։ Թե՛ դու, հայր, և թե՛ նա ուրացել եք քրիստոնեությունը և ընդունել եք պարսից Շապուհ արքայի կրոնը։ Հայոց եկեղեցիները լցրել եք պարսիկ մոգերով և մոգպետներով։ Ամեն տեղ ստիպում եք ուրանալ քրիստոնեությունը։ Իմ մայրն արդեն մոխրապաշտ է դարձել և Մամիկոնյանների կրոնասեր տան մեջ պարսից ատրուշան է հիմնել։ Իմ եղբայրներն այժմ պարսկերեն են խոսում։ Հայոց լեզուն հալածված է մեր տնից։ Ամեն տեղ ոչնչացնում եք հայոց գրքերը, որպեսզի պարսից լեզուն և պարսից դպրություն տարածեք Հայաստանում։ Երեկ իմ աչքով տեսա, թե ինչպե՛ս Մերուժանի երկնագույն վրանի առջև այրում էին հայոց գրքերը։— Այդ բոլորից հետո, երբ կորչում է կրոնը, երբ կորչում է լեզուն, երբ ոչնչանում են ազգային ավանդությունները, և երբ, վերջապես հայը սկսում է պարսից սովորություններով ապրել և պարսից լեզվով աղոթել, այլևս ի՞նչ հայություն կմնա։ Եվ ձեր հիմնած թագավորությունը մի՞թե կարող է այնուհետև հայկական լինել։ Նա վաղ թե ուշ կլուծվի, կանհետանա պարսկականի մեջ, և նրա հետ ամեն ազգային սրբություններ կկորչեն, կոչնչանան...

— Ինչ որ լինելու է, թող լինի, միայն Արշակունիների թագավորություն չպիտի լինի,— պատասխանեց հայրը, ավելի զայրանալով։

— Ինչո՞վ էին վատ Արշակունիները։

— Դու դեռ հարցնու՞մ ես, Սամվել։ Դու երեխա չես, դու այնքան տարիք ունես, որ բավական է, եթե հիշես քո տեսածը միայն, որ հենց քո հասակում՝ որքա՛ն չարագործություններ կատարեց Արշակ թագավորը, որ յուր մեղքերի համար այժմ տանջվում է Անհուշ բերդում։

Նա սկսեց մի առ մի թվել Արշակունիների գործերը և ապա ավելացրեց.

— Եվ դու, Սամվե՛լ, դեռևս ցանկանո՞ւմ ես, որ մի այսպիսի անբարոյական և ապականված թագավորական տուն գոյություն ունենա։

— Քո և Մերուժանի վարմունքն ավելի վատթար է, հա՛յր,— ասաց Սամվելը, այժմ այլևս չակնածելով նրա ծնողական պատկառանքին։— Ապականությունն ապականությամբ չեն սրբում և ոչ անբարոյականությունը՝ անբարոյականությամբ։ Դրանց մաքրելու համար ուրիշ միջոցներ կան։ Արշակունիների մեջ եղել են և այժմ կան այնպիսի պաշտելի անձինք, որոնց առաքինություններով

միշտ պրտր պարծենա հայոց ազգը։ Իսկ եթե այդ հոյակապ ընտանիքի մեջ վերջին ժամանակներում հայտնվեցան մի քանի անբարոյական մարդիկ, դա նրանց մասնավոր մեղքն է, որ իրանք պետք է քավեն։ Նրանց մեղքերի համար ինչո՞ւ պետք է պատժվի ամբողջ հայոց ազգը և հայոց հայրենիքը։ Այն ևս կասեմ, հայր, որ այդ իսկ անբարոյական համարված Արշակունիները գոնե մեկ կողմից այնքան բարոյական գտնվեցան, որ երբեք չդավաճանեցին հայրենի աշխարհին և հայրենի եկեղեցուն։ Իսկ դու՞ք—դո՛ւ և Մերուժանը...

Վերջին խոսքերը կայծակի նման շանթեցին հոր սիրտը։ Նրա մեջ միանգամից փշրվեցան այն բոլոր երանական հույսերը, այն բոլոր ջերմ բաղձանքները, որ ուներ որդու վերաբերմամբ։ Նա փափագում էր, որ որդին ոչ միայն յուր կամակիցը լիներ, այլև յուր գործակիցը լիներ։ Իսկ այժմ հայտնվեցավ նա որպես հոր անողոք հակառակորդ,— մի հակառակորդ, որի հետ դժվար կլիներ կռվել, և որին ավելի ևս դժվար էր տեղիք տալ։ Ի՞նչպես պետք է վարվել նրա հետ։ Ծնողական սերը և յուր ստանձնած գործի պարտավորությունը սկսեցին սարսափելի կերպով մաքառել միմյանց հետ։ Որի՞ն պետք էր նախապատվություն տալ։ Անհնար էր վճռել։ Նա սաստիկ ստրջացած էր, որ առիթ տվեց որդուն այս աստիճան բացվել յուր հետ։ Բայց արդեն ուշ էր։ Հարցն այն կետի վրա էր դրված, որ պետք էր ընտրել երկուսից մեկը՝ կա՛մ որդուն, կա՛մ սկսած գործը։ Բայց զրկվել թե՛ առաջինից, թե՛ երկրորդից՝ մահվան չափ դառն էր նրա համար։ Այդ սոսկալի տագնապի մեջ էր նա, երբ եղանակն ավելի խառնվել էր, կարմիր քամին կատաղությամբ մռնչում էր և յուր կարմիր փոշին անխնա կերպով սփռում էր թշվառ հոր երեսին, իսկ նա ոչինչ չէր զգում։

— Դու եկար նախատելո՞ւ քո հորը, Սամվել,— ձայն տվեց նա հոգեկան երկար տանջանքներից հետո։

— Ո՛չ, հայր, ես չեկա նախատելու քեզ։ Ես եկա ճշմարիտը, արդարը և իրավացին խոսելու քեզ հետ, որ ոչ այլ ոք կհամարձակվեր խոսել, բայց միայն որդիդ։ Ես եկա իմ սրտի, իմ սիրո բոլոր ցանկությամբ աղաչելու և պաղատելու քեզ, որ դու ետ դառնաս այն ճանապարհից, որ տանում է մեր հայրենիքը դեպի անդառնալի կորուստ, իսկ Մամիկոնյան տոհմի հիշատակը՝ դեպի հավիտենական անեծք և դատապարտություն... Ցրեցե՛ք այդ անիծյալ պարսկական բանակը, որի ներկայությունը պղծում է հայոց երկիրը։ Հեռացրե՛ք պարսիկներին։ Ազատությո՛ւն շնորհեցեք հայոց գերիներին, թո՛ղ գնան իրանց տները և սրբեն ազգայինների ար-

տասուքը։ Թո՛ղ չլինի կռիվը, թո՛ղ չլինի պատերազմը, որ այնքա՜ն աղետների, որ այնքա՜ն թշվառությունների պատճառ դարձավ։ Թո՛ղ կրկին վերականգնվի հաշտությունը, և հայոց աշխարհը վայելե յուր նախկին խաղաղությունը։ Ես կգնամ Մերուժանի մոտ, նրանից ևս նույնը կխնդրեմ, կաղաչեմ, կհամբուրեմ նրա ոտքերը, որ ընդունե իմ խնդիրքը։

Հայրը ոտքի ելավ, դառնացած կերպով ասելով.

— Իզուր կանցնի թե՛ քո աղաչանքը և թե՛ քո խնդիրքը, Սամվել։ Մերուժանն այն տեսակ մարդիկներից չէ, որ ամեն մի համբակի խոսքը լսե։

Արյունը կատաղի հոսանքով անցավ դեպի Սամվելի գլուխը։

— Հա՜յր... ձայն տվեց նա, և նրա խռովյալ աչքերը վառվեցան բարկության բոցով։— Ե՞ս եմ համբակը։

— Այո՛, դու ես, Սամվել։ Ես չկարողացա հասկացնել քեզ ո՛չ իմ միտքը և ո՛չ իմ նպատակները։ Այժմ մնում է հարցնել քեզ՝ դու ո՞ր կուսակցությանն ես պատկանում։

— Այն կուսակցությանը, որ հավատարիմ է մնացել հայրենի եկեղեցուն և սիրելի թագավորին։

— Ուրեմն՝ դու իմ որդին չես։ Ով որ մեզ հակառակ է, մեզանից չէ։ Մենք անխնա պատժել գիտենք այնպիսիին։

— Եվ ո՛չ դու իմ հայրն ես։

— Սամվե՜լ...

— Ի՞նչ է, դավաճա՜ն...

Հայրը ձեռքը տարավ դեպի յուր սուրը։ Բայց որդու սուրն արդեն մերկացած էր։ Նա շողշողաց և կայծակի նման մխվեցավ հոր սրտի մեջ։ Նա ընկավ, հառաչելով.

— Հայրասպա՜ն...

Որդին, անշարժ արձանի նման կանգնած, մի քանի րոպե լուռ նայում էր արյան մեջ թավալվող հոր վրա։ Հետո սրբեց աչքերի արտասուքը և ձեռքը տարավ դեպի գոտիից քարշ ընկած արծաթյա փոքրիկ փողը։ Մոտեցրեց դողդոջուն շրթունքներին, և չարագուշակ արծաթը գուժեց սոսկալի գործողությունը։

Կղզու զանազան կողմերից նույնպես լսելի եղան փողերի ձայներ...

Կարմիր քամին խելագարի նման մռնչում էր, փոթորկվում էր, բարձրացնելով օդի մեջ թանձր, ավազախառն փոշի։ Մրրկածուփ հորիզոնը պատած էր մուգ-աղյուսագույն մառայլով, որը մթնեցնում էր արևի երեկոյան ճառագայթները։ Քամու ուժգին հոսանքի ներքո՝ դալար թուփերը, փշալի մացառները հեծելով, հա-

ռաչելով կպչում էին գետնին և դարձյալ վեր էին բարձրացնում իրանց հողմակոծ գլուխները։ Մոլորված, շփոթված ծտերը, հակառակ իրանց կամքին, տարվում էին օդի մեջ, որպես բամբակի փոքրիկ պատառներ։ Սրաթռիչ բազեն անգամ յուր ուժեղ թևերով դրժվարանում էր ընդդիմադրել զայրացած տարրի կատաղի ալիքներին։ Մրրիկը հետզհետե սաստկանում էր, մարդ և անասուն, սողուն և թռչուն թաքչելու տեղ էին որոնում։ Այդ միջոցին զարմացած Արաքսը խորին վրդովմունքով դուրս էր հարձակվում յուր ափերից՝ տեսնելու, թե ի՛նչ արհավիրք է կատարվում յուր շուրջը։ «Իշխանաց կղզին» դողում էր, սարսափում էր ամեհի կոհակներից, որ ամեն րոպե պատրաստ էին կլանելու և անհետացնելու նրան։

Բնության ընդհանուր խռովության միջոցին դադարեց որսորդությունը, սկսվեցավ մի այլ տեսակ որսորդություն։

Սկզբում կարծվում էր, թե որսորդները մրրիկի սաստկությունից շփոթվեցան, կորցրին միմյանց և տարածվեցան դեպի կղզու զանազան կողմերը՝ ապաստանի տեղ գտնելու։ Ոչ ոք չէր երևում։ Չէին երևում մանավանդ Սամվելի մարդիկ։

Երևում էր միայն սպիտակ ձիավորը՝ Մերուժանը։

Նա յուր ձին փութով քշում էր դեպի վրանների կողմը։ Մեծ եղավ նրա զարմանքը, երբ վրանները տապալված տեսավ և այնտեղ ոչ ոքի չգտավ։ Մտածեց՝ գուցե քամին խորտակել էր վրանները, և մարդիկ շտապել էին փախչել, վախենալով, միգուցե կատաղած Արաքսն այնքան բարձրանար, որ ծածկեր կղզին։ «Ո՛չ, այստեղ մի դավադրություն կա»...—ասաց նա և ձեռքը տարավ դեպի կշտից քարշ ընկած գալարափողը, իսկույն հնչեցրեց։ Ո՛չ ոք չըհայտնվեցավ։ Ձիու գլուխը շուռ տվեց դեպի կամուրջը։ Ճանապարհին մի քանի անգամ տեսավ նա խոտերի վրա ընկած դիակներ։ Ճանաչեց։ Ոմանք Սամվելի մարդիկներից էին, ոմանք՝ իրանց մարդիկներից։ Նրա հպարտ դեմքի վրա անցավ մի դառն ծիծաղ։ «Մանուկները մեզ որոգայթի մեջ ձգեցին...»— մտածեց նա և շարունակեց քշել ձին։

Հանկարծ քամու մռնչյունի հետ սուլեց մի այլ ձայն. մի նետ դիպավ նրա կողքին և շառաչելով ցած ընկավ։ Նրան հաջորդեց երկրորդը... երրորդը... վերջինը ցցված մնաց ազդրի վրա։

«Ախ, եթե գիտենայի, որ դու հագուստի տակին զրահ ունես հագած»...— լսելի եղավ մերձակա մացառների միջից մի սուր ձայն, որ իսկույն խլացավ քամուց։

Մերուժանը շփոթված կերպով նայեց յուր շուրջը։

Ձին քշեց դեպի այն կողմը, որտեղից սլացավ նետը։ Խիտ

մացառներն արգելեցին նրա ընթացքը։ Այդ միջոցին մի այլ նետ դիպավ նրա գլխին և դարձյալ ցած ընկավ։

«Փու՛հ, սատանան տանե...—լսելի եղավ մի զայրացած ձայն,— խույրի տակում ևս երկաթ է թաքցրած...»։

Մերուժանը ետ դարձավ և յուր խորին վրդովմունքի մեջ չգիտեր ո՛ր կողմը գնալ։ Նա ձեռքը տարավ դեպի նետը, որ տակավին մնացել էր ցցված ազդրի մեջ, բարկությամբ դուրս քաշեց։ Արյունն սկսեց վտակի նման հոսել։ Դարձյալ դառն ծիծաղ երևաց նրա հպարտ դեմքի վրա, և գլուխը շարժելով ասաց. «Առաջ մենք էինք որսում մացառների մեջ թաքնված անասուններին, իսկ այժմ մեզ են որսում մացառների մեջ թաքնված դարանագործները...»։

Դարանագործը ոչ այլ ոք էր, բայց միայն պատանի Արտավազդը։ Յուր ընկերների մեջ նրան էր վիճակվել Մերուժանը։ Բայց ոգելից պատանու բաղձանքները մնացին անկատար։ Նրա նետերը դիպան Մերուժանի հագուստի ներքո թաքնված պողպատյա տախտակներին, նա սողալով ու խարխափելով սատանայի նման անցավ թուփերի և մացառների միջով, դուրս եկավ կղզու այն կողմը, որտեղ կապված էր նրա ձին։ Նստեց և նետվեցավ դեպի յուր ընկերները։

Այդ միջոցին, կղզու մի այլ կողմում, մրրիկի թանձր փոշու մեջ մենամարտում էին երկու հոգի՝ ծերունի Արբակը և պարսից Կարեն զորապետը։ Վերջինը զայրանալով ասաց.

— Բավական է, ծեր աղվես, գոնե հիշիր, որ դու մեր հյուրն ես։ Ես խնայում էի հյուրին։

— Շնորհակալ եմ մարդավարությանդ համար,— ժպտալով պատասխանեց ծերունին։— Պարսիկը նեղն ընկած ժամանակ միշտ մեծահոգի է ձևանում։

— Դու սպանեցիր իմ նժույգին և ինձ ոտքի վրա թողեցիր, իսկ ինքդ կռվում ես ինձ հետ՝ ձիու վրա նստած։

— Ես իսկույն ցած կիջնեմ, թող ուժերի հավասարություն լինի։

Արբակն իջավ ցած և յուր ձին հեռացրեց մի կողմ։ Այդ միջոցին խորամանկ պարսիկը թռավ ձիու վրա և շտապեց փախչելու։

Սամվելը, եղերական գործողությունից հետո, որոնում էր Մերուժանին։ Երկար թափառում էր կղզու մեջ և լի ոխակալությամբ փափագում էր հանդիպել նրան։ Բայց Մերուժանի փոխարեն գտավ ծերունի Արբակին, որը ապշած, շփոթված նայում էր դեպի այն կողմը, ուր անհետացավ յուր երկչոտ ախոյանը։

— Խաբվեցա՞, սարսափելի կերպով խաբվեցա՞,— ասաց նա,

դառնալով դեպի Սամվելը։— Եթե տասը նիզակի հարված ստանայի, այդքան չէի ցավի։

Նա սկսեց պատմել յուր հետ պարսիկի խաղացած խաղը։

— Վնաս չունի,— ասաց Սամվելը, մխիթարելով վշտացած ծերունուն։— Անտարակույս, մի այլ անգամ ևս կհանդիպենք նրան։ Այժմ հնչեցրու փողդ, թող հավաքվեն մեր մարդիկ։

Ծերունին հնչեցրեց փողը։

Սամվելի քառասուն մարդիկներից հայտնվեցան յոթ հոգի միայն։ Մնացյալը կա՛մ վիրավոր, կա՛մ սպանված՝ ընկել էին կղզու զանազան կողմերում։ Երիտասարդը թախծալի աչքերով նայեց մնացյալների վրա և ասաց.

— Յոթն հոգի... խորհրդավոր թիվ է...

— Իսկ մեր թշնամիներից այդքան էլ չի մնացել...—հանկարծ լսելի եղավ մի ձայն։

Սամվելը նայեց դեպի այն կողմը։ Ժպիտը երեսին, նրա գիրկն ընկավ պատանի Արտավազդը։

— Ինձ չհաջողվեցա՜վ... ինձ չհաջողվեցա՜վ...— տրտնջում էր նա։— Ես ծակեցի նրա ազդրը միայն։

— Դու չգիտե՞ս, որ նա կախարդ է... Երկաթը և պողպատը նրա վրա չեն ազդում։

— Այդ ես իմ աչքով տեսա։ Բայց այժմ գիտեմ, թե ինչո՛ւ չեն ազդում։

Օրը երեկոյացել էր. արեգակը մտնելու մոտ էր։

Պատանի Հուսիկը մոտ բերեց յուր իշխանի ձին, նա հեծավ, մյուսները նույնպես ձիավորվեցան և դիմեցին դեպի կամուրջը։ Երբ անցան, Սամվելը հրամայեց վեր առնել կամուրջը, ասելով.

— Պետք է հանգիստ թողնել կղզում մնացած դիակները։ Քանդեցե՛ք կամուրջը, որ գազաններ ներս չմտնեն։

Մի քանի րոպեի մեջ քանդեցին շարժական կամուրջը, ձգեցին գետի մեջ։ Ալիքները մի փոքրիկ տաշեղի նման անհետացրին նրան։

Ամենքը դուրս եկան. կղզու մեջ մնաց մեկը միայն՝ Մերուժանը։

Նա եկավ այն ժամանակ, երբ արևն արդեն մտել էր։ Երբ տեսավ կամուրջը վեր առած, երկաթյա վանդակի մեջ ընկած գազանի նման վրդովվեցավ, բայց չվհատվեցավ։ Սկսեց զայրացած աչքերով չափել այն տարածությունը, որի վրա դրված էր կամուրջը։ Տարածությունը բավական լայն էր, ձին չէր կարող թռչելով անցնել։ Նայեց ալեկոծված Արաքսին։ Կոհակները փրփրալով բարձ-

բանում էին, գետն ահռելի կերպով որոտում էր։ Ձին քշեց դեպի խռովյալ գետը։ Սպիտակ ձին պատռեց մրրկածուփ ալիքները և անցավ մյուս կողմը, ցամաքի վրա։

Վիրավոր առյուծն ազատվեցավ Արաքսի որոգայթներից...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով, ծալապատակ
Միասին բազմած,
Մի շրջան կազմած,
Քեֆ էին անում
Եվ ուրախանում
Մեր հսկա պապերն ու մեր հայրերը՝
Գյուղի տերերը։

Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ՝
Երեք դասընկեր,
Նրանց առաջին գլխաքաց կանգնած,
Ձեռքներս խոնարհ սրտներիս դրած,
Զի՜լ, ուժեղ ձայնով նրանց ըսպասում՝
Տաղ էինք ասում։

Երբ զվարթաձայն մեր երգը լռեց,
Մռայլ թամադեն բեղերն ոլորեց,
Նրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին. «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրե՛ք...»։

Ժամանակն անցավ, նրանք էլ անցան,
Զվարթ երգերս վշտալի դարձան.
Եվ ես հիշեցի՝ մեր օրը լալիս,
Թե մեզ օրհնելիս,
Ինչո՛ւ ասացին. «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրե՛ք...»։

Խաղաղությո՞ն ձեզ, մեր անբախտ պապեր,
Ձեզ տանջող ցավը մեզ էլ է պատել։
Այժմ, տխրության, թե քեֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր զավակներին՝
Ձեր խոսքն ենք ասում. «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրե՛ք...»։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՈՍԿԻ ՔԱՂԱՔԸ

(Հեքիաթ)

1

Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում տիրելիս է լինում Ուքանա թագավորը։ Օրերից մի օր մեռնում է նրա սիրելի կինը։ Դժբախտ թագավորը չի կարողանում մխիթարվել ո՛չ մի բանով, իրեն որսորդության է տալիս։ Մի անգամ էլ, երբ որսի է դուրս գալիս, անտառում մի գեղեցիկ փոքրիկ աղջիկ է գտնում։ Ուրախանում, աշխարհով մեկ է լինում, առնում տուն է բերում, որդեգրում, անունը դնում Քանաքարա։

2

Մեծանում է Քանաքարան, դառնում է տխուր թագավորի միակ մխիթարանքը։ Երբ հասնում է ամուսնության ժամանակը, թագավորը հրավիրում, հավաքում է իր երկրի երիտասարդ արքայազուններին ու իշխանազուններին, որ նրանց միջից ընտրություն անի Քանաքարան։ Բայց աղջիկը դուրս չի գալիս իր սենյակներից։

— Հայրի՛կ,— ասում է,— գիշերս մորս հոգին երազ եկավ ինձ։ Ասավ. «Քանաքարա՛, շատ շատերը կխնդրեն քո ձեռքը, չխաբվես ո՛չ գեղեցկության, ո՛չ քաջության, ո՛չ հարստության, որովհետև անբախտ կլինես, ո՛րին էլ ընտրես քեզ ամուսին, ընտրիր միայն նրան, ով կյանքում գոնե մի անգամ եղած կլինի Ոսկի քաղաքում»։

— Շատ լավ, աղջի՛կս,— ասում է բարի ծերունին,— իմաստուն են երազները, ու մորդ հոգին քո երջանկության համար է խոսում։ Ես էդպես էլ կհայտնեմ հավաքված փեսացուներին, ինչպես ազդել է երազը ու ինչպես քո սիրտն է ուզում։ Նրանք աշխարհ

տեսած մարդիկ են, և անշուշտ նրանց մեջ կգտնվեն էնպեսները, որ իրենց կյանքում գոնե մեկ անգամ եղած են Ոսկի քաղաքում։

Էսպես էլ հայտնում է թագավորը հավաքված արքայազուններին ու իշխանազուններին։ Երբ Ոսկի քաղաքի անունը լսում են, ամենքը նայում են իրար երեսի ու զարմանքով վեր են քաշում ուսները։

— Էդպես քաղաք մենք չենք էլ լսել մեր օրում, ու՞ր թե՝ տեսել...

Նստում են ձիանքը ու իրար հետևից հեռանում, ցրվում իրենց աշխարհքները։

3

Բենարեսում մի երիտասարդ է լինում Դիվանա անունով։ Մի շռայլ, զվարճասեր երիտասարդ է լինում Դիվանան՝ իր կարողությունը խնջույքներում ու քեֆերում վատնած, դատարկ, ձանձրացած կյանքից ու աշխարհքից։ Հենց որ թագավորի աղջկա որոշումը լսում է, մտածում է. «Ա՛յ քեզ լավ դեպք աշխարհքում մի քիչ էլ զվարճանալու. միանգամից և՛ կհարստանաս, և՛ գեղեցիկ կին կունենաս։ Եվ ինչպե՞ս ոչ ոքի մտքով չի անցել՝ գնա ասի, թե տեսել է Ոսկի քաղաքը, ու ամուսնանա հետը»։

Վեր է կենում, շիտակ գնում է Ուքանա թագավորի պալատը։

— Հայտնեցե՛ք չքնաղ Քանաքարային, որ ե՛ս՝ երիտասարդ Դիվանաս, եղել եմ Ոսկի քաղաքում։

Ամբողջ պալատը ցնծում է ուրախությունից, վերջապես եկավ սպասված հերոսը։

— Նե՛րս համեցեք,— խնդրում են դրանիկները ու ներս են տանում երիտասարդին գեղեցիկ Քանաքարայի մոտ։ Քանաքարան խնդրում է նրան, որ պատմի, թե ի՛նչ բան է Ոսկի քաղաքը։ Ու Դիվանան սկսում է իր սուտ պատմությունը։

— Ոսկի քաղա՛քը... էլ մի՛ ասի, տիրուհի՛, թե ինչ զարմանալի բան է էդ Ոսկի քաղաքը, որ ես ընկա մեջը։ Առևտրական գործերով անցնում էի աշխարհից աշխարհ, հազար ու մի աշխարհ ընկա, հազար ու մի քաղաք տեսա՝ հազար ու մի հրաշալիքներով լիքը... Մի անգամ էլ, մի աշխարհում, որի անունը լեզվիս ծերին է և հիմի կասեմ որտեղ որ է, տեսնեմ հեռվում մի ահագին տարածություն վառվում է արևի տակ, ինչպես մի հսկայական հրդեհ։

— Էս ի՞նչ հրաշք է,— հարցնում եմ ընկերներիս։

— Ոսկի քաղաքն է,— ասում են ինձ։

Ճշմարիտ որ Ոսկի քաղաք... Մոտենում ենք, ի՞նչ տեսնենք՝

տները ոսկի, ծառերը ոսկի, փողոցները ոսկի... Մարդիկ էլ ոչ աշխատում են, ոչ շարշարվում են, նստում ուտում-խմում են...

— Դու՛րս արեք էս անամոթ ստախոսին,— բարկացած կանչում է Քանաքարան։ Վզին տալով դուրս են անում երիտասարդ Դիվանային, և պալատը նորից ընկղմվում է տխրության մեջ։

4

Բայց էն օրվանից, ինչ երիտասարդ Դիվանան տեսնում է գեղեցիկ Քանաքարային, սիրահարվում, փոխվում, դառնում է բոլորովին ուրիշ մարդ։ Քունը փախչում է նրա աչքերից, գիշեր-ցերեկ միայն էն է մտածում, որ գնա՞, գնա՞ գտնի Ոսկի քաղաքը, ուր ուզում է լինի ու գա պատմի Քանաքարային։ Թողնում է տուն ու տեղ, հերն ու մեր, գլուխը փեշն է դնում գնում. որտե՞ղ ես, Ոսկի քաղաք, քեզ եմ գալիս։ Գնում է, գնում, ամեն պատահողի հարց ու փորձ է անում. ոչ ոք չի լսել Ոսկի քաղաքի անունը, ուր մնաց, թե տեղն ասի։

5

Մի օր էլ Դիվանան հոգնած, տխուր անց է կենում մի խոր անտառով։ Տեսնում է մի ծառի վրա նստած մի մեծ արծիվ։ Նետն ու աղեղը պատրաստում է, որ զարկի, մին էլ արծիվը լեզու է առնում, ասում.

— Ինչո՞ւ ես ինձ սպանում, ո՞վ բարի մարդ. առանց էն էլ վիրավորված եմ ես։ Որսկանի նետը մտել է թևիս տակը, անտանելի ցավ է տալիս ու արյունաքամ է անում ինձ։ Եթե գթաս, նետը հանես ու առողջացնես ինձ, ես քեզ էն լավությունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել։

Զարմանում է երիտասարդ Դիվանան, թե ինչպես է անլեզու հավքը խոսում մարդկային լեզվով։ Մոտ է գնում, ծառիցը զգույշ վեր է բերում վիրավոր արծվին, նետը հանում է թևի տակից ու տանում անտառում մի խրճիթ, սկսում է բժշկել։

Արծիվը առողջանում է ու դիմում է Դիվանային.

— Ես քեզ խոսք տվի, թե քեզ էն լավությունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել։ Խոսք եմ տվել ու խոսքս խոսք է, պետք է կատարեմ՝ ինչ էլ որ սիրտդ ուզի, լեզուդ ասի։ Ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում։

Ու նստում է երիտասարդը, պատմում արծվին իր պատմությունը, աղաչում, որ իրեն տանի Ոսկի քաղաքը։

— Դժվար բան ուզեցիր, բայց արծվի համար չի դժվարը։ Դու միայն ամուր կաց իմ մեջքին, դեռ ճրագները չվառած՝ քեզ վեր կբերեմ Ոսկի քաղաքում,— ասում է արծիվը ու վեր թռցնում երիտասարդին։

Բաց է անում իր հսկայական թևերը, բարձրանում է մինչև ամպերը, սլանում հեռու, դեպի արևելուս։ Երկյուղից ու արագությունից գրեթե շնչասպառ, ուշքից գնում է Դիվանան։ Մին էլ էնտեղ է ուշքի գալիս, որ արծիվը ծղրտում է.

— Ահա Ոսկի քաղաքը,— ու իջնում է գետին։

6

Աչքը բաց է անում Դիվանան։ Առջևը, կանաչ այգիների մեջ թաղված, տարածված է մի քաղաք։ Կապույտ գետը, ոլորվելով անցնում է նրա միջից։ Հեռվից՝ շատ ծանոթ քաղաքների նման մի քաղաք է, և էն էլ փոքրիկ քաղաք։ Առաջ է գնում։ Չորս կողմը՝ բարելից այգիներ, զմրուխտ կանաչ, հաղարագույն ծաղիկներ։ Օդը լիքն է թարմությունով ու բուրմունքով, թռչունների ծլվլոցով ու ջրերի կարկաչով, և նրանց հետ միախառնվելով հնչում է մարգերում ու այգիներում աշխատող մարդկանց երգը.

Ա՜խ, ի՜նչ լեն է աշխարհն ազատ
Էս կյանքի համար, ամենքի համար,
Ինչքա՜ն լիքն է, ինչքա՜ն առատ
Էս կյանքի համար, ամենքի համար։

Ա՜խ, ի՜նչ լավ է աշխատանքը,
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՜նչ անուշ է հոսում կյանքը
Լիքը սիրով, ծաղկով, երգով։

«Երջանիկ մարդիկ»,— մտածում է Դիվանան ու դիմում է նրանց.

— Ասացե՛ք, աղաչում եմ, ո՞վ երջանիկ մարդիկ, ի՞նչ է էս քաղաքի անունը։

— Ոսկի քաղաքն է սա, բարի՛ օտարական։

— Իսկ դուք ծառանե՞ր եք, որ բանում եք ձեր տերերի այգիներում, թե՞...

— Մենք տեր ու ծառա չգիտենք։

— Իսկ ձեզ ո՞վ է կառավարում։

— Գոհար թագուհին։

— Շատ զորեղ թագուհի է երևի։

— Այո՛, նա գիտե երջանկացնելու գաղտնիքը։

— Արդյոք կարելի՞ է նրան տեսնել։

— Նրա դուռը բաց է ամենքի առջև, իսկ օտարականներին միշտ նրա մոտ են տանում. և քեզ էլ կհրավիրեն անշուշտ։

7

Ճշմարիտ որ, ներս է մտնում քաղաքը թե չէ, Դիվանային խնդրում են Գոհար թագուհու ապարանքը։ Ապարանքում, երբ կերակրվում է, կազդուրվում ու հանգստանում, հրավիրում են թագուհու մոտ։ Թագուհին մի շատ բարի և ազնիվ կին է լինում և էնքան չքնաղ, որ հրեղեն-փարեղեն մի արարած է թվում Դիվանային։ Կախարդ որ կախարդ, հենց մի տեսնելով կախարդում է նրան։

— Ի՞նչն է քեզ բերել մեր աշխարհը, երիտասարդ օտարական,— հարցմունք է անում Դիվանային,— վի՞շտն է քեզ հալածում, թե՞ բախտն է առաջնորդում, և ինչո՞վ կարող ենք օգտակար լինել քեզ։

Թագուհու ազնվությունից ու հարցմունքից ոգևորված Դիվանան սրտաբաց պատմում է մի առ մի, թե ո՛վ է ինքը, ի՛նչ է եկել իր գլուխը, ու ինչպե՛ս է հասել Ոսկի քաղաքը։

— Միշտ լավ է,— ասում է թագուհին,— երբ մարդիկ թողնում են իրենց վատ սովորություններն ու կրքերը, լցվում են բարձր կարոտով ու ձգտում են, գնում են հասնելու մի բարձր նպատակի։ Թե կհասնեն, լավ. թե չեն հասնի, դարձյալ միշտ լավ է ու լավ, որովհետև կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ ձգտում ու ճանապարհ։

— Իսկ երջանկությո՞ւնը...

— Աշխատել լավ ճանապարհի վրա ու գոհ լինել իր ունեցածով։

— Է՞դ է երջանկությունը։

— Ուրիշ ոչինչ։

— Իսկ ես կարծում էի, թե ձեր քաղաքը լիքն է ոսկով, և նրանից է, որ գոհ ու երջանիկ են ձեր մարդիկ,—հայտարարում է զարմացած Դիվանան։

— Ոսկի՞,— քմծիծաղ է տալիս Գոհար թագուհին։— Ոսկին մետաղ է, որ հողից է դուրս գալիս, երջանկությունը զգացմունք է, որ սրտից է բխում։ Ի՞նչ կապ կա նրանց միջև։

— Իսկ ես կարծում էի՝ ահռելի բանակ ունեք և զենքի ուժով եք պահպանում ձեր երկրի սքանչելի կարգն ու խաղաղությունը,— շարունակում է Դիվանան։

— Օ՜, երբեք։ Ահն ու սպառնալիքը և խաղաղությունը իրար չեն տեսել և միասին չեն ապրում։

— Իսկ ես կարծում էի, թե դուք հազարավոր ոսկեգմբեթ տաճարներ ունեք, որոնց միջ անդադար աղոթում են ձեր հոգևոր հայրերը ու աստծո աչքը քաղցր պահում ձեզ վրա։

— Ո՛չ, բարեկա՛մ, մենք բնության ընդարձակության մեջ ենք պաշտում նրան և միջնորդներ չենք ճանաչում մեր հոգու ու նրա միջև։

— Սքանչելի՜ երկիր,— բացականչում է Դիվանան, հիշում է իր հայրենի երկիրն ու ընկնում է մտքի տոնը։

Ապա թե տանում է կախարդ թագուհին, ման է ածում Դիվանային իր ապարանքի սրահները։ Սրահներից մեկում Դիվանան տեսնում է պատից կախված մի աղջկա պատկեր։

— Վա՜հ, ինչքան նման է,— բացականչում է ու մնում է առաջը քարացած։

— Ո՞ւմ նման է։

— Նրա...

— Ո՞վ է նա։

— Քանաքարա՛ն... ի՛մ Քանաքարան...

— Բայց ո՞վ է Քանաքարան։

— Քանաքարան, թագուհի՛, հենց էն աղջիկն է, որի մասին քեզ պատմեցի։ Նրա համար եմ ես հեռացել իմ հայրենի երկրից, ընկել աշխարհքից աշխարհք ու արծվի թևով հասել Ոսկի քաղաքը և կրկին պետք է վերադառնամ նրա մոտ։

— Ինչո՞ւ ես վերադառնում, ազնի՛վ Դիվանա,— խոսում է գեղեցիկ թագուհին։—Մի՛ վերադառնա, Դիվանա՛, մե՛զ մոտ մնա, մե՛զ հետ ապրիր։ Մի՞թե ավելի փարթամ չէ Ոսկի քաղաքը, մի՞թե հոյակապ չեն էս ապարանքները, մի՞թե հրաշալի չեն էս կախարդական այգիները...

— Ո՛չ։ Թագուհի՛, չե՛մ կարող։

— Մի՞թե գեղեցիկ չեմ ես...

— Ո՛չ, չի՛ լինելու, որ չի՛ լինելու։

Էն ժամանակ թագուհին պատվիրում է, նավ են պատրաստում, ու ճանապարհ են դնում Դիվանային դեպի իր հայրենի երկիրը, դեպի Քանաքարան։

8

Ճանապարհին ծովում սաստիկ ալեկոծություն է վեր կենում, նավը գցում է մի կողմ։ Մի կանաչ կողմ՝ լիքն ամեն բարիքով ու ամեն գեղեցկություններով։ Բայց ամենից գեղեցիկը լինում է նրա ջահել տիրուհին, որ Դիվանային առաջարկում է ամուսնանալ իր հետ, թագավորել էն ազատ ու առատ աշխարհում։

— Չե՛մ կարող, նազելի՛ տիրուհի,— հրաժարվում է Դիվանան,— ես դարձյալ իմ ճանապարհն եմ շարունակելու, ինչ ուզում է լինի, դեպի իմ հայրենի տունը, դեպի իմ Քանաքարան, որին չեմ փոխելու ոչ ոքի և ոչ մի թագավորության հետ։

Էս ասելու հետ հենց աչքը ճպում է Դիվանան, մին էլ բաց է անում կողմում տիրուհու փոխարեն առաջը կանգնած է Գոհար թագուհին։

— Մի՛ վախենար, Դիվանա՛, դու մի՛ զարմանար,— անուշ ժպտալով խոսում է նա։— Տեսնու՞մ ես, Ոսկի քաղաքի թագուհին եմ ես՝ կախարդ Գոհարը։ Իմ աղջիկն է Քանաքարան։ Մանուկ հասակում Սև դևը նրան հափշտակեց ու տարավ։ Էն օրվանից ամեն եկվորի ինձ մոտ էի հրավիրում, հարցուփորձ էի անում, պատկերն էի ցույց տալիս, բայց ոչ ոք չէր իմանում, թե ու՛ր է ընկել նա։ Եվ ահա դու եկար նրա սիրով ոգևորված ու վերադառնում ես կրկին նրա մոտ։ Քո սերը փորձելու համար էր, որ ես քեզ արի էն ամեն առաջարկներն իմ քաղաքում։ Եվ դարձյալ քեզ փորձելու համար էր՝ ես առա ուրիշ կերպարանք, քեզ փորձելու համար ստեղծեցի էս փորձանքն ու էս վայելչությունները, որ լոկ երևույթ են միայն։ Այժմ ես հավատում եմ քեզ, հավատում եմ քո սերին ու քո բարությանը։ Դու, հիրավի, այժմ երջանիկ կանես և՛ Քանաքարային, և՛ ամեն մարդու։ Վերջապես, այժմ դու գիտես երջանկության գաղտնիքը։

Էս խոսքի հետ մի փետուր է կրակում կախարդ թագուհին, և սև ամպի նման, հակնթավոր թևերը փռած, հայտնվում է մի մեծ արծիվ։

— Տա՛ր—բացականչում է կինը, ու ամեն բան չքանում է Դիվանայի աչքից, այնինչ օդի մեջ հնչում է երգը.

Գոհ աշխարհքից, գոհ իր կյանքից,
Սիմուրղ հավքի զմրուխտ թևին
Երջանկության հայրենիքից
Գնում է նա, գնում կրկին։

Գնում է նա վերածնված
Մաքուր սիրով, բարի սրտով,
Դեպի երկիրն իր նախահարց—
Տավերի տուն, արցունքի ծով։

Տանում է նա ուժը ոգու,
Անվերջ սերը, անհատ բարին,
Երջանկությունն ամեն մարդու,
Խաղաղություն իր աշխարհին։

9

Հոգու վրա է լինում Ուքանա թագավորը, որ արծիվը ծղրտում ու վեր է դնում Դիվանային իր հայրենի քաղաքի սահմանում։ Քաղաքն է մտնում Դիվանան ու գնում ուղիղ թագավորի ապարանքը։

—Հայտնեցե՛ք գեղեցիկ Քանաքարային, որ ես՝ երիտասարդ Դիվանաս, գալիս եմ Ոսկի քաղաքից։

Ընդունում են ներս։ Դեմքը տեսնելուն պես՝ Քանաքարան բարկանում է իր ծառաների վրա։

— Մի՞թե չեք ճանաչում սրան, որ ներս եք թողել նորից։ Մի՞թե էն սրիկան չի սա, որ մի անգամ փորձեց ինձ խաբել, և ահա նորից հանդգնում է, ուզում է հին խաղը խաղալ։ Դու՛րս արեք իսկույն։

— Սպասի՛ր, չքնաղ Քանաքարա,— խնդրում է Դիվանան։— Հիրավի, ես նա էի, բայց էլ նա չեմ։ Ես այժմ Ոսկի քաղաքից եմ գալիս, քո կախարդ մոր՝ Գոհար թագուհու ապարանքից եմ վերադառնում, քո մանկության ննջարանում եմ եղել, ուր դեռ կախ է արած քո սիրուն պատկերը... Ես այժմ գիտեմ՝ ի՛նչ բան է Ոսկի քաղաքը, ի՛նչ է ոսկին, և ի՛նչ է երջանկությունը։ Ես այժմ գիտեմ երջանկության գաղտնիքը։— Եվ նստում, ամեն բան պատմում է մի առ մի։

— Այժմ ես քոնն եմ,— բացականչում է Քանաքարան, և աշխարհով մին է լինում ուրախությունից։ Ուքանա թագավորն էլ շնչի է գալիս, յոթ օր, յոթ գիշեր ամբողջ երկիրը կատարում է նրանց հարսանիքը։ Ամենքը ուրախանում են ու լիանում։ Էս ուրախությունը տեսնելուց հետո, թագավորն էլ կյանքն ու արևը բաշխում է ապրողներին ու մեռնում։ Նրա տեղը թագավոր է նստում Դիվանան ու սկսում է իր երկիրը կառավարել էն կարգով, ինչ որ տեսել էր Ոսկի քաղաքում։ Ոսկի չկար նրա երկրում, բայց մարդիկ

ապրում էին արդար աշխատանքով, գոհ ու երջանիկ իրենց ունեցածով։ Եվ էն ժողովուրդը, որ մի ժամանակ տրտնջում էր, թե աշխարհքը նեղ է ու ցավով լիքը, հիմա երգում էր ամեն տեղ.

Ինչքա՜ն լեն է աշխարհքն ազատ՝
Էս կյանքի համար, ամենքի համար։
Ինչքա՜ն լիքն է, ինչքան առատ
Էս կյանքի համար, ամենքի համար։
Ի՜նչ ազնիվ է աշխատանքը
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՜նչ թեթև է անցնում կյանքը
Լիքը սիրով, ուրախ երգով։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱՅՐԸ

Մի գարնան իրիկուն դռանը նստած զրույց էինք անում, երբ այս դեպքը պատահեց։ Այս դեպքից հետո ես չեմ մոռանում այն գարնան իրիկունը։

Ծիծեռնակը բույն էր շինում մեր սրահի օճորքում։

Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալի, ու նրա բույնը միշտ կպած էր մեր սրահի օճորքին։

Եվ ահա նորից գարնան հետ վերադարձել էր իր բույնը։ Ջու էր ածել, ճուտ էր հանել ու ամբողջ օրը ուրախ ճչալով թռչում, կերակուր էր բերում իր ճուտերին։

Այն իրիկունն էլ, որ ասում եմ, եկավ, կտուցումը կերակուր բերավ ճուտերի համար։ Ճուտերը ճվճվալով բնից դուրս հանեցին դնդին կտուցները։

Այդ ժամանակ, ինչպես եղավ, նրանցից մեկը, գուցե ամենից անզգույշը կամ ամենից սովածը, շտապեց, ավելի դուրս ձգվեց բնից ու ընկավ ներքև։

Մայրը ճչաց և դուրս թռավ ճուտի հետևից։ Բայց հենց այդ վայրկյանին, որտեղից որ էր, դուրս պրծավ մեր կատուն, վեր թռցրեց փոքրիկ ճուտը։

— Փի՛շտ, փի՛շտ,— վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկավ կատվի ետևից՝ նրա շուրջը թռթռալով ու կտցահարելով, բայց չեղավ։

Կատուն փախավ մտավ ամբարի տակը։ Եվ այս ամենն այնպես արագ կատարվեց, որ անկարելի էր մի բան անել։

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտտում էր ամբարի շուրջը, իսկ մենք, երեխաներս, մի-մի փայտ առած, պտտում էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկավ ու փախավ դեպի մարագը, դունչը լիզելով։

Ծիծեռնակը դատարկ կատվին որ տեսավ, մի զիլ ծղրտաց ու թռավ, իջավ դիմացի ծառի ճյուղին։ Այնտեղ լուռ վեր եկավ։

Մեկ էլ տեսանք, հանկարծ ցած ընկավ մի քարի կտորի նման։ Վազեցինք տեսանք մեռած ընկած է ծառի տակ։

Մի գարնան իրիկուն էր, որ այս դեպքը պատահեց։ Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում այդ գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է, ու սիրտն էլ սիրտ է, ինչպես մերը։

ՎՐԹ. ՓԱՓԱԶՅԱՆ

ԼՈՒՐ-ԴԱ-ԼՈՒՐ
(Քրդական պոեմ)

Այնտեղ, Սև-ջրի չքնաղ եզերքներին էր, որ ապրում էր Հասոն։

Երկրի սիրուն և քաջ պատանին էր նա։ Ոչ մի մարդ նրան չէր կարող զինաթափ անել։ Ավազակը սիրտ չուներ նրա հոտի շուրջը ման դալ, և ոչ իսկ գայլը ոչխարի կողքին քարշ գալ։ Հասոն որքան բարի էր դեպի լավը, այնքան անգութ էր դեպի չարը։

Սիրուն էր Հասոն, նոր ծագող արևի պես չքնաղ։ Երկրի աղջիկների խելքը գնում էր նրան տեսնելիս։ Հապա նրա նվագե՞լը։ Նրա սրնգից հանած ձայները կարելի էր, որ հրեշտակները ունենային՝ այնքան գրավիչ, այնքան սիրահույզ։ Ձայներ, որոնք հոսում էին մելամաղձիկ, քչքչում էին որպես հեզիկ վտակ, դայլայլում որպես սիրահար սոխակ։

Մարդ թե անասուն, այդ ձայնը լսելիս, ակամա մոտ էր գալիս, քարանում և աշխատում էր չկորցնել ո՛չ մի խաղը, ո՛չ մի գեղգեղանքը։

Նստում էր Հասոն ժայռերի գլխին, աչքերը ուղղած լա՜յն հորիզոնին, Սև-ջուրը գալարապտույտ ոտքերի տակին, զզզուն զեփյուռը խաղում ճակատին։

Եվ նա նվագում էր։

Պետք էր տեսնել, թե ինչպե՞ս ոչխարներն այն անմիտ՝ մոռացել էին ուտելը, մոտ էին գալիս։

Հասոն քարերին էր դողացնում, Սև-ջրի ալիքները հուզում, բնությունն էր քարացնում, զեփյուռին ողբացնում, ամեն ինչ շարժում, հրեշտակների նախանձը գրգռում։

Այդպես էր Հասոն։

Էլ ինչպես ոչխարները չհնազանդեին նրա երգի ձայնին։

Ինքը չէր շարժվում, ոչխարներին նվագով կանչում էր մոտը։

Արածացնելու համար «Բերիկը», ջրելու համար «Խոզաթը» և հեզ անասուններին շուրջը ժողովելու համար՝ ածում էր «Ոչխարի կոչը»։

Ոչխարները լսելուն պես թողնում էին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս Հասոյի շուրջը հավաքվում։

Ապրում էր Հասոն այդպես երջանիկ, հեռու մարդկանցից, բնության գրկում, լեռների կրծքին։ Երջանիկ էր նա որպես մի իշխան, սիրված իր հոտից, նվիրված իր երգերին։

Բայց մի օր Հասոն տեսավ աղայի միակ աղջկան։ Տեսավ ու սիրեց։

Սիրուն էր Զալխեն։ Կախարդիչ՝ աչքերը, սալվի էր բոյը, կամար՝ ունքերը, գողտրիկ՝ թշերը։

Զալխեն էլ տեսավ Հասոյին, Զալխեն էլ սիրեց Հասոյին։ Տրխրեց խիստ Հասոն։ Կորցրեց աշխուժություն, կորցրեց զվարթություն։ Օրերով պտույտ էր գործում պալատի շուրջը, մինչև իսկ եթե ոչխարն այնտեղ ուտելու խոտ չգտներ։ Աչքը աշտարակին, նվագում էր տխրագին. սիրտը սրնգի մեջ դնում ու արտասվում։

Զալխեն էլ տանջվում էր։ Թաքնված վարագույրի ետևում, աչքը Հասոյից չէր հեռացնում, ոչ էլ ականջը նրա նվագից։ Ոչ ուտում էր և ոչ էլ խմում. տանջվում էր միայն։

Երկուսն էլ գիտեին, որ շատ հեռու են միմյանցից, որ աղայի աղջիկը հովվի կին չի լինիլ։

Բայց սերը աստծո կրակն է, շատ զորեղ կրակ։ Նա կտրում, անցնում է ամեն հեռավորություն, թափանցում է ամեն խորություն։

Սերը ոչ հեռավորություն է ճանաչում, ոչ էլ խորություն։

Հեռատես էր աղան ու խիստ խորամանկ։ Շուտով նկատեց Հասոյի սերը։ Բարկացավ, կատաղեց, ուզեց սպանել հանդուգն

հովվին. բայց խոհեմ էր, չուզեց իր տան անունը կոտրել հավիտյան և մի հովվի արյունը մտնել ընդունայն։

Բայց ի՞նչ կասեին, եթե իմանային, որ մի չոբան նրա աղջկա ետևից է ընկել։ Պետք էր Հասոյին հեռացնել. հեռացնել ինքնակամ, զոհ խորամանկության։ Պետք էր այնպես մի խաղ սարքել, որ Հասոն ինքը թողներ հեռանար և մեկ էլ այդ կողմերը չվերադառնար։

Մտածեց աղան երկար, մտածեց ու գտավ հնարք։

Մարդ ուղարկեց, կանչեց Հասոյին և ասաց նրան.

— Գիտեմ, Հասո,— ասաց չար աղան,— գիտեմ, որ սիրում ես դու իմ աղջկան։ Քաջ տղա ես ինքդ, լսել եմ, լավ էլ ածում ես սրինգ։ Աղջիկս քեզ կտամ, միայն կդնեմ մի պայման։

Լսել եմ, որ ոչխարները քեզ հնազանդում են և սրինգիդ ձայնից գրավված՝ քեզ մոտ գալիս են։

Գետնից մինչև այդ բարձր աշտարակը տեսնու՞մ ես, նրան դնել կտամ փայտյա սանդուղքը. դու կնստես այնտեղ, բարձրում, ոչխարները կժողովվեն ցածրում։ Ահա պայմանը։ Եթե դու բարձրից, սրինգդ հնչեցնելով, կարողացար ոչխարներին սանդուղքի վրայով քեզ մոտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, առ ու վայելիր։

Ապա թե ոչ, խայտառակ եղիր, ինչ ունիս չունիս հավաքիր և քանի շուտ է, այս կողմերից հեռացիր։ Մի հովիվ աղայի փեսա չի լինիլ, այդ էլ խելքիցդ հանիր։

Հասոն ժպտաց, խոր գլուխ տվեց.

— Տեր ես, աղա,— ասաց.— ասածիդ համաձայն եմ։

Եվ շինել տվեց աղան փայտյա սանդուղքը։ Ինչսունևինն աստիճան ուներ նա։ Հասոյից ծածուկ կոտրեց նրա մեջտեղի մի աստիճանը, կոտրածը նույն կերպով դրեց իր տեղը այնպես, որ ոչինչ չէր երևում, բայց մի թույլ սեղմումն հերիք կլիներ փայտը ձգելու և մի աստիճանից դեպի մյուսը, մի գազաչափ տեղ բաց թողնելու։ Այսպիսով էլ ոչխարների անցնելը անհնար դարձնելու։

— Օ, չա՛ր էր աղան. հպարտ էր, հպա՞րտ։

Այդ խայտառակությունը արեց չար աղան։ Հասոյին աշտարակի ծայրը հանեց, Զալխեին՝ պատշգամբի վրա, ու ասաց հովվին.

— Ահա Զալխեն, խրախուսվիր. հալալ է քեզ նա, թե ասածս արիր։

Զալխեն տեսավ Հասոյին, ժպտաց նրան, կարմրեց և նշան արավ։ Իմացավ հովիվը, որ Զալխեն էլ սիրում էր իրեն։ Սիրտն

ուրախությունով լցվեց։ Առավ սրինգը, բերնին դրեց, քոլոզը ծռեց, նվագն սկսեց։

Թնդաց սար ու ձոր, շարժվեցին ծառեր, դողացին քարեր։ Հուզվեց չար աղան, խելահեղ՝ Զալխեն քիչ մնաց թռներ ու ցած գնար, ոչխարի պես ընկներ Հասոյի ոտքերը։

Շարժվեցին ոչխարները, մոտեցան սանդուղքին ու սկսեցին միմյանց ետևից բարձրանալ աշտարակն ի վեր։

— Լո՛, լո՛, լո՛, Սև-ջրի չոբան, սար ու ձոր մղկտացնող ջիվան, գազան մեղմացնող, քար ու ծառ հուզող չոբան։ Ինչո՞ւ հիմարի պես հավատացիր աղային, ինչո՞ւ բարձրացար ծայրն աշտարակին։ Ջուր դառնայիր մորդ փորում, Հասո։

Երանի չմտնեիր այս աշխարհը, որ լի է աղաներով։ Երանի չտեսնեիր արևի փայլը, որ քեզ այրեց, խորովեց, Սև-ջրի ալիքները, որ քեզ տրորեց, շամբի օրորվելը, որ քեզ կախարդեց։

Լո՛, լո՛, լո՛... Մի՞թե քուրդն այդքան անազնիվ եղավ, որ սերը ծաղրեց։ Մի՞թե նրա խիղճը կորավ, աստվածը մոռացավ։ Խեղճ Հասոյին ինչո՞ւ շեյթանի բաժին արավ, աշխարհը լաց ու սուգի մեջ դրավ... Լո՛, լո՛...

Հա՛ բարձրանում էին ոչխարները, հրում միմյանց. սրնգի ձայնիցը դյութված՝ մոռանում էին տակի անդունդը։ Աչքերը Հասոյին ուղղած՝ բարձրանում էին։

Աշխարհը զմայլած դիտում էր։ Չար աղան քար էր կտրել, Զալխեն մինչև կես մեջքը կռացել, ձեռները Հասոյին պարզել գոչում էր.

— Ես քոնն եմ, Հասո՛, քոնը հավիտյան։ Ես քեզ սիրում եմ. այնքա՞ն եմ սիրում, որքան չէր սիրում Լեյլան Մեջլունին։ Ես քեզ սիրում եմ. այնքա՞ն եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը ճրագին, սոխակը վարդին, աշխարհն արևին և բույսը հողին։

Դու ես իմ ճրագը, դու ես իմ վարդը, դու իմ արևն ու դու իմ հողը...

Լսում էր Հասոն, սիրտը խշխշում։ Ածում էր, ածում, նվագն ուժովցնում։

Հասավ ների այծը կոտրած աստիճանին, զգաց, որ մահը աչքի առաջն է, բայց դյութված էր, ոտքը դրեց փայտի վրա։

Շարժվեց փայտը, լսվեց մի մայուն, և սիրուն ներին պտույտ գործելով օդի մեջ գնաց ջախջախվելու անդունդի քարերի վրա։

Մղկտաց Հասոն։— Հեյ վա՜խ, իմ սիրու՛ն ների,— կանչեց սրտաբուխ, բայց աչքը, երբ Զալխեին ընկավ, մոռացավ ներիին։ Սրինգը դրեց բերնին և սկսեց ածել։

Ոչխարները տեսան ներիի վիճակը. կանգ առին, մտածեցին ետ գնալ, բայց դյուրված էին, առաջ գնացին։

Փորձեց առաջին ոչխարը, ետ-ետ քաշվեց, առջևի ոտքերը բարձրացրեց և ուզեց թռնել։ Մի մայուն արձակեց և գնաց այծի ետևից։

— Վա՜խ, վա՜խ, իմ անմե՛ղ ոչխար,— մղկտաց Հասոն։ Նայեց Զալխեին, մոռացավ ոչխարին, ուժ տվավ նվագին։

Փորձեց երկրորդ ոչխարը. մինչև իսկ թռավ, բայց կպավ աստիճանին, մի պտույտ գործեց, խղճուկ կերպով մայեց և գնաց դեպի խոր անդունդը։

— Թռե՛ք, անցե՛ք, իմ սիրուն ոչխարներ,— երգում էր Հասոն.— թռեք, իմ թավամազ գառնուկներ, եկե՛ք ձեր տիրոջ մոտ։

Ոչխարները էլ չէին շարժվում, ետ-ետ էին գնում։

Կատաղեց Հասոն, բացվածքը չէր տեսնում։ Որքան սեր ուներ ու զգացմունք, ներշնչեց սրնգին, գեղգեղանքներով քարացրեց բնությունը... բայց ոչխարները ետ-ետ էին գնում։

Ամաչեց աղան իր գործից, կիսամեռ եղավ Զալխեն հուսահատությունից։

Փոխեց Հասոն եղանակը։

Այժմ ինքն էլ չգիտեր ինչ էր նվագածը։

Դադարել էր քամին, կանգնել էր ջուրը, լռել ամեն ինչ։

Ո՞վ չի լսել «Լուր-դա-լուր»-ը, որին չի դիմանալ ոչ մի քար սիրտ։ Որին լսելով, կթրթռա սիրող սիրտը, կմարի։ Որին լսելով, կգժվի սիրող աղջիկը. կգժվի և դեպի սիրածը կսլանա։

Սքանչելի է նա, երգերի փառքն է նա։

Հրեշտակների մրմունջը, Հասոյի հոգին է նա։

Շարժվեցին ոչխարները, գլորվեցին շատերը։

Շարժվեց և Հասոն, կռացավ, տեսավ բացվածքը։

Հասկացավ ամեն ինչ, նայեց աղային։

Զգաց, որ Զալխեն կորած էր իր համար, ինքն էլ աշխարհի համար։

Շարժվեց Զալխեն էլ, նայեց աղային, նայեց Հասոյին։

Զգաց, որ Հասոն կորել էր իր համար, ինքն էլ աշխարհի համար։

Եվ լռեց ամեն ինչ...

«Լուր-դա-լուր»-ը դադարեց, նրա խաղի վերջին թրթռումը գնաց մեռնելու օդի մեջ...

Հետո... լսվեց մի ճիչ։

Ոն երկու մարմիններ արագ պտույտ գործելով օդի մեջ, գնացին միասին ջախջախվելու անդունդի խորքում... և միմյանց գրկում։

Հասոն ու Զալխեն էին դրանք...

ՆԱՐ-ԴՈՍ

ՆԵՂ ՕՐԵՐԻՑ ՄԵԿԸ

1

Պատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած հագուստին, նայեց կոշիկների ծռմռված ծայրերին, դուրս եկավ սենյակից, դուռը փակեց, բանալին գրպանը կոխեց, անցավ բակի երկայնքով և դարձրացավ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պատշգամբը, որը, մաքուր ու կարմրավուն, պլպլում էր հայելու պես, առավոտվա արևի պայծառ ճառագայթներով ողողված։ Նրան թվում էր, թե անասունները, երբ նրանց սպանդանոց են տանում, ճիշտ նույնը պիտի լինեին զգալիս, ինչ որ զգում էր ինքն այդ րոպեին։ Նա մի վտիտ երիտասարդ էր, հազիվ երեսուն տարեկան, խիստ բարի աչքերով և անվստահ շարժումներով։ Խոհանոցից դուրս եկող իմերել ծառային խնդրեց կամացուկ, որ տանտիրոջն իմաց տա, թե ինքն ուզում է տեսնել նրան։ Ծառան, չուխայի հետ ծալած երկայն ու լայն թևերը վայր թողնելով, գնաց նրա խնդիրքը կատարելու, իսկ Պատրիկյանը մնաց խոհանոցի մոտ և բաց լուսամուտից նայում էր ներս, որտեղ խոհարարը, ամբողջապես սպիտակազգեստ և գլխարկը գլխին, վարժ ձեռքերով փետրահան էր անում նոր մորթած հավեր ու բերանով ինչ-որ պարերգ շվշվացնում։ Ծառան դուրս եկավ և հեռվից ձեռքով արավ նրան։ Պատրիկյանն զգուշորեն անցավ պատշգամբով, դռան մոտ սրբեց ոտները, ծառայի առաջնորդությամբ մտավ ճաշասենյակը, այնտեղից՝ ընդարձակ ու խիստ

բարձր դահլիճը, որը կորած էր հսկայական ծաղկամանների, աթոռների, աթոռակների, բազկաթոռների, սեղանների, գահավորակների ու բազմոցների մեջ, և կանգ առավ տանտիրոջ առանձնասենյակի առաջ։ Ծառան դուռը բաց արեց, ներս հրավիրեց նրան, իսկ ինքը հեռացավ։

Տանտերը՝ խիստ ջղուտ, կարծես բրոնզից ձուլված մի տղամարդ, մոտ 50—60 տարեկան, սպիտակախառն կոշտ մազերով և սրածայր կարճ մորուքով, նստած էր թղթերով, թղթապանակներով, գրքերով և անթիվ մանր-մունր բաներով ծանրաբեռնված ահագին գրասեղանի առաջ և գրում էր։

— Ներեցեք, ես՝ իսկույն,— ասաց նա, մի վայրկյան նայելով այցելուին պենսնեի վերևից, և շարունակեց գրել։

Պատրիկյանը մնաց կանգնած։

— Խնդրեմ նստեցեք,— ասաց տանտերը, շարունակելով գրությունը։

Պատրիկյանը կամաց նստեց գլխարկը ծնկների վրա բռնած, և նայեց շուրջը։ Սենյակը զարդարված էր դահլիճի պես, փարթամորեն։ Կահավորանքի մեջ աչքի էր ընկնում ոչ այնքան ճաշակը, որքան փափկակեցության թուլությունը։ Ուր նայում էր, տեսնում էր գորգ ու թավշյա բարձիկներ։ Կար և մի ահագին գրքերի պահարան ապակյա դռներով, որի բոլոր դարակները լիքն էին ոսկեկազմ գրքերով՝ զորքի պես կանոնավոր կողք-կողքի շարված։ Այդ պահարանն էլ անշուշտ սենյակի անհրաժեշտ ճանաչված կահավորանքից մեկն էր կազմում, այլապես Պատրիկյանը չէր կարծում, թե տանտերը ժամանակ ունենար այդ ստվարահատոր գրքերից որևէ մեկը ձեռք առնելու, որովհետև չափազանց զբաղված էր իր մասնավոր ու հասարակական գործերով։ Նա գործարանատեր էր, քաղաքային խորհրդի իրավասու, քաղաքային մի քանի հանձնաժողովների անդամ, բանկի դիրեկտոր, կլուբի ավագ, եկեղեցու երեսփոխ և դպրոցի հոգաբարձու։ Պատրիկյանը հայացքը դարձրեց տանտիրոջ վրա և տեսավ, որ նա գրում է ձեռքի համարձակ շարժումով և անդադար կրծում է վերին շրթունքը ձախ կողմից։

— Նուս, ի՞նչ կհրամայեք,— ասաց տանտերը, գրությունը վերջացնելուց հետո և թրխկթրխկացնելով սև մարմարե ծանր ծրծողականը։

— Ես... ներեցեք,— պատասխանեց Պատրիկյանը իր ասելիքը նախապատրաստած մարդու շփոթմունքով։— Երեկ գիշեր դուք նորից հիշեցրել էիք սենյակիս վարձը... Ես եկել եմ խնդրելու, որ, եթե կարելի է, մի քանի օր սպասեք դարձյալ։

Տանտերն արմունկներով կոթնեց գրասեղանին և նայեց նրան իր լուրջ ու եռանդուն աչքերով։

— Եղբայր պատվական,— ասաց նա,— ես կարծեմ, յոթն օր է սպասում եմ, չէ՞։

Պատրիկյանն աչքերը վայր թողեց։

— Այո՛, բայց... խնդրում եմ դարձյալ մի քանի օր... եթե կարելի է...

—Բանը մի քանի օրվա մեջ չէ։ Մի քանի օր, ինչո՞ւ չէ, կարելի է սպասել, և տեսնում եք, որ սպասում եմ։ Բայց ցավն այն է, որ մի քանի օրից հետո, երբ դարձյալ ես ինքս ստիպված լինեմ հիշեցնելու ձեր պարտքը, դուք կգաք ինձ մոտ, ինչպես այժմ եք եկել, և դարձյալ կխնդրեք, որ դարձյալ մի քանի օր սպասեմ։ Ես դա փորձով գիտեմ և այդ բանի վերջը չեմ տեսնում։ Ուստի մի անգամ առ միշտ կանոն եմ շինել ինձ համար, որ երբ կենողներից որևէ մեկը չի վճարում բնակարանի վարձը կանոնավորապես, նրան առաջարկում եմ անմիջապես դատարկել բնակարանը։ Ձեզ էլ ասում եմ. եթե չեք կարող վճարել, դատարկեցեք սենյակը։ Ես ինքս վճարելիքներ ունեմ, և իմ պարտատերը՝ բանկը, չի սպասում, որ ես սպասեմ։

Տանտերը խոսում էր վճռական տոնով և սուր-սուր նայում Պատրիկյանի խեղճ ու կրակ դեմքին։

— Ես հասկանում եմ ձեր դրությունը,— թոթովեց Պատրիկյանը, թեև ամենևին չէր հասկանում, թե ինչպես կարող էր ամսական իր վճարելիք մի քանի ռուբլին որևէ նշանակություն ունենալ այդ հարուստ մարդու համար։— Բայց դուք էլ, խնդրում եմ, մտեք իմ դրությունը։ Ես ուսուցիչ էի գավառում. այժմ դպրոցներ չունենք, փակել է կառավարությունը, ինչպես գիտեք, և ես անգործ եմ։ Ուզում էի գնալ արտասահման ուսումս շարունակելու, դիմեցի մի քանի բարեկամների, մերժում ստացա։ Հետո մտա մի խանութ իբրև հասարակ գործակատար, հույս ունեի, թե խնայողությամբ այնքան կհավաքեմ, որ կարող կլինեմ ձգտումս իրագործել, բայց հիվանդացա և խնայած բոլոր փողերս ծախսեցի։ Հիմա ոչինչ չունեմ. օրեր են պատահում, որ քաղցած եմ մնում...

— Ի՞նչ հարկավոր է, որ այդ բաները պատմում եք ինձ,— շտապեց ընդհատել Պատրիկյանին տանտերը, և նրա բրոնզյա դեմքի վրա երևացին դժգոհության պարզ նշաններ։— Դուք կրթված մարդ եք, և ձեր անձնասիրությունը չպետք է թույլ տա, որ ուրիշի պատմեք ձեր մասնավոր կյանքը։ Ես էլ հազար ու մի ցավ ու դարդ ունեմ, նստեմ, պատմե՞մ ձեզ։ Լավ չէ, այդ լավ չէ։ Ասում եք՝ մի

քանի օր,— համեցեք, կսպասեմ. միայն ես չեմ հասկանում, թե որտեղի՞ց պիտի կարողանաք վճարել, քանի որ ասում եք, թե ոչինչ չունեք և անգործ եք։

— Ես...գիտեք... ես... մի երկու գիրք ունեմ տպագրած,— ասաց Պատրիկյանը շփոթված, կարծես ամաչելով, որ այդպիսի բան ունի արած,— երկար ժամանակ է, չեմ մտել գրավաճառանոց. այսօր կմտնեմ, երևի այնքան ծախած կլինեն, որ...

— Դուք գրո՞ղ եք,— հարցրեց տանտերը, զարմացած նայելով նրա շփոթված աչքերին։

— Այո։

— Ի՞նչ եք գրում։

Պատրիկյանը գլուխը բարձրացրեց և նայեց նրան ամոթխածության ժպիտով.

— Ո՞վ գիտե... գրում եմ, էլի...

— Դե՛, դուք գիտեք,— ասաց տանտերը և վեր կացավ։— Ձեր կողքի կենողը, այն հրեա այրի կինը, որ դանակներ և կողպեքներ է ծախում բակի դռան մոտ, տասը տարի է կենում է, և չեմ հիշում մի ամիս, որ ամենայն ճշտությամբ վճարած չլինի սենյակի վարձը, չնայելով, որ մեն-մենակ այնքան էլ ահագին ընտանիք է պահում։ Ասելս այն է, որ... Ինչևիցե, ցտեսություն։ Մի քանի օր կըսպասեմ։

2

Պատրիկյանը դուրս եկավ ինչ-որ հիմար մի ժպիտ դեմքին։ Պատշգամբում պատահեց տանտիրոջ նիհար ու տգեղ աղջկան և նրա ֆրանսուհի կոկետ դաստիարակչուհուն, որոնք թևանցուկ ըզբոսնում էին աշնանային արևի ախորժելի ջերմ ճառագայթների տակ և ջարդում էին ֆրանսերեն։ Երկայն պատշգամբով անցնելիս աշխատում էր քայլել այնպես, որ նրանք չտեսնեն իր անդրավարտիքի մաշված, պատառոտված տոտերը։ Նա իջավ բակը և դեպի փողոց տանող լայն անցքի մեջ, բակի դռան մոտ տեսավ հարևան հրեա կնոջը՝ նստած հասարակ մի աթոռակի վրա, երկայն ու նեղ սեղանի կողքին, որի վրա որոշ կանոնավորությամբ դարսած էին ամեն տեսակի դանակներ, մկրատներ, կողպեքներ, պորտմոնեներ և այլ մանրուքներ։ «Երջանի՞կ կին. համ ինքն է ապրում իր ահագին ընտանիքով, համ էլ սենյակի վարձը տալիս ամենայն ճշտությամբ»,— մտածեց Պատրիկյանը, հիշելով տանտիրոջ խոսքերը և նրա մոտով անցնելիս բարևեց նրան։

— Ինչո՞ւ այսօր տաք ջուր չվերցրիք,— կանչեց նրա հետևից հրեա կինը՝ հրեաներին հատուկ առոգանությամբ։

Պատրիկյանը կանգ առավ և նայեց նրա բարի, գիրուկ դեմքին նույն հիմար ժպիտով։

— Որովհետև շաքարս հատել էր,— պատասխանեց նա մի տեսակ անհոգությամբ։

Հրեա կինը զարմանքից մինչև անգամ վեր կացավ աթոռից։

— Ա՛յ քեզ բան,— բացականչեց նա։— Շաքար էլ կտայինք, ի՞նչ կա որ...

— Չէ՛, առանց այն էլ ես շատ եմ պարտական ձեզ...

— Ի՞նչ պարտական... Ամեն օր մի քանի բաժակ տաք ջուր տալով մե՞ծ բան ենք արել, ինչ է։ Շաքար չունեիք կասեիք, մի երկու կտոր շաքարն ի՞նչ մեծ բան է որ...

— Բան չկա, մի օր թեյ չխմելով չենք մեռնի,— ասաց Պատրիկյանը, ծիծաղեց նույն անհոգությամբ և շտապեց դուրս գնալ փողոց։

Պատրիկյանի առաջին գործն այն եղավ, որ մտավ գրավաճառանոց։ Հույս ուներ, թե այնքան կստանար, որ, սենյակի վարձը հանելուց հետո դեռ մի բան էլ կմնար իբրև ապրուստի փող։ Սակայն գրավաճառանոցում նրան ասացին, որ վերջին երեք ամսվա ընթացքում նրա երկու գրքերից մեկն ամենևին չի ծախվել, իսկ մյուսից ծախվել է հինգ օրինակ միայն, և կոմիսիայի տոկոսը հանելուց հետո նրան հանձնեցին 1 ռ. 20 կ.։ Պատրիկյանը, հիասթափության ժպիտը դեմքին, փողը գրպանն ածեց և դուրս եկավ գրավաճառանոցից՝ ճնշված այնպիսի զգացման տակ, որպիսին ունենում են անսովոր մուրացիկները ողորմություն ստանալուց հետո։ Ամոթի և նվաստացման կարմիրը երեսին՝ մի բոպե կանգ առավ դուրսը, գրավաճառանոցի լուսամուտի առաջ, որի թեթև քրտնած ապակիների միջից մի հայացք ձգեց ցուցանակի վրա հպարտորեն շարված ռուսերեն փարթամ գրքերին, ապա նրանց կողքին մի անկյունում ամոթխածությամբ կուչ եկած հայերեն վըտիտ գրքույկներին, հետո երեսը շուռ տվեց և հեռացավ, խորասուզված ինչ-որ դառն մտածմունքների մեջ։ Նա մոռացավ թեյի փափագն էլ, քաղցն էլ և, որովհետև ուրիշ տեղ չուներ գնալու, քայլերն ուղղեց դեպի խմբագրատուն։

Խմբագրատանը, ինչպես միշտ, այս անգամ ևս նստած էր մեն-մենակ քարտուղարը՝ չորիկ-մորիկ մի երիտասարդ պարզ ակնոցով և աջ ձեռքի ճկույթի վրա աճեցրած կես վերշոկաչափ սրածայր եղունգով,— և արագ գրում էր երկայն ու նեղ թղթերի վրա,

ձկույթը որոշակի առանձնացրած հարևան մատներից։ Պատրիկյանը, իբրև պարապ մարդ և իբրև ձրի աշխատակից, խմբագրատան ամենօրյա այցելուն էր, այնպես որ քարտուղարն ու նա, որոնք մտերիմ ընկերներ էին, այլևս չէին բարևում իրար տեսնելիս։ Այս անգամ ևս Պատրիկյանը մտավ քարտուղարի սենյակը առանց բարևելու, նստեց գրասեղանի ծայրին, վերցրեց տեղական ռուս լրագրերից մեկը, որոնցից քարտուղարը լուրեր էր թարգմանում, և սկսեց կարդալ։ Տեղական լուրերից մեկը կարդալուց հետո, հարցրեց.

— Ինչո՞ւ այս լուրը չես նշանակել։

— Ո՞ր լուրը,— հարցրեց քարտուղարը, շարունակելով գրել։

— Ջափինյանի մասին։ Հրավիրված է այս ամեռ արքունական թատրոնում երգելու համար։

— Հե՛րն անիծեմ,— սրտանց արտասանեց քարտուղարը, առանց գլուխը բարձրացնելու թղթի վրայից։— Մե՞զ ինչ օգուտ։

Պատրիկյանը, ըստ երևույթին, համամիտ եղավ նրա հետ, որ Ջափինյանի արքունական թատրոնում երգելուց ոչ մի օգուտ չպիտի ունենա հայ հասարակությունը, ուստի ոչինչ չառարկեց։

Ներս մտավ տպարանական փոքրիկ աշակերտը՝ մրոտ երեսով ու ձեռներով և կապույտ բլուզով, որի մեջ սրթսրթում էր ցրտից նրա վտիտ մարմինը։

— Նուֆ,— ասաց նա, յու-ն ու հնչելով։

— Սպասիր մի քիչ,— ասաց քարտուղարը, և գրիչը նրա ձեռքին սկսեց շարժվել արագ։ Նա շուտով գրեց, վերջացրեց թուղթը և գրած մյուս թղթերի հետ միասին ծալեց ու տվեց աշակերտին։

— Ահա տար, և որ էլի գալու լինես, հարցրու՝ քանի՞ կոլոն է պակաս։

Աշակերտը դուրս գնաց՝ գլխարկը փողոցում ծածկելով։

— Դեհ, Պատրի՛կ, պարապ մի՛ նստիր,— ասաց քարտուղարն ակնոցն ուղղելով և նոր գործի պատրաստվելով։— Նյութ չունենք, մի բան գրիր ձեռաց։

— Տրամադրություն չունեմ,— ասաց Պատրիկյանը մելամաղձոտ։

— Շատ մի՛ խոսիր, գրիր, հոգիս դուրս է գալիս։ Գիշերն էլ մինչև ժամը երկուսը տպարանում եմ անցկացրել, որովհետև սրբագրիչը հիվանդացել է։

— Ո՞ւր է խմբագիրը, ինչո՞ւ չի օգնում։

— Գնացել է փող ճարելու, որովհետև տպարանատերն սպառնացել է, որ եթե այսօր փող չտանա, համարը բաց չի թողնի։

Էգուց-էլօր բաժանորդագրություն ենք բանալու, և հանկարծ այսպիսի խայտառակություն... Գրի՛ր, գրիր, խոսելու ժամանակ չէ։

— Ի՞նչ գրեմ։

— Ի՛նչ ուզում ես, միայն թե գրիր։

Պատրիկյանը դանդաղորեն մի քանի թերթ թուղթ քաշեց առաջը, գրիչը թաթախեց թանաքամանի մեջ, կարճ ժամանակ մտածեց և գրեց վերնագիրը՝ «Երեք ամիս և հինգ օրինակ միայն»։ Այստեղ նա կանգ առավ, ճակատը շփեց և երկար մտածելուց հետո սկսեց. «Այս օրերս պատահեցի մեր երիտասարդ գրողներից մեկին, որի համար կրիտիկան կամ այն, ինչ որ մեզանում կրիտիկա է անվանվում, միաբերան վկայել է, որ բավական ձիրք ունի։ Նա գանգատվեց ինձ, որ ահագին նեղություններով հրատարակված իր մի գրքից երեք ամսում վաճառվել է հինգ (հարյուր չկարծեմ) հատ միայն։ Այս իրողությունը շատ լավ ծանրաչափ կարող է լինել՝ ցույց տալու համար մեր հասարակության ընթերցասիրության չափը և միևնույն ժամանակ շատ դառն մտածմունքների առիթ է տալիս մեր գրականության ապագայի մասին։ Մեր հասարակությունը...»։ Պատրիկյանը նորից կանգ առավ, մտածեց, մտածեց, հետո գրիչը վայր դրեց և ասաց.

— Այստեղ ոչինչ չի կարելի գրել. մատներս փետացան։

— Տո՛, գրիր, է՛,— բղավեց քարտուղարը, որի գրիչը նորից արագ շարժվում էր թղթի վրա։— Վաղու՞ց է, որ այդքան քնքշացել ես։ Կարծես թե քո սենյակը սրանից տաք լինի։

Պատրիկյանը սառած ձեռքերը շփեց իրար, բերնի գոլորշիով տաքացրեց մատների ծայրերը, նորից առավ գրիչը, գիծ քաշեց «մեր հասարակությունը» բառերի վրա և շարունակեց. «Ճիշտ է, չի կարելի պնդել, թե մեր հասարակությունն ընթերցասեր չէ, բայց...»։

— Կարելի՞ է մտնել,— լսվեց մի ուժեղ բարիտոն։

Պատրիկյանը և քարտուղարը միաժամանակ բարձրացրին գլուխները և նայեցին դեպի նախասենյակի դուռը։ Այնտեղ կանգնած էր մի թիկնավետ երիտասարդ, բեղերն ու մորուքը սափրած և ցիլինդրը ձեռքին։

— Խնդրեմ,— մեքենայաբար արտասանեց քարտուղարը։

Այցելուն մտավ խիստ անձնավստահ քայլերով և ներկայացրեց իրեն.

— Ջափինյան։ Երևի գիտեք, որ ես հրավիրված եմ այս սեզոնին արքունական թատրոնում երգելու։

— Ա՜խ, ինչպես չէ,— արտասանեց քարտուղարը, մեքենա-

յաբար վեր կենալով տեղից և ակամա հարգանքով սեղմելով երգչի ձեռքը։— Խնդրեմ նստեցեք։

Նա շփոթված էր այցելուի գեղեցիկ ու ազդու արտաքինից և, մանավանդ, նրա անունից, որ բավական հռչակ էր սկսել վայելել ռուս մամուլի և հասարակության մեջ։

Ջափինյանն արագ նստեց, ցիլինդրը դրեց գրասեղանի վրա, ձեռնոցը դրեց ցիլինդրի մեջ, հետո տեսնելով, որ գրասեղանը ծածկված է փոշիով, ցիլինդրի տակ մի լրագիր դրեց։

— Խմբագիրն այստեղ չէ՞,— հարցրեց նա։

— Դժբախտաբար ոչ,— պատասխանեց քարտուղարն ստորակական-հարգական ժպիտով և ակամա ուշադրություն դարձրեց երգչի կարմիր ատլասե փողկապի վրա հուրհրատին տվող խոշոր ադամանդի վրա։ Նա նորից նստեց և չէր իմանում ինչպես անի, որ այցելուի աչքից ծածկի իր կեղտոտ մանժետները։

— Իբրև հայ երգիչ, իմ պարտքս համարեցի այցելել ձեր խմբագրատունը,— ասաց Ջափինյանը։— Երևի գիտեք, որ ես սովորել եմ Իտալիայում, որտեղից սրանից վեց տարի առաջ ինձ հրավիրեցին Օդեսա։ Երկրորդ տարին երգեցի Իրկուտսկում, հետո միմի սեզոն երգել եմ Խարկով, Կիև, Մոսկվա, իսկ անցյալ սեզոնին երգում էի Պետերբուրգում։ Այժմ եկել եմ Թիֆլիս։ Թիֆլիսը երաժշտական քաղաք է, կարծում եմ, որ կգնահատի ինձ։ Ներեցեք, դուք ստանու՞մ եք մայրաքաղաքային թերթերը։

— Ինչպես չէ։

— Ուրեմն անշուշտ կարդացած կլինեք ինձ վերաբերյալ ռեցենզիաները։ Ամենքը գովում են։

Երգիչը խոսում էր երկար ու բացառապես իր մասին։ Նրա ձայնը հնչում էր առողջ և ինքնավստահ։

— Ինչևիցե,— ասաց նա և հանկարծ վեր կացավ։— Ես ձեզ չխանգարեմ։ Իմ խոնարհ հարգանքներս պ. խմբագրին։ Հույս ունեմ, որ նա, ինպես և դուք, շնորհ կբերեք լսելու ինձ։ Դուք սեզոնային տոմսակ ունեք, չէ՞։

— Ո՛չ, հայ թերթերին հարկ չեն համարում մշտական տոմսակ ուղարկելու,— պատասխանեց քարտուղարը։

— Ի՞նչ եք ասում,— բացականչեց Ջափինյանը։— Ես կասեմ, որ ուղարկեն երկու տոմսակ՝ մեկը հատկապես խմբագրին, մյուսը ռեցենզենտի համար։ Դա ի՞նչ զզվելի խտրականություն է։ Իմ առաջին դեբյուտը լինելու է ամսույս տասին, երգելու եմ Օնեգինը։ Հետո դուրս կգամ «Մազեպա»-ի, «Ռուսլան և Լյուդմիլա»-ի, «Ռուսալկա»-ի և ուրիշ օպերաների մեջ։ Ցտեսություն։

Ջափինյանն ամուր և երկար սեղմեց քարտուղարի ձեռքը, թեթևակի գլուխ տվեց սեղանի ծայրին կուչ եկած Պատրիկյանին և դուրս գնաց նույնպիսի արագ քայլերով, ինչպես որ մտավ, հատակը թխկթխկացնելով իր պլպլան կոշիկների խիստ բարձր ու բարակ կրունկներով։ Քարտուղարը մինչև դուրս ճանապարհ դրեց նրան և, երբ վերադարձավ, ձեռքերը խփեց իրար և բացականչեց ապշած.

— Փա՜հ... Տեսա՞ր, Պատրիկ։ Ճանաչո՞ւմ ես՝ ո՛վ էր։ Երեկ մեկէլ օրվա քելեխ ուտող տիրացուն էր, է՜... Խմբագիրը պատմում է, որ երբ երեսփոխական ընտրության վերաբերյալ հայտարարություն էր բերում, չէր համարձակվում դռան շեմքից առաջ գալ, իսկ հիմա... իր պարտքն է համարել այցելություն տալու խմբագրին... Ցիլինդրի տակ լրագիր դրեց, որ չփոշոտվի... Տեսա՞ր նրա փողկապի ադամանդը... գնացել ես՝ գրող ես դառել, վա՛յ, գրողը տանի քեզ, Պատրիկ, գրո՜ղը... ինձ էլ քեզ հետ,— ավելացրեց քարտուղարը և գնաց, նստեց իր տեղը։

— Դու ինձ այս ասա, հիմա լուրը կգրես, չէ՞,— հարցրեց Պատրիկյանը, հեգնորեն ժպտալով։

Քարտուղարը պատասխանի տեղ ձեռքերը տարածեց խաչելության պես, ուսերը վեր քաշեց կոմիկական տարակուսանքով, կարճ ժամանակ մտախոհության մեջ ընկավ, հետո հանկարծ նայեց ծոցի ժամացույցին և բացականչեց ոչ այնքան զայրացած, որքան զարմացած.

— Ինչքա՜ն էլ ժամանակ խլեց անիծվածը... Իսկ տպարանում նյութ չկա։ Գրիր, Պատրի՛կ, մինչև որ տեսնենք՝ ինչ է դուրս գալիս այդ էշի մարտիրոսությունից։

— «Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ...»— արտասանեց Պատրիկյանը,—ծիծաղեց, առավ գրիչը և պատրաստվեց շարունակել սկսած հոդվածն անսիրտ և դառնացած՝ ինքն էլ չիմանալով ում և ինչի դեմ։

Իսկ այդ միջոցին քարտուղարն արդեն գրում էր իր մանր ու փութկոտ գրերով. «Մեր հայրենակից երգիչ Ջափինյանը հրավիրված է այս սեզոնին երգելու Թիֆլիսի արքունական թատրոնում։ Իտալիայում իր արվեստը կատարելագործելուց հետո, նա վերջին վեց տարվա ընթացքում երգել է Ռուսիայի զանազան քաղաքներում, ի միջի այլոց՝ Մոսկվայում և Պետերբուրգում, ուր, տեղական թերթերի վկայությամբ, մեծ հաջողություն է ունեցել։ Թիֆ-

լիսում նա առաջին անգամ բեմ է ելնելու ամսույս 10-ին Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայի մեջ Օնեգինի դերում»։

Նա ուզում էր մի քանի խոսք ևս ավելացնել՝ հասարակության ուշադրությունը հրավիրելու հայ տաղանդի վրա, բայց մտածելուց հետո բավական համարեց գրածը, նայեց Պատրիկյանին և տեսնելով, որ նա գրում է շատ դանդաղ և անդադար գլուխը քորելով, ասաց.

— Պատրիկ ջան, շու՛տ արա, թե չէ հրես որտեղ որ է կգա պստիկ հոգեառս և «նութ» կպահանջի։

Մտավ էքսպեդիտորը՝ փոստից ստացված մի կույտ լրագրեր և նամակներ ձեռքին։ Քարտուղարն ամենից առաջ վրա ընկավ նամակներին և սկսեց աչքի անցկացնել։ Նա այնքան վարժվել էր, որ մի քանի տող վերևից, մի քանի տող մեջտեղից և մի քանի տող վերջից կարդալուց հետո հասկանում էր ամբողջ նամակի բովանդակությունը և իսկույն էլ վճռում՝ կարելի՞ է տպել, թե ոչ։

— Վահ, այս անիծվածները կարծես խոսքը մեկ են արել, որ գրեն քահանաների, տիրացուների, երեսփոխների և հոգաբարձուների մասին,— բացականչեց նա մի քանի նամակներ աչքի անցկացնելուց հետո։— Քահանա և տիրացու, տիրացու և քահանա, երեսփոխ և հոգաբարձու, հոգաբարձու և երեսփոխ... Կարծես էլ ուրիշ բան չկա գրելու, ես ձեր...

Եվ զայրացած քարտուղարի բերանից ակամա դուրս թռան ինտելիգենտ մարդուն անվայել մի քանի խոսքեր քահանաներից, տիրացուներից, երեսփոխներից և հոգաբարձուներից դուրս ուրիշ նյութ չգտնող թղթակիցների հասցեին։

Մինչդեռ Պատրիկյանը, սուս ու փուս նստած սեղանի ծայրին, շարունակում էր իր հոդվածը, այլևս ուշադրություն չդարձնելով սենյակում տիրող ցրտին։ Մի ժամից հոդվածն արդեն պատրաստ էր։ Նա գրած թղթերը դարսեց իրար վրա ըստ թվահամարների, դրեց քարտուղարի առաջ և վեր կացավ։

— Ի՞նչ է, արդեն գնո՞ւմ ես,— հարցրեց քարտուղարը, գլուխը բարձրացնելով և նայելով նրան իր պլպլան ակնոցի միջից։

— Հա՛։ Ես բոլորովին սառեցի այստեղ։ Գնամ տեսնեմ՝ ինչ եմ անում։ Այսօր բան չեմ առել բերանս. թեյ չեմ խմել։ Տես այդ հոդվածը,— անսիրտ եմ գրել,— թե բանի նման է՝ տպիր, թե չէ՝ զամբյուղը գցիր։ Ցտեսություն։

Եվ Պատրիկյանը դիմեց դեպի դուռը, մի բոպե կանգ առավ նախասենյակում ինչ-որ անվճռականության մեջ, մեքենայաբար թափ տալով ձեռքին բռնած գլխարկը. հետո կամաց ետ դարձավ

և ասաց ավելի ևս կամաց, կարծես վախենալով, որ մի երրորդ անձ կարող է լսել.

— Չե՞ս կարող ինձ մի հինգ ռուբլի փոխ տալ։

— Հինգ ռուբլի՞,— բացականչեց քարտուղարը կարծես ապշած, որ նա այդքան մեծ գումար է պահանջում։

— Հա՛, խնդրում եմ։ Սենյակիս վարձը պետք է տամ։

Քարտուղարը արագորեն հանեց իր մաշված-ջարդված պորտմոնեն, բաց արեց, միջի փողը՝ սև ու սպիտակ դրամներ, թափեց գրասեղանի վրա և սկսեց համարել դրամները մեկ-մեկ քաշելով մի կողմ՝ 10, 20, 25, 35, 50, 55, 58, 60, 62 կոպեկ։ Ահա իմ ունեցած բոլոր կապիտալը։ Թե որ սրանից հինգ ռուբլի դուրս կգա, վերցրու։ Հինգ ամիս է ռոճիկ չեմ ստացել, կհավատա՞ս, թե՞ չէ...

Պատրիկյանը ձեռքով հուսահատական մի շարժում արավ և դուրս գնաց։

Վ. ՏԵՐՅԱՆ

***

Մի խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին,
Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին.

Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն։

Բաբելոնն է եղել մեր ախոյանը, տե՛ս,
Անհետ կորել, անցել է չար մշուշի պես.

Ասորիքն է եղել մեր թշնամին, ահա՛,
Դաշտ է տեղը, և չկա քար քարի վրա։

Ամրակուռ է մեր հոգին-դարերի զավակ՝
Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ։

Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք,
Լաց է այնտեղ ամեն երգ և ողբ ամեն գիրք։

Գերված ենք մենք—ոչ ստրուկ—գերված մի արծիվ,
Ձարության դեմ վեհսիրտ միշտ, վատի դեմ ազնիվ։

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ։

Չի հասկանա ձեր հոգին և՛ ծույլ, և՛ օտար,
Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար։

Նգիպտական բուրգերը փոշի կդառնան,
Արևի պես երկիրը կվառվի վառման։

Որպես փյունիկ կրակից կելնես, կելնես նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր։

Արիացիր, սիրտ իմ, ել հավատով տոկուն,
Կանգնիր հպարտ որպես լույս լեռն է մեր կանգուն։

Վ. ՏԵՐՅԱՆ

ԹՈՂԻ ԵՐԿԻՐՆ ԻՄ ՀԱՅՐԵՆԻ

Թողի երկիրն իմ հայրենի,
Անահ անցա Արաբ ու Հինդ,
Տեսա մարդիկ չորտգլխանի,
Տեսա հազար աղետ ու խինդ։

Հասա մինչև Չինումաչին,
Հասա մինչև ծովը ճերմակ,
Տեսա երկրի ծայրը վերջին
Եվ դրախտի դուռը կրակ։

Հազար անգամ ծագեց Արև
Եվ մայր մտավ հազար անգամ,
Տեսա ծառեր հրատերև,
Տեսա ակոնքն արեգական։

Եվ փերիներ քնքուշ ու սև
Աչքերը բաց, իրենք խավար,
Եվ փերիներ տեսա թեթև
Փրփուրի պես ճերմակ ու վառ...

Բոլորը ծուխ, բոլորն ավազ,
Բոլորն ավար, ջուր ու քամուն.
Չկա քեզնից գերիչ երազ,
Քո անունից անուշ անուն...

Ե. ՉԱՐԵՆՑ

***

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում։

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում։

Ո՛ւր էլ լինեմ, չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՞մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՞ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,
Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում։

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Որպես անհաս փառքի ճամփա ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում։

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ՄԻՐՀԱՎ

Աշուն էր, պայծառ աշուն...

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ։ Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը։

Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը։ Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ։ Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն։ Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը։

Այգում երիտասարդ կեռատենիները մրսում էին, քամուց խշշում։ Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում։ Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ։

Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը։

Դիլան դային նստել էր հնձանի պատի տակ, ընկուզենու չոր կոճղին։ Նա սովորություն ուներ ուշ աշնանը վերջին անգամ այգին մտնելու, դուռ ու ցանկապատ ամրացնելու և հնձանը փակելու, որպեսզի ձմռան ցուրտ գիշերներին գայլ ու գազան չպատսպարվեն ներսը։

Ջորացած ոստերի և ցողունների մի կապ ժողովել էր, դրել մոտը։ Եվ հոգնությունից հանգստանում էր, աչքը հեռու սարերին։ Նստել էր ու միտք էր անում՝ ականջը սիմինդրի տերևների խշշոցին։

Աշնան արևը ջերմացնում էր նրան. ձորի խաղաղությունը դուրեկան էր։ Ծառերին փաթաթված վազերն օրորվում էին քամուց, Դիլան դայու միտքն էլ տարուբերը էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև։ Քամուց հնձանի դռնակը մեղմ ճռնչում էր, և մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ։

Ծթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագենա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից։ Շուտով կիջնի ձմեռ, և ո՞վ գիտի, բացվող գարնանը նորից պիտի ի՞նքը բանա այգու դուռը, թե՞ մի ուրիշ ձեռք։

Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր և՛ սիմինդրի տերևների խշշոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դռնակի երգը։

Այդպես մի անգամ էլ, շատ տարիներ առաջ, ճռնչաց այգու դուռը։ Էլի արև օր էր։ Հնձանի ստվերում ուռենու կողովների մեջ, սև խաղողը շողշողում էր։

Ներսը՝ քարե տաշտի մեջ, Դիլան դային, մինչև ծնկները բաց ոտներով, ճմլում էր խաղողը և արնագույն շիրան քարե տաշտից ծորում էր կավե կարասը։

Հնձանը շոգ էր։ Ճմլում էր խաղողը, ինքն իրեն դնդնում կայտառ մի երգ, և քրտինքի կաթիլները գլորվում էին, ընկնում շիրայի մեջ։ Երիտասարդ էր այն ժամանակ, երակներում արյունը եռում էր իբրև թունդ գինի։

Դռան ձայնին Դիլանը գլուխը դուրս հանեց։ Այգում ոչ ոք չկար։ Ու հանկարծ, երբ սիմինդրի մարգերում երևաց գլխի վառ կապույտ մանդիլը, ինքը պահվեց դռան հետևը։

Կարծես հավք էր թաքնվել անտառի մթին խորշում։ Ապա վիզը երկարեց, ինչպես կաքավը դեղնած արտերում խշշյուն լսելուց, և մի ջահել կին դուրս եկավ սիմինդրի խիտ արտից։ Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը, որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը։

Սոնան էր, զառ մանդիլով նորահարսը, լույս ատամներով այն աղջիկը, որ այնպես զրնգան ծիծաղում էր, երբ առվակի մեջ կախում էր սպիտակ սրունքները, իսկ դրացու տղան՝ Դիլանը, ջուր էր ցնցղում նրա ողկույզի պես գանգուր մազերին։

Հարսը փափուկ քայլերով, ինչպես այծյամը ձյունի վրա, մոտեցավ հնձանին։ Դռան մոտ զրնգացին Սոնայի շալե շապիկի արծաթ սուրմաները, և ներս մտավ, ինչպես միամիտ հավքը վանդակի բաց դռնով։

Հանկարծ տեսավ նրան, ցնցվեց, ոստյուն արեց դեպի ետ, բայց մի կրակված ձեռք փակեց հնձանի դռնակը։

— Բաղը մարդ կգա, Դիլան,—դողալով խնդրեց նա։

Ու չիմացավ գինուցն էր, թե հնձանն էր տաք, Դիլան դային չիմացավ։ Սոնայի ականջին շշնջաց.

— Կաց, անխիղճ...

Շշնջաց ու պինդ-պինդ փաթաթվեց նրան։ Այնքան դուրեկան էր նրա շուրջը վեր շարած, լաջվարդ հալավի հոտը, այնքան տաք էր հնձանը։

Սոնան օձի պես կեռումուռ արեց, փորձեց ազատվել նրա բազուկների օղակից, կարոտով խնդրեց, խոստացավ։ Որպես եղեգ ճոճվեց նրա դալար մարմինը, և մեջքը խոնարհեց... Անիմաստ մաքառումից հոգնած, հարսը սրտաբուխ նրան ընծայեց իր մարմինը, որպես անարատ զոհ։ Եվ նա ագահ համբուրեց հարսի կարմիր լար շրթունքը, անհագուրդ հիացավ ոսկեդեղձան հյուսերով, որ ծփում և խշշում էին լուսեղեն լանջի վրա։

Հետո թևը ջարդված հավքի պես Սոնան ամաչկոտ դուրս թռավ հնձանից, մի անգամ էլ շորորաց այգու շաղոտ խոտերի վրա և ներսը թողեց լաջվարդ շապիկի բույրը։

Իսկ զընգան սուրմաները կայտառ կոճակների նման ծափ էին զարկում։

***

Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը։ Առուների ափին, այգիներում, դաշտերից խուրձ կրելիս, ամառվա լուսնյակ գիշերներին խոտի դեզի մոտ, ամեն տեղ այդ սերը ծիծեռնակի պես ճռվողում էր, մինչև հասունացան նրանք, և մի օր էլ մեծատուն Հարևանի շեմքով ներս մտավ Սոնան, հարսի քողը երեսին, արցունքից կարմրած աչքերը՝ պայծառ, որպես լեռնային ծովակ։

Հարսանիքից չորս ամիս հետո, պատահմամբ հանդիպել էին իրար այգիների ճանապարհին։ Դիլանը նրան կանգնեցրել, հարցրել էր հալը, Սոնան թախիծով թոթվել էր ուսը և արագ հեռացել։

Հանդիպումը բորբոքել էր նրան, բայց առաջվա նման մոտիկ լինելու ցանկությունը, իբրև խոր երկնքում նազով ճախրող թռչուն, երբեք չէր իջնում նրա շեմքին։

Ու հանկարծ այդ հավքը թառեց նրա ուսին...

Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում։ Դիլան դային մինչև վերջը չիմացավ այդ։

Մի քանի անգամ մոտեցավ, կամեցավ նրա հետ խոսել, բայց Սոնան խույս տվեց։

— Թո՛ղ, Դիլան, գնա քեզ համար...

Եվ էլ իրար չտեսան։

***

Դիլան դային միայն գիշերը տուն գնաց։ Ամբողջ օրը թափառել էր ձորում, եղել էր Հարևանի այգու շրջակայքում, աղբյուրն էր գնացել, փողոցի անկյունում կանգնել էր, բայց ոչ մի տեղ Սոնային չէր տեսել։

Լուսնյակ գիշեր էր, երկինքն անամպ։ Փչում էր գիշերվա հովը։ Դիլան դային պառկեց դեզի գլխին, նոր հարած խոտերի վրա ու քունը չտարավ։

Հազարավոր չորացած ծաղիկներ բուրում էին խոտի խուրձերի միջից, և լուսնյակ գիշերով նրան այնպես էր թվում, ասես այդ նույն դեղի վրա պառկել է Սոնան և խուրձերի մեջ թողել լաջվարդի բույրը։

Լոսաբացին հալվեցին աստղերը, գիշերվա լազուրը գունատվեց։ Երբ ծաղիկներն արթնացան գիշերվա նիրհից, և ցողը շողշողուն կաթիլներ շարեց նարնջագույն քարերի վրա, արևի առաջին շողերի հետ, գյուղի դիմաց, դեղնած արտերում զարթնեց կաքավը։

— Կա՛խ-կղա, շա՛խ-կղա...

Լսվում էր կաքավի թավ երգը։ Ավելի վերև, անտառի խորքից կանչում էր միրհավը։

Դիլան դային վեր կացավ, ուսը գցեց կայծքարով հրացանը և երեսը դարձրեց դեպի սարալանջի անտառը, որտեղից կանչում էր միրհավը։

Սիրտ չուներ իջնելու այգին, տեսնելու հնձանը։

Քայլում էր Դիլան դային շաղոտ խոտերի միջով, հնձած արտերն էր կոխ տալիս, ոսկեգույն ծղնոտները, և գլուխը կախ բարձրանում դեպի անտառը՝ արահետի կեռմաններով և թփերի միջով։

Ահա ճամփի եզրին՝ մասրենու պառավ թուփը, նրա մոտ տափակ քարը, որի վրա հովիվներն այժմ էլ աղ են ցանում ոչխարի համար... Խուրձ էին կրում միասին՝ ինքը, Սոնան։ Արևը խանձել էր աղջկա երեսը, ոսկեդեղձան հյուսերի ծայրը։ Դեղին ծղնոտի փշրանքներ կային մազերի արանքում։

Կալից ձիերը քաշում էին, հասնում այդ քարին, և ձիերը կանգնեցնում։ Ինքը բարձրացնում էր Սոնային ձիու վրա, հետո իր ձին նստում և գնում արտերը խուրձի։

Մի անգամ էլ Սոնան խնդրեց, որ միասին նստեն։ Ու մի ձին հետքից քաշեցին։ Առջևը Սոնան էր նստել, հետևում ինքը։ Մի ձեռքով սանձն էր պահում, մյուսով գրկել էր նրա բարակ մարմինը։ Աղջկա ծամերը քսվում էին նրա երեսին։

Իսկ մյուս առավոտը, երբ այդ քարին հասան, և ինքն առաջարկեց նորից միասին մի ձիու նստեն, Սոնան հայտնեց, որ մայրը հանդիմանել է իրեն և խստիվ պատվիրել առանձին նստելու։

— Ինչու՞։

— Ամոթ է,—ասաց աղջիկը արդար ժպիտով։ Դիլան դային մոտեցավ մի դեղի, ձեռքը կոխեց խուրձերի մեջ և տաքություն զգաց։ Կեծացել էին խուրձերը, գիշերվա խոնավությունից հասկերը տմկել էին։

Երբ ծանոթ արտին հասավ, հենվեց կայծքարով հրացանին, միտք արեց։ Սոնան այստեղ մի ամառ քաղհան էր անում, կռանում էր ցորենների վրա, մատները փուշ էին մտնում։ Սոնան հընձվորի համար հաց էր բերում, քրտնում էր արևի տակ և քրտինքից շապիկը փակչում էր լանջին։

Լինե՞ր, այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, նրանց արտը հնձեր, Սոնան հաց բերեր իրեն, շապիկը քրտներ և քրտնած նըստեր կողքին։

Ետ նայեց Դիլան դային, եկած ճանապարհին նայեց։ Մարդ չկար. աշնան մերկ դաշտերն էին։ Ու միայն մասրենու կարմիր թփերն էին, և փայլուն մասուրները դեղնած տերևների արանքում։

Հանկարծ մի թփի հետևը լսվեց կաքավի ձայնը.

— Կա՛խ-կղա, շա՛խ-կղա...

Դիլան դային զգույշ քայլերով, կուզեկուզ մոտեցավ թփերին։ Հնձած արտում կաքավները հավաքում էին ընկած հատիկները, կտցահարում թափված հասկերը։ Մեկը չէր, շատ էին։ Ցատկոտում էին, օրորում գեր մարմինները։ Գարնան երկու ճուտեր մի հասկի համար կռվում էին՝ կտուց կտուցի։

Դիլան դային չոքեց, նշան բռնեց։ Մի գեր կաքավ սպիտակ վիզը ձգեց, սկսեց շորս կողմը նայել։ Մյուսները լռեցին, տապ արին ծղնոտների մեջ։

Քամին խշխշացրեց թփերը, ինչպես Սոնան՝ սիմինդրի երկար ցողունները... Ու խշշոցը կաքավներին հասավ թե չէ, իսկույն փռռալով մի քանի հանգույց արին օդում, իջան արև առած արտերի վրա։

Ճանապարհը շարունակեց։ Քանի գնում թփերն ավելի էին շատանում, արտերի մեջ երևում էին հատուկենտ կաղնիներ՝ ծրռված, կռացած, կայծակից խառնված։ Ասես պահապաններ էին։ Կանգնել անտառի և արտերի սահմանում։

Արահետը բարակում էր։ Վերջին արտերն էր կոխ տալիս։ Անտառից հովը փչեց նրա դեմքին, ոունգներն ագահորեն ծծեցին անտառի խոնավ ու զով օդը։

Անտառը ծանոթ էր նրան, գիտեր, թե որտեղ է սիրում բույն դնել ու կանչել միրհավը, մթին անտառների ոսկեփետուր թռչունը։

Անտառի մեջ մամռոտ ժայռեր կային, արջաբներ, քամուց ընկած դարավոր կաղնիներ, որոնց վրա սունկերը շար էին ընկել։

Ծառերի կիսաչոր ճղները մամոտել էին, և կիսախավարի մեջ կարծես հետին ոտքերի վրա բրդոտ արջեր էին կանգնած։

Ժայռերին չհասած՝ դիմացից լսվեց հրացանի պայթյուն։

Աղմուկից դրնգաց անտառը, դեղին տերևներից ցողի խոշոր կաթիլները մետաղի ծանրությամբ ընկան խազալի վրա։ Մթնկա խորշում թպրտաց գիշերահավը։

Ո՞վ պիտի լիներ։ Կայծքարով հրացանի ձայն չէր։ Իսկ գյուղում ուրիշ բերդան չկար։

— Տեսնես ո՞վ է որս անում,—մտածեց նա։

Տերևները խշշացին։ Դիլան դային տապ արավ, պահվեց քարի հետևը։ Միրհավն էր. հանգիստ քուջուջ անելով փոխում էր արնագույն տոտիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները։

Դիլան դային թաքստոցից գլուխը հանեց նշանի, հրացանի փողը երկարեց քարի վրա։ Բայց հանկարծ թռավ միրհավը, հետքից մի ուրիշը, ապա երրորդը, չորրորդը...

Զգույշ է միրհավը, դժվար է նրան խփել։ Երբեմն այնքան մոտ է գալիս, ահա ուզում ես կրակել, բայց մի թեթև խշշոցից, նույնիսկ որսորդի խոր շնչառությունից, բացում է թևերը, թռչում գրնդակից արագ, ծղրտում, պտույտներ անում թանձր սաղարթի վրա և անձայն իջնում մի ուրիշ տեղ։ Զգույշ է միրհավը. քուջուջ անելիս ձգում է վիզը, աջ ու ձախ կռանում և ապա նորից երկարում վիզը, չորս կողմը նայում։

Դիլան դային թաքստոցից դուրս եկավ, ճանապարհը շարունակեց։ Արդեն անտառի խորքն էր. տեղ-տեղ ծառերն անանց պատնեշ էին կազմել։ Տերևները հարյուրավոր տարիներ թափվել էին իրար վրա, արևերես չէին տեսել ու չէին փտել։ Ծառերի բները թաղվել էին տերևների կույտի մեջ և ճյուղերը թխսամոր թևերի նման փռել ստվերում բուսած կապույտ սունկերի վրա։

Դիլան դային կոխ էր տալիս չորացած տերևները, թաղվում, ինչպես հարդի շեղջի մեջ, սայթաքում և ճղներից բռնելով ճանապարհը շարունակում։

Հասավ աղբյուրը, կռացավ կուշտ ջուր խմեց։ Քիչ հետո իջավ լորենիների ձորը։

Ներքև, քարերի վրա, այնքան շատ միրհավ կար... Արևը տաքացրել էր մամոտ քարերը, ոսկեփետուր միրհավը, թևերին սև պուտեր, թռչում էր քարից քար, կանչում, կտցահարում հարևանին, էգի շուրջը պտույտներ անում։

Նշան բռնեց։ Երբ քարը կայծ տվավ և կայծից բռնկվեց վա-

ոդը, հրացանի փողից բոց ու մուխ ելավ, ձորերը որոտացին ահավոր արձագանքով, ձորից թռան միրհավերը՝ թևերը լայն, փափուկ բմբուլով, թևերը փռած աշնան արևի ոսկե շողերի տակ։

Միայն մեկը թպրտաց, մամոռոտ քարից վայր ընկավ թփուտների մեջ։

Դիլան դային վրա վազեց և վազելիս նկատեց, որ մի սպիտակ շուն, լեզուն հանած, ցատկեց թփուտների կողմը։ Որսկան շան շունչն ու Դիլան դայու ձեռքերը միասին ձգվեցին դեպի արնոտ միրհավը։

Նրա մատները դիպան դեղին բմբուլներին, բայց վիրավոր միրհավը հանկարծ թևին տվեց, թռավ վեր։ Երկու փետուր օրորվելով վայր ընկան, աշնան դեղին տերևների նման։

Դիլան դային ափսոսանքով նայում էր արնոտ միրհավի հետևից, երբ հանկարծ, շատ մոտիկ, լսվեց ոտնաձայն։ Ետ նայեց, աչքերը զարմանքից լայնացան, և հրացանը բնազդմամբ ձեռքից վայր սահեց ծառի հետևը։

Անտառապահն էր, աչքերը՝ կաս-կարմիր ածուխ...

Մոտեցավ, բղավեց, և մինչև ուշքի կգար, նրա մտրակը օդը ճեղքելով չափեց Դիլան դայու ուսը, մինչև թիակների ոսկորը, մրմուռը ծակեց, ինչպես եղինջի հարվածը բաց մսերի վրա։

Անտառապահը հարվածում էր նրան և զայրանում, որ Դիլան դային փախցրել էր նրա զարկած միրհավը։

Անտառապահի որսկան շունը մեկ նայում էր տիրոջը, մեկ՝ Դիլան դայուն, մռռում էր, պոչը գետնով տալիս, մեկ բերանը բաց՝ հուզմունքից հորանջում, մեկ էլ անհանգիստ հոտոտում թփերը, որտեղ քիչ առաջ թպրտում էր արնոտ միրհավը։

Անակնկալ հանդիպումը նրան շշմեցրեց... Նրանք արդեն հեռացել էին, երբ Դիլան դային ուշքի եկավ, նայեց նրանց հետևից, մտաբերեց շան կարմիր երախը...

Դիլան դային նստեց քարի վրա։ Ցավից նրա դեմքը կծկվում էր։ Մեջքը կարծես շիկացած շամփուրներով խանձել էին, աչքի տակը հարվածից տաքացել էր։ Երկար միտք արեց Դիլան դային, աչքը միրհավի երկու փետուրներին։ Մի անհուն դառնություն և կսկիծ ավերեց նրա չքնաղ օրը։

...Արևը խաղում էր մայրամուտի ամպերի հետ։ Անտառում լռություն էր։ Միրհավը թռել էր հեռու... Մամոռոտ քարի վրա երկու փետուր էր ընկած, դեղնագույն-սև պուտերով, իսկ թփի շոր ճյուղերին՝ արյան կաթիլներ։

Դիլան դային ձորով իջավ ներքև։

Երբեմն երազ էր թվում միրհավը, բայց մտրակի տեղերը մրմնջում էին, աչքի տակ ցավ էր զգում, ոտքերը թեթև դողում էին։

Սեղմել էր հրացանի տաք փողը, ինչպես միրհավի մարմինը, որին միայն մի վայրկյան շոշափեց և մատների ծայրով զգաց, որ բմբուլը փափուկ է։ Միրհավի մարմինը՝ տաք բմբուլ, ինչպես Սոնայի մարմինը լաչվարդ շապիկի մեջ։

Տուն չգնաց։ Քարքարոտ արահետով իջավ այգին։ Ճռնչաց հնձանի դռնակը, ներս մտավ, մեկնվեց քարե հատակի վրա։

Երբ առավոտյան արևի շողը հնձանի դռնակի ճեղքով փայլեց ներսում, Դիլան դային զարթնեց, տրորեց աչքերը և աչքի տակ ցավ զգաց։ Ուռուցքը չէր անցել։

Այդ օրը նա քարե տաշտում ավելի զայրացած էր ճմլում սև խաղողը և չէր զգում, թե ինչպես քրտինքը գլորվում է ճակատից, կաթում պղտոր գինու մեջ...

***

Աշուն էր, պայծառ աշուն...

Հնձանի առաջ նստել էր Դիլան դային, գլուխը խոնարհել կրծքին ու միտք էր անում արևի տակ՝ անցած-գնացած օրերի մասին։

Այդ աշնան հաջորդ ամառը Սոնան մեռավ երեխայի վրա, և լաց լացին նրա մայրը, ամուսինը, բարեկամները։ Ուրիշ աղջիկ գնաց նրա տեղը, Դիլան դային էլ կին առավ, բայց հիշողության մեջ հավիտյան անջինջ մնաց Սոնան, հնձանը, լաչվարդ շապիկը, արծաթե սուրմաները։

Դիմացի բլրակի լանջին գերեզմանատունն է։ Սոնայի գերեզմանաքարի վրա մամուռ կա, գրերը վաղուց լցվել են հողով, քարը թեքվել է մի կողքի վրա և թաղվել հողի մեջ։

Սոնային լաչվարդ շապիկով թաղեցին։ Արդեն վաղուց փտել է լաչվարդն էլ, ոսկե մամուռի նման մարմինն էլ...

Քանի աշուն էր անցել այն օրից, համարք չունի։ Գիտի, որ ինքը զառամել է արդեն, քայլելիս հենվում է փայտին, աչքը չի տարբերում աշնան անտառի գույները, ականջը սուր չէ մանրիկ ոտնաձայն լսելու։

Հնձանի առաջ խոխոջալով հոսում էր առվակը, գիշեր-ցերեկ ջուրն աղմկում էր, ջրի անվախճան և անքննելի զրույցն անում մամուռներին, քարերին...

Դիլան դային առվակի կողմը նայեց, ժպտաց։ Նրա հիշողությունն խավար անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ

աստղը մթին երկնքում։ Այն օրը, երբ Սոնան սրունքները կախել էր առվակի վրա և ծիծաղում էր...

Ապա միտքը սահեց, արահետով անցավ դեպի անտառը։

Միրհավ կար անտառում, թռավ արնակոլոլ, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա։ Միրհավի պես էր Սոնան, աչքերը խաղողի սև հատիկներ,— տարիներ առաջ, մի արևոտ աշնան, երբ իր ջլուտ ոտները պղնձաքարի ծանրությամբ ճմլում էին խաղողը, և անապակ գինին շիթ առ շիթ ծորում էր մատների արանքով...

Միրհավի պես թռավ Սոնան, հետքից թողեց տխրություն և դառնաթախիծ հուշեր։

...Դիլան դային վեր կացավ, ետ քաշեց հնձանի դուռը, երկաթե փակն ամրացրեց, մինչև մյուս գարուն։ Ապա կռացավ, դրժվարությամբ շալակեց չորացած ոստերի և ցողունների կապը և հոգնած ոտքերը ծերունու հուշիկ քայլերով փոխեց դեպի այգու դուռը։

Այգում էլ ոչ ոք չմնաց։

Միայն իրիկվա հովից խշշում էին սիմինդրի կոշտացած ցողունները։ Չորացած տերևներն անհանգիստ խմբվում էին այս ու այն անկյունում, թպրտում հուսահատ և անմռունչ պառկում սև գուբի մեջ։

1926—1932

ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

Արփենիկ Զարենցի հիշատակին

Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը։ Հեռվից ավերակներ չեն երևում և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին։

Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվեները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները։ Ո՛չ մի երկաթյա դուռ և ո՛չ մի պահակ աշտարակի գլխին։

Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում։ Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հղկում հունի կա-

պույտ որձաքարը։ Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները։

Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը։ Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին։ Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները որպես պողպատե զրահ։

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն։ Քարի մոտ է բսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ։ Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին։ Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը հոնք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան։

Ներքևը, ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա, թառել են մի քանի տներ։ Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ։ Շոգ կեսօրին գյուղում կանչում է աքլորը, աքլորի կանչի հետ պառավ մի շինական հորանջում է տան ստվերում, ձեռնափայտով ավազի վրա նշաններ գծում, նշանների հետ փորփորում գլխով անցածը։

Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի միանման տերևներն են։ Դրա համար էլ խառնվում է ծերունու հիշողությունը։ Գետն աղմկում է առաջվա հանգով, նույն քարերն են և նույն քարե արծիվը։

Քանի՞ սերունդ է ապրել Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքները փռել ցեխերի վրա, եղեգնով պատել վրանները, և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը, այծ ու ոչխարը քշել են բերդի լանջերը, պարկը պանրով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այծի պանիր։

***

Արև մի կեսօր Կաքավաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիավոր։ Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են և չեն տեսել ո՛չ Կաքավաբերդը, ո՛չ նրա քարափը։

Երրորդ ձիավորը նրանց ուղեկցում էր, և մինչդեռ առաջինները պինդ բռնել էին ձիերի բաշից, համարյա թե կռացել՝ հավասարակշիռ մնալու,—վերջին ձիավորը քթի տակ մռմռում էր մի երգ, մելամաղձոտ ու հուսահատ, ինչպես ամայի ձորը, տխուր քարափը և հեռավոր գյուղը։

Բերդի գլխին նստած ամպը վարագույրի պես մեկ ետ էր քաշվում, երևում էին պարիսպները, մեկ ծածկում էր կատարը։ Առաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում։ Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մասին, երբ զրահապատ ձիերի սմբակները դոփում էին երկաթյա մուտքի առաջ, և ավերից դարձող նրա համհարզները ճոճում էին նիզակները։ Ակնոցի արանքից նրա ուսյալ աչքերը տեսնում էին զրահավորներին, մագաղաթյա մատենագրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս և նա լսում էր հնօրյա ձիերի դոփյունը։ Ինչ դժվար էր նրա համար քարափը, որով քարայծի նման մագլցում էին երբեմնի տերերը։

Երբ հասան վրաններին, առաջին ձիավորը շարունակեց ճանապարհը։ Նա փնտրում էր հին ճանապարհը և չէր տեսնում վրանների առաջ, մոխրի մեջ խաղացող կիսամերկ երեխաներին, այծերին, որոնք զարմանքից վեր ու վար էին անում գլուխները։

Ֆետրե գլխարկով երկրորդ ձիավորը Կաքավաբերդի գլխին հնություններ չէր որոնում։ Նրա ամբողջ հարստությունը ծոցի հաստ տետրն էր և սրածայր մատիտը։ Հերիք էր աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի անկյուն, մամռապատ մի քար, որպեսզի թղթի վրա մատիտով նկարեր այն, ինչ տեսել էին նրա աչքերը։

Առաջին ձիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ։

Երբ նրանք հասան վրաններին, շները հարձակվեցին ձիավորների վրա։ Շների ձայնին մի քանի հոգի դուրս եկան վրաններից, նայեցին նրանց կողմը։ Մոխրի մեջ խաղացող երեխաները տեսան, թե ինչպես շները հաչելով վազեցին ձիերի վրա։ Երրորդ ձիավորն իզուր էր մտրակով փորձում շներին հեռացնել։ Շները հաչելով մինչև բերդի պարիսպները ուղեկից եղան ձիավորներին, հետո իրար հետ խաղալով վերադարձան։

Կաքավաբերդի քարերն ասես կենդանացել ու խոսում էին հնագետի հետ։ Նա մոտենում էր այս ու այն քարին, կռանում, նայում, չափում, ինչ-որ գրում, ոտքով փորում հողի փլվածքը, բաց անում հողի տակ թաղված տաշած քարի ծայրը։ Նա բարձրացավ պարսպի վրա, գլուխը դուրս հանեց բուրգի դիտարանից և բարձր

կանչեց, երբ բուրգի անկյունում, քարի վրա տեսավ փորագիր խոսքեր։

Երրորդ ձիավորը—որ ձիերի սանձերն արձակել ու պարսպի մոտ նստած ծխում էր—հնագետի կանչից վեր թռավ։ Նրան թվաց, թե օձը խայթեց ակնոցավոր մարդուն։

Ֆետրե գլխարկով մարդը նկատեց պարիսպների փլվածքը, սրածայր բուրգը և պատերի հետքերը։ Բերդի մուտքը նկարելիս, մատիտը մի պահ ձեռքին մնաց, որովհետև նրա ոտնաձայնից մի անգղ կռնչյունով թռավ բնից, պտույտներ արեց բերդի գլխին։ Նրա ձայնին մյուսներն էլ հավաքվեցին։

Ձիերը, անգղների կռնչոցից վախեցած, խլշեցին ականջները, իրար մոտեցան։ Եվ երբ հնագետը բուրգի ծայրից կանչեց, թե ինքը գտել է Բակուր իշխանի դամբանը, նկարիչը չհասկացավ նրա խոսքը։ Աչքն անգղների պտույտի հետ էին, նրանց թևերի հզոր շարժումի, կեռ ու արնագույն կտուցների հետ։ Ի՞նչ ահեղ թափ կար նրանց պտույտում։ Մի պահ մատիտը ձեռքին մնաց և չնկատեց, թե ինչպես գլխարկը սահեց և ընկավ քարի վրա։

Վրաններից մի մարդ, մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը փաթաթած կեղտոտ թաշկինակով, մահակին հենվելով բարձրացավ բերդի քարափով և մոտեցավ ձիերի մոտ նստած պահակին։ Մարդը տեսավ ակնոցավորին մի քար տեղահան անելիս։ Եվ երբ պահակին հարցրեց, թե ովքե՞ր են եկվորները, ի՞նչ են փնտրում բերդի ավերակներում, պահակը նախ հանկարծակիի եկավ և պատասխանեց, որ գրքերում գրած է, թե Կաքավաբերդի գլխին կարասի մեջ թաղված են ոսկե գանձեր։

Հնձվորը միտք արեց, ուսը քորեց և դարձավ դեպի ձորը՝ հնձելու կորեկի արտը։ Ու գնում էր ինքն իրեն խոսելով։ Ի՞նչ կլիներ, եթե ինքը գտներ գանձը։ Քանի անգամ է նա նստել հենց այն քարի վրա, որ տեղահան արեց ակնոցավորը։ Եթե իմանար, ապա գանձերը կլինեին նրա արխալուղի գրպանում։ Քանի՞ կով կառներ...

Միտք էր անում հնձվորը, երբ նկատեց, որ կորեկի արտի կողքին է։ Նա շուխան շպրտեց, շուխայի հետ էլ ավելորդ մտքերը, մանգաղով զարկեց մի կապ կորեկ ու կտրեց։

Բերդի քարերի մոտ բուսել էր ալպիական մանուշակ, ծաղիկը՝ ծիրանի գույն։ Հնագետը չէր տեսնում ո՛չ մանուշակ, ո՛չ խոտ։ Նրա կոշիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ։

Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկար ոչինչ կենդանի և ոչ մի բզեզ։ Նա պոկոտում էր քարերին փաթաթ-

ված բաղեղը, փայտի ծայրով արմատախիլ անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում և սրբում գրերի հողը։

Ֆետրե գլխարկով մարդը երբ նկարեց այն ամենը, ինչ հարկավոր էր հնագետին, տետրի նոր էջի վրա նկարեց և պարսպի մի մասը, ատամնաձև քարերի արանքում, քարե արծվի բույնը, պարիսպի ոտների տակ՝ ալպիական մանուշակներ։

***

Կեսօրից անց նրանք բերդից իջան։ Հնագետը մի անգամ էլ պտույտ արեց բերդի շորս կողմը, տետրում մի բան նշանակեց և ապա արագ քայլերով հասավ ձիերին։

Այս անգամ ամենից առաջ գնում էր երրորդ ձիավորը։ Եթե հնագետի գլխում Բակուր իշխանն էր և մատենագրի մագաղաթը, նկարիչը հիշում էր մանուշակները և լսում Բասուտա գետի խուլ աղմուկը,—երրորդ ձիավորի աչքի առաջ թարմ լավաշներն էին, պանիր ու մածուն։

Նա հենց առաջին վրանի մոտ ձիերն արձակեց, սանձով կապեց ձիերի ոտքը ու ներս մտավ վրանի նեղլիկ դռնից։ Քաղցած ձիերն ագահությամբ մոութները կախեցին թարմ կանաչի վրա։

Վրանի մուտքի առաջ, օջախի կողքին, մի փոքրիկ տղա մոխրի մեջ սունկ էր խորովում։ Անծանոթ մարդկանց ներս գալը նրան զարմացրեց, չիմացավ սունկը թողնի՞ կրակի վրա, վազի մոր հետևից, թե՞ սունկն էլ հետը տանի։ Երբ վրանի մոտ նա լսեց մոր բոբիկ ոտքերի ձայնը, զգեստի խշշոցը, տղան սիրտ առավ, խորոված մի սունկ հանեց մոխրից և դրեց օջախի քարին։

Մայրը ներս մտավ, գլխի շորը մի քիչ իջեցրեց աչքերի վրա, մոտեցավ և վրանի անկյունում դարսած ծալքից երկու բարձ մեկնեց հյուրերին։

Երրորդ ձիավորը հնագետի պայուսակից կոնսերվ հանեց։

— Մենք սոված ենք, քույրիկ։ Թե մածուն ունես, տո՛ւր, համ էլ թեյ գցիր։ Շաքար ունենք...—ասավ նա։

Կինը մոտեցավ օջախին, տղայի սունկերը դեն դրեց, կռացավ ու փչեց մխացող աթարներին։ Նրա գլխի շորը ետ ընկավ, ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը։

Նրա հայացքը սևեռած մնաց մխացող օջախին, մոխրի մոտ շոքած կնոջը։ Ո՞րտեղ էր տեսել նա նման մի դեմք, բարձր սպիտակ ճակատ և մուգ մանիշակագույն աչքեր։ Երբ կինը վեր կա-

ցավ, եռոտանի կասկարան բերեց օջախի վրա դնելու, հանեց ծխից սևացած թեյամանը, նկարիչը շատ մոտ տեսավ նրա աչքերը և մոխրի փոշին ունքերի վրա, մազերի վրա։

Ինչքա՜ն շատ ժամանակ էր անցել այն օրից։ Եվ մի՞թե հնարավոր է այդքան նման երկու դեմք, նույնիսկ նույն շրթունքները։ Կաքավաբերդի կնոջ դեմքն արևը մի քիչ այրել էր։ Բայց աչքերի ձևը նույնն էր, ինչ որ մյուս կնոջ, որ դարձյալ բարակ մեջքով էր և բարձրահասակ։

Կինը թեյի պատրաստություն էր տեսնում, անխոս և արագ շարժումներով։ Ամեն անգամ, երբ նա կռանում էր, բարձրանում, կամ բոբիկ ոտքերով քայլում էր խսիրի վրա, զրնգում էին նրա թևերի արծաթագույն սուրմաները, փոքրիկ զանգակների ձայն հանում։ Խշշում էր նրա զգեստը, որի փեշերը իջնում էին մինչև մերկ ներբանները։

Այն կինն էլ ուներ խշխշան շորեր, հագնում էր գորշ գույնի վերարկու, սև թավիշե գլխարկ, որի երկար քորոցը նարնջագույն գլուխ ուներ։ Հեռու էր, շատ հեռու։ Գուցե Բասուտա գետը ուրիշ գետի հետ խառնվելով հասնում է այն ծովին, որի ափին, ավազի վրա, մի օր նստել էին՝ կինը և նկարիչը։

Պահակը բաց արեց կոնսերվի երկրորդ տուփը։ Հնագետը սրփոցից ու պղնձե ամաններից գլուխը չէր բարձրացնում։ Տղան սունկը կերավ և աչքերը սևեռեց կոնսերվի փայլուն տուփին, սպասելով, որ դատարկեն։ Մարդը տեսավ նրա հայացքը և կոնսերվի տուփը մեկնեց տղային։

Տղան տուփը թափահարեց, վրանի առաջ պառկած շունը կուլ տվավ մսի կտորները և լիզեց քիմքերը։ Ապա դատարկ տուփը ձեռքին նա վազեց երեխաների մոտ, նրանց ցույց տալու սպիտակ թիթեղյա տուփը, որ չտեսած նորություն էր այդ քարափների վրա։

Կինը նստել էր օջախի առաջ, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին։ Նա խառնում էր կրակը, աթարներն իրար մոտ քաշում, և երբ ծուխն ամպի պես բարձրանում էր ու դուրս գալիս վրանի եղեգնյա պատերի արանքով, կինը, աչքերը մուխից պահելու համար, ձեռքը բռնում էր ճակատին։

Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թվում էր քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող։

Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի՛ քայլել, չի՛ նստել մխացող աթարի առաջ։ Առավոտյան ծովը բրոնզե հալոցքի պես տա-

բուքեր էր լինում և լիզում ափերի կրաքարը։ Ծովափին սև թավիշե գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում։ Իսկ ինքը ջարդում էր ձեռքի չոր ճյուղը, մանրիկ փշուրներ անում, և երբ ալիքները կաթիլներ էին ցողում նրանց ոտքերին ու ետ վազում, ալիքներն իրենց հետ տանում էին չոր ճյուղերի փշուրները։ Այն կինը ծովափին խոստումի բառեր ասաց, աշխարհը թվաց լայնարձակ մի ծով, և սիրտը ձուլվեց ծովի հետ։

Հետո ուրիշ օրեր եկան։ Այնքան պատահական եղավ ճամփաբաժանը և այնպես պարզ։ Մտքի մեջ մնացին մի զույգ մանիշակագույն աչքեր, գորշ գույնի վերարկու և հովանոցի ծայրը, որով կինը ավազի վրա խոստումներ էր գրում և ավերում։

Թեյամանի մեջ ջուրը եռաց, կափարիչը ձայն հանեց։ Կինը կողովից հանեց պնակները և ծաղկավոր բաժակները շարեց սրփոռոցի վրա։ Երբ նա կռացավ սփռոցի վրա, թիկունքից ծամը թեքվեց, կախվեց ուսն ի վար։ Ծովափի կինը կարճ խուզած մազեր ուներ և սպիտակ պարանոց, որի բարակ մորթու տակ երևում էին կապույտ երակները։ Տղան դատարկ տուփը ձեռքին ներս վազեց։ Վրանի դռնից մի խումբ մանուկներ զարմանքով նայում էին խսրի վրա նստած հյուրերին։ Որքան մեծ եղավ տղայի ուրախությունը, երբ նա ստացավ երկրորդ տուփը։ Այս անգամ նա դուրս չվազեց, այլ նստեց խսիրի վրա, մայրը նրա համար ևս թեյ լցրեց, իսկ ֆետրե գլխարկով մարդը շաքարի մի մեծ կտոր գցեց տղայի բաժակը։

Տղան զարմացավ, և երբ շաքարից պղպջակներ բարձրացան թեյի երեսը, նա մատը կոխեց բաժակի մեջ՝ շաքարը բերանը տանելու։ Թեկուզ տաք թեյը վառեց մատը, բայց ծպտուն չհանեց։ Այնքան համեղ էր կիսահալ շաքարը։ Հնագետը քթի տակ ծիծաղեց, ինչ-որ բան հիշեց մարդու նախնական օրերից։ Կինը նորից ջուր լցրեց թեյամանի մեջ և ուրախ ժպտաց երեխայի շարաճճի աչքերի վրա։

Ֆետրե գլխարկով մարդը տեսավ այդ ժպիտը, ինչքա՜ն ծանոթ էր... Երևի նույն դեմք ունեցող մարդիկ նույն կերպ են ժպտում։ Կնոջ վերին շրթունքը աննկատ դողդողաց, ժպիտից շրթունքները կարմրեցին, որպես արնագույն մեխակի թերթեր, ժպիտից աչքերը փայլեցին։

Հանկարծ նա ծոցից հանեց տետրը, թերթեց քարերի և քանդակների նկարներ, թերթեց և քարե արծվի բույնը պարսպի գլխին ու սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին։ Ծանոթ էին դիմագծե-

ը, միտքն այնքան էր աշխատել նրա վրա տարիներ առաջ։ Փակ աչքերով էլ նա տեսնում էր կնոջ պրոֆիլը։

Միայն տղան տեսավ մոր նկարն սպիտակ թղթի վրա։ Նրան այնպես թվաց, թե ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ, ինչպես աղբյուրի վճիտ ջուրը։

Քիչ հետո ձիերը վրանի առաջ էին։ Երրորդ ձիավորը ձիերի գլխին հագցնում էր սանձերը, պնդացնում թամբի կաշվե կապերը։ Եվ երբ պայուսակը կապեց թամբին, մոտեցավ մնաս բարով ասելու օջախի մոտ նստած կնոջը։ Կինը տեղից վեր կացավ, գլխի շորն արագ իջեցրեց ճակատին և մատների ծայրով բռնեց երրորդ ձիավորի մեկնած ձեռքը։ Մյուսներն էլ հետևեցին նրա օրինակին։ Այս անգամ կինը ձեռքը կրծքին սեղմեց և խոնարհեց գլուխը։ Ֆետրե գլխարկով մարդը տղային տվեց արծաթ դրամ ու շոյեց նրա մազերը։

Ձիերն իջնում էին Կաքավաբերդի քարափով դեպի Բասուտու ձորը։ Ձիերի սանձից բռնած իջնում էին երեք հոգի, որոնցից ամեն մեկը մտքերի մեջ հյուսում էր իր նախշը։ Ճանապարհի երկու եզրին բուսել էին աշպիական մանուշակներ։ Ֆետրե գլխարկով մարդը կռացավ, պոկեց մեկը և դրեց տետրի այն թերթի արանքը, որի վրա նկարված էր եռոտանին և այն բարակիրան կինը։

Ձիերի սմբակի տակից քարեր էին թռչում, քարերն աղմուկով գլորվում էին ձորը։ Ծով կար նրա մտքում և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով մի գլուխ, մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ, թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ, կիսավեր պարիսպներ, նրանց հիմքի մոտ ալպիական ծիրանագույն մանուշակներ...

***

Իրիկնացավ։

Նույն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ, գոտկում՝ պողպատե փայլուն մանգաղը։ Բեզարած էր մարդը, ամբողջ օրը հնձել էր կարճ ցողունով կորեկ և մեջքը ցավում էր։ Դրա համար էլ նա դանդաղ էր բարձրանում, մահակը դեմ տալիս քարին, երբեմն կանգնում շունչ առնելու։ Երբ կանգ էր առնում, նրա կորացած ծնկները դողում էին։

Հնձվորը ցերեկվա մարդն էր, որին երրորդ ձիավորը պատմել էր բերդի գանձերի մասին։ Իր արտից նա տեսավ ձիավորներին և

նրան թվաց, թե ձիու թամբին կապած պայուսակներում հենց այն գանձերն են, որ հարյուր տարիներ մնացել են քարի տակ, որի վրա ինքը շարունակ նստել է, երբ բերդի ավերակներում պահում էր այծ ու ոչխար։ Այդ մի՞տքն էր նրան զայրացրել, թե՞ հոգնությունը,—մարդը մոայլ էր, որպես իրիկնապահին անտառում որսի դուրս եկող սոված արջը։

Նա հասավ առաջին վրանին, ոտքով զարկեց շանը, որ պոչը շարժելով առաջ էր վազել տիրոջը դիմավորելու, ապա գոտուց մանգաղը հանեց, շպրտեց մի անկյուն, փայտը դրեց օջախի մոտ և լուռ նստեց խսիրի վրա։

Օջախը մխում էր։ Թեյամանում եռում էր տաք թեյը։ Ծալքատեղում՝ բարձի վրա, երկու կտոր շաքար կար։ Հնձվորը դեռ տրեխները չէր հանել և գուլպաներից թափ չէր տվել կորեկի փնջերը, երբ սուրմաների զնգոցով, երկար զգեստի ծալքերն իրար քսելով, ներս մտավ նրա կինը, կնոջ փեշից կախված տղան՝ կոնսերվի երկու դատարկ տուփ ձեռքին։

Տղան դեպի հայրը վազեց, տուփերը ցույց տալու։ Հայրը հասկացավ, որ ձիավորները նստել են իր խսիրի վրա։ Տղան ցույց տվեց և արծաթ դրամը, որ տվել էր նրան մի բարի քեռի։

Հայրը ոտքով դեն հրեց որդուն էլ, դատարկ տուփերն էլ։ Գլորվեցին տուփերը, տղան էլ գլորվեց։ Ապա տղան ցատկեց և վազեց տուփերի հետևից։ Երկու տուփը ձեռքին նա փաթաթվեց մոր փեշերին և սկսեց լալ։ Հայրը ձայնը մեղմացրեց, տղային կանչեց, խնդրեց նրա արծաթ դրամը։ Տղան արցունքների միջից ժպտալով մոտեցավ հորը, դրամը բռի մեջ։ Ապա նա պատմեց, թե հյուրի ծոցում կար մի փայլուն իր, մեջը սպիտակ թերթեր։ Արծաթ տվող մարդը մոր պատկերը հանեց թերթի վրա և դրեց ծոցը։

Խանդը կայծակի պես փայլատակեց մոայլ հնձվորի սրտում։ Աչքերը լայնացան, նա գունատվեց։ Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը, հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը։ Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում։ Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին։

Սուրմաները զրնգացին, ցնցվեցին կնոջ երկար ծամերը։ Եռոտանու վրա դրած թեյամանը թեքվեց։ Մահակի ջարդված ծայրը թռավ ծալքի վրա։ Կինը աղաղակ չհանեց, այլ ցավից գալարվեց։ Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ վրանի դռանը անձայն հեկեկալու։

Տղան դատարկ տուփերը ձեռքին հետևեց նրան և պահվեց մոր փեշի տակ։ Մարդը մի քիչ էլ դժգոհեց, ապա կերավ կորեկ հացը և փափախը գլխի տակ, մեկնվեց խսիրի վրա։

Հետո Կաքավաբերդի գլխին լռություն իջավ։ Օջախներում հանգավ կրակը, եղավ խավար գիշեր։ Գազանների ահից շները կուչ եկան վրանների առաջ։ Ոչխարը պառկեց կանաչի վրա։ Խսիրի վրա մեկնվեց և կինը, թաղիքի տակ ծածկելով տղային։

Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների վրա, և մակաղած ոչխարների բրդի վրա նստեց գիշերային խոնավությունը։ Ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա։

Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջքների մեջ, և նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ...

1925—1927

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

7-րդ դարում Հայաստանը բաժանված էր երկու մասի։ Մի մասը գտնվում էր պարսից իշխանության տակ, մյուսը՝ բյուզանդական կայսեր. թե՛ պարսիկները և թե՛ բյուզանդացիք ամեն կերպ աշխատում էին թուլացնել, ոչնչացնել Հայաստանը և ամենից առաջ՝ նրա ռազմական ուժը։ Ու դրա համար հունաց Մորիկ կայսրը հայ տղամարդկանց հավաքում և հայ իշխանների գլխավորությամբ ուղարկում էր իր թշնամիների դեմ կռվելու։

Եվ ահա հունաց կայսրը հրաման է տալիս, որ հայերին հավաքեն և ուղարկեն հեռավոր Թրակիա կռվելու։

Հայերը չեն ենթարկվում։ Որովհետև շատ էին գնացել ու կոտորվել, այս անգամ ապստամբում են և չեն ուզում զինվոր տալ։ Բայց խորամանկ Մորիկ կայսրը հունական զորքով գալիս է հայերի վրա. զոռով-ուժով զորք է հավաքում նորից և ուղարկում մինչև Դանուբի ափերը՝ այսօրվա Բուլղարիան, Ռումինիան։ Հայերն այնտեղ կռվում են, հաղթում ու քշում թշնամիներին, բայց և

այնպես նրանցից ոչ ոք չի վերադառնում, բոլորն սպանվում են, նրանց հետ և իրենց զորավար Մամիկոնյանը։

Սակայն Մորիկ կայսրը սրանով չի գոհանում, նորից հրաման է արձակում, որ Հայաստանում նոր զորաժողով անեն և երկու հազար ընտիր ձիավոր ուղարկեն իրեն։

Մեծ դժվարությամբ հավաքում են երկու հազար մարդ։ Մեկ հազարը հանձնում են Սահակ Մամիկոնյան իշխանին, մյուս հազարը՝ Սմբատ Բագրատունի պատրիկին։

Իշխան Մամիկոնյանն իր զորաբաժինն առած գնում է Բյուզանդիայի մայրաքաղաքը և ներկայանում կայսեր, իսկ Սմբատ Բագրատունին ոչ ինքն է գնում, ոչ էլ զորքն է ուղարկում։

— Մենք մեր երկրից չենք հեռանա,—հայտարարում է նա ու անմիջապես սուրհանդակներ է ուղարկում հայկական մյուս գավառները՝ նախարարներին կանչելու։ Եվ երբ նրանք հավաքվում են, խորհուրդ են անում, թե ինչպե՞ս ժողովուրդն ազատեն հունական կայսրից և ապրեն ազատ, անկախ կյանքով։

Սմբատ Բագրատունու նախաձեռնությամբ բոլոր նախարարները որոշում են կայացնում՝ համատեղ ուժերով Հույսաստանից դուրս քշել հույներին և նրանց կողմից նշանակված պաշտոնյաներին։

Սակայն նախարարներից մեկը, որի անունը դժբախտաբար հայտնի չէ (ամո՛թ և նախատի՛նք նրան) դավաճանաբար այդ բոլորը հայտնում է կայսեր։

Եվ մինչև որ նախարարները գործնական քայլեր կձեռնարկեին, վրա են հասնում կայսեր մարդիկ ու, ձերբակալելով Սմբատ Բագրատունուն՝ յոթ նախարարների հետ միասին տանում են բյուզանդական մայրաքաղաքը։

Նախ բոլորին շղթայակապ դնում են բանտ, հետո դատում, աքսորում են նախարարներին, իսկ Սմբատ Բագրատունուն, որպես դավադրության ղեկավար՝ որոշում են մերկացնել և գցել գազանների առաջ, Բյուզանդիայի մայրաքաղաքում հայտնի այն շենքը, որ կոչվում էր կինիգ, ուր հանցավորները պիտի կռվեին գազանների հետ և մեռնեին հոշոտվելով ու ծանր տանջանքներ կրելով։

Սմբատ Բագրատունին հսկա էր՝ գեղեցկադեմ, լայնալանջ, պինդ մկաններով մի վարժ մարտիկ, որ շատ կռիվներում ցույց էր տվել իր ուժն ու քաջությունը։ Նրա մասին պատմում էին, որ մի անգամ ձի նստած անտառով անցնելիս՝ նա բռնում է ծառի մի ճյուղից և, ոտներով ձիուն ամուր գրկելով, բարձրացնում—կտրում է նրան գետնից։ Զորքն այդ տեսնելով՝ քարանում է զարմանքից։

Եվ ահա այս հայտնի պատրիկ Սմբատ Բագրատունուն, այս նշանավոր զորավարին, հայրենասեր և պարկեշտ մարդուն՝ որպես պետական դավաճանի, որպես կայսեր դեմ մեղանչածի, մերկացնում են և գցում կինիգը, որ գազանները հոշոտեն։

Սմբատ Բագրատունին անխոս ենթարկվում է այդ բոլոր խայտառակություններին, մտնում է կինիգը և ջլապինդ ձեռները թավամազ հաղթ կրծքին ծալած՝ խորին արժանապատվությամբ և արհամարհանքով նայում է կրկեսում հավաքված բազմությանը։

Մայրաքաղաքի դաժան հասարակությունը եկել էր տեսնելու, թե ինչպես գազանները պիտի հոշոտեն անվանի հայ նախարարին, որ ապստամբել է իրենց կայսեր դեմ։

Ու հեգնանքով նայում են նրան։

Վերջապես... բացվում է ահա գազանանոցի դուռը և Սմբատ Բագրատունու վրա է գալիս մի ահագին սեամազ արջ։

Սմբատը, որպես անտառոտ երկրի զավակ, շատ լավ գիտեր, որ արջը շշմում է հանկարծակի բարձր ձայնից։

Եվ ահա, երբ արջը հարձակվեց նրա վրա, Սմբատը վազեց դեպի արջը, բարձր գոռաց նրա ականջի տակ ու բռունցքը մուրճի պես իջեցրեց նրա ճակատին։ Գազանը նախ ձայնից, ապա հարվածից շշմած՝ ետ-ետ գնաց ու ընկավ հանկարծ։ Ու այդպես էլ մնաց փռված իր չոռած ոտներով։

Հասարակությունը զարմացական մի ճիչ արձակեց ու քարացավ։

Երկրորդ անգամ բաց թողեցին մի կատաղած ցուլ, որ ներս վազեց սարսափելի թագով, ապա հազիվ մի քանի քայլ արած՝ կանգ առավ, բարձրացրեց գլուխը և մոլեգին աչքերով նայեց հասարակությանը, հետո գլուխն իջեցնելով՝ նայեց դիմացը կանգնած զոհին և, նոր հիշելով անելիքը, սրընթաց արշավեց Սմբատի վրա։

Սակայն Բագրատունին չփախավ ցուլի առաջից. մի բան, որ շատ զարմացրեց հասարակությանը։

Նա կանգնել էր անսասան, ձեռքերն առաջ պարզած, և երբ ցուլը մոտեցավ նրան հարվածելու, նա իր ջլապինդ ձեռքերով բռնեց նրա եղջյուրները և աշխատեց ոլորել նրա վիզը։

Սկսվեց մի լարված պայքար։ Տնքում, մռնչում են մարդ ու ցուլ, և մայրաքաղաքի տեսարանամոլ հասարակությունը շունչը պահած սպասում է, թե ի՞նչ է լինելու վերջը։

Ու հանկարծ կրկեսը թնդաց ցուլի սրտապատառ գոռոցից... և բոլորը տեսան, թե ինչպես նա ետ փախավ գլուխը ցած բռնած՝ Սմբատ Բագրատունու ձեռքին թողնելով իր զույգ եղջյուրները։

Սմբատը մի կողմ նետեց ձեռքի եղջյուրները, մի ակնթարթում հասավ ցուլի հետևից և բռնեց նրա պոչն ու ոտքի կճղակներից մեկը։

Եղջյուրների նման կճղակն էլ մնաց Սմբատի ձեռքին, և ցուլը փախավ նրանից՝ եղջյուրներն ու կճղակը կորցրած։

Հասարակությունը մի հիացական «ա՜հ» արեց, բայց չհամարձակվեց որոշակի արտահայտել իր հիացմունքը Սմբատի քաջության առթիվ, որովհետև բոլորին հայտնի էր, որ Մորիկը զայրանում է ուրախության արտահայտությունից այն դեպքում, երբ զոհը հաղթում է գազանին։

Այս անգամ ամբոխն ավելի էր զարմացած։ Ի՞նչ ուժի տեր էր այդ դատապարտյալ հայորդին, որ կարողացավ հանել ամեհի ցուլի եղջյուրներն ու կճղակը։

Երբ զարմացած բազմությունն ուշքի եկավ, բոլորն սպասում էին, թե ահա կայսրը հրաման կտա, որ մայրաքաղաքի կինիգում դեռ չտեսնված այս անօրինակ քաջության համար ազատեն դատապարտյալին։

Սակայն Մորիկն անողոք գտնվեց։ Վրեժխնդրության մռայլը պատել էր նրա դեմքը, և Սմբատ պատրիկի հաղթությունն ավելի մթագնեց նրա դեմքին կուտակված թուխպը։

Երրորդ անգամ Բագրատունու վրա բաց թողեցին մի առյուծ։

Արյան ու մահվան տեսարաններ սիրող ժողովրդի բերանից հիացմունքի ճիչեր թռան, իսկ կայսեր և նրա պճնազարդ պալատականների դեմքով հեգնանքի նման մի բան անցավ, որ կարծես ասում էր. «Տեսնենք սրան ի՞նչ կարող ես անել»։

Իսկ Բագրատունին սառնարյուն կանգնած էր կինիգի հրապարակում։ Նա գիտեր, որ առյուծը հարձակվելիս՝ դեռևս 7—9 մետրի վրա նշան է բռնում իր զոհին ու հանկարծակի ոստյունով նետվում առաջ։

Եվ, ահա, երբ առյուծը թափ առավ ու ոստնեց առաջ, Բագրատունին կայծակի արագությամբ իրեն մի կողմ նետեց, իսկ երբ առյուծն ապարդյուն թռիչքից հետո կանգնեց թաթերի վրա, Սմբատը մի ակնթարթում բռնեց նրա ականջը և թռավ նրա մեջքին։

Նա այդ կատարեց զարմանալի ճկունությամբ։ Նստելով առյուծի մեջքին՝ Բագրատունին ձախ ձեռքով բռնեց նրա ականջը, իսկ աջով սկսեց սեղմել նրա խռչափողը..., և առյուծն այլևս չէր կարողանում օգտվել ո՛չ իր ատամներով, ո՛չ թաթերով և ո՛չ էլ ճանկերով, որոնք նրա զենքերն էին կյանքի կռվում, գլուխը բարձր

բռնած վազում էր այս ու այն կողմ՝ կարծես իր մեջքն ու կոկորդն ազատելու... Բայց Սմբատը, ինչպես երևում է, սարսափելի ուժով էր բռնել նրա խոչափողը, այնպես որ առյուծը շուտով շնչահեղձ եղավ և, նախ՝ առաջին երկու ոտքով, ապա՝ ամբողջ մարմնով տապալվեց գետնին։

Սմբատն այնպես ամուր էր կպել առյուծի մեջքին, որ նրա հետ միասին ընկավ գետնին։ Սակայն ամբոխին թվաց, թե դա առյուծի կողմից մի խորամանկ խաղ էր իր բեռից ազատվելու համար, և, ուր որ է, նա իսկույն ոտքի կկանգնի և կհարձակվի իր զոհի վրա։

Բայց Սմբատը լավ գիտեր՝ ինչ կատարվեց իր ախոյանի հետ, ուստի ընկած տեղից հանգիստ վեր կացավ, նորից երկու ձեռքով բռնեց առյուծի խոչափողը, բարձրացրեց նրան գետնից իր ամբողջ հասակով մեկ, խեղդեց այնպես, որ առյուծի լեզուն կախ ընկավ ատամների արանքից։ Ապա զգվանքով նետեց նրան գետնին։

Այս անգամ ամբոխը չկարողացավ իր հիացմունքը զսպել։ Նա իր գոչյուններով ու աղաղակներով թնդացրեց կրկեսը։

Բոլորը ծափահարում էին Սմբատին և կայսրից ներում խնդրում նրա համար.

— Ներե՛լ... ներե՛լ...

Իսկ Սմբատն, այդ աղաղակներին անուշադիր, պայքարից ու լարումից հոգնած, նստեց իր սպանած առյուծի դիակի վրա՝ հանգըստանալու։

Այդ տեսնելով և ամբոխի «ներում» խնդրող աղաղակները լսելով՝ կայսրուհին կռացավ, բռնեց կայսեր ձեռքերը և նույնպես խնդրեց ներել։

Եվ Մորիկ կայսրը, զարմացած Սմբատի ուժի և հնարամտության վրա, լսեց թագուհու և պալատականների աղաչանքը և ներման նշան տվեց։

Այս ամենից հետո Սմբատին թվում էր, թե երևի շուտով թույլ կտան, որ վերադառնա իր սիրած հայրենիքը, սակայն Մորիկ կայսրը նրան ուղարկեց Աֆրիկա, մի տեսակ պատվավոր աքսոր, զորամասի հրամանատարի՝ տրիբունի պաշտոնով։

Բայց մի տարի չանցած, երբ Մորիկ կայսրը իր դաժանության համար սպանվեց սեփական զորականների ձեռքով, Սմբատ Բագրատունին վերադարձավ հայրենիք, դարձավ Հայաստանի պարսկական մասի կառավարիչ և մեծամեծ աղետներից փրկեց հայ ժողովրդին։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հազար շեփոր հնչեն թող
Այս առավոտ,
Հազար թմբուկ խփեն թող
Այս առավոտ.
Լույսի հեղեղ. լույսի տոն է,
Խնդություն.
Հազար շեփոր հնչեն թող
Այս առավոտ։

Ո՞վ է ծնել
Շողշողուն այս պատանին,
Լուսագեմ ու հրաշյա
Շողշողուն այս պատանին։
Խարտյաշ վարսերը փռել,
Լույս է տվել խավարին,
Հույս է տվել սրտերին
Շողշողուն այս պատանին։

Տեսեք թովչանքը նրա՝
Հենց նոր ծաղկած նշի ծառ,
Տեսեք հայացքը նրա՝
Արեգակի պես պայծառ,
Տեսեք վարսերը նրա՝
Ճառագայթի շեկ խուրձեր,
Լուսե աչքերի վրա
Լուրթ երկինքն է կռացել։

Հազար շեփոր հնչեն թող
Այս առավոտ,
Հազար թմբուկ խփեն թող
Այս առավոտ.
Լույսի հեղեղ, լույսի տոն է,
Խնդություն.
Հազար շեփոր հնչեն թող
Այս առավոտ։

Կյանք ենք տվել մենք նրան
Արյունով ու քրտինքով,
Եվ բաց դաշտերի վրա,
Եվ երկաթի սալի քով.
Համառ կռիվ ենք մղել
Տարերքի դեմ ահավոր,
Եվ միշտ հաղթող ենք եղել
Մեծ եռանդով ու երգով։

Տուֆ քարերից շինել ենք
Շենքեր՝ մարմինը նրա,
Երակների պես արյան
Մենք ջրանցքներ ենք շինել.
Հետո սիրտը հրաբորբ՝
Էլեկտրական մեծ կայան,
Որ բաբախում է հիմա
Ամեն սրտում, ամեն տան։

Եվ պղնձե լարերով
Ցանց ենք շինել ներվերի,
Լուսեղ լամպեր ենք կախել,
Որպես աչքերը նրա,
Որ վառվում են տների
Ու մեծ սյուների վրա՝
Այդ բոլորը կառուցող
Մարդկանց անունի նման։

Գործարանները հսկա,
Առողջ թոքերի նման,
Դարձրել են ամեն օր
Շնչառությունը նրա,
Եվ նա դարձել է հզոր,
Եվ նա դարձել է խրոխտ,
Եվ ահել է մեզ հետ նա
Արևի տակ հրաբորբ։

Ամեն գարուն ու մայիս
Մեր ցորենի դաշտերից,
Թարմ կանաչից ու վարդից
Հագուստներ ենք հագցրել,
Եվ փայփայել ենք նրան
Ոսկի հույսերի նման,
Եվ անունը դրել ենք
Խորհրդային Հայաստան։

Մեր զրկանքով ու կյանքով,
Արյունով ես աճել դու,
Մեր պայքարով ու կամքով,
Հույսերով ես աճել դու։
Խորհրդային Հայաստան,
Խորհրդային Հայաստան,
Այս վառ արևը վկա՝
Մեր հևքով ես աճել դու։

Որ լինի մեծ այգաբաց,
Կառուցում ու հաղթանակ,
Որ սերունդների դիմաց
Մենք ամոթով չմնանք.
Որ ամեն մի տաշած քար
Ժպտա նրանց, երբ որ գան,
Որ դու լինես միշտ պայծառ,
Խորհրդային Հայաստան...

Հազար շեփոր հնչեն թող
Այս առավոտ,
Հազար թմբուկ խփեն թող
Այս առավոտ.
Լույսի հեղեղ, լույսի տոն է,
Խնդություն.
Հազար շեփոր հնչեն թող
Այս առավոտ...

Ն. ԶԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Արի, եղբա՛յր, փառաբանե՞նք մեր քաղցրաբառ հայոց լեզուն։
Մեր արտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն։

Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,
Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ՝ հայոց լեզուն,

Նա առաջին կանչն է եղել դյուցազնական մեր նախահոր,
Օրորոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն։

Քերթողահայր Խորենացուց մինչև Քուչակն ու ձեր ծառան
Տվել է մեզ երազ ու երգ և ճանապարհ՝ հայոց լեզուն։

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,
Կրկորչեինք, եթե ճամփին չբռնկվտար հայոց լեզուն։

Քանի՞ ցեղեր ցամաքեցին ինչպես հեղեղն ավազի մեջ,
Բայց լենինյան ծովին հասավ մեսրոպատառ հայոց լեզուն։

Այսօր էլ նա բռնության դեմ փայլատակում է բարկացկոտ,
Հերոսական լեզուների հերոս եղբայր հայոց լեզուն։

Ուրեմն եկ՝ փառաբանենք, փայլեցընենք թրի նման,
Որ զրնգա արևի տակ հավետ պայծառ հայոց լեզուն։

Հ. ՇԻՐԱԶ

ԻՄ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ սո՛ւրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից՝ թե սիրտս ճեղքես՝
Դրոշիդ բոցը պիտի հուրհրա։

Չեմ ուզում գոռալ իմ սիրո մասին,
Սակայն, իմացիր, հայրենիք իմ մեծ,
Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց...

Ես ամբողջովին քոնն եմ, հայրենիք,
Եվ մոմի նման, ճամփեքիդ վրա,
Քո փառքի համար թե մի օր վառվեմ,
Մոխրաբիծ անգամ ինձնից չի մնա...

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՅՈԹԵՐՈՐԴ ԱՂԲՅՈՒՐԸ

1.

Քամին իր սառը շրթունքներով պոկում էր ծառերի տերևներն ու լեռներով եզերված փոքրիկ փողոցներով քշում դեպի գետը։ Գետի ափին հպարտ կանգնած էր որմնադիր Մարգարի թիթեղե տանիքով տունը։

Կեսօր էր։ Տան դարբասի մոտ, քարե նստարանին նստած խորհում էր վարպետ Մարգարը։ Թվում էր, թե նա ուղեկցում էր

քամուց քշվող տերևների խշշոցին. բայց ո՛չ տերևների խշշոցը, ո՛չ ձորում գալարվող գետի աղմուկը չէին գրավում ծերունու ուշադրությունը։ Կիսախուփ աչքերը գետնին հառած՝ մտածում էր նա։

...Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, շատերի հետ բանակ գնաց նաև վարպետ Մարգարի ճարտարապետ որդին՝ Արամը։ Կռվի առաջին տարիներին նա կանոնավոր կերպով ստանում էր որդու նամակները։ Ամեն անգամ, նամակ ստանալիս, նստում էր գորգապատ թախտին, մեծ զգուշությամբ բաց անում ծրարն ու լուռ կարդում... Այդ հանդիսավոր պահերին վարպետի կինը՝ պառավ Մանուշակը, ձեռքերը կրծքին ծալած, կանգնում էր ամուսնու մոտ ու աշխատում նրա դեմքից կռահել նամակի բովանդակությունը։ Ամուսինը նամակն էր կարդում, կինը՝ նրա դեմքի արտահայտությունները։ Նամակը մտքում կարդալուց, հասկանալուց հետո, վարպետն արդեն կարդում էր բարձրաձայն, հանգամանորեն բացատրում կնոջը ամեն նախադասության, ամեն բառի միտքը։

Բայց Արամի նամակները կտրվեցին ցամաքած աղբյուրի նման։ Սկզբում վարպետ Մարգարն այդ համարեց սովորական ընդհատում, իսկ հետո, երբ էլի նամակներ չեկան, նրա սիրտը մի մութ կասկած մտավ։ «Երևի նա էլ շատերի պես ընկել է...»,— մտածում էր վարպետն ու սարսափում այդ մտքից։ Իր տագնապի մասին նա ոչ ոքի չէր ասում, սիրտ էր տալիս ինքն իրեն ու պառավին և երկար ժամանակ նստելով ռադիոյի մոտ՝ լսում էր, ասես ռադիոն պետք է հայտներ որդու տեղը։

2.

Անցան տարիներ, բայց Արամից ոչ մի տեղեկություն չեկավ։

Մի օր էլ վարպետ Մարգարը ռադիոյով լսեց բոլորի համար այնքա՜ն թանկագին լուրը հաղթանակի մասին...

Նա ծառս եղավ տեղից, երեսնամյա երիտասարդի եռանդով թռչկոտեց սենյակում ու գրեթե կնոջ ականջի մեջ կանչեց.

— Հաղթանակը եկա՜վ, ա՛յ կնիկ, Մանուշա՜կ, ուրախացի՛ր...

Պառավը ժպտաց բարի, մայրական ժպիտով, բայց այդ ժպիտը կարճ տևեց, չքացավ։ Նա տնքաց.

— Արամի՛ցս, Արամիցս լուր չեկավ։

Այդ բառերը սուր ցցերի նման մեխվեցին Մարգարի սրտում։ Սարսափեց, երբ նայեց կնոջ գունատ դեմքին։ Հուզմունքը հազիվ զսպելով՝ ասաց.

— Կգա՛, ա՛յ կնիկ, անպայման կգա։

Ու դուրս եկավ պատշգամբ, երկար նայեց Լաստ սարից իջնող խճուղուն. այդտեղից էին տուն գալիս բանակ գնացածները։

Առավոտը վարպետ Մարգարը գնաց իր կառուցած վեցերորդ աղբյուրը։ Ջրի եկած կանայք լուռ բարևեցին ու արագ հեռացան։ Սովորաբար, ամեն անգամ, երբ նա կանգ էր առնում իր շինած այս կամ այն աղբյուրի մոտ, կանայք շրջապատում էին նրան ու երկար զրուցում հետը։ Իսկ այժմ բոլորը գնացին, խուսափեցին նրանից։ Ինչո՞ւ։ «Այո՛, այո՛, բոլորն էլ գիտեն, Արամս չկա։ Գիտեն, բայց չեն ասում, խղճում են ինձ»,—մտածեց վարպետն ու հառաչեց։

Վարպետ Մարգարի շինած յուրաքանչյուր աղբյուրը իր պատմությունն ուներ։ Բայց վեցերորդ աղբյուրը, որի մոտ կանգնած է նա հիմա, նվիրական էր նրա համար։ Նոր էր այդ աղբյուրի հիմքը գցել, երբ Արամը եկավ քաղաքից՝ ճարտարապետական բարձրագույն կրթություն ստացած։ Որդու հետ վարպետն ավարտեց վեցերորդ աղբյուրը։ Մի աղբյուր էլ էր հարկավոր շինել՝ յոթերորդը։ Մարգարն այդ աղբյուրի կառուցումը թողեց որդուն։ Բայց նրա մուրազը մնաց անկատար։ Արամը գնաց ռազմաճակատ։

Մի օր էլ, երբ վարպետը նստել էր իր սիրած տեղը՝ դարբասի քարին, տեսավ, որ ուղիղ դեպի իր տունն են գալիս շրջանային զինվորական կոմիսարն ու շրջկոմի քարտուղարը։ Երբ նրանք մոտեցան, Մարգարը նրանց աչքերում թաքնված վիշտ տեսավ ու սարսռաց։ Այդպես վարվում են մեռելատիրոջն այցի եկած մտերիմները. նա լավ գիտեր այդ։

— Մենք քեզ մոտ ենք եկել, վարպետ,—ասաց զինկոմը՝ խուսափելով ուղիղ նայել նրա աչքերին։

Վարպետը հյուրերին տուն հրավիրեց։ Սենյակի դռան դիմացի պատից կախված էր Արամի մեծադիր նկարը։ Վարպետ Մարգարը նկատեց, որ հյուրերի հայացքները ափսոսանքով կանգ առան նկարի վրա։ Սիրտը տակնուվրա եղավ։

— Նստեցեք,—կարողացավ ասել նա։

Բայց հյուրերը չնստեցին։ Զինկոմը պորտֆելից հանեց մի փոքրիկ կարմիր բարձիկ ու դրեց սեղանին։ Բարձիկին ամրացված էր Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշան։ Վարպետ Մարգարը նայեց շքանշանին, նայեց կարմիր բարձիկին ու ամեն ինչ հասկացավ։ Սենյակը պտտվեց գլխին, կոկորդը սեղմվեց,

ոտքերը ճոճվեցին, բայց կարողացավ պահել հավասարակշռությունը։

— Արամի շքանշանն է,—ասաց զինկոմը։

— Հասկացա, որդի՛ս, առանց ասելու էլ հասկացա,—պատասխանեց վարպետ Մարգարն ու կռացավ կարմիր բարձիկի վրա։ Երբ համբուրում էր շքանշանը, նրան թվաց, թե համբուրում է որդու՝ Արամի ճակատը։ Աչքերը մրմռացին, բարձիկի վրա ընկած արցունքի մի քանի կաթիլներ։ Հետո նա մեջքն ուղղեց, սրբեց արտասվալի աչքերն ու ասաց.

— Այդպես էլ գիտեի, որդինե՛րս, սիրտս չի սխալվել։

Դուռը բացվեց, ներս մտավ Մանուշակը։ Շրջկոմի քարտուղարն ու զինկոմը հարցական նայեցին իրար։—«Ինչպե՞ս վարվել պառավի հետ»,—ասում էին նրանց հայացքները։ Այդքան հարգելի հյուրեր տեսնելով իր տանը՝ պառավը շփոթվեց։

— Մո՛տ եկ, Մանուշակ,—ասաց վարպետ Մարգարը, հուզմունքը թաքցնելով,—մո՛տ եկ, Արամիս շքանշանը եկել է։

Պառավն արագ քայլերով մոտեցավ սեղանին։ Տեսնելով շողշողուն շքանշանը, ժպտաց ու հարցական նայեց ամուսնուն։

— Համբուրիր շքանշանը, Մանուշակ,—ասաց ծերունին։

Պառավը կռացավ ու մի քանի անգամ ջերմագին համբուրեց շքանշանը։

— Իսկ ո՞ւր է Արամս, ե՞րբ կգա,—հարցրեց նա։

— Կգա,—կնոջ աչքերին նայելով՝ անհերթ պատասխանեց Մարգարը։

— Ե՞րբ։

— Ե՞րբ,—կրկնեց ծերունին ու, մի վայրկյան լռելուց հետո, ասաց.—երբ կառուցեմ յոթերորդ աղբյուրը, այն օրն էլ կգա Արամը։

Պառավը հավատաց նրան։ Հիսուն տարի է, ինչ ապրում է Մարգարի հետ հաշտ ու խաղաղ։ Այդ հիսուն տարվա ընթացքում նրանից մի սուտ խոսք չի լսել, հավատացել է նրան։ Այժմ էլ հավատաց ու թեթևացած շունչ քաշեց։

Ողջ գիշերը վարպետ Մարգարը չքնեց։ Նա թերթում, քրքրում էր որդու թողած թղթերը, որ պահում էր մեծ սնդուկի մեջ։ Վերջապես վարպետի ձեռքն ընկավ յոթերորդ աղբյուրի նախագիծը։

Նրա սիրտն սկսեց արագ բաբախել։ Այդ աղբյուրի նախագիծն Արամն էր գծել՝ կռիվ գնալուց առաջ։ Դա նրա առաջին ճարտարապետական մտահղացումն էր։

Վարպետ Մարգարը երկա՞ր նայում էր նախագծին։ Ինչպիսի՞

եռանդով, երազներով էր որդին գծել-գրել։ Այո՛, դա ամենաշքեղը կլինի քաղաքում եղած բոլոր աղբյուրներից։

Վարպետի աչքերը թրջվեցին։ Արցունքի մի քանի կաթիլներ ընկան նախագծի վրա ու, ներծծվելով հաստ թղթի մեջ, կորան...

Յոթերորդ աղբյուրի նախագիծը տեղը դնելուց հետո, վարպետ Մարգարը պառկեց թախտին ու անթարթ հայացքն առաստաղին հառած՝ մտածում էր։

«Հարկավոր է կառուցել յոթերորդ աղբյուրը»,—մտքում կրկնում էր նա։ Եվ այդ միտքն ամեն անգամ կրկնելիս, ասես, մի քիչ փարատվում էր նրա վիշտը։—«Կկառուցեմ, որ որդուս մուրազն անկատար չմնա»։

Մյուս օրը նա՝ յոթերորդ աղբյուրի նախագիծը ձեռքին, գնաց շրջկոմի քարտուղարի մոտ։

Քարտուղարը նրան ընդունեց իր առանձնասենյակում։ Արևը ողողել էր իրերը, քարտուղարի դեմքը։ Վարպետին տեսնելով, նա վեր կացավ տեղից ու արագ մոտեցավ նրան։

— Համեցե՛ք, վարպետ, նստեցեք,—ասաց նա։

Վարպետ Մարգարը նստեց։ Խոր հոգոցը խեղդեց կոկորդում ու ասաց.

— Ես ուզում եմ կառուցել յոթերորդ աղբյուրը, ընկեր քարտուղար։

Հետո, ասես ինքն իրեն, շարունակեց.

— Այդ աղբյուրը կլինի մեր զոհված զավակների հավիտենական հիշատակը։

Քարտուղարն ուշադիր նայում էր վարպետին և լսում նրան։

— Յոթերորդ աղբյուր-հուշարձանը կլինի մեր քաղաքի ամենալավ կառուցվածքը։ Ախր մենք մեր լավ զավակներին կորցրինք այնտեղ՝ ռազմաճակատում։

— Լավ միտք է, վարպե՛տ Մարգար։ Այդ առթիվ կան նաև պետության ցուցումները։ Նախագիծ կստանանք ու կկառուցենք,— տեղից վեր կենալով, ասաց քարտուղարը։

Վարպետը ծոցից հանեց որդու նախագիծն ու մեկնեց քարտուղարին.

— Ահա յոթերորդ աղբյուրի նախագիծը, ընկե՛ր քարտուղար։ Սա որդուս գործն է, նրա ճարտարապետական առաջին երկունքը։ Յոթերորդ աղբյուրը կկառուցենք այդ նախագծով։

Քարտուղարը խոստացավ ամեն ինչով օգնել վարպետին։

Երբ վարպետը հրաժեշտ էր տալիս քարտուղարին, ասաց.

— Ծանր կորուստներ ունեցանք։

— Այո՛, ծանր։ Բայց այդ զոհողությունները մեզ բերին ազատություն, երջանիկ կյանք ու խաղաղություն։ Թող էլ ոչ մի ծնող չկորցնի իր որդուն, չլինի պատերազմ, վարպե՛տ Մարգար,— ասաց քարտուղարը։

Աստիճաններով իջնելիս, վարպետ Մարգարը մտքում կրկնում էր պարտշրջիկոմի քարտուղարի խոսքերը. «Թող էլ ոչ մի ծնող չկորցնի իր որդուն, չլինի պատերազմ»։ Ապա բարձրաձայն ասաց. «Խելացի խոսքեր են, բոլորիս սրտին մոտ»։

Երեք օր հետո, արևը չծագած, վարպետ Մարգարը շալակեց քար տաշելու գործիքների տոպրակն ու դուրս եկավ տնից։

Քաղաքի ծայրին, գետի վրա կամար էր կապել քարե կամուրջը, որ ինքն էր շինել իր վարպետ հոր հետ, հիսուն տարի առաջ։ Նա կանգնեց կամրջին ու նայեց Լաստ սարի պռնկից դուրս եկող արևին։ Շատ անգամ էր նա նայել ծագող արևին։ Հավատացել էր, որ կգա հաղթանակը, ու նրա հետ էլ՝ իր Արամը։

Հաղթանակը եկավ ու արևից էլ ջերմ շողեր տփեց ծերունու հոգում։ Իսկ Արամը չեկավ։ Նա չի գա... Նա ձուլվել էր խաղաղության արևին, դարձել նրա մի մասնիկը։

Ծերունին գնաց լայն խճուղու վրայով ու կանգ առավ նրա եզերքին։ Այդտեղ կոլտնտեսականները հարթում էին աղբյուր-հուշարձանի տեղը։ Ոմանք քար էին բերում սայլերով, մյուսները ավազ մաղում։ Բոլորն էլ աշխատում էին եռանդով, միատեղ։ Վարպետ Մարգարի երևալը ոգևորեց նրանց։

— Եկա՞ր, վարպե՛տ Մարգար, գալդ բարի՛։ Կառուցենք յոթերորդ աղբյուրը,— ասացին նրանք։

— Կառուցենք,— երազկոտ ասաց վարպետը,— կառուցենք մեր զոհված հերոսների հուշարձան-աղբյուրը՝ խաղաղության աղբյուրը։

Խճուղու եզերքին, կանաչների մեջ բխում էր մի սառնորակ աղբյուր։ Նրա ջրով վարպետը շփեց այրվող դեմքը, նստեց աղբյուրի մոտ։ Այդ այն տեղն է, որտեղ Արամը մտադրվել էր կառուցել յոթերորդ աղբյուրը՝ իր ձեռքով ու արվեստով հորը զարմացնելու համար։

Նստած տեղը երկար խորհելուց հետո, վարպետ Մարգարը ոտքի կանգնեց, մուրճը ձեռքն առավ ու սկսեց տաշել յոթերորդ աղբյուրի առաջին քարը։

Քարափոշին նստում էր նրա ճերմակ մազերին, դեմքին, փոշեխառն քրտինքը առվակներով հոսում էր խոր կնճիռներով ու թափվում քարերին։ Բայց նա շարունակում էր տաշե՛լ, տաշել...

3.

Քարերը կյանք էին առնում վարպետ Մարգարի մուրճի տակ։ Նա քարերին էր տալիս իր արվեստը, իր սիրտը, իր կյանքը։ Քարերին էր հաղորդում տարիների իր փափագը, իր անկատար մուրազը... Մերթ մտքով սլանում էր պատերազմի դաշտը, որդու հետ միասին մտնում մարտի մեջ, մերթ տնքում՝ գլուխը գթության քրոջ ծնկներին դրած վիրավորի պես, մերթ հիշում Արամի անդառնալի մանկությունը և խորհում, տաշում, նորից խորհում, նորից տաշում։

Փոթորիկներ էին անցնում վարպետ Մարգարի գլխով։ Նա ուզում էր այդ փոթորիկները սանձել, գամել քարերին։ Բայց ձեռքը սովոր չէր փոթորիկներ քանդակելու։ Միտքը ճակատամարտերի դրվագներ էր հյուսում. իսկ ձեռքը քարերին քանդակում էր ծաղիկներ, հավերժակա՛ն, դալար, խաղաղ ծաղիկներ... Ծաղիկներով էին զարդարված քաղաքում կառուցված նրա բոլոր վեց աղբյուրները։

***

...Անցավ ամառը, եկավ աշունը՝ իր ոսկեղեն ծիրանին փռելով Վարարակնի հովտի ու Լաստ սարի վրա։ Երբ պատրաստ էին յոթերորդ աղբյուրի կամարները, վարպետ Մարգարը մեջտեղի ամենաբարձր կամարին քանդակեց խաղաղության աղավնին։ Թևատարած աղավնին ճախրում էր՝ կտցին մի կանաչ ծիլ պահած, ճախրում էր վարպետ Մարգարի մտքերի նման, սլանում դեպի դարերի խորքերը։

Խաղաղության աղավնու տակ վարպետը փորագրեց.

«Թող էլ ո՛չ մի ծնող չկորցնի իր որդուն. չլինի՛ պատերազմ»։

Փորագիրն ավարտեց, կարդաց ու հիացավ։ Հետո, հանդարտ հոգոց հանելով, նստեց աղբյուրի պատվանդանին՝ ունկնդրելու յոթ ծորակներից թափվող ջրերի խաղաղ երգին։

Յոթերորդ աղբյուրի մոտ հավաքվեցին մարդիկ։ Սրբատաշ քարերը, բարձրաքանդակ ծաղիկներն ու խաղաղության աղավնին երկար ժամանակ իրենց վրա գամած էին պահում մարդկանց հայացքները, սրտերը։ Մարդիկ կարդում էին աղբյուրի ճակատին

փորագրված «Թող էլ ո՛չ մի ծնող չկորցնի իր որդուն. չլինի՛ պատերազմ» խոսքերն ու ժպտալով ասում.

— Թող խաղաղությունն ապրի հազար տարի, վարպե՛տ Մարգար։

Մարդիկ նայում էին յոթերորդ աղբյուրին, նայում ու չէին կըշտանում։ Լցվում էին նվիրական զգացմունքներով։ Ամեն մեկին թվում էր, թե այդ աղբյուրն իր զոհված հարազատն է, որ այժմ մարմնացել է հայրենի հովտում ու կապրի դարեր։

Վարպետ Մարգարը նայում էր նրանց, ու նրան թվում էր, թե նրանք եկել են ճակատամարտից ողջ-առողջ վերադարձած իր որդուն՝ Արամին տեսնելու, իրեն աչքալուսանք տալու համար։

Ու ժպտում էր գոհ։

***

Եկավ պառավ Մանուշակը՝ ծաղկավոր սփռոցը թևի տակին։ Նա քայլում էր հուզված, արագ։ Շտապում էր։ Մարդիկ ճանապարհ տվին նրան։ Տիրեց հանդիսավոր լռություն։ Միայն լսվում էր աղբյուրի յոթ ծորակներից թափվող զուլալ ջրերի խոխոջը։ Մանուշակը մոտեցավ ամուսնուն։ Նայեց նրա աչքերին, խոր նայեց... Ու հասկացավ ամեն ինչ։

Նա թաց աչքերով կռացավ աղբյուրի քարե ծորակներից մեկի վրա, խմեց։ Գլուխը բարձրացրեց, նորից կռացավ, նորից խմեց...

Երբ շուռ եկավ դեպի մարդիկ, նրա աչքերում այլևս արցունքներ չկային։ Նրանք թափվել էին յոթերորդ աղբյուրի ջրերի մեջ ու գնացել...

Պառավը գրկեց աղբյուրի քարերը, համբուրեց, հետո դառնալով իր շուրջը խմբված մարդկանց՝ ասաց.

— Նա եկավ, ահա նա... Յոթերորդ աղբյուրն իմ Արամն է։

Հետո նայեց խաղաղության աղավնուն։ Ժպտաց։ Տեսավ նրա տակ փորագրված բառերն ու, դառնալով ամուսնուն, ասաց.

— Կարդա՛...

Ծերունին կարդաց. «Թող էլ ո՛չ մի ծնող չկորցնի իր որդուն. չլինի՛ պատերազմ»։ Մանուշակը լսեց ու ժպտաց։ Հետո մոայլվեց, նորից ժպտաց ու ձեռքը բարձրացնելով՝ գոչեց.

— Թող էլ ո՛չ մի ծնող չկորցնի իր որդուն, չլինի՛ պատերազմ։

ԵՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թե Հոկտեմբերյան դրոշի փայլից
Զվառվեր ճակատն Արագածի,
Իր մութ այրերում շունչը կփչեր
Հայրենի երկիր Հայաստանս։
Մեր երդիկներից ծխի հետ նորից
Չէր հյուսվի բույրը ցորեն-հացի,
Շեկ ժայռերի մեջ անհույս կհանգչեր
Ժայռերի երկիր Հայաստանս։

Կհանգչեր անհուշ և անհիշատակ,
Կմեռներ և իր գերեզմանին
Գիր չէր ունենա՝ մեսրոպյան ոսկյա
Տառերի երկիր Հայաստանս։
Իր երկինք մտած, բարձր սարերից
Գլխիվայր կընկներ վիհերը խոր
Սարերին կանգնած, սարերի սովոր,
Սարերի երկիր Հայաստանս։

Բոլոր կողմերից սրարշավ եկող
Վայրի ցեղերին կուլ կգնար
Դարերից եկած, դարեր վաստակած,
Դարերի երկիր Հայաստանս։
Այրուձիների դոփյունների տակ
Ճամփեքին ընկած քար կմնար
Քարից հաց քամող, քարին թև տվող,
Քարերի երկիր Հայաստանս։

Էլ ո՞վ կարող է, ո՞վ կհանդգնի
Վայրի մոլուցքով դարձնել նորից
Ավերի երկիր, ցավերի երկիր
Խավարի երկիր՝ Հայաստանս,
Երբ իր փառապանծ եղբայրների հետ
Արև է տանում աշխարհներին,
Արևին թիկնած, արևից շիկնած,
Արևի երկիր Հայաստանս։

ՅՈՒ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԻ ԱՉՔԵՐԸ

Կապույտ աչքեր է ունեցել հայը։
Ոսկե վարսեր է ունեցել հայը։
Պայծառ ժպիտ է ունեցել հայը։

Իսկ երբ վառել են երկիրը հայի,
Իսկ երբ ընկել են որդիքը հայի,
Հուր են արձակել աչքերը հայի,
Ծուխ են ծխացել աչքերը հայի։

Ու սևացել են աչքերը հայի,
Ու սևացել են վարսերը հայի,
Ինչպես պատերը մեր օջախների,
Որ ավերվել են բախտի պես հայի...

Բայց վերականգնված օջախների պես
Նորից պայծառ են աչքերը հայի...

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Բ.—Ակսել Բակունց
Արփ. Արփ.—Արփիար Արփիարյան
Գ. Զ.—Գրիգոր Զոհրապ
Հ. Գ.—Ֆերսման «Հետաքրքրաշարժ գեոքիմիա»
Հ. Թ.—Հովհաննես Թումանյան
Հ. Պ.—Հակոբ Պարոնյան
Հ. Ֆ.—Յու. Պերելման, «Հետաքրքրաշարժ Ֆիզիկա»
Մ.—Մուրացան
Ն-Դ—Նար-Դոս
Վ. Ա.—Վախթանգ Անանյան
Վ. Տ.—Վահան Տերյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Երկու խոսք 3

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Ուղղագրություն և ճեռականություն 5

Ուղղագրական տարբերություններ 7

Ոյ—ո 8

Այ—ա 8

Ոյ—ու 8

Իւ—յու 8

ւ—վ 9

Ու—վ 9

է—ե 9

Օ—ո 9

Յ—հ 10

Ծա—յա 10

Արևելահայերենի հնչյունական համակարգը 16

Նոր ուղղագրության հիմնական սկզբունքները 18

Ձայնավորների և երկհնչյունների ուղղագրությունը . . . 19

Է—ե 19

Օ—ո 20

Ը 22

Յա—իա 22

Յ ձայնակապի ուղղագրությունը 23

Հնչյունափոխություն 24

Ի ձայնավորի հնչյունափոխությունը 24

Է ձայնավորի հնչյունափոխությունը 25

Ու ձայնավորի հնչյունափոխությունը 25

Երկհնչյունների հնչյունափոխությունը 26

Բաղաձայնների արտասանությունը և ուղղագրությունը 27

Բ—պ—փ 27

Գ—կ—ք 29

Դ—տ—թ 32

Ձ—ծ—ց 34

Ջ—ճ—չ 36

Ր—ռ 39

Ղ—խ 41

Մ—ն 43

Կետադրություն 43
I. Տրոհության նշաններ 43
II. Առոգանության նշաններ 45
III. Բացահայտության նշաններ 46
Արմատ և ածանց 48
Հիմք և վերջավորություն 49
Գոյական անուն 51
Հատուկ անունների ուղղագրությունը 51
Գոյականների թիվը 54
Որոշյալ և անորոշ առում 57
Գոյականների հոլովումը 58
Ուղղական հոլով 58
Սեռական հոլով 60
Տրական հոլով 62
Հայցական 65
Բացառական հոլով 68
Գործիական հոլով 70
Ներգոյական հոլով 71

Արևելահայերենի հոլովումները 75
Ոլ հոլովում 76
Ան հոլովում 77
Յան հոլովում 78
Վա հոլովում 79
Որ հոլովում 80
Ոջ հոլովում 80
Ի հոլովում 81
Անձնական դերանունների հոլովումը 84
Ցուցական սա, դա, նա դերանունների հոլովումը 86
Միմյանց և իրար դերանունների հոլովումը 87
Որ դերանվան հոլովումը 87
Փոխանվանական հոլովում 88
Ստացական հոդեր 89
Ածականների համեմատության աստիճանները 90
Թվականների ուղղագրությունը 93
Խոնարհում 96
Ընդհանուր նախագիտելիք 96
Ներգործական, կրավորական և չեզոք բայեր 97
Ներգործական սեռ 98
Կրավորական սեռ 98
Չեզոք սեռ 99
Անորոշ դերբայ 100
Բայերի հիմքերը 102
Անկատար դերբայ 105
Ապառնի դերբայ 105
Վաղակատար դերբայ 106
Հարակատար դերբայ 107

Ենթակայական դերբայ 109
Ժխտական դերբայ 109
Արևելահայերենի բայերի հիմնական ժամանակները . . . 111
Օժանդակ բայը և նրա ուղղագրությունը 111
Բայի հիմնական ժամանակները 113
Ներկա ժամանակ 113
Անցյալ ժամանակ 115
Սահմանականի անցյալ անկատար 115
Վաղակատար և անցյալի վաղակատար 117
Հարակատար և անցյալի հարակատար 121
Անցյալ կատարյալ 123
Ապառնի ժամանակ 126
Սահմանական ապառնի և անցյալի ապառնի 127
Ըղձական ապառնի և անցյալի ապառնի 128
Պայմանական ապառնի և անցյալի ապառնի 131
Հարկադրական ապառնի և անցյալի ապառնի 135
Հրամայականի կազմությունը 137
Կրկնակի ժխտում 143
Անկանոն բայերի խոնարհումը 143
Վերածել արևելահայերենի 146

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ընթերցարան 159
Նախնական ծանոթություն մաթեմատիկական, ֆիզիկական և քիմիական որոշ տերմինների 161
Ընթերցանության տեքստեր 166
Ս. Կապուտիկյան—«Խոսք իմ որդուն» 181
Ռ. Պատկանյան—«Արարատի արտասուքը» (կրճատ) 192
Ռաֆֆի—«Սամվել» (հատվածներ) «Արարատյան դաշտի առավոտը» . 194
Ռաֆֆի—«Արարատի որոգայթները» (կրճատ) 196
Հ. Թումանյան—«Հին Օրհնություն» 214
«Ոսկի քաղաքը» 215
«Մայրը» 223
Վրթ. Փափազյան—«Լուր-դա-լուր» (քրդական) 224
Նար-Դոս—«Նեղ օրերից մեկը» 229
Վ. Տերյան — «Մի խառնեք մեզ մեր վայրի արջի ցեղերին» . . . 239
«Թող երկիրն իմ հայրենի» 240
Ե. Չարենց—«Ես իմ անուշ Հայաստանի» 241
Ա. Բակունց—«Միրհավ» 241
«Ալպիական մանուշակ» 250
Ստ. Զորյան—«Սմբատ Բագրատունի» 259
Գ. Սարյան—«Խորհրդային Հայաստան» 264
Ն. Զարյան—«Հայոց լեզու» 265
Հ. Շիրազ—«Իմ սուրբ Հայրենիք» 266
Ս. Խանզադյան—«Յոթերորդ աղբյուրը» 266
Հ. Սահյան—«Երգ Հայաստանի» 274
Յու. Սահակյան—«Հայի աչքերը» 275
Համառոտագրություններ 276

7—1—3

СЕРГЕЙ ГАЛСТЯН

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Ереванский Государственный университет

Издательство «Митк»

Ереван — 1968

ԳԱԼՍՏՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԱՇՈՏԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Հրատ. խմբագիր՝ Օֆ. Պ. Համբարձումյան
Նկարիչ՝ Գ. Ա. Խուդիկյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ժ. Ա. Պետրոսյան

ՎՖ 08404 Պատվեր 1128 Տպաքանակ 1000

Հանձնված է արտադրության 10/VII 1967 թ.։
Ստորագրված է տպագրության 6/III 1968 թ.։
Թուղթ՝ 60×901/16։ Տպագր. 17,5 մամուլ։
Հաշվ.-հրատ. 14,1 մամուլ։
Գինը՝ 70 կոպ.։

«Միտք» հրատարակչություն, Մոսկվայի № 1։

Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։

3195